

2471
2472
2473

84

U-63

ԳԵՂՏԵՒԻ ԲԱՐԻՉԻ

84

U-63

ՔԱՂՏԵՐԻ ԲԱՐՈՋԻ



ԹԱԳՄԱՆԵՑ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ



ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Հիւնդերորդ հատոր



ՏԻԳՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԱՆ

ՉՄԲԲԵՒՄ

ՏԳՍԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԱՆ

1869

ԳՐԱԳՐԱԿ ԲՈՒԿ

2
11
91

Գ Ա Ղ Տ Ն Ի Ք Բ Ա Ր Ի Զ Ի

Գ Լ Ո Ւ Խ Ա

Ս Է Ս Ի Լ Ի

ՔՆԹԵՐՅՈՂԸ՝ տիկին Սէրափէնի և տիկին Բիրլէի խօսակցութեան
ունկնդիր ըլլալէն առաջ՝ պէտք է գիտնայ որ Անաստասի նօտարին ա-
ռաքինութեան և բարեպաշտութեան վրայ բնաւ կաակած չունենալով
Լուիզ Սօրէլի և Ժէրմէնի մնասն ցոյց տուած խտուածիւնը սաստիկ կը
պարսաւէր։ Գոնապանուհին մի և նոյն պարսաւին արժանի կը համա-
րէր բնականապէս և տիկին Սէրափէնը. սակայն իբր վարպետ քաղա-
քաղէտ՝ տիկին Բիրլէ, մեր վերջէն ընելիք պատճառներով, իր հակառա-
կութիւնը տեսչուհիին դէմ կը սքողէր մտերմական ընդունելութեամբ մը։

Տիկին Սէրափէն Գապրիճնի անարժան ընթացքը կերպապէս եպե-
րելէն ետև՝ վրայ բերաւ։

— Զարմանալի բան. Պ. Պրատամանտին (Բօլխորի) ինչեղեր է
այս օրերս։ Երէկ իրկուն իրեն գրեցի, պատասխան չկայ. այս առտու
եկայ զինքը տեսնելու, մարդ չկար. . . : Յուսամ որ այս անգամ աւելի
քարեքաղղ կ'ըլլամ։

Տիկին Բիրլէ սաստիկ սրտնեղութիւն մը կեղծեց։

— Ո՛հ, մնա որ — գոչեց նա — բաղդը բանուկ չէ։

— Ի՛նչպէս։

— Պ. Պրատամանտին դեռ ևս տուն չեկաւ։


— Այդ անտանելի է։

— Հը՛մ, իբրա որ տաղտկալի է, իմ խեղճ տիկին Սէրափէնս։

— Եւ ինչէ՛ր ունի՛մ՝ ընելիք անոր։

— Երբ մարդ բաղդ չունի, պարսայ է։

— Եկու նայէ որ միշտ խձիպ մը կը հնարեմ այս տեղ գալու հա-
մար. ինչու որ եթէ Պ. Ֆէրրան կասկածի անգամ որ այս ճամբարակը
կը ճանչեմ, նա որ այնքան սրբակրօն. . . այնքան խղճահար է. . . դա-
տէ անգամ մը. . . ի՛նչ փոթորիկ պիտի հանէ։



— Ճիշտ Ալֆրէտս ալ այդպէս է. անանկ կրօնասէր, անանկ կրօնասէր է որ ամէն բանէ զող կ'երնէ:

— Հիմա չգիտես արդեօք թէ Պրատամանտին երբ պիտի դառնայ:

— Մէկուն հետ երեկոյեան ժամը վեցին կամ եօթին ժամադիր եւ զաւ. ինչու որ ինձի ալ ապսպրեց որ եթէ ուշ առնը դառնայ բեւմ այն մարդուն որ նորէն գայ . . . : Ուստի դու ալ երեկոյեան դէմ եւ կուր, ստոյգ եղիր որ զանի հոս կը գտնես:

Եւ Անաստասի մտովին յարեց: Ապահով եղիք, ժամէ մը Նօրմանտիայի ճամբան բռնած պիտի ըլլայ:

— Ուրեմն իրկուր նորէն պիտի դամ — ըսաւ տիկին Սէրաֆէն նեղացած դէմքով մը: Ապա յարեց: — Ուրիշ բան մ'ալ քեզի պիտի ըսէի, սիրելի տիկին Բիրլէ . . . : Արդէն գիտես թէ այն թշուառական Լուիլին զլիկն ինչ ձիւն եկաւ, այն օրերուդին զոր ամէն մարդ համեստ կը կարծէր:

— Մի, մի խօսիր ինձ անոր վրայ — պատասխանեց տիկին Բիրլէ աչերը վեր վերջնելով վշտակրութեամբ — մարմինս փուշ փուշ կ'ըլլայ քանի այդ խօսքը բացուի:

— Քեզ պիտի ըսէի որ առանց սպասուհիի մնայլիք, եթէ հեռուէն հեռու ականջիդ զարնէ թէ խիստ խնօր, խիստ աշխատասէր, խիստ պարկեշտ աղջիկ մը տեղ կը փնտռէ, շնորհ ըրէ մեզի զրկելու զանի: Այնչափ դժուար է հիմա աղէկ ծառայի հանդիպել, որ ամէն կողմէ փնտռելու է գտնելու համար . . . :

— Անհոգ եղիր, տիկին Սէրաֆէն . . . : Եթէ խմանամ որ անանկ սպասուհի մը կայ, քեզի խնաց կտամ . . . : Իրաւ որ, աղէկ սպասուհիներուն չափ աղէկ առններն ալ հազուադիւրս են:

Ապա Անաստասի յարեց միշտ մտովին:

— Արողը տանի իս եթէ ձեր սնակը աղջիկ մը զրկեմ, որ անօթու թու թեւէ կը մեռնի անշուշտ: Քու գլխաւորդ շատ կծծի ու շատ չար է. միթէ երկուսը մէկէն, թշուառ Լուիլն ու Պ. Թերսէնը բանտ չգրաւ:

— Պէտք չունիմ ըսելու քեզ — վրայ բերաւ տիկին Սէրաֆէն — թէ մեր տունն որչափ հանգարա է, միշտ մեր առնը ծառայող աղջիկ մը շահաւոր կ'երնէ: մինակ ՚ի բնէ դէշ աղջիկ մը պիտի ըլլար այն



(11718-57)
21578-60

Լուիլն որ ծուռ ճամբու մէջ քալեց, Պ. Ֆէրրանի ընտիր և սրբազին խրատներուն միտ չընելով . . . :

— Շատ իրաւ է . . . : Ուստի վտաս հեղի վրաս քու ուզածիդ պէս աղջիկ մ'եթէ գտնեմ, ժամ առաջ քեզի կը զրկեմ . . . :

— Ուրիշ բան մ'ալ կայ — վրայ բերաւ տիկին Սէրաֆէն — Պ. Ֆէրրան կը փափաքի որ, եթէ հնարին է, այն սպասուհին ընտանիք չունենայ, ինչու որ, խելքդ կը համար անշուշտ, դուրս ելնելու առիթ չունենալով դէշ ճամբու մէջ ալ ընկնելու վտանգ չունենար. ուստի, եթէ անանկ աղջիկ մը գտնուի, մեր պարտն աւելի աղէկ ունի որ որք ըլլայ, կարծեմ . . . նախ անոր համար որ բարի գործ մ'ըլլած կ'ըլլայ, և երկրորդ՝ ինչպէս որ ըսի, անոր համար որ եկող դայտը սպարազաներ (tenants et aboutissants) չունենալով դուրս ելնելու ալ պատրուակ չունենար: Այն թշուառական Լուիլը մեծ դաս մ'եղաւ մեր տիրօջ . . . իրաւ որ . . . իմ բարեմիտ տիկին Բիրլէ: Անոր համար հիմա դժուարաւ կ'ընդունի ծառայ մը: Մերկնին պէս բարեպաշտօն տան մէջ այնպիսի խայտառակութիւն մ'ընէ . . . : Ինչպէ՞ղ զայի բան: Լաւ ուրեմն, իրկուր պիտի դամ. Պ. Պրատամանտին սենեակն երթալու ստեն Պիւրէզ խաթունին խուցն ալ պիտի մտնեմ:

— Նորէն տեսնուինք իրկուր, տիկին Սէրաֆէն, և Պ. Պրատամանտին պիտի գտնես, ապահով եղիր:

Տիկին Սէրաֆէն դուրս ելաւ:

— Նայէ անգամ մը սրբոր, ինչպէս Պրատամանտին կը փնտռէ — ըսաւ տիկին Բիրլէ — ինչ առնելիք տալիք ունի անոր հետ . . . : Եւ այս ալ ինչպէս միտքը դրեր է Նօրմանտիա երթալէն առաջ՝ չտեսնել Սէրաֆէնը: Սիրտս փորա կը խաղար որ չըլլայ թէ Սէրաֆէն տիկինը վեր ելնէ, մանաւանդ որ Պ. Պրատամանտին երէկ իրկուն եկող կնկան կ'սպասէ. աղէկ մը չտեսայ անոր երեսը, բայց այս անգամ բոլոր ճիգս պիտի թափեմ որ քոյր վար առնեմ, ինչպէս որ ըրի անցածն օր այն երկու ստրկի հրամանատարին սիրուհին: Նորէն ոտք չկոխեց հոս . . . այն անարժամ բժիշկը: Ոխտ առնելու համար, իր փետերը պիտի վառեմ . . . : Հան, փէտը պիտի վառեմ . . . չպիտոյ թեթեւօտիկ . . . : Արբիւր, այն քու 12 անպիտան ֆրանքովդ և կածուխիկ (ver luisant) պարեգ օտիովդ: Գոնէ անով բան մ'ընէիր: Բայց ո՞վ է սա Պ. Պրատամանտինը:

մանտին տիկինը . . . ստանիկ կամ գոհ-հիկ կին մը . . . Կ'ուղէի զիտ-
նալ այս բանս, ինչու որ անծեղի պէս հետաքրքիր եմ, իմ ձեռքս չէ,
որորմամբ Աստուած ասանկ ստեղծեց իս: Ի՛նչ որ կ'ուղեն թող ըսեն,
այս է իմ բնաւորութիւնս: Գէն . . . միտքս բան մ'եկու, և նշանաւոր
բան մը, սոյն կնկան անունը խմանալու համար պէտք է որ փորձ մ'ը-
նեմ: Բայց սա եկողն ո՞վ է: Ա՛հ, անեցինեբու թագաւորն է: Բա-
րն', պարոն Ռօտուլֆ — ըսաւ տիկին Բիրլէ զինւորական զիրք մը
բռնած՝ նախ ձեռքն ետևի կողմն կեղծաւորն տանելով:

Եւ իրօք եկողը Ռօտուլֆն էր: Պ. ա՛ւրվիլի մահը դեռ խնայած
չէր:

— Բարի լոյս, տիկին Բիրլէ — ըսաւ նա ներս մտնելով — Կի-
թէ օրիորդ Ռիկօլէդ տունն է. անոր խօսելիք ունիմ:

— Այն, այն խեղճ փոքրիկ կատուն, և երբ դուրս ելած ունի. իբ
գործն ո՞ր ձդէ: Կիթէ հանդիստ ունի՞ բնաւ . . . :

— Եւ Մօրէի կինն ինչպէս է, քիչ մը ոգի առաւ:

— Այո, պարոն Ռօտուլֆ . . . Իրաւ որ, քու կամ այն պաշտպանին
հնորհիւն, որուն գործակատարն ես, թէ կինն և թէ զաւակները հի-
մակ շատ երջանիկ են . . . Զբի մէջ բնկած ձկնեբու կը նմանին, կրակ,
օդ, աղւոր անկողիններ ունին, աղւոր սնունդ, հոգատար մ'ունին,
թող օրիորդ Ռիկօլէդն ալ, որ փոքրիկ ջրշունի պէս իր գործին
զանուելէն զատ՝ թէև կարծես թէ բան մը չընէր, անսրք աչքէն չհե-
ռայներ, մաս որ . . . Ասկից զատ՝ քու կողմէդ սեւերես բժիշկ մ'եկաւ
Մօրէի կինը նայելու . . . Է՛հ, է՛հ, է՛հ, տես անգամ մը, պարոն
Ռօտուլֆ, ինքն իրենս ըսի: Այն արևուս, այս մրտաբորտը (moricaud)
ածխալուծներուն բժիշկը պիտի ըլլայ: Վախ չունի ձեռներն ազտուելու
երբ անոնց երակը դնէ: Փոյթ չէ, գոյնէն ի՛նչ կ'ենէ, կ'երևի թէ
անուանի բժիշկ մ'է, իր սեւութեան հնայելով: Մօրէի կնկան անանկ
գեղջուր մը տուաւ որ շուտ մը վրայ եկաւ:

— Թշուաւ կին, միշտ տրտում է անշուշտ:

— Ա՛հ, ճիշտ է, պարոն Ռօտուլֆ . . . Ի՛նչպէս չըլլայ խեղճը . . .
քանի որ իր էրկը խնդ . . . և ասիկէ զատ՝ իր Լուիզն ալ բանտն է:
Գիւտն որ, իր Լուիզը, իր սրտի մաշուքն է: Պարկեշտ ընտանիքի մը
համար ահռելի բան մ'է . . . Եւ քանի մտածեմ որ քիչ մ'առաջ՝ ն

տարին տեսուհին, տիկին Սէրաֆէնը՝ հոս եկաւ և այն ողորմելի օրի-
որդին վրայ սուկալի բաներ պատմեց՝ կը փոքրիմ: Եթէ անոր կրօնիկ
սուտ մը կ'լլել տալու ստիպուած չըլլայի, գործն ասանկ չէր դառնար,
բայց քառորդի մը չափ Սէրաֆէնին հետ անուշ դացի: Չէս ըսեր թէ՞
ինչ երեսի ջրով եկաւ ինձ հարցնելու որ Լուիզին տեղն այն մուրացկան
նոտարին տունը դնելու համար սպասուհի մը կը ճանչնամ . . . : Ի՛նչ
աներես և ժլատ մարդիկ: Մտածէ անգամ մ'որ, եթէ հանալիպի,
որբ աղջիկ մը կ'ուզեն իբր սպասուհի: Ինչու համար, զխտն, պա-
րոն Ռօտուլֆ: Ինչու որ, կ'ըսեն, ծնողք չունենալով, զանսրք տեսնելու
ալ առիթ չունենար և սյապէս տունը հանդարտ կը նստի: Բայց բանին
մէջ օւրել ըսան կայ, ըսածնին շարք մ'է: Ճշմարտան այս է որ մէկէ մը
կախում չունեցող սրտիկ աղջիկ մը կ'ուզեն ճանիկ տակ ձդել, որպէս
զի խրատ տուող չունենալով՝ ուղածուն չափ ասոր ամուսականները քա-
մեն: Ճիշտ չէ, պարոն Ռօտուլֆ:

— Այո . . . այո . . . — պատասխանեց սա մտախոհ դէմքով մը:

Ռօտուլֆ՝ խմանալով որ տիկին Սէրաֆէն Պ. Ֆէրանի մօտ Լուի-
զին տեղը բռնող որբ աղջիկ մը կը փնտէ՛ թերևս ստոյգ միջոց մը
նշմարեց այս պարագային մէջ նոտարը պատժելու: Աստի տիկին Բիր-
լէի խօսակցութեան ժամանակն ինք Սէսիլի մինչ ցայն կէտ մտովին
յատկացուցած դերը սխաւ քիչ քիչ փոխել, այն Սէսիլին զոր իբր
զլխաւոր գործիք մը պիտի գործածէր Լուիզ Մօրէի դահճին արդար
պատուհաս մը տալու համար:

— Արդէն վտահ էի որ ինձի պէս պիտի դատես և դուն — վրայ
բերաւ տիկին Բիրլէ. — հն, կը կրկնեմ որ անտէր աղջիկ մը կ'ուզեն
առնել իրենց տունն որ անոր թոշակը կտրեն, ես ալ մեռնիմ երթամ
չպիտի դիմեմ մէկը: Նախ և առաջ մարդ չեմ ճանչեր . . . բայց թէ որ
ճանչեմ անգամ չպիտի թողում որ անանկ խրճիթ մ'եկեմ: Այսպէս
ընելու իրաւունք չունիմ, պարոն Ռօտուլֆ:

— Տիկին Բիրլէ, կ'ուզեն ինձ մեծ ծառայութիւն մ'ընել:

— Տէր ողորման, պարոն Ռօտուլֆ . . . ըսէ, կ'ուզեն որ կրակը իյ-
նամ, եռացող եղով կեղծամս դանդրեմ, կ'ուզեն որ մէկը խածնեմ . . .
հրաման տուր . . . ինչ որ կ'ուզես պատրաստ եմ . . . ես և իմ սիրտս
քու գերիներդ ենք . . . բայց միայն Ալֆրէտիս դպչելիք բան մը չընենք
. . . :

— Այդ մասին անհոգ եղիր, տիկին Բիրբէ . . . ահա իմ խնդիրս . . .
. . . Նորահասակ որբ աղջկի մը տեղ կը փնտռեմ . . . օտարական է . . .

Բարիք բնառ եկած չէ, և կ'ուզէի զանի Պ. Ֆէրրանի քովը գնել . . . :
— Հիմակ կը խղզուիմ . . . ինչպէս, այն խրճիթին մէջ, այն ծե-
րուկ կծծիին մօտ . . . :

— Միշտ սրաշտօն մ'է . . . : Թէ որ ըսած նորատի աղջիկս հոն
չկրնայ ընել, թող վերջէն երնէ . . . Բայց դոնէ իր ապրուստը կը շահի .
. . . և ես ալ անոր վրայ հոգ մը չեմ ունենար :

— Իբրև որ, պարոն Ռօտուլֆ, քու զխնայիք բանդ է . . . մեղքը
չյիբբօք . . . իսկ թէ որ այն տեղը յարմար դատես . . . ազատ ես . . . : Աս-
կէ զատ՝ պէտք է արդար ըլլալ նօտարի մասին, եթէ գէշ կողմն ունի,
աղէկն ալ ունի . . . : Հունի պէս ժլատ է, էշի պէս խիստ, լուսարարի
պէս ջերմեանդ, իրաւ է . . . Բայց անոր պէս ալ պարկեշտ մարդ
չգտնուիր . . . : Քիչ թողակ կուտայ . . . Բայց կանխիկ և օրն օրին կը վճա-
րէ . . . : Արեւմտեան անպիտան է . . . Բայց ամէն օր մի և նոյն բանն է :
Վերջապէս, անանկ տուն մ'է՛ ուր աւանակի պէս աշխատիլ պէտք է,
բայց անանկ տուն մ'է՛ որուն նմանը չկայ մարդս մահու չափ տաղտուկ
զգացու համար . . . ուր վտանդ չկայ որ նորատի աղջիկ մ'իր կերպերը
փոխէ . . . : Լուիզ, այն դիպուած մ'էր :

— Տիկին Բիրբէ, քու պատիւը դադանիք մը պիտի հաղորդեմ :
— Խօսէ, և հաւատ որ եմ Անաստասի Բիրբէ, Ապիմար ծնած, և
խօսքս խօսք է, ինչպէս որ մէկ Աստուած կայ երկինքը . . . և թէ Ալ-
ֆրէտ մինակ կանաչ հաղուստ կը հաղնի . . . հաւատ որ խլուրդի պէս
գաղանապահ պիտի ըլլամ :

— Պ. Բիրբէին ալ բան մը չպիտի ըսես . . . :
— Իմ սիրական ծերուկիս գլխին վրայ երգում կ'ընեմ . . . Եթէ ըսե-
լիքդ օրինաւոր բան է . . . :

— Ա՛հ, տիկին Բիրբէ :
— Այն աստի ամէն բան անոր աչքին կը գունաւորեմ, բան մը
չպիտի կրնայ հասկնալ. երեւակայէ որ էրիկս վեց ամիսուան մեծուկ մի
է անմեղաթեան և խորագիտութեան կողմէ :

— Աստահութիւն ունիմ՝ քու վրայ : Արեւմն մտիկ ըրէ ինձ :

— Մինչ'ի կեսանս, մինչ'ի մահ է մեր սրտակցութիւնը, իմ անեցի-
ցեբուս թաղաւորը . . . : Հիմակ ալ շարունակէ :

— Քեզ խօսած նորահասակ աղջիկս յանցանք մ'ըրաւ . . . :

— Հասկցայ . . . Եթէ տօնահինգ տարիէ վեր Ալֆրէտին հետ կար-
դուած չըլլայի, ես ալ հարկաւոր յանցանքներ կը գործէի . . . Բիրբա-
ւոր յանցանքներ : Ի՛նձ . . . ինձ ասանկ մի նայիր . . . վառ օդի պէս կրակ
ու բոց էի, կոյտը Մարիամ : Բարեբաղդօրէն Պ. Բիրբէ իր առարկու-
թեամբը կրակս մարեց . . . ապա թէ ոչ . . . խենդ ու խելատ բաներ պի-
տի ընէի մարդիկներու հետ : Ըսել կ'ուզեմ որ եթէ այն նորատի աղ-
ջիկը մինակ մէկ յանցանք ըրաւ . . . գեռ յոյս կայ :

— Ես ալ այդպէս կը կարծեմ : Այն գեռահաս օրիորդը, Գերմա-
նիա, իր Քի աղղականին տունը սպասուհի էր, այս աղղականին տղան
սղջիկն արիւնը մտաւ . . . կը հասկնամ :

— Թըրքաւական . . . կը հասկնամ . . . իբր թէ ես ըրած ըլլայի
այն յանցանքը :

— Տղուն մայրը սպասուհին վունտեց, բայց պատանին ալ խենդ էր
որ հօրենական տունը ձգեց և այս խեղճ աղջիկը Բարիք բերաւ :

— Ինչ պիտի ընես . . . այս պատանիներն ասանկ են . . . :

— Առաջին յիմարութիւնէ ետքը՝ մամուրքն առաւ զինքը՝ և այս
մամուրքին արդիւնքն եղաւ ունեցած ստակն ալ ուտելը : Իմ նորահա-
սակ աղղականս ինձի գիմեց, ես ալ պէտք եղածը հոգալով մօրը քովը
դարձնելու յանձն առի, այս պայմանաւ որ այն աղջիկը հոս թողու որ-
պէս զի գործի մը գնեմ :

— Ես ալ նոյնը կ'ընէի որդիիս համար . . . Եթէ Բիրբէն որդի մ'ինձ
չնորհելու յօժարէր . . . :

— Հաս ուրախ եմ որ այս բանիս հաւան ես, մինակ նորատի օրի-
որդն օտար ըլլալուն՝ պատասխանատու մը չունի, և շատ դժուար
է զանի տուն մը ծառայութեան գնել . . . : Եթէ հաճիս ըսելու տի-
կին Սերաֆինին որ Գերմանիա բնակող աղղականներէզ մէկն այն
աղջիկը քու վրայ զրկեր է յանձնարարութեամբ, թերեւս նօտարն իր
քովն առնու, և ես ալ կրկնակի գոհ կ'ըլլամ : Սէսիլի, այս է անոր
անունը, Սէսիլի մըրքած ըլլալուն միայն՝ անտարակոյս կ'զգատանայ
նօտարին պէս խտաւար տան մը մէջ . . . : Մանաւանդ այս է պատ-
ճառն որ կ'ուզեմ սոյն նորարոյս աղջիկն Պ. Թաք Ֆէրրանի տունը
մանելը : Աւերել է ըսել թէ Սէսիլի քեզի պէս անձէ մը ներկայանա-
ւամ . . . քեզի պէս յարգելի անձէ մը . . . :

— Ա՛՛՛, պարոն Ռօտոլֆ :

— Քեզի պէս մեծարելի . . .

— Ա՛՛՛, իմ անեղիներու թագաւորը . . . :

— Անշուշտ պիտի ընդունիքու յանձնարարութեամբ տիկին Սէրաֆինէնը, մինչդեռ, եթէ ես ներկայացնեմ այն աղջիկը . . . :

— Հասկցայ . . . իբր թէ ես ալ պատանի մը ներկայացնէի : Լաւ, լաւ, կը հաւանիմ . . . մուշտակ հագածի չտի պիտի ըլլամ . . . : Թըրը ըշտուական . Սէրաֆինէն ապուրը կըլեց : Աղածս ալ այդ է . քիչ մ'ոխուռնիմ անոր դէմ, գործը զլուխ պիտի հանեմ, պարոն Ռօտոլֆ : Կոշոր խոշոր սուտեր պիտի շարդեմ, պիտի ըսեմ շնոր թէ չգիտեմ քանի ատենէ վեր Գերմանիա բնակող մօրաքեռ աղջիկ մ'ունիմ, ճշմարիտ հայրեմբ մը, թէ այս օրերս լուր ատի թէ մեռեր է, նոյնպէս էրիկը, և թէ իրենց աղջիկն որ որք է, օրին մէկը պիտի գայ բեռ մը պիտի ըլլայ վրաս :

— Շատ աղէկ . . . : Գու անձամբ Սէսիլին Պ. Գերրանի տունը կը տանիս, առանց անոր վրայ տիկին Սէրաֆինէնի խօսելու : Արովհետեւ քանս ասրիէ վեր մօրաքեռ աղջիկը տեսած չես, չես կրնար անոր համար պատասխանատու մնալ, այլ այսչափ միայն զիտես որ Գերմանիա գնալէն հետէ՝ անորմէ զիր մ'առած չէիր :

— Հասպա թէ որ աղջիկը մինակ գերմաններէն կը թոթովէ :

— Գարդիարէն լեզուն ալ քաջ կը խօսի . ես անոր պէտք եղած դասը կտամ . դու ուրիշ բանի հոգ մ'ընել, մինակ տիկին Սէրաֆինէնին յանձնէ զանի ջերմագին . կամ, չէ, ուրիշ բան մը կը մտածեմ . . . : Վասն զի կրնայ ըլլալ որ կարծէ թէ զինքը բունագատեւ կ'ուզես . . . : Արդէն զիտես, շատ անգամ բան մը խնդրելու որ ելնես կամաւ կը մերժեն . . . :

— Արու կ'ըսես այդ բանը . . . : Ես ալ անոր համար շողորթութիւնը միշտ քովէս վճարեմ եմ : Եթէ իզնէ բան մը չխնդրէին . . . կարելի է տայի . . . :

— Այդ կը պատահի միշտ . . . : Աւտի տիկին Սէրաֆինէնին բնաւ առաջարկութիւն մը մի ընել, և թող որ այն քեզի դայ . . . : Մինակ ըսէ անոր թէ Սէսիլի որք, օտարական, նորաբայս, շատ սիրուն աղջիկ մ'է, թէ քու վրագ ծանր բեռ մը պիտի ըլլայ, և թէ անոր համար

մեծ սէր չունիս, վասն զի մօրաքեռ աղջկանդ հետ աւուեր էիր, և կը զարմանաս թէ ինչպէս այն գլխի ցաւը քեզի զրկեր է . . . :

— Աստուծոյ զօրքին մեռնիմ . սասանային առջի ոտքն ես . . . : Բայց անհոգ եղիր, ես ալ ետեկնն եմ, քեզմէ վար չեմ մնար . նայէ անգամ մը, պարոն Ռօտոլֆ, ինչպէս իրարու միտք կը հասկնանք . . . : մեկը երկուքնիս . . . : Երբ կը մտածեմ որ եթէ իմ տարիքս ունենայիք այն ատենն որ ես կրակի կտոր մ'էի . . . հըմ, ինչ կ'ըսես ասոր :

— Սուս . . . թէ որ Պ. Բիբլէն . . .

— Աստուած չար աչքէ պահէ : Իմ խեղճ մարդօ, ասանկ խեղիատակութիւններու վրայ մտածելու ատեն չունի : Կոր փորձանքը դեռ դու չգիտես . . . սա Գապրիօնը նոր խայտաւակութիւն մ'ալ ըրաւ . . . : Բայց վերջէն պիտի խօսիմ ասոր վրայ . . . : Իսկ քու նորասփ օրիորդիդ գալով, անփոյթ եղիր . . . դրաւ կը գնեմ որ Սէրաֆինէնը պիտի յորդորեմ իմ աղղականս իրենց տունն առնլու :

— Եթէ յաջողիս, իմ սիրելի տիկին Բիբլէ : Հարիւր Ֆրանք կայ քեզի համար : Հարուստ չեմ, իրաւ, բայց . . . :

— Ինչի՞ տեղ դրեր ես իս, պարոն Ռօտոլֆ : Արդեօք կը կարծես թէ շահու համար պիտի ընեմ այս բանս : Աստուծոյ կրակին գամ . . . թէ որ զուտ բարեկամութիւն չէ ըրածս . . . : Հարիւր Ֆրանք մի :

— Բայց մտածէ անգամ մ'որ եթէ այն աղջիկը երկայն ատեն վրաս մնար, այս գումարէն սուելի ծախս պիտի ընէի . . . քանի մ'ամեն ետքը . . . :

— Աւրեմն քեզ ծառայութիւն ընելու համար պիտի ընդունիմ այն հարիւր Ֆրանքը, պարոն Ռօտոլֆ : Բայց իրաւ որ քու մեր տունը դարզ մեծ բարդ մ'է ինչի համար : Արեւամ մունետիկի պէս պոռայ որ տունուրներուն թագաւորն ես . . . : Ա՛յ, երկանիւ մը . . . : Անշուշտ Պ. Արատամանտիկն փորրիկ կ'ինն է . . . : Երէկ ալ եկաւ, չկոցայ աղէկ մը տեսնել երեսը . . . : Հիմակ հետը պիտի բարբաջեմ գիմակը վար առնլու համար . ասիէ զատ՝ հնար մը մտածեցի իր անունն իմանալու համար . . . : Հիմակ տես թէ ինչ շահանք պիտի կորեմ . . . պիտի գուարձանաս :

— Չէ, չէ, տիկին Բիբլէ, այն կնկան երեսն ու անունը ճանչելու փափաք չունիմ . . . ըսաւ Ռօտոլֆ օթեկին խորը մանկելով :

— Տիկին — զոչեց Անաստազի ներս մանող կնկան կողմը սրանա՛ջ չոյլ — ո՛ր կերթաս, տիկին :

— Պ. Պրատամանտին խուցը — ըսաւ կինն որ իր սրաներու թիւնը կը յայտնէր այսպէս իր ճամբան կտրելուն համար :

— Պ. Պրատամանտին հոս չէ . . . :
— Անկարելի բան, անոր հետ ժամադիր եղած եմ :

— Էբ սխալիս . . . :
— Ամենեկն չէմ սխալիր . . . — ըսաւ գոնապահուհին, վարպետու թեանք մը վարուելով միշտ որ սոյն կնկան երեսը տեսնէ : — Պ. Պրատամանտին դուքս երաւ, դուքս, դուքս երաւ ըսի . . . այսինքն մինակ կնկան մը կ'սպասէ . . . :

— Լաւ, այն կինն ես եմ . . . Համբերութիւնս հասցուցիր . . . թող որ անցնիմ :

— Անունդ ի՞նչ է, տիկին : Կայիմ՝ պիտի թէ այն անձին անունն է որուն համար Պ. Պրատամանտին ըսաւ թէ վեր հանեմ : Եթէ ինձ ըսած անունը չունիս . . . պէտք է որ մարմինս վրայ կոխելով անցնիս . . . :

— Ի՞նչ, իմ անունս քեզի ըսաւ — զոչեց կինն զարմանօք և անձև կու թեամբ :

— Այո, տիկին . . . :
— Ի՞նչ անխոհեմութիւն : — մրմնաց նորատի կինը : Յետոյ, պահ մը վարանդէն ետև՝ յարեց նա անհամբեր, մեղմիկ ձայնով մը, և իբր թէ ուրիշէ մը չէր ուզեր լսուիլ : — Լաւ ուրեմն, անունս է տիկին տ'Օրպինի :

Այս անունը լսելուն Ռօտոլֆ դող երաւ : Տիկին տ'Արվիլի մօրուին անունն էր այն : Ռուտի Ռօտոլֆ կեցած մուտն տեղէն ելնելով առաջ անցաւ, և արևու ու կանթեղի լուսին շնորհիւ չհեշտիւ ճանչեց այն կինն, քանի որ Բէլեմանս քանի մ'անդամ անոր նկարագիրն ընելու առ իժ ունեցեր էր :
— Տիկին տ'Օրպինի — կրկնեց տիկին Բիրլէ — ճիշտ այդ էր Պ. Պրատամանտինն ալ ինձ ըսած անունը : Արնաս վեր ելնել հիմակ, տիկին :

Տիկին տ'Արվիլի մօրուն օթեկին առջևէն շուտ մ'անցաւ :

— Արհողի իր ալ — զոչեց գոնապահուհին յաղթական զէմբով մը — այս ոստանիկ կնկան աղւոր խաղ մը խաղացի . . . անունը գիտեմ, Օրպինի է . . . : Գտած հնարս զէջ չէ, հէ . . . պարսն Ռօտոլֆ : Բայց դու ի՞նչ ունիս . մտնուրի մէջ կ'երևիս :

— Այս կինն ուրիշ անդամ Պ. Պրատամանտին տեսնելու եկած էր — հարցոց Ռօտոլֆ գոնապահուհին :

— Այո, երէկ իրկուն . մեկնելուն պէս Պ. Պրատամանտին անմիջապէս դուքս երաւ, որպէս զի, ըստ երևոյթին, կառատուն երթաց իր տեղը բռնէ . ինչու որ երէկ 'ի դարձին աղայեց իս որ իր մտուկը մինչև կառատունը տանիմ, և չուզեց այն մութացկան Գօրոլիարի վտասանել :

— Եւ Պ. Պրատամանտին ո՞ր կ'երթայ, գիտե՛ս արդեօք :
— Նօրմանտիա . . . Ալանսնի ճամբով :
Ռօտոլֆ յիշեց որ Օպիէի հողերն, ուր կը բնակէր Պ. տ'Օրպինի, Նօրմանտիա կը գտնուին : Տարակոյս չկար որ ճամարտակը Բէլեմանտի հօրը մօտ պիտի երթար 'ի հարկէ չարագործ գիտաւորութեամբ :

— Պ. Պրատամանտին ճամբայ ելնելէն տիկին Սէրաֆէնը պիտի աղւոր մը կրակ կտրի — վրայ բերաւ տիկին Բիրլէ . — կ'եփի կը փրփրի որ Պ. Պրատամանտին տեսնէ, և այս ալ որչափ որ կընայ անկէ խոց կտայ . ինչու որ սաստիկ պատուէր տուաւ ինձ որ չըսեմ աւարտ թէ այս իրկուն ժամը վեցին ճամբայ պիտի ելնէ . ուստի երբ տիկին Սէրաֆէն դայ նորէն, ամէն կողմը պատ պիտի տեսնէ . այս առ թիւ այն ըսած աղջկիդ վրայ հետը պիտի խօսիմ : Աղէկ միտքս եկաւ, ի՞նչ է անոր անունը . . . Սիւէ . . . :

— Սէսիի . . . :
— Իբր թէ Սէսիլ ըլլար ծայրը իով : Ի՞նչ և է, պէտք է թաշկիտակիս ծայրը հանգոց մ'ընեմ այս շուտիկ անունը յիշելու համար . . . : Սիւէ . . . Բաաէ . . . Սեռէլէ, էօֆ, ահա գտայ :

— Հիմակ ես ալ օրերուդ Ռիկոլէգին քովը պիտի երթամ — ըսաւ Ռօտոլֆ տիկին Բիրլէի, անոր օթեկէն դուքս ելնելով :

— Արդեօք վար իջնելու ատենդ, պարսն Ռօտոլֆ, իմ սիրական ձերուկիս բարև մը չե՛ս տար : Մեծ սրտմաշուրի մէջ է, հաւասն . թող ինքը պատմէ քեզ բանը . . . : Այն հրեշտակէմ Գապրիճոնը . . . նորէն իբր յիմարութիւնները կրկնեց . . . :

— Ամուսնիդ վիշտերուն միշտ վշտակից կը գանուիմ, տիկին Բերէ
... Եւ Ռոստոփ տիկին տՕբակնիկին առ Բօլխաօրի ըրած այցելու
թեան վրայ անդադար խորհելով՝ օրիորդ Ռիօլէզին սենեակը դիմեց :

Գ Լ Ո Ր Ի Բ

ՌԻՓՕԼԵԳԻ ԱՐԱՅԻՆ ՎԻՅԵ

Ռիօլէզի սենեակը միշտ կը ծփար մի և նոյն դողորիկ մաքրու
թեամբ, արծաթէ խոշոր ժամացոյցը, որ առախէ շրջապարզի մը մէջ
վառարանին վրայ դրուէր էր, ժամը չորս կը նշանակէր. ցրտին սաստ
կութիւնը դադրած ըլլալով՝ անտես գործուհին իր կրակաբանը չէր
վառած :

Հաղիւ թէ պատուհանէն կը տեսնուէր կապոյտ երկնի մէկ անկիւ
նը, տանիքներու, ձեղնայարկներու և բարձր ծխահաններու անկանոն
կոյակն մէջէն որ փողոցին միւս կողմէն հօրկանը կը յօրհնէր :

Յանկարծ արևուն մէկ ճառագայթն իբր թէ մոլորած՝ երկու բարձր
պատերու քիւէն տահելով՝ եկաւ նորատի օրիորդին սենեկին աղիւսա
կերտ յատակը մէկ քանի վայրկեան ծեղանեղջին ներկել փաղվումն :

Ռիօլէզ պատուհանին մօտ նստած կաշխատէր. իր չքնաղ կիտա
ռէմն աղօթագին անուշ նկարը լուսաւոր ու թափանցիկ ասպակին վր
այ կը ծրարէր, իբր ցօղաւէտ սպեակութեամբ երկնադոյն ակն մը՝
կարմրուն յատակի մը վրայ : Փաղվումն նշոյննը՝ դիտին ետևը հիւսած
օւ կիտակին վրայ կը շրջէին և իր փոքրիկ փղակերանան ժրջան ձեռ
ներն՝ որ անհամեմատ շոյտութեամբ կը գործածէին ստեղը, անուշ
սաթեգոյն կը ներկէին : Իր գօրը շրջագեատին երկար ծալքը՝ որուն
վրայ կը հաստներ կանաչ գոգնոցի մը ատամնաձև շրջանը կիտակին կը
ծածկէր իր յարդաշէն ամուր. իր երկու սիրուն ոտներն՝ զոր միշտ
կատարեալպէս ազուցեր էր, իր առջև կեցած ամօտակին ետք կը
յննուէին :

Ինչպէս որ մեծ իշխան մը կ'ըթանու երբեմն ըստ հաճոյս հիւղի մը
պատերը շողուն զարդերով ծածկել, նոյնպէս մառը մանտիլ արևը պահ
մը՝ բիւր ու բիւր խաղաղ շառախոնքով լուսաւորել տոյն սենեկիկը :

մոխրագոյն ու կանաչ սրարսի կտուէ վարպոյցները ոսկեփայլ նշոյնն
լով վէրվէրէց (moirer), ընկուզէնի կարասներուն ողորկութիւնը
փողփողեց, գեանադեւը իբր կարմիր սղինձ շողացուց, և արճնուհիւ
թուշնիներն իբր ոսկեգոյն վանդակով պատեց :

Բայց, աւաղ, տոյն արևու նշոյնն գրգռիչ զուարթութեան հույն
լով երկու էր ու արու դեղձանիկներն անձկալի կը լուէին և իրենց
սովորութեան հակառակ չէին երգեր :

Որովհետև իր սովորութեան հակառակ Ռիօլէզ ալ չէր երգեր :
Երեքնին ալ միասին կը դեղդեղէին : Գրեթէ միշտ Ռիօլէզին թար
մաբոյր ու առաօտեան երգը՝ թուշնիներուն երգերուն զրոյիս կտար
քանի որ ասոնք տեղի ծոյլ ըլլալով՝ կանուխիկ չէին երներ իրենց բու
նէն : Ահա այն ատեն յատակ, հնչական, դեղդեղուն, նաբը ձայներու
մեղմարան ու գուպարը կ'սկսէր իրենց մէջ՝ և որմէ թուշնիները միշտ
յողթական չէին երներ :


673-2013

Ռիօլէզ չէր երգեր... վստն գի իր կեանքին մէջ առաջին անգամ
էր որ վէշը կը կռէր : Մինչ ցայն կէս՝ Վօրէլի թշուստութեան տեսիլը
դինը յուզեր էր, բայց այնպիսի տեսիներ ընտել ըլլալով ազբաս դա
սերու՝ իրենց երկայնասե վշտակութիւն մը չէն պատճառ էր :

Ռիօլէզ՝ բաս կարի տոյն թշուստներուն ամէն օր օյնիկէն, անոնց
հետ ողբալէն ետև՝ թէ սրտայոյլ և թէ դօհ կ'երևէր... սրտայոյլ
անոնց աղէալից համար... գոհ անոնց կարեկից գանուելուն :

Բայց ասի վէշը մը չէր :
Շատ չէր անցներ Ռիօլէզի բնասորութեան ընդարցոյս զուարթու
թիւնը կը յողթէր... Եւ սոպա, ատանց ետևութեան, այլ լոկ բաղդա
տութեան ատթիւ մը, ինքզինքն այնքան երջանիկ կը համարէր իր
պղտիկ սենեկին մէջ՝ Վօրէլեց ասուելի հիլիէն երնիկէն ետև՝ որ իր
վաղամեակի տրտմութիւնն իսկոյն կը փարատէր :

Այս իր տպաւորութեան թեթևութիւնն ինքնասիրութիւնէ բոլոր
վին անարատ էր, ըստ որում, արճնուհին՝ պատառչ այնու թեան
կը խորհէր և իբր սրարը կը ձեղնուէր, երբ արեւ Ռշառաներուն բա
ժինը հանել, սրպէս զի հանդարտ խոճով վայելէ վիճակ մ'որ թէ
ինքնին անկայուն և լուսին իր ձակոխն բրտնոր
զարձեալ անհաստին զարհուրելի չքան որ
գրեթէ ճօխ կ'երևէր :



«Հանդարտ խղճով երգելու համար — կըսէր նա միամտօրէն — երբոր մարդ անանկ ողորմելի թշուառներու մօտ կը գտնուի, պէտք է որ ըստ կարի անոնց պիտակէր եղած ըլլայ:»

Ռիկօլէզին առաջին վարին պատճառն ընթերցողին յայտնելէն առաջ կը փախարկէր սոյն նորատի օրերուն առաջինութեան վրայ, եթէ կամրած մ'ունի, ինովին փարատել և ապահովել:

Ականց կը դործածենք այս առաջինութեան բառը, ծանրակշիռ, պերճ շքեղ բառ մ'որ միշտ վշտալի զոհողութեան, կրկի գէմ տածանելի մարտամենքու, և աշխարհիս իրերուն վրայ անաչառ խորհրդածութիւններու տեսիլը կ'ենթադրէ:

Այս տեսակէն չէր Ռիկօլէզին առաջինութիւնը:

Ոչ մարտեր և ոչ խորհրդեր էր նա:

Այլ միայն աշխատէր, ծիծաղէր և երգեր էր:

Իր խնայողութեանը, ինչպէս որ Ռոտալքին կ'ըսէր նա պարզօրէն և անխեղձութեամբ, մանաւանդ ժամանակ վերաբերող խնդիր մ'էր... «Արքայոց խաճ չունէր սիրահարներու...: Ամենէն առաջ՝ զուարթ, ծիր, բարեկարգ ըլլալուն կանոնապահութիւնն, աշխատութիւնը, զուարթութիւնը դիմելը պահէր, սրահպաններ, սղատներ էր:

Թերեւս այս բարոյականը անմը թեթեւ, գիւրջն և զուարթագին գտնեն, բայց ինչ փոյթ է շարժառիթը քանի որ արդիւնքը կը տեսնուի:

Ինչ փոյթ է բոյսի մ'արմատներուն ուղղութիւնը քանի որ իր ծաղիկը կը կը փթթի անարատ, փայլուն և հոտաւէտ...:

Մեր առաջին վրայ խօսելու ատեն թէ՛ ընկերութիւնը պարտաւոր է ընկերային ձիրքով երևելի հանդիսացող արհեստաւորներու քաջալերութիւն, նպատտ և վարձատրութիւն շորհել, խօսեցանք նաև այն ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ԼՐՏԵՍՈՒԹԵԱՆ վրայ, որ մեծին «Վախկէօնի մէկ խորհուրդն էր: Անթաղները թէ մեծ մարդուն այս արդիւնաշատ խորհուրդն իրացած է...:

Մար կողմէն քարէն քարէն զարմուն ունեցող ճշմարէտ մարդասերներէն մին Ռիկօլէզը գտաւ:

Այս սիրատուն օրերովը թէև ընկեցիկ, առանց խորհրդատուի, անառա... րութեան ամէն վտանգներու, և երեսասարգութեան արագած ամէն տեսակ փորձութիւններու կենթա...

կայ էր, բայց անարատ մնացիւր էր. իր պարկեշտ, ժխածիր կեանքը կրնար իբր դաս և օրինակ ծառայել ու բիշնբուն: Այս աղջիկը չէ թէ վարձի մը, չէ թէ նպատակ մը, այլ հաւատութեան, քաջալերութեան, քանի մը սրտաշարժ խօսքերու ալ արժանի շարժիլ ըլլար, որով իր նրբանիւրիս զիտակցութիւնը պիտի խնամար, ինքն իր աչքին պիտի բարձրանար, և նոյն իսկ ապագային համար պիտի պարտաւորէր: Գոնէ պիտի խնամար որ այնքան արիւթեամբ և անթեհերութեամբ քաջած զժուրբին շաճբուն մէջ խնամուար և պաշտպան ակնարկ մ'իբեմ կը նայի...: Արի խնամար որ եթէ օր մը քարձի պակտութեանը կամ կ'առաջնութեանը այս աշխատութեան և առաջնութեան վրայ կոչացած քաւար և բազմազարդ կենաց հաստատրելու թիւնը վերջովն արատայ, թէ թեւ նպատակ մը իբր վարձ իր անցեալ արժանիքին, իրեն օգնութեան պիտի հասնի:

Անշուշտ պիտի առաջին շատերը թէ անհարկն է հաստատել այս խնամակալու հօկողութեան սրտածնը որով կ'առաջադիտի շրջապանը իրենց նախորդ ընտիր վարձով յարիւրէն խնամող արժանի քարտուղ անձերը:

Մեզ կը թուի թէ ընկերութիւնն այս խնդիրն արդէն լուծած է:

Միթէ արդէն հաստատած չէ կենաց և ժամանակի բարձր ստեղծութեան հսկողութեանը, որուն օգտակար նպատակն է քննել անդուր իրենց նախնի վարձիկ վարձով նշատակի արժանի քարտուղ քարտուղ անձերը:

Ինչու համար ընկերութիւնը չպիտի վարէ նաև ԲԱՐՉԲ ԲԱՐՈՏԱՆԱՆ ՈՂՈՐԹԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀՅՈՂՈՒԹԻՒՆ ՄԵ:

Բայց անընկալն աշխարհէն իջնելը և Ռիկօլէզին առաջին վշտի շարժառիթը կնատենը:

Ճշմունքն զամ որ պարզելիս և ծանրորարց պատանի մ'էր, պճնուհիւս զբացնելը ի սկզբան ատր բնատուր ընտրութիւնն, և Բարձր քարտուղութեան ծառայութիւններն իբր նշանակելի պարտք սեպեր էին. բայց այս պարտքները վերջէն ստիպուել էին վարձանար և բանահեղ զիտակ որ Ռիկօլէզը իրենց համար անայլին զուարթութիւններու սիրուն և զուարթ ընկերակցի մը, պաշտօնատէր և աննայց գրաչորհի մը պիտի ըլլար, և չէ թէ սիրուհի մը:

Իրենց զարմանքն ու քամահանքն որ առաջ շատ աստիկ էին, քիչ քիչ ամորեցին պճնուհիլին համարձակ և սիրալիր բնաորով թխնը տեսնելով. ասիցց զամ ինչպէս որ օրիորդն աշուրէն Ռօտորֆին ըսեր էր, դրացիները հարաւ էին թեւն առնուլ սիրուն աղջիկ մ'որ իրենց սրտիւ կը բերէր ամէն կերպով (Ռիկօլէզ հոգ չէր ընէր արասքին երեւցիմներու վրայ), և այլ չէր նստեր քանի որ լոկ բաժին մ'ունէր այն համեստ զուարճութիւններէն, որոց զինը կ'աւելնար իր ներկայութեամբն ու ազնուութեամբը:

Աստիկայն սիրասուն աղջիկն որչափ քիչով կը շտամար... կարօտութեան օրերն իր ճաշն ինչպէս աղւորիկ մը և զուարթագին կ'ընէր՝ ուտելով դրասկի կտոր մը, զոր իր սրտի սպիտակ ակամներուն բոլոր ուժովը կը կրճէր, իսկ յետոյ, ինչպէս կը զուարճանար Պարզարեանին կամ անցուղիները ժող. զարով:

Եթէ մեր ընթերցողներն գոյն համակրութիւն կ'զգան Ռիկօլէզին համար, պիտի համանին որ շատ անմիտ կամ շատ դժման բլլալ պէտք էր մերժելու այս շնորհալի էակէն որ շարժւոր մի անգամ այն սրբազ զուարճութիւնները վայելէ, թէև ինքն ալ, նախանձելու իրաւունք մը չունենալուն, չէր արգիլէր բնու սր իր հոնանիները (sigisbè) երթան իր խստութիւններէն սիրտով մը գաննն նուազ անգամ քիչընդինքնումս:

Պրանտուս Թէրմէնը մինակ նորտաի օրիորդին ընտելութեան վրայ անմիտ յոյս մը չհիմնեց. սրտի բնազգում կամ մտքի նրբութիւն համարէ՞ սրտանին առջի օրէն գուշակեց թէ քանի զմայրելի կ'ընար բլլալ Ռիկօլէզին շնորհած զարմանալի ընկերակցութիւնը:

Ինչ որ անվրէպ սրտասհելու էր, սրտասհեցաւ: Թէրմէն կաթողին սիրեց իր դրացուհին, և չիշինց այս սէրին վրայ անոր խօսք մը բռնալ:

Թէրմէն ոչ միայն իր նախորդներուն չհետեւեցաւ, (որոնք՝ համազուեւում որ չպիտի կարենան յաջողիլ Ռիկօլէզին մօտ՝ ուրիշ սէրեր վնասելով միեմտարուեր էին, առանց անոր հետ իրենց ունեցած բարբարաւորութիւնը ընդհատելու) այլ նորաբոյս օրիորդին մտնուն թխնը զմայրելի կերպով վայելէր էր, անոր մօտ անցնելով ոչ միայն կերակրին, այլ բոլոր այն իրիւրաններն որ զբաղած չէր: Այս կերպարան տեսութեան

ժամանակ Ռիկօլէզ՝ ինչպէս միշտ ինքում երես և թեթև երևցեր էր, խի Թէրմէն փափկասիրտ, մտազիր, ծանրակաց և երբեմն ալ քիչ մը արտամ:

Իր միակ թերութիւնն էր այս արամութիւնը. վասն զի, իր կերպերն որ իր բնէ ազնիւ էին, անկարելի էր համեմատել ուրևոր վաճառական՝ Պ. Թիրօտին ծաղրաշարժ պահանջումներուն հետ, կամ Գապրիօնի խռովարկու այլանպակու թխններու հետ, բայց Պ. Թիրօտ իր անսպառելի լեզուադարութեամբն, և սրտակերհամն ոչ նուազ անսպառելի զուարթութեամբը Թէրմէնէն աւելի զուարճալի էին, որուն անուշ ծանրութիւնը փորը ինչ զբացուհիլն սրտակտանը կ'ազդէր:

Ռատի Ռիկօլէզ մինչև այն ատեն մտնաւ որ համակրութիւն մը չունէր և ոչ սիրարկուններէն մէկուն...: Բայց սրովհետև դատողութեան տէր աղջիկ մ'էր, կը գիտէր որ Թէրմէն բնաորեալ էր այն ամէն յատուութիւններով որ Բանասիր կ'ին մը կրնան երջանիկ ընել:

Այս նախորդ պարագաները բացատրելէն ետև. պիտի սրտամեր հիմանկ թէ ինչ պատճառաւ Ռիկօլէզ արտամ էր, և թէ ինչո՞ւ ոչ ինքն և ոչ իր թոհիները չէին երգեր: Իր կյանքի և թարմակին դէմքը քիչ մը զեղներ էր, իր մեծ սև աչքին որ սուրբարար զուարթուն էին և փայլուն, նուազեր էին և սքօղեր, իր ձեռնին գծերն անսովոր յոյնութիւն մը կը յայտնէին: Բոլոր գիշերուան մէկ մասը աշխատելով անցուցեր էր: Ատեն ատեն իրեն մօտ սեղանին վրայի բաց նամակի մը կը նայէր արամագին, այս նամակը Թէրմէն զրկեր էր իրեն և հետեւեալ ասուրջը կը սրբունակէր:

«Օրիորդ, «Բնասիր թիքի Բանասիր»

«Իմ՝ ցժբազգութեանս մեծութիւնը կրնաս երևակայել այն զերս ցրած տեղէն: Իբր գող բանտարկուեր եմ...: Ամենուն առջև մեղաւարար եմ, և սակայն քեզ գրելու կը համարձակիմ»:

«Վասն զի ստակալի է ինձ հատուղ որ դու ալ զիս իբր մեղապարտու անտրդ էակ մը կը նկատես: Նորաշեմ այն նամակս կարգալէն առով մի գատուարատեր զիս...: Եթէ դու ալ ինչե երես գարձնես... այս յետին հարուածը զիս լեովին կարեմէր պիտի վիրաւորէ:

«Ահա տալի եղելու թխնը:

«Քանի մ'ատենէ վեր Գանըլ փոքրը չէի բնակեր, բայց կ'իմանայի

Տէր Առ իղին միջոցաւ որ Վօրէի բնասնիքն որոց հողը դու և ես պն-
քան կը տանէինք, երթալով կը թշուառանայ: Աւանդ, սոյն խղճարի
ընտանիքին համար ունեցած գութն իմ կորուստս պատճառեց: Չեմ
զղջար այս բանին վրայ, սակայն իմ վիճակս քանի՜ առժանելի է...

«Երէի սովորական հաշիւներու համար Պ. Ֆէրրանի տունէն
ուշ ելայ: Աշխատած սենեկին մէջ դրասեղան մը կար. գլխաւորս ա-
մէն օր ընելիք դործս անոր մէջ կը դնէր: Այն իրիւուն որ շատ անհան-
դիստ, մտայցող կ'երևէր, ինձ ըստ. — Մինչև որ սա հաշիւները չա-
ւարտես մ'երթար. զանոնք գրասեղանին մէջ կը դնես, որուն բանալին
ահա քեզի կը յանձնեմ: — Եւ դուրս ելաւ:

«Երբ դործս աւարտեցի, գրոցը բացի անոր մէջ ամփոփելու հա-
մար. աչքս մերենասպէս բաց նամակի մը վրայ կեցաւ որու մէջ անա-
հատ ձեռքով Վօրէ անունը կարդայի:

«Ար խոստովանեմ, տեսնելով որ ինչքին այս թշուառին վրայ է,
սոյն նորակը կարդալու անխոհեմութիւնը դործեցի, որով և իմացայ
թէ այն արհեստաւորը միւս օրը ձերբակալ պիտի ըլլայ 1,300 Փրանքի
համար, Պ. Ֆէրրանի կողմէն, որ շինծու անունով մը զանի բանտար-
կել պիտի տար:

«Այս գիրը գլխաւորին դործակատարին կողմէն էր: Արդէն Վօրէ-
լնոց վիճակին քաջ հմուտ ըլլալով կ'երևակայէի թէ անխոհեմին
բանտարկութիւնն ինչ ստեղծի հարուած մը պիտի բերէր անոնց...
Սըստիութիւն ու վիշտ սիրտս գրաւեցին: Գծրազգօրէն նոյն գրոցին
մէջ բաց տուի մը տեսայ, որուն մէջ ոսկի կար, 2,500 Փրանք կը
պարտանակէր...: Աոյն պահուն Առ իղին վեր ելնելը բեցի, իմ գոր-
ծիս ճանրութեան վրայ շնորհակալով, 1,300 Փրանք տուի: Սպասեցի որ
Առ իղ անցնի, այն գումարը անոր ձեռքը տուի և ըի: «Աւարտ առտու
կանուխ հայրդ պիտի ձերբակալ ընեն 1,300 Փրանքի համար. առ էս
գումարը, զնա հայրդ աղաւթ, բաց մի՛ բեր որ այս ասակը խնէ ա-
սիբ...» Պ. Ֆէրրան անզգամ մարդ մ'է...»

«Ար տեսնես, օրիորդ, բարի էր իմ գլխաւորութիւնս, այլ գտտա-
պարտելի ընթացքս քեզնէ բան մը չեմ սրահեր...: Հիմեհ պիտի մէջ
բերեմ արդարացումս:

«Երկար տանէ վեր. մեծ խնայութիւն ընելով 1,300 Փրանքի

փոքրիկ գումար մը ժողովրդ և սեղանաւորի մը մօտ շահու գրեք էի:
Ութ օր կայ որ խնայ տուա ինձ որ պարտասնեակին պայմանաւանդ
ընանալու մօտ ըլլալով՝ պատրաստ է փոխ տուած գումարս դարձնելու
եթէ նորէն պայմանաժամը նորոգելու միտք չունիմ:

«Հետեւապէս նօտարէն առածէս աւելին ունէի քովս. միւս օրը
կրնայի իմ 1,300 Փրանքս առնուլ: Բայց սեղանաւորին արկղակեար
կէսօրէն առաջ գլխաւորին գրաստուը չպիտի դար, և Վօրէն ալ առ-
տու կանուխ ձերբակալ պիտի ընէին... ուստի պարտաւոր էի այս վեր-
ջինը կանուխ վճարելու առիկիւլ, ապա թէ ոչ, եթէ ցորեկը երթայի
և վիսքը բանաէն հանէի, դարձեալ իր կնոջ աչքին առջև ձերբակալ
ըլլալով բանտ գրուած պիտի ըլլար, որով կինն անշուշտ վարձանքի մը
պիտի հանդիպէր: Ասկից զատ՝ ձերբակալութեան ահալին ծախան ակ-
նահատին վրայ պիտի մնար: Քաջ կը հասկնաս որ այս ամէն դժբաղ-
դութիւնները չէին պատահէր եթէ 1,300 Փրանքս առնուի, զոր՝ հե-
տեւալ օրը դեռ Պ. Ֆէրրան բան մը չիմացած, նորէն գրոցին մէջ
գնելու կը յուսայի: Գժբաղդօրէն սխալեցայ:

«Պ. Ֆէրրանի տունէն դուրս ելայ, և զկն դործել տուող սրամտու-
թեան և զթափերութեան տարաւորութեան ներքև չըլլալով իմ վիճա-
կիս վտանգին վրայ սկսայ մտածել. բիւրաւոր կասկած ու վախ միտքս
պաշարեցին. նօտարին խոստութիւնը կը ձանձիւնէի, կրնար իմ մեկնելէս
ետե՛ գալ և գրոցը նայիլ... Գողութիւնը երեսն հանել. վառն զի իր
առջև, ամենուն առջև... Գողութիւն մ'է այս:

«Այս մտմտուրը վրս վրդովեցին. թէ և ուշ էր, սեղանաւորին գոցի
աղաչելու որ ստակս իսկոյն ձեռքս յանձնէ. այս տարօրինակ խնդրոյս
պատճառ մը պիտի տայի, և ապա Պ. Ֆէրրանի տունը պիտի գառնայի
առած գումարս տեղը գնելու համար:

«Սեղանաւորը՝ դժնդակ գիպուածով մ'երկու օրէ վեր Պէրլիլ կը
զանուէր, իր գիւղատունը գոցեր էր քանի մը անկարկու թիւններու
համար: Միւս օրը տպակցի անպատում անձկութեամբ, վերջապէս
Պէրլիլ հասց...: Ամէն բան ինձի դէմ կը գա աղբեր, սեղանաւորն
ալ ճիշտ նոյն պահուն ձամբոյ ելեր էր Բարիդ դատարար, նորէն Բա-
րիդ կը վազեմ, հուսի ուրեմն ստակս կ'տանամ, Պ. Ֆէրրանի տունը
կը դառնամ... բաց արդեն բանը երեսն ելեր էր...»

«Բայց ասոնք զեռ իմ՝ աղէտիցս մէկ մասն են . հիմն հոտարը կամ ըստ ասոնէ զիս, որպէս թէ 13,000 Փրանքի լուսնատն գոյցեր եմ իրմէ, և որոնք զբանազանն զգրոցին մէջէն, կըսէ, 2,000 Փրանք սակիին հետ : Այս անարժան ամբաստանութիւն մը, վատանուն տուած լին մ'է : Ար խոտովանիմ՝ առաջին գումարը խորելս, սակայն՝ աշխարհիս ամենէն նո իրական բանի վրայ կ'երգումք թիւ, օրիորդ, որ երկրորդ գոյութեան մասին անսրբա եմ . . . : Նոյն զգրոցին մէջ բնաշումատուն մը չտեսայ, մինակ 2,000 Փրանք սակի կար, որմէ 4,300 Փրանքն առի և փոխարէնը հետս կը բերէի :

«Այս է ահա ճշմարտութիւնը, օրիորդ . ծանր ամբաստանութեան սը ներքե կը գտնուիմ, և սակայն կը հաւատամ որ անկարգ եմ առ խօսելու . . . : Բայց միթէ ինձ պիտի հատան . . . : Բարէ, ինչպէս որ Գ, Ֆէրրան ըստ, սրբիկի գումար մը գողցողը կընայ մեծագոյն գումար մ'ալ գողնալ, և իր խօսքերը հաւատարմութեան արժանի չեն :

«Օրիորդ, զխնայում թէքանի բարի, անձնու էր ես, քանի աննկնդ և աղտախօս ես, կը յուսամ թէ սիրտդ քեզ կ'առաջնորդէ ճշմարտութիւնը որ կողմն է ըմբռնելու . . . : Արի՜շ բան մը չեմ ուզեր . . . : Իմ խօսքերուս հաւատ ընծայէ և պիտի տեսնես թէ՛ որչափ պարտախնայքան կարեկցութեան արժանի եմ, վասն զի, նորէն կ'ըսեմ, զիս աւարտութիւնս բարի էր, անգուշակելի պարտզաներ միայն զիս 'ի կուրատա մասնեցին :

«Ա՛հ, օրիորդ Արի՛կօլէ՛դ . . . շատ դժբաղդ եմ . . . : Աթէ զիսնայիք թէ ինչ տեսակ մարդերու մէջ սպրեւը ստիպում եմ մինչև դատասանիս օրը :

«Երէկ տեղ մը սարին զիս որ ոտակնատ թիւան դրան զխառնը (dépôt) կը կոչուի : Անհնար է նկարագրել զգոյցածս երբ մտ թ ասնոյ՝ զէ մ'ենթեկէն ետեւ . երկրթէ գոնիկ ունեցող գրան մ'առջև հաւայ, զոր բացին և ապա վրայէս գոցեցին :

«Այնչափ սրբոյրէր էի որ 'ի սկզբան չկրցայ բան մը տեսնել : Եսք, նոյնպիսի օք մ'երեսիս վէջ . ձայներ ու աղողակներ լսելի խոսն 'ի խոսն շարագուշակ ծիծաղելու, բարկութեան շեշակու և կոշտ երգելու հետ . զբան մօտ անշարժ կը կենայի սոյն սրահին ստալուց սարքինը զխեղով, և չէի կարող ոչ առաջ ել թալ և ոչ աչքս վեր առնել, կարծելով թէ ամէն մարդ զիս կը գնէ :

«Ամէնք զիս կը զիտէին, սուրի կամ պակաս կալանատ որ մ'այս մարդկան համար նոյն բանն է : Աերջապէս զլուս վեր անդու իշխեցի : Ինչ սակարկ գեմքեր, Ատուած իմ, ինչ ծուխի ծուխի հաղտուներ, ինչ աղմուկի հնոտիներ . թշուառութեան և մոլութեան ամէն երևոյթները : Բառտուն յիսուսի չափ կային, սրը նստած, սրը կանդուն կամ պատկած էին սրտին կցած նստարաններու վրայ, աւաղակ, գող, մարդասպան, վերջապէս ամէն անոնք որ ջորեկը կամ զիշերը ձերբակալ եղեր էին :

«Երբ իմ՝ ներկայութիւնս տեսան՝ տխուր մտիթարութիւն մ'զայցի նշմարելով որ կը հասկնային թէ իրենց դատէն չեմ : Անոնք իրբ ու ծիծաղկոտ երեսով մ'ինձ նայեցան, ապա սկան կամացուկ մ'իբարտահա խօսակցիլ, չգիտեմ ինչ պժղալի լեզուով՝ զոր չէի հասկնար : Քիչ ատենէն ամենէ յանդուզն կալանատուն եկաու ուսիս զարկաւ և ստակ ուղեց իմ ֆալսագրա շնորհատուրելու համար :

«Քանի մը մանրուկ ստակ տուի, այսպէս հանդատութիւնս գնելու յուսով, բայց ասով դո՛հ չեղան և աւելի ուղեցին, ես ալ մերժեցի : Այն ատեն շատերը չորս զիս ստին նախատանք և սպասուելք տեղաւով վրաս . իմ վրայ յարձակելու կը սրտաբաստէին, երբ պահակ մը բարեբաղդօրէն աղմուկը լսելով՝ ներս մտաւ : Գանդատեցայ անոր պահանջեց որ ստած ստախս դարձնեն ինձ . և ըստ որ թէ ուզեմ կընամ թէ թեմ գումար մը վճարելով՝ Բէսպալ ըստած տեղը անցնիլ, այսինքն կընամ առանձին խցիկ մ'ունենալ : Շնորհակալութեամբ ընդունեցայ այս ստալարկութիւնը և այս ոճրապորձներէն հեռացայ, որոնք սպասուելիներ կ'ընէին ինձ սպաղաղին համար . վասն զի, կ'ըսէին, նորէն պիտի տեսնուինք և այն ատեն միշտ իրենց հետ պիտի մնամ :

«Բանտապահը զիս իցիկ մը սարառ ուր բողոր գիշերն անցուցի : «Ահա տակից կը գրեմք թիւ, օրիորդ Արի՛կօլէ՛դ : Աերջը՝ հարցաքննութեան ետքը՝ ուրիշ բանս մը պիտի առաջնորդեն զիս որ լա Գօբս կը կոչուի, և կը վստեմ որ Գէպա՛նի ընկերներէս շատերն այն տեղ պիտի գտնուին : Բանտապահն՝ իմ վշտէս և արտուրէս շարժելով՝ խօսք տուաւ ինձ սոյն նամակը ձեռքը հասցնելու, թէ և սաստիկ աղբիլուած է իրեն այսպիսի շնորհներ ընելու :

«Օրիորդ Արի՛կօլէ՛դ, քու վաղեմի բարեկամութեանդ վերջին ծառա-

յու թիւն մը պիտի խնդրեմ, եթէ Հիմակ այս բարեկամութիւնն ամօթ չես սեպեր քեզ: Աւտի եթէ խնդիրս կատարելու չորհ ընես, ահա կ'առաջարկեմ. նամակիս հետ պիտի ընդունին փոքրիկ բանալի մը և Պուլվար Սէն-Տրեի, թիւ 11 ընտրած տանս դռնապանին ուղղեալ երկրող զիրս: Սոյն գրովս կ'իմացնեմ անոր թէ ինչի պէս կրնաս գործածել ունեցածս և թէ սարսառ որ է հրամաններդ կատարելու . . .

• Բեզ իմ խուցս պիտի տանի: Ղրկած բանալիովս գրասեղանս կը բանաս. մեծ պահարանս մը պիտի գտնես, որուն մէջայլ և այլ թղթեր կան, կ'աղաչեմ սոյն թղթերս պահես. անոնց մէկը քեզի ուղղեալ էր, ինչպէս որ հասցէէն պիտի դիտես . . .: Միւսներն ալ Էրազմուսի գրած են, և այս ալ շատ երջանիկ օրերու մէջ . . .: Մի նեղանար . . .

• Երբէք պիտի չտեսնէիր այն դիրքը: Աղաչեմ որ նոյն գրասեղանին մէջ գտնուած քիչ մը ստակն ալ առնուս, նոյնպէս սնդուսէ քակիկ մը և նարնջազոյն մետաքսէ փոկրիկ միկապ մը՝ զոր մեր վերջին կիրակի օրուան շրջապայութիւններու տոները կը կատէր, և ինչի առիթ Գանրլի փողոցէն հեռանալու օրս: Արջապէս կը փափաքէի որ բաց ՚ի քանի մը ճերմակիղէն լաթերէ՝ զորս բանալը զրկելու կը հաճիս, բոլոր ունեցած զոյքս ու կարասիս ծախել տայիր. թէ անպարտ թէ դատարար գտնուիմ, դարձեալ անունս արատած պիտի ըլլայ և Բարիղէն ելնելու պիտի ստիպուիմ . . . Ա՛ր պիտի երթամ . . .: Ա՛ր պիտի գտնեմ սպրուստ . . . Ատուած միայն դիտէ . . .: Տիկին Պուլվար, Գանրլի վաճառուհին՝ որ արդէն շատ մը բաներ ինձ ծախու տուած և առած է, կարելի է ունեցածս դնէ. պարկեշտ կի՛ն մ'է. այս կարգադրութեամբ մեծ շփոթութենէ կ'ազատիս, վասն զի գիտեմ թէ քանի թանկարկն է ժամանակդ . . .:

«Տանս վարձքը կրնիսիկ վճարած եմ, կը խնդրեմ միայն որ դռնապանին սրտիկ պարզ և մը տաս: Արե՛, օրիորդ, եթէ այս մանր մունր բաներով քեզի ծանրութիւն կտամ, բայց դու ես աշխարհիս երեսը միակ անձն որուն համարձակիմ և կարող ըլլամ գիմելու: Այնպիսի սոյն ծառայութիւնը Պ. Ֆերրանի մէկ զրազրէն պահանջել՝ որուն հետ մտերմութիւն ունիմ, բայց վստիցայ որ քանի մը թղթերու մասին անխոհեմութիւն մը կ'ընէ, անոնցմէ շատերը քեզի կը վերաբերին, ինչպէս որ ըսի, մէկ քանին իմ կենացս տխուր պարագաներու կը սպառ-

կանին: Ա՛հ, հաւատս ինձ, օրիորդ Աիլօլէդ, թէ որ խնդիրս կատարես, քու հիւսօրեայ համակրութեանդ այս վերջին ապացոյցն իմ միակ միջոցարութիւնս պիտի ըլլայ զիս տառապող գժբարդութեանս մէջ, ահամայ կը յուսամ որ մերժում մը չեմ տեսներ քու կողմէդ: Վստիկեալ կը խնդրեմ որ հրամանս տաս ինձ ուր ուրեմն քեզ գրելու . . .: Քանի քաղցր ու փափաքելի է ինձ տառապողին արտունութիւնս յայտնել բարեւեր սրտի մը . . .:

«Աւանդ, միայնակ եմ աշխարհիս մէջ, ոչ ոք իմ հոգս ունի . . .: Այս մնտութիւնն արդէն տածանելի էր ինձ, հիմակ դատէ թէ ինչէ . . .: Եւ սակայն պարկեշտ եմ . . . և սակայն ուրիշի ֆլաս չընելուս, և միշտ իմ կենացս վտանգն աչքս առնող ամէն զէշ բանի ատելութիւնս յայտնելուս գիտակցութիւնն ունիմ . . . ինչպէս որ պիտի տեսնես այն թղթերէն զոր կրնաս կարգալ, և կ'աղաչեմ, լու պահել . . .: Բայց այս խօսքիս ո՞վ պիտի հաւատա: Ամէն մարդ Պ. Ֆերրանը կը յարգէ, ՚ի վաղուց անախի իր ուղղամտութեան համբաւը հաստատուած է, իրաւացի զանգատ մ'ունի ինչի գէմ: . . . և զիս պիտի խորտակէ: Անխաւ իմ ճակատագրիս զլուս կը ծոնեմ: Արջապէս, օրիորդ Աիլօլէդ, եթէ ինձ կը հաստատուի, զիս բնաւ չպիտի արհամարհես . . . իմ վրայ պիտի ջարհիս, և երբեմն անկողմ բարեկամի մը պիտի մտածես: Այն ատեն, եթէ շատ . . . շատ դու թող շարժեմ, կարելի է այնքան վեհանձնութեամբ կը շարժիս որ կ'եղնես օր մը . . . Արե՛ քեզ, (աւանդ, այս բարեւ քանի քանի յիշատակներ կը բերէ միայն) մինչև անդամ բանտիս խօսարանը կ'գաս գիմնագրաւ զիս տեսնելու:

«Բայց ոչ, ոչ, այսպիսի տեղ մը քեզ տեսնել . . . Երբէք չպիտի համարձակիմ . . . և սակայն, դու այնքան բարեպետ ես . . . որ . . .:

«Սոյն զիրս ընդհատելու՝ և բանալիով ու դռնապանին երկրող զրովս՝ զոր շատարա հիմակ պիտի գրեմ, քեզ զրկելու ստիպուած եմ: Բանտապահը կ'իմացնէ ինձ որ զիս դատաւորին առջև պիտի հանեն . . .: Մ'նաս բարեւ, մնաս բարեւ, օրիորդ Աիլօլէդ . . . երես մի գարձներ իջնէ, քու, միմակ քու վրայ գրած եմ յոյսս:

«ՔԲԱՆՍՈՒՄ ԺԵՐՄԻՆ»

«Ք. Գ. — Եթէ պատասխան գրես, նամակդ Պօրթի բանսն ուղղէ»: Հիմակ ընթերցողը հասկցաւ անշուշտ թէ ինչ էր Աիլօլէդին վշակն առաջին շարժառիթը:

Իր ընտիր սիրտը սատուիկ յուզուեր էր թշուառութենէ մը՝ որուն վրայ բնաւ կատկած մ'ունեցած չէր: Թէրմէնին՝ Մէրը տ'երօյի թշուառ սորդւոյն պատմութեան ճշտութեան կուրօքէն կը հատար...:

Հաս խառարարոյ չըլլալուն՝ կը կարծէր իսկ որ հին գրացին չափազանց կը մեծցնէ իր վաւարները: Ընտանիքի թշուառ հայր մ'ազատելու համար գումար մը խորեր էր՝ որուն փոխարէնն անպատճառ պիտի հատուցանէր: Պճնու հիին աչքին այս գործը լոկ վեհանձնութիւն էր:

Վիներու յատուկ եղած հակասութեամբ մը, մանաւանդ Արիօլէզի ֆարդի կիներուն, այս օրիորդն որ մինչև այն օրը՝ ինչպէս միւս գրացիներուն համար՝ Թէրմէնի մասին ալ զուտ գուարթուն և մտերմական զարեկամութիւն մը զգացեր էր, ասոր համար վառվառն համակրութիւն զգաց: Այն ինչ իմացաւ որ Թէրմէն թշուառ, յանիրաւի ասքատանուած, բանտարկուած է, անոր յիշատակը միւս հետամուտներուն յիշատակը ջնջեց: Արիօլէզի զգացումը դեռ ևս սէր չէր, այլ աշխոյժ, անկեղծ, արդահատելի, անձնուիրութեամբ անվեհեր յօժարութիւն մ'էր, ամենամօր զգացում մ'էր իրեն համար՝ մանաւանդ անոր միացած գաղտնութեան նայելով:

Այս էր Արիօլէզի բարոյական կացութիւնն, երբ Ռօտուլֆ իր խաչը մտաւ, գուտը խոհեմարար զարնեղէն ետև:

— Բարի լոյս, գրացուհիս — ըսաւ Ռօտուլֆ Արիօլէզին, — արգեօք գործիդ արդեւք կ'ըլլամ:

— Ա՛չ, գրացի՝ ընդ հակասակն շատ գոհ եմքեզ տեսնելուս, ինչու որ շատ վիշտ ունիմ:

— Եւ իրօք քեզ գունատ կը գտնեմ, կ'երևի թէ լացեր ես:

— Անշուշտ լացեր եմ... և լացու ալ սխառաւ ունիմ...: Թշուառ Թէրմէն... ահա, սա կարդա... — Եւ Արիօլէզի կարճատրոյն նամակը Ռօտուլֆին յանձնեց: — Նայէ որ սիրա կը զիմանայ: Ըսեր էիր ինձ որ անոր հոգը կը տանիս... ահա ցոյց սալու ժամանակը հասաւ — յարեց նա՝ մինչդեռ Ռօտուլֆ ուշի ուշով կը կարդար: — Միթէ այն դարչիքի Ֆէրբանն ամենուն ետևէն ընկեր կը հալածէ: Նախ Աուիլին ետևէն ընկաւ, հիմակ ալ Թէրմէնին դէմ: Ա՛՛՛՛, չար չեմ... բայց եթէ սա նօտարին զլիսին աղւոր ձիւն մը գար շատ պիտի ուրախանայի...: Կ'նշուէս կը յանդիմն այնպիսի սրտիկէտ պատանի մ'ամե

բատանել թէ 15,000 ֆրանքը գողցեր է... Թէրմէնը... այն... նոյն ինչն հաւատարմութիւնը, և ամից զատ՝ քանի կանոնապահ, քանի անուշ... քանի տխուր է... որչափ ցուակցու թեան արժանի է, տէր Աստուած... այն չարագործներուն... այն բանախն մէջ...: Ա՛՛՛՛, սրտոն Ռօտուլֆ, այս օրէն կ'սխալմ գիտել որ մարդկային կենսքին մէջ ամէն բան վարդապոյն չէ...:

— Եւ ինչ ընելու միտք ունիս, գրացուհիս:

— Ի՛նչ ընելու միտք ունիմ... ինչ որ Թէրմէն ինչէ կը պահանջէ պիտի ընեմ և որչափ կարելի է շուտով պիտի ընեմ...: Մինչև հիմակ դուրս ելեր էի թէ որ սա ասիպոզական գործն՝ որ ընկողցի, չըլլար, և զոր իսկոյն Մէնդ-Օնօրէ փողցը պիտի տանիմ՝ Թէրմէնին սենեակն ալ երթալով ըսած թուղթերն առելու համար: Գիշերուան մէկ մտանաւ շատախալ անցուցի որ քանի մը ժամ շահիմ: Այնչափ գործ ունիմ ընելու իմ աշխատութենէս զատ... որ պէտք է ամէն բան մտածեմ...: Նախ՝ տիկին Մօրէլ կը խնդրէ որ երթամ՝ Աուիլը բանար տեսնեմ...: Արելի է դժուարին է, բայց վերջապէս պիտի աշխատիմ...: Գէշն այն է որ չգիտեմ թէ որո՞ւ զիմեւ պէտք է...:

— Այդ բանին մտածեցի...:

— Գո՛ւ, գրացիս:

— Ահա քեզ հրամանագիր մը:

— Ի՛նչ երջանկութիւն: Արդեօք չէիր կրնար թշուառ Թէրմէնին բանան երթալու համար ալ հրաման մը տառնալ... որչափ պիտի ուրախանար...:

— Թէրմէնն ալ տեսնելու ճարը կը գտնեմ քեզի:

— Ա՛՛՛՛, շնորհակալ եմ, սրտոն Ռօտուլֆ:

— Միթէ չեմ վախնար անոր բանան երթալու:

— Անշուշտ, առաջին անգամ՝ սիրտս ստառիկ պիտի զարնէ...: Բայց հող չէ: Միթէ, երբ Թէրմէն երջանիկ էր, միշտ իմ իղձերս կատարելու սրտաբաս չէի՝ գտներ զինքը, միթէ միշտ լիսարուն կամ ժուռ գալու չէր ամներ դեռ, և իրկունները չէր կարդար: Այն, հիմակ ինքը ներդրութեան մէջ է, իմ կարդա է անոր օղնը: Կո՛նի պէս փողրիկ միկ մը ձեռքէն մեծ բան մը չգար... գիտեմ... բայց վերջապէս, կրցածս պիտի ընեմ... կրնայ վառահ ըլլալ... պիտի տեսնէ եթէ բարեխորտ

բարեկամութիւն մ'եմ: Ճշմարիտը, պարսն Ռօտուլֆ, բան մը կայ որ սիրտս կը ճնկէ... այս է իր կասկածաբարութիւնը...: Կնչպէս կը կարծէ թէ զինքը կարող եմ արհամարհել...: Ե՛ս արհամարհեմ, կը հարցնեմ քեզ թէ ինչու համար: Այն ազահ ծերուկ նոտարէն կամ բաստանուի իբր դող... ինչ փոյթս է... քաջ զիտեմ որ սուտ է: Թէ որ Թէրմէնին դիմն արեւուն լուսին պէս պայծառ չհաստատէր անդամ որ յանցաւոր չէ, դարձեալ զինքն անարարտ պիտի համարէի, հէրիք է տեսնել, ճանչել զինքը համարեալ համար որ պիտի կարելի դործ մ'ընելու անկարող է: Պ. Ֆէրրանի պէս անզգամ մէկն ըլլալու է ասանկ զրպարտութիւններ ընելու համար:

— Ապրին, գրացուհիս... կը հաւնիմ սրտմտութիւնդ:

— Ո՛հ, իբր. որ... մարդ կ'ուզէի ըլլալ որ երթամ այն նոտարը դանեմ... և ըսեմ. «Ա՛հ, կը սնդես թէ Թէրմէն կողոպտեց քեզ, լաւ, առ, առ քեզի, ստախոս ծերուկ, ասի չզոգնար քեզիս», և բազ, բազ... կը ծեծէի զինքը բուրդի պէս...:

— Շատ կարուկ է դատաստանդ — լաւ Ռօտուլֆ ժարեղով Ռի-կոյէդին ցատումին վրայ:

— Որովհետեւ այս բանս մարդուն սրտին կը դաշի... և ինչպէս որ Թէրմէն իր նամակին մէջ կ'ըսէ, ամէն մարդ իրեն դէմ մեծաւորին թերը պիտի բռնէ, ինչու որ մեծաւորը հարուստ, ակնածելի... մինչ-դեռ Թէրմէն անպաշտպան խեղճ պատանի մ'է... միայն թէ դու Պ. Ռօտուլֆ անոր օղնութեան հասնիս, դու որ բարեւէր անձեր կը ճանչես...: Արդեօք անոր համար բան մ'ընելու ճարը չից:

— Պէտք է որ իր դատաստանին սոյստէ...: Անգամ մը, ինչպէս որ կը յուսամ, անպարտ երեսնէն ետե՛ւ պաշտպանութեան շատ մը ցոյցեր պիտի ըլլան անոր համար, հաւատարմ եղբի...: Բայց միտ դիբ, դրացուհիս, փորձով զիտեմ որ կարելի է վստահել դաղնապահութեանդ...:

— Ո՛հ, այո, պարսն Ռօտուլֆ... ամենեւին շաղակրատ չեմ:

— Լաւ ուրեմն, պէտք է որ ոչ որ ինձնայ, և նոյն իսկ Թէրմէն չզիտնայ որ շատ մը բարեկամներ անոր վրայ կը հսկին... ինչու որ բարեկամներ ունի...:

— Իրան:

— Շատ զօրեղ, շատ անձնուէր բարեկամներ:

— Եթէ զիտնայ, որչափ սիրտ պիտի առնու:

— Տարակոյս չից: Բայց կարելի է որ երևան հասնու: Այն ատեն Պ. Ֆէրրան վախնալով կ'ուսուցի թիւններ ձեռք ատնուլ, և իր կասկածներն զրոյսիլ: և որովհետեւ շատ վարպետորդի է, դժուարին կ'ըլլայ զանի ամբաստանել, որուն վախճանը ցտարի կը գտնուի: վասն զի ոչ միայն Թէրմէնի անմեղութիւնն երևան երևել պէտք է, այլ և իր զրպարտչին դիմաւր վար ատնուլ:

— Ար հասնիմ միտքդ, պարսն Ռօտուլֆ...:

— Նոյնպէս է նաև Լուիլին համար. այն հրամանագիրը բերիքեղձ որպէս զի զինքը տեսնես և աղաչես որ ինձ յայտնած բաներէն ոչ ինչ չըսէ մէկու մը... այն գիտէ ինչ ըսել կ'ուզեմ:

— Այս բաւական է, պարսն Ռօտուլֆ:

— Մէկ խօսքով, թող Լուիլ չզանգատի բնաւ իր բանտին մէջ տիրող անզգամութիւնէն, ասի կարևոր կէտ մ'է...: Բայց պէտք է որ իր պաշտպանութեան համար իմ կողմէս զրկելիք վաստաբանին ամէն բան յայտնէ, այս բաները լաւ մ'ապստղե անոր:

— Հանդարտ եղբի, դրացիս, բան մը չպիտի մտնամ... լաւ յիշողութիւն ունիմ...: Բայց ես լաւութեան վրայ կը խօսիմ... գու՛մ միայն լաւ ես և վեհասան...: Եթէ մէկը ցառ ունենայ, իսկոյն անոր առջև կը տնկուիս...:

— Քեզ արդէն բոյ, դրացուհիս, ինք՛ը գործակաւոր վաճառական մ'եմ, բայց երբ, ասդիս անդին ճան հաւաք ատեն, պաշտպանութեան արժանի ընտիր մարդիկ տեսնեմ, ինչոյ կտամ բարեւէր անձի մ'որ իմ վրայ կատարեալ վստահութիւն ունի, և շուտ մ'անոնց կ'օգնէ...: Ասկէ աւելի մտտ չունիմ այս բաներուս մէջ:

— Եւ ո՞ր կը բնակիս, հիմակ որ սենեակը Մօրէլէնց յանձնեցիր:

— Ար բնակիմ... կաղմ սենեակ մը:

— Ո՛հ, ինչ զրուելի բան է այդ ինձի համար: Բնակիլ ուր որ ամէն մարդ բնակիբ է, իբր թէ ամէն մարդ քու տունդ բնակածի պէս բան մի է:

— Միտակ զիշերները կ'երթամ, և այն ատեն...:

— Կ'իմանամ... այնչափ անհաճոյ չէ...: Եւ ասկայն ինչ բաներ կը

Հանդիպին մարդուս, պարոն Ռօտոլֆ . . . : Իմ գոհան տեղս քանի երջանիկ կ'ընէր վրս, քանի Հանդարտիկ կեանք մը վարելու կարողութիւն էի, և բնաւ մտքէս չէր անցնէր որ վիշտ մը պիտի ունենամ . . . և սակայն տես մի անդամ . . . : Ա՛չ, չեմ կրնար բացատրել թէ Թէրմէնի դժբաղդ դու թիւնն ինչ մեծ հարուած եղաւ ինձ : Տեսայ Մօրէի լինին և ուրիշ ուղղակի ընտանիքներ, իրաւ է, բայց վերջապէս թշուառութիւնը միշտ թշուառութիւն է . աղքատ մարդիկ այս բանս զխտն, զարմանք չպատճառեր և ամէն մէկն իր ձեռքէն եկած օգնութիւնը կ'ընէ : Այսօր մին է թշուառ, վաղն ուրիշ մը : Սակայն մարդս արիւթ թեամբ և դուար թեամբ աղէկ գէշ իր գլխին ճարը կը նայի : Բայց տեսնել խեղճ պատանի մը, պարկեշտ և բարի, որ երկար ատեն բարեկամը եղած է, տեսնել զանի գողութեամբ ամբաստանուած և սճրագ ործներու հետ խառն 'ի խուսն բանտարկուած . . . ս՛հ, իրաւ որ, պարոն Ռօտոլֆ, սիրտս չլի մանար այս բանին, անանկ դժբաղդութիւն մ'է որ մտքէս բնաւ անցած չէր, և զիս սատակի կը վրդովէ . . . :

Եւ Ռիօլէ դին մեծ աչելը արտասքով լցան :

— Արիւթ թիւն, արիւթ թիւն, նոյէն զուարթութիւնդ պիտի դաննս երբ բարեկամդ դատէն անպարտ ելնէ . . . :

— Ա՛հ, անտարակոյս պէտք է որ անպարտ դատուի . . . : Բաւական է դատարաններուն կարողալ ինձ դրած գիրը . . . այնպէս չէ՛, պարոն Ռօտոլֆ :

— Եւ արդարեւ, այս պարզ և սրտաշարժ նամակը ճշմարտութեան գրոշմն ունի . պէտք է որ անոր օրինակը առա ինձ, Թէրմէնին պաշտպանութեան կրնայ նպաստել :

— Անշուշտ, պարոն Ռօտոլֆ : Եթէ ճշմարիտ կատուի մը պէս չլըքէի, թէ և այն բարի Թէրմէնէն դաս ալ առ երեւմ, կ'առաջարկէի քեզ սոյն գիրն օրինակելու . . . բայց անանկ խոշոր, անանկ ծուռ կը դրնս որ . . . ասիկ զատ այնչափ, այնչափ ստուախաղ կ'ընեմ . . . :

— Պիտի խնդրեմ որ նամակը մինչև վաղն ինձ յանձնես :

— Ա՛հա, սա, զբացիս . բայց լաւ պիտի սրահես, այնպէս չէ . . . : Մեր ծանօթութեան առջի օրերը Պ. Գապրիժովին և Պ. Թիրօսովին զբաժրող սիրազրկն այրեցի, որոնք բոցավառ սրտեր, և թղթին վերևը ազանիներ ունէին, և կը կարծէին որ իրենց շղթանարար խօսքերուն սկիւնը

պիտի կախեմ . բայց Թէրմէնին այս աղէտաւոր նամակը ուշի ուշով պիտի սրահեմ, նոյնպէս ուրիշ գրեր ալ եթէ գրէ . . . : Չանս դե, այնպէս չէ՛, պարոն Ռօտոլֆ, այս փոքրիկ ծառայութիւնները խնդրեմքն կը հասկցուի որ իմ վրայ հանարուածնի :

— Տարակոյս չկայ . ասիկ կ'իմացուի որ կարելի եղածին չափ ամենընտիր փոքրիկ բարեկամութիւնս : Բայց, բան մը կը մտածեմ . . . : Պ. Թէրմէնի մեծ միտակ երթալու տեղ կ'ուզես որ քեզի ուղեկցում :

— Յօժարակամ, զբացիս . Գիշերը մեծ է, և չեմ սիրեր մութին վաղցնելը սրտառի միտակս, մանաւանդ որ Բայէ-Վոյսի կողմնն ալ գործ տանելու պիտի ելլեմ : Բայց այնչափ հեռու ճամբայ քալելը, կարելի է քեզ յոգնութիւն ու ճանձրոյթ տայ :

— Ամենին . . . և իրանիս մը կը բռնեք . . . :

— Իրաւ : Ա՛հ, որչափ պիտի զուարճանայի կատրով երթալովս՝ և թէ միշտ չունենայի : Եւ վիշտս մեծ պէտք է ըլլայ որ քանի հոս եկած եմ առաջին անգամն է որ օրուան մէջ չեբցեցի . . . : Թոնիկինքս բողբոջին շուտեր են . . . : Խեղճ փոքրիկ կենդանիներ . չեն հասկնար թէ ինչ կը նշանակէ այս բանս . Պապ . Քրէթլէն մէկքանի անգամ երկեց զիս զգուշութեամբ . պատասխան առ ուղեցի, ս՛հ, անվիտ էի, շատ չանցաւ սկսայ լալ . . . : Ռաժմէքն ալ սկսաւ, բայց չկոչայ անոր ալ պատասխանել :

— Թոնիկներուդ ինչ զարմանայի անուններ առ երեւս, Պապ . Քրէթլէն և Ռաժմէքն :

— Իրաւի, պարոն Ռօտոլֆ, թոնիկներս իմ ամենձնութեանս միտթարութիւնն և ստիկն ընտիր բարեկամներս են . իմ մանկութեանս ուրախութիւնն, նոյնպէս իմ ամենաբարեկամներս եղող անձն բուն անուններով կրկնեցի զանոնք, մանաւանդ որ նամակ թիւնը կատարեալ բնեղութեամբ, Պապ . Քրէթլէն և Ռաժմէքն բարի Աստուծոյ թոնիկներու պէս զուարթ էին և կ'երգէին :

— Ա՛հ, հիմակ . . . իրօք . . . կը լիշեմ . . . քու որդեգիր ծնողքդ այսպէս կը կոչուէին . . . :

— Այո՛, զբացիս . այդ անունները ծագրելի են թոնիկներու համար, գիտե՛մ, բայց սոյդ ալ ինձ կը վերաբերի . . . : Բան մ'ըլլա՞ր, այս առթիւ ալ զխտնի որ Թէրմէն իմաւ ընտիր սիրտ մ'ունի :

— Ի՞նչպէս ուրեմն :

— Անշուշտ . Պ. Ժիրօտո և Պ. Գապրիօն . . . մանաւանդ Պ. Գապրիօն, միշտ կը ծաղրէր իմ թու չնիկներու անուանները . դեղձանիկ մը Պառայ Բրեյդի անուանել, կը բէր, ինչ սյլանդակ բան : Պ. Գապրիօն անդադար թուչունս մտոր կը փաթ թէր և զբր զբր կը խնայար . . . : — Թէ որ ազաղազ մ'ըլլար — կը բէր նա — ինչ և է, կընայիր զանի Բրեյդի կոչել : Ինչպէս է նաև էդ դեղձանիկդ անունը, Ռաժմէկոյ, որ Ռաժմէի կը նմանի : — Աերջապէս այնքան համբերութիւնս հատուց, որ երկու կիրակի սրանեղա թե՛նէս հետը դուրս չեցայ, անոր հասկցնելու համար . . . և բացէ 'ի բաց ըսի անոր որ ի՞նչ կատակները շարունակէ, որ ինձ ցաւ կը պատճառէին, բնաւ հերոզ դուրս չպիտի երնեմ :

— Ի՞նչ անվեհեր որոշում :

— Այս բանս սոյն նստաւ ինձ . . . իրաւ որ պարոն Ռօտովօ, ես որ Յէսիային սէս կ'ըսապօէի կիրակի օրերն որ դուրս երնեմ, սիրտս կը նեղանար իրաւ երբ դեղեցիկ օր մը տունը միս մինակ մնայի, բայց փոյթ չէի ընէր, և աւելի աղէկ ունէի կիրակին զոհելու քան իմ յարգած բանիս վրայ Գապրիօնի կատակները լսելու : Սակայն դարձեալ իմ թու չնիկներու ուրիշ յարմար անուններ տարու չէի դժկամակ' չ, եթէ ունեցածնին մանաւանդ իմաստ մը չընենային ինձի համար . . . : Ճշմարիտը, անուն մը կայ մանաւանդ որ յետին ծայր պաշտելի է ինձ . . . այս է Բօլեպրի . . . : Լաւ, անկից ալ զրկուեցայ, վասն զի իմ ունեցած թու չնիկներու Բրեյդի և Ռաժմէի անուններէն զատ անուն չպիտի տամ երբեք . ոչ, ինձ այնպէս պիտի երևի թէ կը զոհեմ, կը մտնամ իր բարի որդեղիք ծնողքս, այնպէս չէ՛, պարոն Ռօտովօ :

— Իրաւունք ունիս, հազար անգամ իրաւունք ունիս . . . : Եւ միթէ Ժէրմէն այս անունները չէր հեղներ :

— Ամենևին . . . մինակ, առայլն անդամ, այս անուններն իրեն ծիծաղաշարժ երեցան, ինչպէս ուրիշներու ալ, և զարմանք չէ . բայց երբ իմ պատճառներս մէջ բերի . . . ինչպէս որ Պ. Գապրիօնին ալ մեկներ էի, աչիւն արտաբերով լցան : Այն օրէն ըսի իւրովի . Պ. Ժէրմէն խիստ զնախի և բարի սիրտ մ'ունի, մինակ իր արամութիւնը կ'աւրէ : Եւ, կը տեսնես, պարոն Ռօտովօ, իր տրամութիւնը կարելու զէշ եկաւ

ինձ . . . : Այն սասն տրտում ըլլայն ի՞նչ է չլիտէի . . . հիմակ շատ լաւ կը հասկնամ . . . : Բայց ահա ծրարս լինցաւ, և տանկու գործս սրատրատ է, շալս կտան ինձ, զբայիս : Լօղիլի պէտք չէ, ցուրտ չկայ, այնպէս չէ՛ :

— Ատրով պիտի երթանք և նորէն պիտի բերեմ քեզ :

— Իրաւ է, աւելի շուտով երթանք և դաւանանք պիտի, ասով ժամանակի ալ կորուստ չըլլար :

— Բայց միտքս բան մ'եկաւ, ինչպէս պիտի ընես Բանտերն ընելիք այցելութիւններէդ գործէդ ետ պիտի մնաս :

— Ո՛հ, բնաւ, ամենևին . . . ես արդէն հաշիւս ըրի : Նախ կիրակի օրերս ունիմ . այս օրերը Լուիզն ու Ժէրմէնը տեսնելու պիտի երթամ, ճեմելիք ու փոփոխ մը պիտի ըլլայ ինձ . տարա, շարժու մէջ, մէկ երկու անգամ բանալ պիտի երթամ, և ամէն մէկ անգամուն երեք ժամ պիտի կորուսեմ, այնպէս չէ : Լաւ, կարգս չաւրելու համար, օրը ժամ մ'աւելի պիտի աշխատիմ, կէս զիշերին պիտի պատկիմ, փոխանակ տանամ կիկն պատկելու, և ասով շարաթը եօթն ութ ժամ անվրէպ պիտի շահիմ և Լուիզն ու Ժէրմէնը տեսնելու պիտի զտրճածեմ . . . : Պը տեսնես երեցածէս աւելի հարուստ եմ — յարից Գիլիօլէդ ժայտելով : —

— Եւ չէս վախնար որ ասով կը յոգնիս :

— Բն, պիտի վարժիմ, մարդ ամէն քանի կը վարժի . . . և այս ալ կայ որ երկար չպիտի տևէ . . . :

— Ահա ատիկ շարդ, զբացուհիս . . . :

— Այգէ . . . և նայէ որ զիս չկծես :

— Է՛հ . . . զնոյանողը ծոած է :

— Լաւ, ուրիշ մ'աւ . . . բարձիկն վրայ կայ . . . : Ա՛հ, քիչ մնայ պիտի մոռնայի, կ'ուզես, զբացիս, շորհ մ'ընել ինձ :

— Հրամայէ, զբացուհիս :

— Ինձի համար արդոր զրիշ մը կարէ . . . հաստ ըլլայ . . . որպէս զի 'ի դարձիս կարող ըլլամ գրելու այն խեղճ Ժէրմէնին որ իր ապստարածները կատարելի . . . : Ատիկ առտու կանուխ նամակս բանտին մէջ ստանալուն, շատ պիտի ուրախանայ . . . :

— Եւ ո՛ր են փետուր գրիչներդ . . . :

— Սեղանին վրայ . . . Զմեղին գորոցին մէջն է . . . Սպասէ , մնան
պիտի վառեմ , որովհետեւ մտ թն սկսաւ կոխել և բան մը չտեսնուիր :

— Հարկաւ լոյս պէտք է գրիչ կտրելու համար . . . :

— Ասկից զատ՝ գրակիս կտրելու համար ալ պէտք ունիմ :

Ռիկօլէզ վառիկ մը շողացուց , և փախկուն աշտանակի մը վրայ
անկուած մտի մը կտորը վառեց :

— Թշուառական . . . մտ ալ ունիս . . . դրացուհիս . . . ինչ ճոխու-
թիւն է այդ :

— Աւառած մտն այնչափ սղի ճտտիր ինչ որչափ կանթեղը , և ա-
ւելի մաքուր է . . . :

— Աւելի սուղ չէ :

— Տէր Աստուած , չէ , հասցրու : Այս մտի կտորները քաշով կը
դնեմ , և կէս քաշ բան մը գրեթէ տարին կը հանէ :

— Բայց — ըսաւ Ռօտովֆ գրիչն ուշադիր կտրելով , մինչդեռ
պճնուհին գրակը կը կտտէր հայրին առջև — կը նայեմ որ կերակուրի
պատրաստութիւն չունիս :

— Ամենին անօթի չեմ . . . : Այս ատուութիւն մը կաթ խմեցի . .
այս իրկուն ալ թաս մը պիտի խմեմ . . . քիչ մը հացով . . . և այսչափը
բաւական է :

— Միթէ չեմ ուզեր՝ ատանց քաշուելու ըսէ , հետո ճաշ ընել ,
Ժէրմէնը տեսնելէն ետե :

— Ընորհակալ եմ , դրացիս , սիրտս շատ ելած է , ուրիշ անգամ սի-
բով կընդունիմ . . . : Նայէ իմ միտքս ինչ է , Ժէրմէնին բանտէն ելնե-
լու առջի իրկունը քու հիւրդ պիտի ըլլամ , և ապա զիս թատրոն ալ
պիտի տանիս . առանկ աղէկ չըլլար :

— Զատ աղէկ կըլլայ , դրացուհիս . հաւատի եղիր որ չպիտի մոռ-
նամ այս խոստումս . . . : Բայց , այսօր , ինչու կը մերժես :

— Ար մերժեմ , պարոն Ռօտովֆ , որովհետեւ անհամ ընկերուհի մը
պիտի ըլլամ , և ժամանակի ալ կորուստ պիտի ունենամ : Գտածէ ան-
գամ մ'որ . . . մանաւանդ հիմակ ծուլութիւնը մէկը թող տալ պէտք
եմ . . . և պարտապէս քառորդ մը չկորուսել :

— Այն , այս օրուան համար . . . կը հրաժարիմ այդ զուարճութիւնէ

— Ահա , ծրարս ան , դրացիս , դուռը պիտի գոցեմ :

— Ահա քեզ ընտիր գրիչ մը . . . հիմակ աւ ծրար . . .

— Նայէ որ չաղատես . . . լարակ մեռաբէ կերպաս է . . . ծալքը
չշտկուիր . . . ձեռքդ բռնէ . . . սապէս . . . թեթեւ մը . . . : Աղէկ է . . .
հիմակ անցիր . . . լոյսը կը բռնեմ քեզ . . . :

Եւ Ռօտովֆ վար իջաւ , մինչդեռ Ռիկօլէզ առջևէն կեղծար :

Այն միջոցին որ դրացի ու դրացուհի դռնապանին օթեկին առջև
էն անցան , Պ. Բիբլէն տեսան , որ , թեւերը կախ , գաթիկն խոբէն
դէպ իրենց կը դիմէր , մէկ ձեռնով բռնել էր ծանուցադիրն որ հասա-
լակութեան կիմացներ թէ Բարեկամութեան հաշտութեան կընդ-
Գապրիօնի հետ , միւս ձեռնով անիծեալ պատկերհանին կենդանադիրը :
Արժեքտի յուսահատութիւնն այնքան ծանր էր որ իր կողմը կրծքին կը
գպէր , և միմակ լայնբերան փեղդրին ահագին յատակը կը տեսնուէր :
Անոր գայը տեսնելով այսպէս կորագլուխ՝ դէպ ՚ի Ռօտովֆ ու Ռիկօ-
լէզ , մարդ կարծէր թէ լոյ մը , կամ քաջ ախոյեան մ'է որ պատե-
րադի կը պատրաստուի . . . :

Զատ չանցաւ Անաստազի օթեկին սեմին վրայ երեցաւ , և իր ամու-
սինը տեսնելով պօռաց :

— Այն ուրեմն , սիրական ծերուկ . . . ահա դարձար . . . ինչ ըսաւ
քեզ ոտսիկանը . . . Արժեքտ . . . Արժեքտ . . . շորս դիւ նայէ , հիմա
պիտի կոպչեա տունորներուս թագաւորը . . . առջևդ կեցեր է . . . :
Ներքէ , պարոն Ռօտովֆ . . . այն անօրէն Գապրիօն է որ օր օրի ան-
բան կը դարձնէ էրիկս . . . : Անշուշտ գրաստ մը պիտի ընէ . . . այս
սիրական ծերուկը . . . : Արժեքտ , բերանդ կարե՛ր ես , խօսէ :

Այս իր սրտին սիրելի ձայնը լսելուն Պ. Բիբլէ զլուխը վերցուց . իր
դէմքին վրայ մթին դառնութիւն մը կը տիրէր :

— Ռատիկանն ինչ ըսաւ քեզ . . . հարցուց Անաստազին :

— Անաստազի , պէտք է մեր քիչ շատ ունեցած բաները ժողկել ,
մեր բարեկամները գրիել , մեր մտուկները պատրաստել . . . և . . . Բա-
րիօն . . . Ֆրանսաէն . . . իմ գեղեցիկ Ֆրանսաէս . . . տարագիր եր-
թալ . . . ինչու որ , հրէ չն անպատիժ մնալիքը գիտնալով ամէն տեղ պիտի
հարածէ զիս . . . նոյն իսկ պետութեան բոլոր դատարներու տարածու-
թեան մէջ . . . :

— Ինչու, ոստիկանն ինչ ըրաւ :

— Ոստիկանն — գոչեց Պ. Բիրլէ զայրագին սրամտութեամբ մը — ոստիկանը . . . քթիս խնտայ . . . :

— Բու քթիդ մի . . . դու որ ալևոր մարդ մ'ես, դու որ անանկ պատկանելի երես մ'ունիս որ սագի պէս անբանի տեղ պիտի անցնիս եթէ առաքինութիւններդ չձանչեն . . . :

— Լաւ, դու սա նայէ որ, երբ յատեան հանեցի անխաժութեամբ իմ դանդամներուս և որդեքներուս համբարը այն դժոխային Գապրիճին դէմ . . . դատաւորը . . . ծիծաղելով, այո՛, ծիծաղելով . . . և կը համարձակիմ ըսելու, անվայել կիբայով ծիծաղելով նայելէն ետև . . . ծանուցադիրն ու կենդանադիրն իրր հաստատական փաստեր, այն դատաւորը պատասխանեց ինձ. «Իմ քաջս, այդ Գապրիճնը ծիծաղաշարժ մարդ մը պիտի ըլլայ, և ծաղրածուն մէկը, իր կատակները բանի տեղ մի գներ: Բեզ կը յորդորեմ պարզապէս որ ինտաս աննայ վրայ, և իրօք ալ ինտալու բաներ են: — Ինտալ մի, որա՛րքն — գոչեցի ես, ինտալ մի . . . բայց տրամութենէ կը հարիմ կը մնալիմ ես . . . բայց այս անօրէնը կենսաբ կը թուճառ որէ . . . դիս առակ նշաւակի կ'ընէ, ինչքս պիտի թուցնէ . . . : Կը ինդրեմ որ բանտարկուի, արտաքսուի . . . դոնէ իմ փողոցէս:» Այս խօսքիս վրայ դատաւորը ժպտեցաւ և քաղաքավարութեամբ մ'ինձ գուռը ցցուց . . . : Դատաւորին այս շարժումը հասկըցայ . . . և ահա այս տեղ դարձայ եկայ . . . :

— Չպիտոյ դատաւոր . . . — գոչեց տիկին Բիրլէ :
— Ամէն բան բուսաւ, Անատողի . . . ամէն բան լմնցաւ . . . ան յոյս չկայ, ալ արդարութիւն չկայ Գրանտաի մէջ . . . չարաչար նահատակ կ'ընեն զիս . . . :

Իւ իբր վերջաբան՝ Պ. Բիրլէ բոլոր ուժովը դաթին խորը նետեց ծանուցադիրն ու կենդանադիրը . . . Ռօտուլֆ և Ռիկօլէդ Պ. Բիրլէի յուսահատութեան վրայ փոքր ինչ ժպտեր էին հետուէն ստուերին մէջ. Ալֆրէտին քանի մը միտիմարական խօսքեր ուղղելէն ետև թէև Անատողի զանի հանդարտելու կը ջանար, որ անորոնէրու Խաբաւորը Գանբլ փողոցի տունը թողուց զնայ Ռիկօլէդին հետ, և երկուքին ալ երկանքս մը մտան Գրանտուա Թէրմէնին բանտը երթալու համար :

Գ Լ Ո Ի Խ Գ

Կ Տ Ս Կ

Գրանտուա Թէրմէն՝ Սէն-Տընի պուրվարն թիւ 44 տունը կը բնակէր: Հարկ է յիշել ընթերցողին, քանի որ մտոյած պիտի ըլլայ անշուշտ, թէ տիկին Մաթիէօ անդամանդեղէնի միջնորդուհին, որուն վրայ Յօրէլ անահաստին առթիւ խօսեր էինք, Թէրմէնին բնակած տունը կը նստէր: Ռօտուլֆ Ռիկօլէդին ընտիր բնաւորութեան այլ և այլ նշաններն դիտեց երբ Գանբլ փողոցէն մինչ Սէնդ-Օնօրէ երկայն փողոցը կ'երթային, ուր Ռիկօլէդին գործ տուող գլխաւոր կարկարուհին կը բնակէր, և որուն պիտի տանէին ձգէին սուսջ լմնցած կարեւրը: Գնադրուումով բարի և անձնուէր անձերու պէս՝ Ռիկօլէդն ալ իր վարմունքին փափկութեան և վեհանձնութեան գիտակցութիւնը չուներ, վասն զի ըրածը իրեն շատ բնական կ'երևէր:

Թէպէտ շատ դիւրին բան մ'էր Ռօտուլֆին համար Ռիկօլէդին ներկան ու ապագան առատաձեռնութեամբ ապահովել, և Լուիզ ու Թէրմէնը ողորմաիրաբար միտիմարել տալ, այնպէս որ այցելութիւններուն պատճառաւ աշխատանքէն որ իր միակ օրասպահին էր, դողցած ժամանակին վրայ անհող ըլլայ, բայց իշխանը սիճնուհին անձնուիրութիւնը դիւրին գործելով, կը վախնար անոր արժէքը տկարացնել, որչափ որ անոր անգիւս և սիրուն յատկութիւնները ժամանակին վարձատրելու որոշած ըլլալով կը փափաքէր գիտել թէ այս նոր ու սրատու ճախորդութեան մէջ Ռիկօլէդ մինչև վերջն ինչպէս պիտի վարուի:

Միթէ հարկ է ըսել, որ եթէ նորաբոյս օրիորդին առողջութիւնը փոքր ինչ աղքատ էր իր աշխատութիւնն արիսպէս աւելցնելուն պատճառաւ, որպէս զի շաբաթը քանի մը ժամ անհաստին աղջկին և Մէդր-տէրօլին որդւոյն նուիրէ, Ռօտուլֆ անմիջապէս անոր օգնութեան պիտի համներ:

Ինդութեամբ ու այլայլութեամբ կը զննէր այս ՚ի բնէ երջանիկ և տրամութեան անհարորդ բնաւորութիւնը, որ ատեն ատեն ցնծութեան նշոյլ մը դեռ ևս զանի կը լուսաւորէր:

Ժամէ մը՝ երկանիւր Սէնդ—Օնօրէ փողոցէն դառնալով Սէն—Տընի պարկարը թիւ 11 անշուք տան մ'առջև կանկ առաւ : Ռօտովֆ Ռիկօլէշին օդնեց որ վար իջնէ, և ներս մտաւ դռնապանը տեսնելու և Ժէր Զինի խնդիրն անօր հաղորդելու, չմտնալով նաև ընծան : Սէդր տէքօլի որդին իր անուշ ընտօրութեան պատճառաւ ամէն տեղ ինքզինքը սիրցուցեր էր : Պ. Բիբլէի պաշտօնակէցն ահ ու դողելաւ իմանալով որ տունէն սլախ կորուսեն պարկեշտ և հանգարաւ տունօր մը . . . : Ասանք իր խօսքերն էին : Պճնուհին ճրագ մը ձեռքը դնաց իր ընկերին միացաւ, և դռնապանը քիչ մը վերջը վեր պիտի ելնէր յետին պատուհանէն ընդունելու համար : Ժէրմէնի խոյը չորօրդ դատիկներ կը գանուէր : Երբ դրան առջև հասաւ Ռիկօլէզ Ռօտովֆին ըսաւ, բա՛նալին սպառի :

— Առ սա բանալին . . . դուրը բաց, ձեռքս շատ կը դողայ . . . : Հիմանկ սլախ ինասա վրաս, բայց, քանի մտածեմ որ այն խեղճ Ժէրմէնն ալ հոս չսլախի դայ . . . ինչ կ'երևի թէ մտուելի մը տեսնակը պիտի մտնեմ . . . :

— Ո՛չ ինչ բաներ մի մտածեր, դրացուհիս, և այդ խորհուրդներդ ցրուէ :

— Անհիմն է վախս, բայց ինչ ընեմ, ձեռքս չէ . . . :

Իս արասուք մը սրբեց :

Թէև Ռօտովֆ իր ընկերուհին չափ այլայլած չէր, սակայն սոյն արարդ բնակարանը մտնելուն տխուր սպաւորութիւն մ'զգաց : Գիտնալով թէ Սէդր տէքօլի դաւակնոյնն ինչ նողկալի միջոցներով հարածեր էին և թերևս տակախն կը հարածէին Ժէրմէնը՝ կը դուշակէր որ այս եղիկին սոյն առանձնութեան մէջ խիստ տխուր ժամեր անցուցած պիտի ըլլար անշուշտ : Ռիկօլէզ ճրագը տեղանի մը վրայ դրաւ : Շատ պարզ էր այս ամուրիի տեսիլն կարասին, որ կը բաղկանար մահճէ մը, դարանակէ մը, ընկուղիների գրասեղանէ մը, չորս յարդէ աթոռէ և սեղանէ մը . . . ձերմակ կտուէ վարագոյրներ սրտու հաններն ու մահճը կը ծածկէին, իբր զարդ՝ վառարանին վրայ լոկ բլշակ մը և բաժակ մը կային : Չբացուած անկողինն ճնշուած տեղեւոյն դիւրին էր նշմարել որ Ժէրմէն ձերանկարութեան առջի դիշերն անօր վրայ հագուած պառկելով քանի մը վայրկեան անզուցած պիտի ըլլար :

— Խեղճ պատանի — ըսաւ Ռիկօլէզ արամային և ուշի ուշով քննելու հաւ տեսնելին ներքի կողմը — յայտնի է որ ես ալ իր դրացուհին չէի . . . : Ամէն բան կարդին է, բայց բոլորովին մաքուր չէ : ամէն կողմ փոշի կայ, վարագոյրները ծխոտեր են, սպակիները գեղներ, և գետնն անփայլ է . . . : Ա՛հ, ինչ մեծ սարքերու թիւն կը տեսնեմ . . . : Դանբլ փողոցին խոցն ալ աւելի սարոր չէր, բայց աւելի զուարթուն էր, ինչու որ իմ տեսնելիս պէս, ամէն կողմը մաքրութեամբ կը ծփար . . . :

— Պատճառն այն է որ դու ալ հոն էիր . . . և խորհուրդ կտայիր :

— Բայց նայէ անգամ մը — դռնեց Ռիկօլէզ անկողնը ցոյց առաւ ընդ — անցած գլշեր չէ քնացեր, այնչափ անհանգիստ է եղեր : Նայէ : սա թաշկինակն որ ձգեր է հոս արտաքով թրջեր է : Յայտնի կ'երևի . . . : — Իս զայն առաւ յարելով :

— Երբ երջանիկ էինք՝ Ժէրմէն իր տուած մէկ նարնջադոյն մետաքսէ փորելի վզկապս պահեց, ևս այս ցոյց թաշկինակը պիտի պահեմ ի յիշատակ իր թշուառութիւններուն, սայդ եմ որ չպիտի սրդողի այս բանիս . . . :

— Ընդհակառակն, ուրախ պիտի ըլլայ այդ սիրոյդ մէկ նշանին համար :

— Հիմանկ աւելի ծանր խնդիրներու մտածենք. դարձնակին մէջ գտած բարդ ձերմակ լաթերը պիտի ծրարեմ որ իրեն տանիմ՝ բանոր, իսկ Պուվար խաթունն ալ՝ որ վաղը հոս պիտի դրկեմ, միւս բաները կարդի կը դնէ . . . : Առաջ դրասեղանը պիտի բանամ որ թղթերն ու ստակն առնում, վասն զի Ժէրմէն կ'աղաչէ որ քովս պահեմ :

— Բայց աղէկ միտքս ընկաւ — ըսաւ Ռօտովֆ — երէկ Լուիլ Մօրէլ 1,300 ֆրանք ոսկի ինչ յանձնեց՝ զոր Ժէրմէն իրեն տուեր էր աւնահատին պարտքը վճարելու, և ես արդէն վճարեմ էի : այս դումարը քովս է, Ժէրմէնին ստակն է, քանի որ նոտարին պահանջը վճարեց, քեզի պիտի տամ զայն որպէս զի այն ստակին մօտ դնես, որուն աւանդապահն ես :

— Նույզէս որ սերժան դատես, պարոն Ռօտովֆ, սակայն, աւելի լաւ կը տեսնեմ այդպիսի մեծ դումար մը տունս չպահել, հիմանկ գող շատ կայ . . . : Եթէ թողիմ ըլլայ հոյ չէ . . . վախ չկայ, բայց ստակը . . . վաճաղաւոր է . . . :

— Թերևս իրաւունք ունիս, գրացուհիս. կուզեմ որ քովս աւանդ պահեմ այն գումարը: Եթէ Թերմէն բանի մը պէտք ունենայ, ինչոյն ինձ իննց տուր, իմ հասցէս քեզի կը թողում և խնդրածը քեզի կը դրկեմ:

— Ճշմարիտը, գրացիս, չպիտի համարձակէի այս շտրհը քեզնէ ինդրել, այսպէս սուելի աղէկ է. նոյնպէս քեզի պիտի յանձնեմ ծախուելիք բաներէն գալիք գումարը...: Արդ՛ նայինք սա թղթերը — Ըստ նորատի օրիորդը գրասեղանն ու շատ մը գորոցներ բանալով: — Ա՛հ, հաւանական է որ սա է... ահաւասիկ խոշոր պահարան մը: Ա՛հ, Աստուած իմ, նայէ անդամ մը, պարոն Ռօտովֆ, ինչ տխուր բան է թղթին վրայ գրածը:

Եւ Ռիկօլէդ այլալուծն ձայնով մը կարդաց:
«Եթէ երբէք բուռն կամ բնական մահուամբ մեռնիմ, կ'աղաչեմ սոյն գրասեղանս բացող անձն՝ որ այս թղթերը օրիորդ Ռիկօլէդին կարկարուհիին տունը տանի յանձնէ, որ կը բնակի Գաննիլ փողոցը, թիւ 17:»

— Արդեօք կրնամ այս պահարանի զմուռն հանել, պարոն Ռօտովֆ:

— Անշուշտ: Թերմէն գրած չէ քեզի որ սոյն թղթերուն մէջ յատկապէս քեզի ուղղեալ նամակ մը կայ:

Նորատի օրիորդը զմուռը քակեց. շատ մը գիրեր կային անոր մէջ, որոցմէ մին սա հասցէն ունէր. Ա՛ս օրէնք Ռիկօլէդ, և հետեւեալ տողերը կը պարունակէր:

«Օրիորդ, երբ այս նամակը կարդաս իմ շունչս աւանդած պիտի ըլլամ...: Եթէ, ինչպէս որ կը վախնամ, բուռն մահուամբ մեռնիմ թակարդի մը մէջ ընկնելով՝ որուն նմանը տեսայ մօտ օրերս և հազիւ աղատեցայ, ասոնց կցօրդ՝ Ժանօթուֆին Կենաց Գրայ խորագրով թղթի մը մէջ տուած քանի մը տեղեկութիւններէս, կարելի է մարդասպաններուն հետքը գտնել...:»

— Ա՛հ, պարոն Ռօտովֆ — ըստ Ռիկօլէդ խօսքն ընդմիջելով — ալ հիմակ չեմ գործնաւոր եթէ Թերմէն այնքան տխուր էր...: Թշուառ Թերմէն, միշտ այսպիսի տեսիլներու ճարակ եղեր էր...:

— Այո, ՚ի հարկէ վշտահար պիտի երևէր, բայց իր ամենէն գէշ օրերն անցուց... հաստն ինձ...:

— Աւել, իմ փախստս ալ այդ է, պարոն Ռօտովֆ. բայց բանս մնալ... իբր գնդ ամբաստանուիլ...:

— Անհոյ եղիր, անդամ մ'իր անմոզութիւնը հաստատուելէն ետև՝ փոխանակ առանձնութեան դատարարտուելու... բարեկամներ պիտի գտնէ... նախքեզ, ասոր սիրական մայր մը՝ որմէ իր մանկութեան վեր բաժնուեր է:

— Իր մայրը... միթէ մայր ունի՞:

— Այո... և մայրը կարծէր թէ որդին կորուսած է: Երևակայէ անդամ մը թէ ինչ ուրախութիւն պիտի զգայ երբ զանի վերստին տեսնէ, բայց բարբառիկն իրեն գէմ եղած անարժան ամբաստանութենէ անպարտ ելած: Ուրեմն իրաւունք ունէի ըսելու քեզ որ իր թշուառ օրերը ընկնան: Մի խօսիր անոր բան մը մօրը վրայ: Այս գաղտնիքը կը հաղորդեմ քեզ որովհետև այնպիսի վեհանձնութեամբ Թերմէնին բողոքին վշտակից կ'ըլլաս որ գտնէ քու անձնուիրութեան հետ անազօրոյն կակիծներ ալ պէտք չէ որ կրես անոր արագայ վիճակի մասին:

— Շնորհակալ եմ քեզ, պարոն Ռօտովֆ, անհոյ եղիր, այդ գաղտնիքը պիտի պահեմ...:

Եւ Ռիկօլէդ Թերմէնին նամակին ընթերցումը շարունակեց:

«Եթէ հաճիս, օրիորդ, այս ծանօթութիւններուն վրայ աչք մը նետել, պիտի տեսնես որ բոլոր կենացս մէջ շատ թշուառ եղեր եմ... բայց ՚ի այն ժամանակէն որ քու քովի անցուցի...: Ինչ որ քեզ երբէք ըսելու չպիտի համարձակէի, գրուած պիտի գտնես տեսակ մը յիշատակարի մը մէջ՝ որուն խորագիրն է, Ի՞՞ երջանկալեան օրէնք օրէնք:»

«Գրեթէ ամէն իրիւրն՝ երբ քեզնէ կը բաժնուէի, համակրութեանդ ինձ ներշնչած սիրովելի զգացումներս այս թղթին մէջ կը թափէի, և ասոնք միայն կենացս դառնութիւնը կ'ամբէին...: Ինչ որ բարեկամութիւն էր ըստ քեզ, սէր էր ինձ համար: Այսպէս քեզ սիրելու պահեցի, մինչև ցայսօր որ ըլլ տխուր յիշատակ մ'եմ քեզի համար...: Իմ ճակատագիրս այնքան տաժանելի էր որ երբէք այս զգացումն չպիտի յայտնէի քեզ... թէ և խորին էր և անննդ, քու թշուառութեանդ պատճառ կրնար ըլլալ:»

«Ար մնայ ինձ վերջին խոճս ալ յայտնել, և յուսամ որ զայն կատարելու կը հաճիս:»

«Տեսայ թէ ինչ հիմանայի արիտ. թեամբ կ'աշխատիս, և սրչափ կարգ կանոն, խոհեմութիւն պէտք էր քեզ որ դժուարաւ վաստկած փորձիկ վարձքովդ ապրիս: Շատ անգամ, առանց քեզ յայտնելու, կը դողայի քանի մնած էի որ թերեւ ծանր աշխատութենէդ հիւանդութեան մը հանդիպելով՝ այնպիսի սոսկալի վիճակի մը մէջ կրնայիր դըրիլ, որուն գաղափարը միայն զիս կը սարսուէր . . . : Քաղցր է ինձ խորհիլ որ դո՛ւն մեծ մասամբ կարող եմ աղատել քեզ այն մաստանջութենէ թերեւ . . . աղէտներէ, զոր քու անհող երեսասարգութիւնդ, բարեբաղդօրէն, չնախատեսեր:»

— Ինչ բան կ'ուզէ, պարոն Ռօտովֆ. — վրայ բերաւ Ռիկօլէդ զարմանալով:

— Շարունակէ . . . հիմակ կը հասկնանք . . . :

Ռիկօլէդ շարացարնց:

«Գիտեմ թէ սրչափ քիչով կ'ապրիս և ինչ մեծ օգնութիւն կընայ ըլլալ քեզ, դժուարին պարագաներու մէջ, ամենէն դոյզն գումարը. ես ալ շատ աղքատ եմ, բայց անդու խնայողութիւն ընելով 4,500 ֆրանք մը մէկդի պահեցի և սեղանաւորի մը մօտ շահու տուի. այս է իմ բոլոր հարատու թիւնս: Ասոնց մէջ գտնուած մէկ հրիտակին ուժովը՝ կը համարձակիմ այն գումարը քեզ կտակելու. ընդունէ զայն բարեկամի մը, բարի եղբոր մը կողմէ . . . որ արդէն մեռած է:»

— Ա՛հ, պարոն Ռօտովֆ — ըսաւ Լիկօլէդ յորդ արատուք թափելով և նամակն իշխանին տալով — այս բանս ինձ մեծ ցաւ կը պատճառէ . . . բարի ծէրմէն . . . այսպէս իմ ասրազայիս հողը տանի . . . :

Ա՛հ, ինչ սիրտ, տէր Ատուած, ինչ ընտիր սիրտ:

— Ազնիւ և բարեհիւրտ պատանի մ'է աբղարե — ըսաւ Ռօտովֆ այլայլութեամբ: — Բայց սիրադ հանդարտէ, աղջիկս: Փառք Ատուածոյ, ծէրմէն մեռած չէ, այս կանխադիր կտակէն գոնէ պիտի իմանաս թէ որչափ կը սիրէր քեզ . . . և որչափ դեռ ևս կը սիրէ . . . :

— Եւ զարմանալին այն է, պարոն Ռօտովֆ — յարեց Ռիկօլէդ արատուքը սրբելով — որ բնաւ չէի կասկածեր այսպիսի սէր մը: Սեր դրացիութեան առջի օրերը Պ. Թիրօս և Պ. Գապրիօն անդադար կը խօսէին ինձ իրենց քնքաժառ սիրոյն վրայ, ինչպէս որ կ'անուանէին. բայց երբ սեսան որ օգուտ մը չէն քաղեր, ասանկ բաներ ըսելու վարժու-

թիւնը կորուսին: Ընդհակառակն՝ ծէրմէն լնաւ սիրոյ վրայ խօսած չէր ինձ: Երբ առաջարկեցի իրեն որ իբր բարեկամ ապրեմք, անկեղծօրէն ընդունեց ինչպիսի, և անկէ վեր ճշմարիտ ընկերակիցներու պէս վարուեցանք իբրբու հետ: Բայց . . . ճիշտ կ'ուզես . . . հիմակ կրնամ բացէ՛ր բաց խոստովանիլ քեզ, պարոն Ռօտովֆ, որ դո՛ւ կ'ըլլայի երբ ծէրմէն, միւսներուն պէս, չէր ըսեր որ զիս կը սիրէ . . . :

— Բայց, վերջապէս, զարմանալի չէր տաներ:

— Այո, պարոն Ռօտովֆ, կարճէի թէ այսպէս վարուելուն պատճառը . . . արտմութիւնս էր . . . :

— Եւ քիչ մը կը սրդողէիր . . . այս արտմութեան վրայ:

— Այո էր իր միակ պակասութիւնը — ըսաւ պարզմտօրէն սքճնուհիւն. — բայց հիմակ անոր կը ներեմ . . . կը ցաւիմ խի որ անոր երեսին տուի . . . :

— Նախ անոր համար որ դիտես թէ զժբարդօրէն շատ ցաւեր ունէր, և երկրորդ . . . թերեւ անոր համար որ ցածմ տոյց ես որ՝ այս ցաւերուն չնայելով . . . քեզ կախովն կը սիրէր — յարեց Ռօտովֆ ժարելով:

— Իրան է . . . այսպիսի բարի երիտասարդէ մը սիրուիլը զգուցիլ է սրտի . . . այնպէս չէ, պարոն Ռօտովֆ:

— Եւ թերեւ օր մը այս սիրոյն հաղորդ գտնուիս:

— Իբր որ, պարոն Ռօտովֆ, շատ ակտիւ իր կըլլար այդ բոնորքանի ցաւակցութեան արժանի է այս խեղճ ծէրմէնը: Ես անոր անդը կ'անցնիմ . . . եթէ, այն պահուն որ ինքզինքս ընկեցիկ, ամենուտ անգոնամ կարճէի, բարեկամուհի մը՝ իմ յուսացածէս աւելի դոյրովայր՝ զար դէպ ինձ, որչափ երջանիկ պիտի ըլլայի: — Պահ մը լուս կենալէն ետեւ՝ Ռիկօլէդ վրայ բերաւ հարազատ մը: — Միւս կողմէն . . . այնքան աղքատ երբ երկու ճիւղս ալ որ թերեւ խելք չէ . . . : Նայէ, պարոն Ռօտովֆ, չեմ ուզեր ասոր վրայ մտածել, կարելի է կը սխալմ: Այս դիտմ որ ծէրմէն որչափ ստան որ բնութ մնայ, անոր համար ձեռքէս եկածը պիտի ընեմ: Երբ անգամ մ'աղատի, ժամանակ ունենամ պիտի տեսներու թէ անոր համար զգացածս բարեկամութիւն է թէ սէր. այն ստան, եթէ սէր է . . . ինչ կ'ուզես որ ըսեմ, բարեկամ, սէր պիտի ըլլայ . . . : Մինչև այն ատեն չպիտի զիմնամ թէ ինչ ճամբ-

բայ բունեմ: Բայց ժամանակն ուշ է, պարսն Ռօտորֆ: Խնդրեմ սա թղթերը հասարէ որ ես ալ երթամ ճերմակ դէհնները ծրարեմ . . . : Ա՛հ, սիսի մոռայի անոր տուած նարնջադոյն պղտիկ վկիսալը պարու նակող քսակիկը: Անշուշտ՝ սա վզրոյնն մէջն է: Այո՛, ահա ապիկ . . . : Ա՛հ, տես անգամ մը թէ ինչ աղւոր է, սա քսակիկը . . . և բոլորովն բանուած . . . : Խեղճ Ժերմէն, իբր մասունքը սրահեր է սա վարքիկ վկիսալս . . . : Ար յիշեմ այն օրն որ վերջին անգամ կապեցի և իրեն տուի: Ա՛րչափ, որչափ դո՛հ եղա . . . :

Նայն պահուն սենեկին դուռը վարկին:

— Ա՛լ է այն — հարցոյց Ռօտորֆ:

— Մամիէօ խաթունը կուգէի տեսնել — սրատասխանեց նուրը ու կերկերուն ձայն մը, այնպիսի շեշտով մ՛որ սինքրոյներու յատուկ է (Տիկին Մամիէօն մեր արդէն յիշած անգամանդի միջնորդուհին էր):

Այս ձայնն՝ որ կարմանալի շեշտ մ՛ունէր, Ռօտորֆի մտքին մէջ քսակիկի մ՛անորոշ յիշատակներ յարուց: Ձանոնք պարզել ուզելով ինքն անձամբ ճարդի սուս և դուռը բանալու դնաց: Իր դիմացը տեսաւ օկրուհին կապիկանը յաճախող մը՝ զոր իսկոյն ձանդեց, այնքան դժնդակ և խորին կերպով նշանակուած էր այս անթուս և սրատանկան դէմքին վրայ մնուած թեան գրշիկը, այս էր Պարպիշոն:

Այն Պարպիշոնն՝ որ սուս կատալարը ըլլալով Մէդր անէքօն ու լա Շուէզը Պուգվալի դար ու փոս ձամբան տարեր էր, այն Պարպիշոնն՝ որ ընտ. միտի աղարակին մշակները լա Աուպէօզին դեմ գրգռող թշուստ կամփնուհին էրիկը սպաններ էր: Աստայն է որ այս անդամը Ռօտորֆին դէմքը մոռցեր էր, զոր օկրուհին կապիկանը մէկ անգամ միայն տեսեր էր, կամ՝ այն է որ հազարիս փոփոխութիւնը Շարքիէօքէ յաղբարը ձանդեցու կարգիլէր որ զանի սենեկունը զարմանք մը չյայտնեց:

— Ինչ կուզես — ըսաւ Ռօտորֆ:

— Նամակ մը բերի Մամիէօ խաթունին համար . . . : Պէտք է որ ձեռօքս իրեն յանձնեմ — սրատասխանեց Պարպիշոն:

— Հոս չբնակիր այն, դիմացի դուռը նայէ — ըսաւ Ռօտորֆ:

— Շնորհակալ եմ, ստանիկս, ինձ ըսին թէ ձախ կողմի դուռն է, կերեի թէ սխալ էր եմ:

Ռօտորֆ անդամանալի միջնորդուհին անունը մոռցեր էր, ըստ ու

րում Մօրէլ ակնահատը մէկ երկու անգամ անոր անունը տուեր էր: Աստի պատճառ մը չունէր հոգը տանելու այն կնկան որուն Պարպիշոն զիր մը բերեր էր: Մակայն, թէև այս աւազակին ոճիրները չէր գիտեր, անոր դէմքն այնպիսի չարագործի մ՛երևոյլին ունէր որ զրան սեմին վրայ կեցաւ, հետաքրքիր ըլլալով տեսնելու այն անձն որուն Պարպիշոն իբր բանբեր եկեր էր:

Հապիւ թէ Պարպիշոն Ժերմէնի սենեկին դիմացը գտնուած դլան զարկաւ որ բացուեցաւ, և միջնորդուհին՝ յիսուն տարեկան մարմնիկ կին մը, երևան ելաւ՝ ճրագ մը ձեռքը բռնած:

— Մամիէօ խաթուն դո՛ւն ես — ըսաւ Պարպիշոն:

— Ես եմ, տղաս:

— Ահա զիր մը քեզի, սրատասխան կ՛ուզեն . . . :

Եւ Պարպիշոն բայց մ՛տաւ միջնորդուհին խոցը մննելու համար, բայց սա նշան ըլլաւ անոր որ չմտնէ, նամակը բացաւ՝ միշտ ճրագը ձեռքը բռնած, կարգաց և դոհունակ երեսով մ՛ըսաւ:

— Հաս աղէկ, տղաս. ըսէ որ ուզածնին սիսի բերեմ: Միւս անգամին պէս որոշեալ ժամուն սիսի երթամ: Բարեկերս տուր . . . այն կնկան . . . :

— Հաս լաւ, խաթուն . . . մի մոռնար բանբերին բաշխիշը . . . :

— Քեզ զրկողներէն գնա ուզէ վարձքդ, ինչէ սեղի հարուստ են . . . :

Եւ միջնորդուհին դուռը գոցեց:

Ռօտորֆ Ժերմէնին տունը մտաւ, տեսնելով որ Պարպիշոն շապաւ սանդղէն վար կ՛իջնէ: Աւազակը պուրվարին վրայ ցած և վայրագ դեմքով մէկը գտաւ, որ կրպակի մ՛տալէ կսպասէր: Թէև շատերը կրնային լսել ըսածն, այլ ոչ հասկնալ, Պարպիշոն այնչափ դո՛հ կերեէր որ իր ընկերին ըսաւ ուրախութենէն:

— Եկուր ճերմակ ընթրիքի, Նիդօլաս. սրատասխան մահառան ծառայիկն Թէ Կոբերը կ՛երեւցէ . . . լա Շուէզին տունը պէտք է լուսին տանէ քոյ. Մարտիալ խաթունը մեզ սիսի օդնէ որ իր փայլուն քարերը զբոսը վայելն փէրէնէն տաներ, և ետքը՝ թէ ալ չպէտք է լուսինը նստակող Թէլ:

— Աւրեմն, կէկէլ Կոբեր. պէտք է որ կանուխ Անիէր գտնուիմ. կը վախնամ որ Մարտիալ եղբայրս կասկած մը չտանու: . . .

Եւ երկու ոճրագործներն՝ իրենց մտիկ ընտղներուն այս անհասկանալի խօսակցութիւնն ընելէն ետեւ՝ Սէն-Տընիի փողոցը զիմեցին :

Քանի մը վայրկեան ետքը՝ Ռիիօլէզ ու Ռօտտլֆ Թէրմէնին սենեկէն ելան , կտորը մտան և Գանըլ փողոցը հասան :

Կտորը կեցաւ :

Գունակը բացուելու միջոցին՝ Ռօտտլֆ օղե վաճառին կանթեղնե ընդ ընտին ճանչեց իր հետատարիմ Մըրֆին՝ որ դաւ թին դուռը կ'սպասէր :

Անդ զիսցի սեպուհին ներկայութիւնը միշտ ծանր կամ անակնկալ դէպքի նշան էր , վասն զի այն միայն զիսէր թէ ուր կը գնաւու իշխանը :

— Ի՞նչ կայ . — հարցոյց անոր Ռօտտլֆ աշխուժով մը , մինչդեռ Ռիիօլէզ այլ և այլ ծրարներ կտորին մէջէն կը ժողվէր :

— Մեծ դժբաղդութիւն մը , աէր իմ :

— Խօսէ՛ , յանուն Աստուծոյ :

— Պ. ա՛՛ Արլիլ մարքիզ . . . :

— Զիս դո՛ղ կը հանես :

— Այսօր ի՞ր քանի մը բարեկամներուն կոչուեց մը առեր էր . . . : Ամէն ինչ ուրախ դուարթ անցեր էր . . . մանաւանդ՝ ինքն երբէք այնքան խնդումներն չէր երեցած , երբ աղէտալի անխոհեմութիւն մը . . . :

— Շուտ . . . շուտ խօսէ :

— Պարսպ կարծած մէկ հրացանակովը խաղալու առեն . . . :

— Կարեւի՛ր վերադարձ է :

— Տէր իմ . . . :

— Լաւ ուրեմն . . . :

— Մտակալի բան մը :

— Ի՞նչ կ'ըսես :

— Մեռան . . . :

— Տ՛Արլիլ . ա՛հ , ա՛հ ուիլի բան . — գոչեց Ռօտտլֆ այնպիսի աղիւղով շեշտով մ'որ Ռիիօլէզ՝ նոյն միջոցին սր կտրէն վար կ'իջնէր , գոչեց :

— Աստուած իմ , ինչ ունիս , պարսն Ռօտտլֆ :

— Խիստ տխուր ըւր մը յայտնեցի հիմա բարեկամիս , օրիորդ — ը-

առաջ Մըրֆ դեռ հասա օրիորդին . վասն զի իշխանը՝ վշտաբեկ չէր կրնար պատասխանել :

— Ուրեմն մեծ դժբաղդութիւն մը պիտի ըլլայ — ըսաւ Ռիիօլէզ բոլորովին գողգոջուն :

— Խիստ մեծ դժբաղդութիւն մը — պատասխանեց սեպուհը :

— Ա՛հ , զարհուրելի բան — ըսաւ Ռօտտլֆ քանի մը վայրկեան ըսու կենարէն ետեւ . — ապա՝ Ռիիօլէզը միտքն ընկնելով՝ անոր ըսաւ :

— Ներէ՛ , աղջիկս . . . եթէ չեմ կարող ուզելիցել քեզ մինչև սենեակը . . . Վաղը . . . քեզ իմ հասցէս և արտօնադիր մը պիտի զրկեմ Թէրմէնի բանալը մտնելու համար . . . քիչ օրէն կը տեսնուիք :

— Ա՛հ , պարսն Ռօտտլֆ , կը հաւատտեմ քեզ , այդ դժբաղդութեանը մասնակից կը գնաու իմ . . . : Շնորհակալ եմ ինձ ուզելից ըլլալու . . . քիչէն կը տեսնուիք , այնպէս չէ՞ :

— Այո՛ , աղջիկս , քիչ օրէն :

— Գիշեր բարի , պարսն Ռօտտլֆ — յարեց Ռիիօլէզ տրամադրին , և դաւ թին մէջ անընթաց եղաւ , Թէրմէնին տունէն բերած այլ և այլ բաներով :

Իշխանն ու Մըրֆ կտորը հեծան , և Բշխմէ փողոցը գացին :

Ռօտտլֆ իսկոյն հեռեեալ նաճակը գրեց Գրէմանսին :

«Տիկին ,

«Այս արհուրէն կ'իմանամ անակնկալ փորձանքն որ ձեզ հասաւ և ամենէն ընտիր բարեկամներէս փին յարեշտակեց . զանց կ'առնու մայշտութիւնս , ցաս ձեզ նկարագրելու :

«Սակայն այս անագորոյն գէտքէն զուրս՝ խնդրոյ մը փրց գրելու կը պարտաւորեմ ձեզ . . . : Հիմակ ինչ իմացոյ որ մօրու . գրանի մ'առնէ վեր անշուշտ Բարիդ գնաուելով այս իրկուն Նօրմանսիա կը գառնայ , իր հեան անդով Բօլիւօրթն :

«Ասկէ կրնաք երեակցիդ թէ ձեր հայրն ինչ վտանդի մէջ կը գնաուի . Թոյլ տուէր ինձ օգտաւէտ խորհուրդ մը տալ ձեզի : Այս առաւօտեան սոսկալի գժբաղդութենէ ետքը՝ յայտնի է թէ մեծ վախաբուսիք քիչ մը առնուան համար Բարիդէն հեռանալու . . . : Ուստի , անվրէպ , ելէք , ճամբայ ելէք շուտ մ'Օպիէ երթալու , որպէս զի այն տեղ հասնիք , եթէ ոչ մօրուիք հետ գնէ անոր հասած ժամանակը :

Հանդարտ կզկը, տիկին. մասէն, նոյնպէս հետուէն ձեր վրայ կը հասնմ. . . ձեր մօրուին դարշերի խորհուրդներն 'ի գերե պիտի ելննն:

«Մ'նար բարե, տիկին, այս առիւթը շատապա կը դիմմ ձեզ . . . Սիրտս կը խարտակի երբ կը ընածեմ թէ ելէկ իլկուն զանի թողուցի. . . առեկի հանդարտ, առեկի ելջանիկ քան ինչ որ էր շատ ատենէ վեր:

«Աստահեցէք, տիկին, իմ խորին ու անկեղծ անձնուիրութեան:

«ԲՕՑՑԱԳ»

Իշխանին խորհրդին համեմատ տիկին ա՛րքիլը, այն դիւն ընդունելէն երեք ժամ ետքը՝ իր աղջկան հետ Նօրմանտիայի ճամբան էր:

Թղթաւորի կտաք մը՝ Ռօտտլիֆին ապարանէն ելնելով՝ նոյն ճամբան կը հեռուէր:

Գծբարդօրէն Գլէմանս՝ այս խառն 'ի խուսն գէպերուն պատճառաւ այրայտ թնէնէն և ճամբայ երկելու շտապէն՝ իշխանին մտայա իմաց տալու որ Ֆլէօր-տը-Մարին Սէն-Ղազար գտեր է:

Կնիմեղտը թերեւ կը յիշէ որ առջի իրկուն՝ լա Շուէզ Էկեր էր տիկին Սէրաֆէնի սպառնալու որ լա Կուալէօն երեան պիտի հանէ, ստուգելով (և ճշմարտ կըլտէր) թէ դիտէ այն օրիորդին և-ը դանուիրը: Պարտ է յիշել նաև որ այս խօսակցութիւնէ ետքը ժաք Ֆէրբան 'նօտարը՝ վախճանով որ իր դատապարտելի գաւերը վեր կ'իւննն, իր շահերուն անհրաժեշտ համարեց լա Կուալէօն անհետ ընելու, որուն գոյութիւնն՝ և թէ անգամ մ'երեւան գար, զինքը մեծ վտանգի մէջ կրնար ձգել: Ռատի իր գաւակիցներէն՝ Պրատամանտիին՝ զիր մ'ուղղել առեր էր, որ գոյ զինքը տեսնէ՝ նոր դարան մը լարելու մտօք, որուն զոհ պիտի ըլլար Ֆլէօր-տը-Մարի: Պրատամանտի, տիկին ա՛րքիլի մօրուին առեկի ստիպողական շահեղէն ստիպալ, որ չարագոշակ խորհուրդներ ունենալ պէտք էր այս խարերան Պ. ա՛րքիլի մօտ տանելու համար, Պրատամանտի՝ անշուշտ իր վաղեմի բարեկամահին ծառայելն առեկի շահաւետ գանկելով՝ նօտարին հրաւերին չարատարանաց, և առանց տիկին Սէրաֆէնը տեսնելու՝ Նօրմանտիայ գնաց: Ժաք Ֆէրբանի զլխն փոթորիկը կը գոտար, նոյն օրը՝ լա Շուէզ որ իր սպառնալիքը կրկնելու եկեր էր, և հաստատելու համար որ իր սպառնալիքն ընդունայն չեն, յոյաներ էր նօտարին՝ որ փոքրիկ օրիորդն՝ որ երբեմն տիկին Սէրաֆէն երեսի վրայ թաղեր էր, նոյն վիշու

յին լա Կուալէօն անունով Սէն-Ղազարի բանար կը դանուի, և եթէ երեք օրուան մէջ 10,000 Ֆրանք չտայ, այն նօրատի օրիորդին պիտի յանձնէ այնպիսի թղթեր սրով պիտի իմանայ թէ ինչն 'ի մանդրութենէ ծաք Ֆէրբանի ինամոց տանդուեր է:

Իր սովորութեան համաձայն՝ ժաք Ֆէրբան՝ ամէն բան յանդիմութեամբ ուրացաւ, և լա Շուէզը վճռուեց իբր լրբների ստախոս կին մը, թէև համարուեր և վախցիր էր անոր սպառնալիքին վտանգալի կարեւորութենէ: Նօտարն իր բազմաթիւ յարաբերու թիւններուն շնորհիւ՝ նոյն օրն իսկ (մինչդեռ Ֆլէօր-տը-Մարի տիկին ա՛րքիլի հետ կը խօսակցէր) հնարը գտաւ ստուգելու թէ լա Կուալէօն Սէն-Ղազարի բանան էր, և իր բարի վարուցը սպառնալու այնքան կը դժուար որ քիչ օրէն իր ազատութիւնը գանկելու յոյս կար: Այս տեղեկութիւնները տանալուն՝ ժաք Ֆէրբան՝ սատանայական խորհուրդ մ'երկնելով՝ զգաց որ զայն 'ի գործ գնելու համար՝ Պրատամանտիին օղնութիւնն իրեն անհրաժեշտ է, և ահա այս առթիւ տիկին Սէրաֆէն ճամբարակը տեսնելու մեծ եռանդ ունէր: Երկուսն իսկ այն խարերային մեկնիլը լսելով՝ նօտարը՝ մօտալուս վտանգէն և երկիւղէն անմիջապէս գործելու ստիպում ըլլալով՝ Վարպալի շնամոհքը յիշեց, այն Սեմիէրի կամիջին մօտ բնակող անոյշ ջիւրու առաջաւանդներն՝ որոց մօտ Ղուիլ Վօբէլը զրկելու առաջարկեր էր արդէն Պրատամանտի, որդէս զի գանի անպատիժ անհետ ընեն: Նօտարը գուակցէ մ'անպատճառ պէտք ունենալուն՝ իր չարագոյն խորհուրդներն Ֆլէօր-տը-Մարիին գէմ 'ի գործ գնելու համար՝ վարպետութեամբ պէտք եղած զգուշութիւնները ձեռք առաւ՝ որդէս զի եթէ նոր աճիր մը դործուի՝ ինչն անվտանգ մնայ, և Պրատամանտիին Նօրմանտիայ մեկնելէն հեռուեալ օրը՝ տիկին Սէրաֆէն արտաբնօք Մարտիակոնց ընտանքանը երթալու ելաւ:

Գ Լ Ո Ր Ի Ծ
Բ Ա Ղ Ս Թ Ե Ր Ի Գ Ը Ղ Ի Ծ

Հեռուեալ տեսարանները պիտի անցնին այն օրուան երեկոյին՝ որ սփ-կին Սէրաֆէն ժաք Ֆէրբան նօտարին հրամանին համեմատ՝ Գ Լ Ո Ր Ի Ծ

դասի: Մարտիալեաց բնախարանը եկեր էր, որ Ամիրէրի կամըջին մօտ՝
Սէն գետին մէկ կողեկին ծայրը կը դանուէր:

Մարտիալեաց հայրը՝ իր հօրը պէս գլխատու թեան բեմին վրայ մե-
ռած ըլլալով՝ այրի կին մը, չորս սղայ և երկու աղջիկ թողեր էր . . . :

Արդէն երկրորդ որդին մշտապէս թիարանի դատապարտուէր էր . . .
: Այս բազմութիւն ընտանիքէն Ռավաժէօրի կողին (այս անունը կը
արուէր սոյն որջին, պիտի լսենք թէ ինչ պատճառաւ) մնացեր էին մի-
նակ:

Մարտիալեաց մայրը,

Երեք որդի, անդրանիկը (լա Լուվին սիրողը) քսանհինգ, միւսը
քսան, և կրտսերը տասներկու տարու էր:

Երկու աղջիկ. մին տասնութ, միւսը ինը տարու:

Այս տեսակ ընտանիքի օրինակներ՝ ուր կերպով մը ժառանգական է
ոճրագործութիւնը և մշտառեւ, ստէպ կը տեսնուին:

Եւ այս ալ այսպէս պէտք է ըլլայ:

Անգաղար կրկինը. ընկերութիւնը լոկ Պարթեւէս կ'ըսողի, երբէք
չարեաց առաջն առնելու:

Ոճրագործ մը ցլեկանս թիարան կը նետուի . . . :

Ռարիշ մը կը գլխատուի . . . :

Այս դատապարտները գեոհասակ զուակներ կը թողուն . . . :

Ընկերութիւնն այս որբերը պիտի հոգայ . . . :

Այս որբերուն համար՝ շքեք յեռն ըբո . . . իրենց հայրը քաղա-
քային մահուան դատապարտելով, կամ անոր դուխը կտրելով,

Ընկերութիւնն օգտակար, պահպանողական ինստիտուտութիւն մը պի-
տի հաստատէ, այն մարդուն ընկնելէն ետեւ զոր օրէնքը անարժան,
վատանուն հրատարակեց . . . այն անձին զոր օրէնքը ուսանեց:

Ո՛չ . . . — Մեռաւ անասունը . . . քորթու խոնարհ զբո՞ր . . . —
կըսէ ընկերութիւնը . . . :

Յակոբյն ընկերութիւնը կը սխալի:

Ապականութեան թունալի որոմն այնքան նուրբ, սպառիչ ու համա-
ճարակ է որ զրեթէ միշտ ժառանգական կը դառնայ. սակայն երբ
ժամանակին դարման տրուի, երբէք անբուժելի չէ:

Այլանդակ հակասութիւն . . . :

Երբ մարմնազննութիւնը հաստատէ որ մարդ մ'աւանդելի հիւան-
գութեամբ մը մեռեր է, շատ մը պահպանողական դարմաններ ընելով,
այն մարդուն յաջորդներն իրեն զոհ ընկած ախտէն կը պատսպարուին . . .

Եթէ մի և նոյն իրողութիւնները պատահին բարոյական կարգին
մէջ . . . :

Եթէ ստուգուի որ չարագործ մը միշտ իր որդւոյն կը կտակէ վա-
ղահաս անօրէնութեան որս մը . . . :

Այս նորահաս որդիին փրկութեան համար կ'ընեն ինչ որ բժիշկը
կ'ընէ մարմնայ մասին՝ երբ հարկ ըլլայ մարտիլ ժառանգային մեղու-
թեան մը գէմ:

Ո՛չ . . . :

Այս թշուառը բուժելու անդ կը թողուն որ ցմահ տորի, փախ . . . :

Եւ այն ատեն ինչպէս որ ժողովուրդը գահճի մ'որդին առ հարկի
գահճի կը համարէ . . . չարագործի մ'որդին ալ առ հարկի չարագործ
պիտի սեպէ . . . :

Եւ այն ատեն իբր անողորմապէս ուղեբաճէր ժառանգութեան մը
հետեւութիւնը պիտի կարծուի ընկերութեան ինքնասէր գանդաղութե-
նէ պատճառած ապականութիւն մը . . . :

Այսպէս որ, եթէ դժնդակ դասերու գէմ կենալով Երկնաց ուժովը
օրք եղողը . . . պատահիւ աշխատատէր և սրբիւշտ մնայ՝ բարբարիկ
նախապաշարում մը՝ իր վրայ ալ պիտի բսէ հայրական աղտը: Անարժան
դատապարտութեան զոհ ընկնելով՝ հազիւ թէ աշխատելու գործ պի-
տի գտնէ . . . :

Եւ փոխանակ անոր օգնութեան դալու, վհատութեան՝ յուսահատու-
թեանէ ազատելու, և մանտանց անիրաւութեան վտանգալի խէթէն
պահպանելու, որ երբեմն ամենէն վեհ սրտերն ապստամբութեան, ՚ի
չար կը մղէ . . . ընկերութիւնը պիտի ըսէ .

«Թող ՚ի չար գառնայ . . . և պիտի տեսնենք . . . : Միթէ բանտա-
պեններ, թիսպետներ և գահճիներ չունիմ:»

Այսպէս, այն անձին համար՝ որ (հաղուպիլու և աղւոր բան մը)
մարուր կը մնայ ատելի օրինակներու չհետեւելով՝ չկայ նեցուկ մը, չկայ
բաջալեղութիւն մը:

Այսպէս անոր որ՝ ծնելուն առանին տարեանութեան կեդրանը կը գտնուի և ՚ի ծննդութենէ կը վաստակի, չկայ բժշկութեան յոյս մը:

«Այո, այո, ևս սխալ բժշկում իմ ըրած որբս — կը պտտասխա- նէ ընկերութիւնը — բայց անգին և ժամանակին... բայց իմ կերպովս... բայց անիլ ոչ...»

«Ելունդը կտրելու, սպառը ձեղքելու համար... պէտք է ժամա- նակը դայ...»

Չարագործ մը կը խնդրէ որ իրեն մտիկ ընեն...:

«Բանտ և թիարան, ասոնք են իմ հիւանդարանս... Եթէ անտոս անբուժելի գառնայ դահճին վազրն ունիմ...»

«Իսկ որբիս բժշկութեան դպրով ձեզ կ'ընեն որ հոգ պիտի տանիմ. բայց համբերութիւն, թողունք որ իր մէջը տածող սպակեանութեան հունարը հատանայ, թողունք որ անի, թողունք որ ամէն ուրէջ աներ ու քանդ գործէ...»

«Արեւմտ համբերութիւն... համբերութիւն... Երբ մեր մարդուն մինչև սիրտը վտի, երբ մարմնոյն ամէն ծակախնդրէն ոճիր հոսին, երբ աղւոր դողութիւն, կամ աղւոր մարդատոգնութիւն մը դիմին իր հօրը նստած վտտահամար նստարանը տանին, ո՛հ, այն ատեն կը բու- ժենք շարութեան ժառանգորդը... Ինչպէս որ բուժիչներ զայն ստուրը...»

«Թիարանն կամ դիտատութեան բեմը որքէն իր հօրը տեղը դեռ ևս բողբոջին տար սխալ գտնէ...»

Այո, այս պարագայիս մէջ ընկերութիւնն ողբալէս կը տրամարանէ...:

Իւ նա կը դարմանայ, և նա կը սրտնոյ, և նա կ'ահարեկի կողմ- թեան և մարդատոգնութեան աւանդութիւններ աննկելով որ սերունդ գէ սերունդ կը շարունակուին եղևնապէս:

Այս հետեւեայ նկարագրելով որ անուշ ջրէ ստղարակներու է, նորա տակ ունի յոյց տարութե ընտանիքի մը մէջ Ինչ կրնայ բլլալ, Երբ Բեան ժառանգութիւնը, երբ ընկերութիւնը չհամար թէ օրինապէս, թէ մարդասիրտար օրինայ սրբեջ պահպանելու իրենց հօրը գէմ տրձակում վճռին ստակալի հետեւութիւններէն պահպանելու համար...:

Մարտիպ ընտանիքին դիտարում որ ամենէն առաջ այն փորձիկ կողին հաստատուեցաւ, Աւերիչ (ravageur) էր: Նա անխելու ատերէշ, նոյն պէս փայտանան և պտտակէշ, բոլոր օրը մինչև մէջը ջրի մէջ կը մնան իրենց արհեստը գործելու համար: Փայտանանքը ծփող փայտը դուրս կը հանեն: Պարտաւճերը փայտ բերող նաւակները կը ստարան: Աւերիչ- ներուն արհեստն որ միւսներուն պէս ջրային է, տարբեր նպատակ մը ունի: Աւերիչը որչափ որ կարող է հեռու ջրին մէջ յառաջ կ'երթայ և գետին մօրին ներքև գտնուած աւարը խճահան գործիով մը կը քաշէ. յետոյ, բոլորչի փայտեայ տաշտեբու մէջ ժողովելով կը բույ զայն երբ հանրային նիւթ, կամ ջրային խիճ և անկից բազմադան շատ մը մետաղ- եայ կտորներ կը քաղէ, ինչպէս, երկաթ, ձուլ, կտայար, պղինձ որ անհամարող գործիներու բեկորներէ կը զոյսանան: Կան շատ անգամ ա- լերիչներն՝ աւաղին մէջ գոհարի և սակի կտորներ կը գտնեն որ Յէն դետը կը թտփին՝ թէ կոյնոյններէն ուր վտակները կ'ողողին, թէ փո- ղոյը գիզուած ձկնի կամ ստուցի կոյտերէն զոր ձմեռը գետը կը նե- տան:

Չգիտեմ թէ ինչ արանդութեամբ կամ սովորութեամբ այս արհես- տարները՝ որ առ հասարակ պարիշտ, հանգարտ և շանտեր են, այնպիսի ստակալի անուն մը կը կրնն:

Մարտիպնեց հայրը որ մինչ այն ատեն անբանի կողին աւաղին բնակիչն էր, ատերիչ բլլալով (յաւալի բացատութիւն), գետեղենայ բնիկները զայն Ռազմեբէրէ կոչելին: Աւտի այս անուշ ջրի ա- պտտակներու բնակութիւնը այն երկրն հարաւային կողմը կը գտնուի:

Տարեկը՝ դրան վերէը տասանող տախտակի մը վրայ կը կարգադրին սա իտարերը:

ԹԱՎԱԾԻՑՈՐՆԵՐՈՒ ԺԱՄԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ԱՂԻՈՐ ԳԻՆԻ, ԱՂԻՈՐ ԵՓԱԾ ԶՈՒՈ

Նաւակներ վաշտա կը որբալն ժուտ քալու:

Ինչպէս որ կ'երեկի՝ այս անիծեայ ընտանիքին դիտարում իր յայտնի կամ անպա արհեստներուն հետ, կապիտալտի, ձկնորսի և նաւակ- ներու վարձատուի արհեստներն ալ բաներ էր: Այն դիտատեպին որբ- ևարին այն ատեղ պահելու կը շարունակէր. անգործ մարդեր, փա-

խօստական գատապարաններ, անասուն խաղչնորդներ, վերաժառանգական խարե-
 բաններ այն սեղ կը դիմէին կիրակի և ուրիշ լուր օրերը զուարճութեամբ
 անցնելու համար: Մարտիպը (լա Ղուվին սիրահարը) ընտանիքին անդ-
 բանիկ տղան՝ ամենէն նուազ յանցաւորը, աստղէն ձկնորսութիւն կը-
 նէր, և ՚ի հարկին՝ իբր ճշմարիտ ախշեան մը՝ տկարներուն թերը կը
 բռնէր հզորներուն գէմ՝ մասնաւոր վարձք ընդունելով: Իր միւս եղ-
 բայրներէն մին՝ Նիգօլա, Պարպիչոնի ապագայ դաւակիցն անդաման-
 դի միջնորդութիւն սպանութեան գործին մէջ՝ առ երեւոյթս աւերել մի
 էր, բայց իրօք Սէն դեաին վրայ և անոր ափունքը ասպատակութիւն-
 ներ կ'ընէր: Աւերջապէս զլիսատեալին որդիներէն ամենէն փոքրը՝
 Ֆրանսուա նաւակով պորտիլ ուզող հետաքրքիրները կ'առաջնորդէր:
 Այս աւթիւ պիտի յիշէր նաև Անպրուազ Մարտիպը՝ որ թիարանի
 գատապարտուէր էր բուն գողութեան և մարդասպանութեան փորձ
 փորձելուն: Մեծ աղջիկը՝ Քալաթ մականունով, իր մօրը կ'օգնէր կե-
 բակուր եփելու և հիւրերուն սեղան պատրաստելու համար. իր իննը
 տարեկան Աննաթին քոյրն՝ իր կարողութեան չափ առանկն գործերուն
 կը պարապէր:

Այն իրկունը աստիկ մաթ էր զիշերը. հողմավար թանձր, մութ-
 րագոյն ու գինահար անպարտ պլանդակ ծեպերու մէջէն՝ ասդիս ան-
 դին կ'երևին՝ աստղերով փարփուն նսեմ կապուտակ գոյներ, Աղդիին
 ստուերադիրն՝ որուն բոլորն անսերև բարտիներ կան, որոշակի սեա-
 րոյն կը նկարուի երկնից թափանցիկ մթութեան և գեանին սպիտակ ու
 պայծառ երեսին վրայ:

Տունն որ պատի անկանան քիւերով է՝ լիովին ստուերին մէջ ընկած
 կ'երևի. գեանայարկին մինակ երկու պատուհանները լուսաւորուած
 են, իբնց ապակիները կը շողան. այս կարմրուն նշքնները՝ հրային
 երկար շաղիներու պէս կը բեկբեկին փոքրիկ կոհակներուն մէջ՝ որ
 ընակութեան մօտ եզրը նաւամատոյցը կը թանան:

Այն տեղ կապուած նաւակներուն շղթաները չարագոյն շաշխն մը
 կը հանեն, որ բարտիներու մէջ ուժգին փշոզ քամիին կը միանայ
 արտանդին, և մեծ ջրերուն խոխոջիւնին...

Ընտանիքին մէկ մասը տան խոհանոցը հաւաքուէր նստեր է:
 Այս խոհանոցը ընդարձակ է ու ցած. դրան զիմայն երկու պատու-

հաններ կան, որոյ վրայ երկար բուռ մը կը ասարածուի. ձախ կողմը՝
 բարձր վռտարան մը կայ, աջ կողմը՝ անդուղ մ'որմէ վերի գտակիւնը
 կ'ելլուի. այս անդղին մօտ՝ մեծ սրահի մը մուտքը կը տեսնուի, որ
 դինստան յաճախորդներու յատուկ շատ մը սեղաններով զարդարուած
 է: Աստիկին մը լոյսը՝ վառարանին բոցերուն միանալով՝ բազմաթիւ
 սաներ և պղինձէ գործիներ կը շողայնէր, որոնք պատին երկայնքը
 կախուած կամ այլ և այլ սյուղիներով դարակներու վրայ շարուած են.
 մեծ սեղան մը սոյն խոհանոցին մէջ տեղը կը բռնէ:

Գլխատեալին պրիմ էք երեք զաւակները չորս կողմն առած՝ կրակին
 մօտ նստած է:

Այս կիներ՝ մեծ և նիհար՝ քառսուն հինգ տարեկան կ'երևի: Սեւեր
 հագեր է. թղպի թաշկինակի մը՝ զոր շուրջ կասեր էր մազերը ծածկե-
 լով իր տակի, գունատ ու արդէն խորշոճած ձակատը կը պատէր.
 իր քիթը շիտակ ու երկար. իր թուշերը ցից, այսերը խոր են. գոյնը
 մաղձաւոր, դեղին. բերնին խորշերն որ միշտ ստոր են՝ այս պաղ, դու-
 ժպէմ և մարմարի գիմակի պէս անդրուեղի երեսին երեւոյթն աւելի
 գծնայ կը ջրայնէն. Իք աննշոյլ կասողտ աչերուն վերելը կ'երևին մոխ-
 րագոյն ունքեր:

Գլխատեալին որբեարին կարի կ'զբաղի, ինչպէս նաև իր երկու աղ-
 ջիկները:

Մեծ աղջիկն որ բարձր է ու չոր՝ շատ կընմանի իր մօրը...: Ճիշտ
 անոր հանդարտ, դժնայ և չար կերպարանը, նուրբ քիթը, խտապիծ
 բերանն ու քփփոյն ախարէն ունի: Սղի մէջ չէ նա, շրջագոյնտը դոր-
 շագոյն է, իր սև շղարշէ գոակին սակէն կ'երևին յանցառ և սունցն
 անհամ դեղին մազերու երկու հիւսակ:

Ֆրանսուա, Մարտիպի տղոյ ամենէն փոքրը՝ ամթոտակին վրայ չո-
 քած՝ յանց մը կը հիւսէ, աւերիչ ուռկան մ'որուն Սէն դեաին մէջ
 գործածուելը խտիւ արդիւրուած է:

Թէեւ խորշակէն սեցեր է, այս սղուն Երեսին գոյնը փայլուն է.
 կարմրորակ մազերու թաւուս մը կը գոյէ իր դուրը. գէմէին գծերը
 կըր են, շրթները խոշոր, ձակատը ցից, աչերը վաւախ ու սուր են.
 ոչ իր մօրն և ոչ իր մեծ քրոջը նմանի. ամենուկ, վեհերոտ երես մը
 ունի. ասուն ասուն՝ իր ձակաին վրայ ընկած տեսակ մը բաշին մէջէն՝

ընդամենը կը նայի իր մօրը կասկածաւ աչքով մը, կամ իր Ամանտին պղտի քրոջը Տիւն համանաւ թեան և սիրոյ ակնարկ մը կը նեւեւ և փոխադէպ կը կրնորունի . . .

Իսկ պղտի օրհորդն իր եղբօրը մօտ նստեր կը պարտադէր՝ չէ թէ ճարտ րինելու՝ այլ առջի երկուն դողցուած ճերմակեղէնէն ճարտանքը շակեղու . Կնը տարու է Ամանտին, իր եղբօրը կը նմանի, որչափ որ քոյրը կը նմանի մօրը . իր գէտին գծերն թէև աւելի կանոնաւոր չեն, Գրանստարի գէտին նուազ կոշա են : Արչափ որ գեղին արտաներ կը ծածկին երեսը՝ գոյնը թարմեւեւ սոյխտակութիւն մ'ունի . շրթերը թանձր, այլ կարմրուն են, մաղերը շէկ, այլ նօսը, սահուն, փայլուն, աչերը՝ փոքրիկ, այլ յատակ և անուշ կապտազոյն .

Երբ Ամանտինն աչքն եղբօրն աչքին կը հանդիպի՝ անոր գուռը կը յօսնի . այս նշանին Գրանստար հառաչ մը հանելով կը պատասխանէ . ապա, իր քրոջն ա շօքբութիւնն աջող շարժում մ'ընելով կը կոչէ և իր մանիչին ծայրոջն ուսիրանին տաս օղերը կը համրէ . . .

Տղոց նշանակական լեզուով այս կը նշանակէ թէ իրենց Մարտիակ եղբայրը ժամը տասին պիտի գայ տունը :

Այս շարադէմ և լրակաց կիներն, ու այն անհանդիսա, հասը, երկուս մանկիկները անսնողը կը գուշակէ խնկոյն որ այն տեղ երկու գահիճ և երկու գոհ կաց :

Քաղաքս գիտելով որ Ամանտին պահ մը դործը գազդեցուց խիստ ձայնով մ'անոր ըսա :

— Ե՛րբ պիտի լմնցնես, երբ այդ շապկին նշանը պիտի ջնջես . .

Փոքրիկ օրհորդը զլուխը ծոցն առանց պատասխան տալու . իր մանկուն և մկրտան օգնութեամբը շուտ մը կտաւին վրայի կարմիր դերձանով նշանակուած տասերը ջնջեց :

Քանի մը վայրկեան ետքը՝ Ամանտին՝ որբեարկին գիւնելով երկուստ թեամբ, իր գործը ներկայեց :

— Մայր իմ, լմնցուցի — ըսա անոր :

Առանց պատասխան տալու, որբեարկն ուրիշ ճերմակեղէնի կտոր մը նետեց անոր :

Փոքրիկ աղջիկը ժամանակին չկրցաւ զայն բռնել և գետինը ձգեց : Իր մեծ քոյրը փայտի պէս կարծր ձեռքով անոր թևին խիսա հարուած մը տուա գոչելով :

— Իշնիկ :
Ամանտին իր տեղը գնաց նստաւ և շուտ մը գործի տկտա . իր եղբօրը նետելով աչք մ'որուն մէջ արտօսը մը կը դարբէր :

Խոհանային մէջ նոյն լուծիւնը կը սիրէր շարունակ :
Գուրբը հովը կը մանչէր միշտ և զինտանն նշանակելը կ'օրոգէր .
Այս ախտը կուխն ու կրակին առև զբուած կաթնայն մը խոր եռանդն էին միայն որ կը լուռէին :

Երկու մանկիկները գաղտնի երկիւղով մը կը դիտէին որ իրենց մայրը չէր խօսեր :

Թէև լուռ կիներու օտիւր էր, սակայն այս անբնդ հաս ըտտայհառ թեան և իր շրթերն ամփոփեղէն կը հասկնային որ այլի կիներ իր անխօսուն բարկութեան մէջ կը դռնուէր, այսինքն սակոփ սրտմտութեամբ կը ճարակէր :

Փայտը հատնելուն կրակը մարելու կ'ապտահար :

— Գրանստար, կոճղ մը բեր — ըսա Քաղաքս :

Արդիկիպ ուսիրաններու նորհասակ կարկտողը վառարանին ճարգակին ետին նայեցաւ և պատասխանեց :

— Ա՛յ փայտ չկայ . . .

— Փայտարանը գնա — վրայ բերա Քաղաքս :

Գրանստար քանի մ'անիմանայի խօսքեր միտնաց և տեղէն չլքնուց :

— Հօ, ինձ կը նայիս, Գրանստար, կը լսես — ըսա Քաղաքս կծու ձայնով մը :

Վիստահային այրին ծնկեցուն վրայ դրաւ զինչակ մ'որուն նշանը կը քակէր, և աչքը ազուն վրայ նետեց :

Իսկ աղան թէև գլուխը ծոեր էր, բայց գուշակեց, բայց կարծես թէ զգաց մօրը ստիպի ակնարկն որ զինքը կը շանթէր . . . : Այս ահարկու երեսը նայելու սիրա չլնելով տղան անշարժ կը մնար :

— Կնչ, խուչ ես, Գրանստար — վրայ բերա Քաղաքս սրտմտելով, — մայր իմ . . կը նայիս . . .

Մերևէր թէ մեծ քոյրը սրտուն ունէր երկու մանկիկներն սմայատանելու և որբեարկին անխնայ տուած պատիժները անօրինելու :

Ամանտինն կամեցուկ մ'եղբօրն արմուկը հրեց, թէև ոչ որ տեսաւ անոր այս շարժումն, որպէս զի յորդօրէ լոտիայն Քաղաքսին հնարուն գելու :

Փրանսուա անդէն չլմտայ :

Մեծ քոյրը մօրը երեսը նայեցաւ յանցաւորին պատիժը խնդրելու . որբեարին անոր միտքը հասկցաւ :

Իր երկար ու ոսկրուտ մատովը ցոյց տուաւ անոր վաւարանին անկիւնը կեցած հաստ ու զիւրաթեք ուռիի փայտ մը :

Քալլպատ ետին դարձաւ , զգաստութեան գաւազանն պաւառ մօրը յանձնեց :

Փրանսուա՞ որ ժօրը բոլոր շարժումները լաւ մը զիտեր էր , յանկարծ ոտը ելաւ և օտտում մ'ընկելով օտրտուալի գաւազանին ծայրէն հեռու տեղ մը կեցաւ :

— Ի՞նչ , կ'ուզե՞ս օր մայրո՞ւ տեղորոշե՞րք խորտակէ — գոչեց Քալլպատ :
Որբեարին՝ միշտ դուռըննա՞ն ՚ի ձեռքին՝ առելի և օ իր դէմուկ շրթերը կը խածնէր և ատենց բաւ մ'ուրաւարաններու՝ Փրանսուային կը նայէր ակնապիշ :

Ամանտին՝ գլխիկէր՝ ի՞նչ ձեռններուն ուղէն՝ և յանկարծ իր վզին կարմրելէն կը յայտնէր որ , թէ և պարտիսի նուարաններու վարժ էր , կը օտակայ իր եղբօրը կրեկիք պարտահաճէն :

Իսկ սա խոհանոցին մէկ անկիւնը դըրձ՝ գողի և զայրոյթի մէջ կը թուէր :

— Զգոյշ եղի՛ր , մայրս պիտի ոսք երնէ հիմակ , և ետքն աղատում չունիս — ըսաւ մեծ քոյրը :

— Հոգս չէ — վրայ բերաւ Փրանսուա դեմնելով : — Առջի օրուան պէս ծեծ ուտեմ աւելի աղէկ ունիմ . . . քան փայտարանն երթալ . . . և ան ալ զիշերը մեծիմ . . . :

— Եւ ինչո՞ւ համար — վրայ բերաւ Քալլպատ անհամբեր :
— Ե՛ս . . . փայտարանը կը վախնամ . . . — պատասխանեց տղեկը ակամայ գող եղնելով :

— Կը վախնան . . . ապուշ . . . և ինչ բանէ :
Փրանսուա գլուխն օրեց առանց պատասխան տալու :
— Պիտի ըսես . . . Ի՞նչ բանէ կը վախնաս :
— Զգիտեմ . . . բայց կը վախնամ . . . :
— Հարիւր անգամ գայեր ես , և դեռ երէկ իրկուն ալ հոն էիր :
— Հիմակ չեմ ուզեր երթալ . . . :

— Ահա մայրս ոտը կ'երնէ . . .
— Ի՞նչ փոյժս է — գոչեց աղեկը — թող ծեծե՛ք , թող սպաննէ զիս , փայտարանը չպիտի երթամ . . . մանաւանդ . . . զիշերայն . . .
— Բայց պիտի ըսես պատճառը — վրայ բերաւ Քալլպատ :
— Լաւ , ինչու որ . . . :
— Ինչո՞ւ որ . . . :
— Ինչո՞ւ որ մէկը կոյ . . . :
— Մէկը կոյ . . . :
— Թաղուած մարդ մը կոյ հոն — . . . միմեաց Փրանսուա սարսուէրով :

Գլխատեպին որբեարին՝ թէ և միշտ անասան՝ չկրցաւ յանկարծահաստ գող մը զսպել . առջիկն անոր հեռակեցաւ , կարծես թէ այս երկու կիներն մի և նոյն երկտարակիս մտքումով շարժեցան :

— Թաղուած մարդ մը կոյ ըսիր փայտանոցն — վրայ բերաւ Քալլպատ ուտերը վեր վերցնելով :

— Հա՛ — ըսաւ Փրանսուա այնպիսի ցած ձայնով մ'որ հազիւ լսուեցաւ :

— Ստախօս . . . — գոչեց Քալլպատ :
— Իրաւ օր կ'ըսեմ որ երբ փայտերը կը շարէի՝ փայտարանին մէկ սև անկիւնը մեքերի ոսկոր մը տեսայ . . . հողէն քիչ մը գուրս կ'եր էր , և հողն ալ խոնու էր . . . չորս զին . . . — պատասխանեց Փրանսուա :
— Կը բե՛ս , մայր իմ : Ապուշ չէ՞ — ըսաւ Քալլպատ զիսակցութեան նշմար մ'ընելով որբեարին — ոչխարի ոսկորներ են , ես կը նետեմ այն տեղ լուացրի համար . . . :

— Զէ , ոչխարի ոսկոր չէր — վրայ բերաւ տղեկը ահաբեկ — թաղուած ոսկորներ էին . . . մեծերի ոսկորներ . . . ոսք մը հողէն գորս ելեր էր . . . եւ ոչքով տեսայ :

— Եւ գացի՛ր շուտ մը այս աղ որ գիւտը . . . եղբօրդ . . . քու Մարսիալ բարեկամիդ յայտնեցիր , այնպէս չէ՞ . — ըսաւ Քալլպատ վայրենի հեղնութեամբ մը :
Փրանսուա ձիկ չհանեց :

— Անպամ փորրիկ լըտե՛ս — գոչեց Քալլպատ զայրագին — քանի որ միկ պէս վախկոտ է , կրնայ մեր գլուխը կտրել տալ , ինչպէս որ մեր հօրը գլուխը կտրեցին :

Արտճեանք լրանա կանուանես իս — գոչեց Վրանաւա մնր զին —
ամեն բան Գարսիալ եղբորս պիտի լսեմ: Գեո այս բանս անոր չի
յայտնած, ինչու որ բաւական տանիւ վեր տեսած չունիմ վերքը . . .
Բայց երբ այս իրիւն տուն դառնայ . . . պիտի . . . :

Տղերը չէլիեց աւարտելու խօսքը: Մայրը գէպ իրեն կըպար, հան-
գարս՝ այլ անողբելի գէմքով մը:

Թէպէտ ամբարարս այս կինը փոքր ինչ կը ծուէր, սակայն իր հա-
ասկը կնկան մը համար շատ բարձր էր. մէկ ձեռքը դաւազանը ստած՝
մուտմը որդիին թեւէն քանց, և աղծկին սարսակին, ընդդիմութեան,
աղաչանքին և արտասպին ճայելով՝ ետեւէն քաշընց և խոհանոցին խո-
րը գանուած անողղէն գեր երեսու ստիպեց:

Պահ մ'անցնելէն ետեւ՝ ձեռքին վրայ հեռալուր գովիւններ բաւե-
լան, որ աղաղակներու և հեծկլանքի կը միանային:

Բանի մը վայրկեան ետքը՝ այս աղմուկը գազրեցաւ:

Գուռ մը գոցուեցաւ բռնասէլս:

Եւ գլխատեսարին որբւարին վար իջաւ:

Յետոյ՝ միշտ անողղուելի կեցով մ'ուռնելին գուռազանը տեղը
գրաւ, կրակին մօտ նստաւ, և սուսնոց բաւ մ'ընէրու կարը ձեռք ա-
ւաւ:

Գ Ա Ո Ի Խ Ե

Գ Յ Յ Ա Ն Ե Ն

Բանի մը լուրէ լուրիւն պահելէն ետեւ՝ գլխատեսարին կինն իր աղ-
ջկին լսաւ:

— Գնա փոցու բեր. այս իրիւն փայտաբանը պիտի շրջեմ . . . երբ
Նիզօլա և Գարսիալ տուն դառնան:

— Գարսիալ, ուրեմն անոր ալ պիտի լսես թէ . . . :

— Փայտ . . . — վրայ բեքաւ որբւարին յանկարծ ազջիլին խօսքը
կորելով:

Աղջկը՝ այս երկաթեայ կամբին հնազանդելու վարժ՝ լսողտեր մը
փառեց ու գուրս կրաւ:

Այս միջոցին որ գուռը բացաւ՝ գիշերային խաւարն աչքին զարկաւ,

հողմաշարժ բարձր հաղնին լսուեալ ձայնի մը, նստակն բու. շրթան բուն
դողդիւնը, հովին շաչիւնն, դեպին մունջիւնը լսելի եղան:

Այս ձայները յեպին ծայր ախոր էին:

Նախորդ անտարանին ասներ՝ Ամանտին Գրանաւալին վիճակէն յա-
զուելով՝ զոր դորովայր կը սիրէր, չհամարձակեր էր ոչ աչերը վեր
տանուլ, ոչ արասուքը սրբել, որ կաթիլ առ կաթիլ ծնկերուն վրայ կը
հոսէին: Իր զսպած հեծկլանքէն կը խղղուէր. նոյն խոյ սրան բա-
խումներն ալ ձնշիլ կը շանար՝ թէ և երկիւղէն թմուր ելեր էր: Արա-
տըն աչերը կը միմայնէին: Մինչդեռ իրեն արուած շապիկն նշանը
քակելու կ'արտարար, մկրասուկը ձեռքը վերատրեւէր, և վերքէն շա-
արիւն կը վազէր, բայց խեղճ աղջիկն այնչափ իր ցաւը չէր մտածիր
սրչափ այն արտաթն՝ որուն կ'սպասէր ձերմակիղէն արիւնովը արա-
սելուն համար: Բարեբաղդօրէն՝ այրին խորին մտածութեամբ համա-
կուած ըլլալով բան մը չգիտեց:

Գարսիս դարձաւ սակաւ մը լի փայտ բերելով: Իր մօրը նայուած-
քին արատախանն սուտալ գրիի հաստատական նշանով մը:

Ասով լսել կ'ուզէր թէ իրօք մտերին սօքը հողէն դուրս ելեր էր . . .

Արբւարին շրթները սեղմեց և գործը շարունակեց, ճիւղակ իր անեզն
տակի շտապաւ կը շարժէր:

Գարսիս կրակն արժարձեց, կրակին մօտ կաթնոցին ետն ու եփը
նայեցաւ, և ապա իր սօքը քովը նստաւ:

— Նիզօլա ու շաղա — լսաւ անոր: — Ար վախեամ որ այս սուտ-
տանան պատաւը՝ Գրանաւալին կողմէն ոտանակի մը հետ ժամադիր
ըլլալուն՝ անոր խաղ մ'ըրած չըլլայ: Այն պատար տակն ու վրայ կ'ի-
րեւէր, ոչ միայն հասկցուց, ոչ անունը յայտնեց, ոչ տակից գար:

Արբւարին տակը բարձրացուց:

— Չես կարծեր, ծայր իմ, որ Նիզօլա վտանգի հանդիպի . . . :
Մակայն, կարելի է իրատեք ունիս . . . : Պատաւը կը ինդրէր որ երե-
կոյան ժամը եօթնի՝ Օլիլի քարտիկին մօտ գանուի և հին մարդու մը
սպասէ որ իրեն հետ խօսիլ կ'ուզէ և իրը անցախօս Գրանաւալին անու-
նը պիտի տայ կեղեր . . . : Իրախ, մեծ փոստով մը չեմ տեսներ ասոր
մէջ . . . : Եթէ Նիզօլա կ'ուզուեց գարու, թեքեա ձամբանս աւար մը

զարիսձ ըլլայ . . . ինչպէս անոյսձն օր ալ . . . սա ճերմակեղէն լաթերը
շօթեց լաթ լուսոյող կնկան մը մը նաւակէն . — Եւ յոյց տուա նա Ա-
մանախնին ձեռքը դանուած մէկ լաթը . յետոյ , աղջկին գառնալով . —
Գիտես , ինչ ըսել շօթեւ (grinchir) :

— Ըսել է . . . առնել . . . — պատասխանեց աղջիկն առանց աչերը
ժեր տանլու :

— Գողնալ , ըսել է , տարւշ աղջիկ , կը ըսեն . . . գողնալ
— Այո , քոյր իմ .

— Եւ երբ Նիկօլան պէս մտոր շորթել տորիի , միշտ շահով կ'եննէ
. . . երէկուած դողցած ճերմակեղէնը տունը լցոյց և մինակ նշանն հա-
նելու չափ նեղութիւն պատճառեց մեզ . . . այնչպէս չէ , մայր իմ —
յարեց Քալպաս այնպէսի քահքահ մը թողլով որ իր գոյնին պէս դեղ-
նուկ և լերկ ախանները երեսն հանեց :

Արբեւորին անտարբեր կեցառ այս կատակին :

— Իսկ եթէ մեր տունը տեղը ձրխապէս շահելու հարկ ըլլայ —
վրայ բերաւ Քալպաս — Էստի է որ պէտք եղածը կրնանք ուրիշ
կրպակէ մը գանել : Գիտես որ քանի մ'օրէ վեր ձեր մարդ մ'իկաւ Պ .
Արիֆօնի զխղատունը բնակելու , որ Քալիզի հիւանդարանին բժիշկն է
. . . այն , այն մնաւոր տունն է որ գետափէն հարիւր քայլ հեռու ,
դաճի հնոցին գիւնոցը կը գտնուի :

Արբեւորին գլուխը վար ծոեց :

— Առջի օրը Նիկօլա կըսէր թէ հիմակ կարելի է աղ ուր առար մը
կայ զարնելու — վրայ բերաւ Քալպաս — Եւ ես ալ այս առաւօտէն
վեր քաջ զխտեմ թէ կողոպտա մը կայ . պէտք է զրկել Ամանախնին որ
տանն բոլորաթիւր ժուռ դայ , մարդ անոր ուշ չդներ . պիտի կարծուի թէ
կը խաղայ , և այն ալ աճէն կողմ գիտելէն ետեւ դոյ պիտի մեզ պատմե-
լու տեսածը , Եր ըսն ինչ կը ըսեմ — յարեց խառն Քալպաս խօսքն Ա-
մանախնին ուղղելով :

— Այո , քոյր իմ , պիտի եբխամ — պատասխանեց աղջիկը գողա-
լով :

— Միշտ պիտի ընեմ , կըսես , և բան մ'ըրած չունիս , անկողակ :
Այն անգամուսն որ Ամիէրի նոյարտվածառին սրապղին վրայէն հա-
րիւր բու տուղու ապարեղեցի քեզ , երբ ես կրպակէն մէս կողմը ուրիշ

բանի մը դէնքը կ'զբաղեցնէի , ինչո՞ւ համար պատուէրս չկատարեցիր
քանի որ դեղին բան մ'էր , և մարդ մը փորոխի աղջիկէ մը չխախտածիր :

— Քոյր իմ . . . սիրտս դող ելաւ . . . չհամարձակեցայ :

— Հասաք անոյսձն օր ինչպէս սիրոյ ըրիր շրջող փերեղակին ծրա-
րէն թաշկինակ մը գողնալու , մինչգեւ դինեպունը առուծախ կ'ընէր :

. . . Ըրթո՞ղ տեսնող եղբ , սնրկիտան :

— Քոյր իմ , դուն ստիպեցիր որ սուսուս . . . թաշկինակը քեզի հա-
մար էր , և քսիկը դատ սրտի չէր . . . :

— Ատկից ինչ կ'եննէ :

— Մաս որ . . . այնչափ գէշ բան չէ թաշկինակ մ'առնուլ քեզի
ստակ :

— Երդուսալ կ'ընէ , պատիւ ուրնի . անչա՞քս Մարտիան է քեզ
յոյր խրատները առողը , այնպէս չէ — վրայ բերաւ Քալպաս հեղնօրէն
— դու ամէն բան անոր պիտի ըսես , չարածճի լրտես . . . և ինչ , կար-
ծես թէ կը վախնանք որ մեզ չըսէ , Մարտիալ . . . :

Ապա , որբեւորին դառնալով Քալպաս յարեց . — Կը գիտես , մայր
իմ , անոր վերջը դէշ պիտի ըլլայ . . . : Այս անգամնունս վրայ իշխիւ
կ'ուղէ : Նիկօլա անոր գէմ կարողեր է , և սալ նոյնպէս . . . : Ամանախնին
ու Քրանտուսն մեզի գէմ կը գողուէ , քեզն գէմ կը գողուէ . . . : Միթէ
կարելի է որ այս այսպէս սուէ . . . :

— Աչ . . . — ըսաւ մայրը սուղ ու հաստը ձայնով մը :

— Մանաւանդ քանի իր Լուվր էն-Լազար կը գտնուի կարողի
շունի պէս քանտուս ետեւէն ընկեր է . . . : Մեր յանդարտքն ինչ է եթէ
իր . . . սիրուհին . . . բանտն է : Նիթէ ազատի , թող մեզի դայ . . . և ա-
նոր պիտի ծառայեմ . . . աղ ուր միջոց մ'է . . . թէ և չար թալ ըլլայ . . . :

Արբեւորին սրահ մը խորհրդէն ետեւ իր աղջկին ըսաւ .
— Արդեօք իրօք կը կարծես թէ բժշկին տունը բնակող ձեռքն
կրնանք բան մը շորթել :

— Հոն . . . մայր իմ . . . :
— Մուրացիքնի կը նմանի ;
— Բայց դարձեալ քաղաքական մ'է ,
— Ամանախնին մը ;
— Հոն , և քսիկն մէջ ոսկի ունի . . . թէ և ամէն օր հետի Քալիզ

կերթայ և նոյնպէս կը գառնայ՝ իր հաստ վերջն իրը կառք դարձած ելով:

— Ուսկից դիտես որ ոսկի ունի:

— Մնողամ մ'Անիկէրի թղթատունը դայի Բո՛ւ լծնէն եկած նամակ փնտռելու համար . . . :

Այս խօսքիս՝ որ թիարանի որդին իրեն կը յիշեցնէր, որքեարին տնօրէրը պրտոնց և հատաչ մը ճնշեց:

Քաղպաս շարունակեց .

— Իմ կարգիս կ'սպասէի՝ երբ բժշկին տունը բնակող ծերը ներս մտաւ . իսկոյն իր մագեբուն պէս սպիտակ մօբուսէն զինքը ճանչեցի, նոյնպէս տուսախի դոյն երեսէն . . . սե յօնքէն: Անուշդէմը չունի . . . : Թէև տարօք է, բայց արիասիրտ ծերուկ մը կ'երևի . . . : Գրաբաշխ կ'սկսն ըսաւ . «Ամն տը Աէն-Րըմիի անունին ա'Անժէէն նամակ կայ:

— Այո, պատասխանեց նա, ահա տախի հատ մը: — Իմն է, ըսաւ ծերուկը . նայէ՛ անցադիրս:» Մինչդեռ գրաբաշխուհին անցադիրը կը քննէր՝ ծերուկը նամակին ուղղութեամբ (port) վճարելու համար կանաչ մետաքսէ քսակը հանեց . քսակին ցանցին մէկ ծայրէն ոսկիի փայլ տեսայ . հասկիթի պէս խոշորներ կային . . . առնուազն քառասուն յիսուն ոսկի — դոչեց Քաղպաս աչիւն ընչասէր իղձով փայլուն . . . — և սակայն մտորացիանի պէս հաղուած է . . . : Գանձերով շարուած ժլատ մը կ'երևի . . . : Անհոգ եղիւր, մայր իմ, անունը դիտենք . . . կարելի է օրին մէկը կօզտէ մեզ . . . իր տունը մանկու համար . . . երբ Ամանտին մեզ իմաց տայ թէ սպասաւորներ ունի թէ ոչ:

Բո՛ւն հաջելու ձայներ Քաղպասին խօսքն ընդմիջեցին:

— Ա՛հ . . . շուները կը հաջեն — ըսաւ նա . — նաւակի դալուտաը կը լսեն . . . Մարտիալն է կամ Նիլօլա . . . :

Մարտիալի անունին՝ Ամանտինի դէմը բռնազբօսիկ ուրախութիւն մը յայտնեց:

Քանի մը վայրկեան սպասելէն ետև՝ փոքրիկ աղջիկն՝ որ անհամբեր և անհանդիստ կը նայէր դրան, վշտալին տեսաւ որ ներս մտնողը Նիլօլան է, Պարպլեյօնի ապաղայ գտակիցը: Այս մտադուն երեսը թէ նողկալի էր և թէ վայրագ . փոքր, վտիտ ու նիհար ըլլալուն՝ մարդ չէր կրնար հաւատալ որ իր վտանգալի և մեղապարտ արհեստը կը բանի:

Գժրադրօրէն բարոյական վայրենի արիւթիւն մ'այս թշուառականին չունեցած նիւթական ոյժին տեղ կը բռնէր: Իր կապոյտ հագտոին վրայէն Նիլօլա տեսակ մ'անթեւ վտառակ կը հայտնէր՝ որ երկարաթաւ գորշ քօշի մորթէն շինուած էր . ներս մտնելով՝ իր ուսին վրայ դժուարութեամբ բերած սղնձէ քծուար մը դեպինը նետեց:

— Բարձրիւուն և բարի կողոպուտ, մայր իմ — դոչեց նա խոր ու կերկերուն ձայնով մը, իր բեռը վար դնելէն ետև . — նաւակիս մէջ դեռ ասոր պէս երեք քծուար, լաթի ծրար մը, և չգիտեմ ինչով լեցուն մնաուկ մը կայ . ինչու որ զայն բանալու ատեն չունեցայ: Կարելի է որ պարասի ելայ . . . նայինք:

— Հապա Պլլի բարափին մարդն ո՞ր մնաց — հարցուց Քաղպաս, մինչդեռ որքեարին իր սողուն երեսը կը նայէր լսին:

Նիլօլա՛ պատասխան տալու սեղձ տարատին գրպանը խօթեց ձեռքը, և զայն օրորելով, շատ մը արծթէ տտախներ դռնչեց:

— Այս ամէնն անորմէ՛ առիւր . . . — դոչեց Քաղպաս .

— Չէ, ինքը ձեռօքը տուաւ 260 Ֆրանք, և դեռ ևս 800 հատ պիտի կոխէ երբ . . . բայց բաւական է . . . : Առաջ նաւակը պարպենք, և ապա լեզու կը կտրենք . . . : Մարտիալն այս տեղ չէ:

— Չէ — ըսաւ քոյրը:

— Աւելի աղէկ . . . կողոպուտն առանց անոր կը պահենք . . . : Անոր չգիտնալն աղէկ է . . . :

— Անորմէ կը վախնան դու, վատ . — ըսաւ Քաղպաս խտիւ:

— Ե՛ս վախնամ անորմէ, ե՛ս . . . — և ուսերը բարձրացուց — մինակ կը վախնամ որ մեզ բերան չտայ . . . : Իսկ վախնալ . . . շօ՛ւք ուրիշ ծայրն աղէկ սրած է . . . :

— Ա՛հ, երբ այս տեղ չէ . . . մեծ մեծ կը ջարդես . . . բայց երբոր դայ, կը պապանձիս կը մնաս:

Նիլօլա անտարբեր կերպով ընդունեց այս յանդիմանութիւնն ու ըսաւ .

— Օ՛ն երթանք, շուտ շուտ . . . նաւակը . . . : Մայր, ո՞ր է Ֆրանսուտան . . . այն ալ կրնայ մեզի օգնել:

— Մայրս զանի աղէկ մը լուալէն ետև վերի խուցը փակեց, առանց ճաշի պիտի պատկի — ըսաւ Քաղպաս:

— Բայց, հոգ չէ, թող դարձեալ զայ սա նաւակը պարպելու մեղ
օղնէ, կ'նչ կ'րեսս, մայր : Ես, այն ու Բայրասս, ամենքնիս մէկէն պի-
տի դառնանք շրջան մ'ընելէն ետե . . . :

Որբեւորին մատուր ձեղունը ջյոյց : Բայրասս անոր միտքն խնայաւ,
և վեր ելաւ Գրանստան բանտէն հանելու :

Մարտիւլ խաթունին մթաղին երեսը՝ Նիղօլան դալէն վեր վտրը
ինչ պարզեր էր . զանի Բալբասէն աւելի կը սիրէր, բայց իր Թուրքի
տղէն աւելի նուազ, ինչպէս որ կ'ըսէր . . . վասն զի այս վայրազ արա-
բածին մայրական սէրն իրեններուն յանցաւորութեան համեմատ կը
սաստիանար :

Այս չարասէր նախադատութիւնը բաւական կը մեկնէր որբեւորին
երկու նորհասակ տղոց համար ունեցած հակառակութիւնն որ յոռի
տրամադրութիւններ կը յայտնէին, և Մարտիւլ իր անդամիկ որդւոյն
զէմատելութիւնը՝ որ, թէև անսպասանելի կեանք մը չէր վարեր, պար-
կեշտ մարդու տեղ կ'ընար անցնել թէ Նիղօլան, Բալբասին և Թու-
րքի ոճրագործ եղբորը հետ բաղդատուէր :

— Այս գիշեր ո՞ր կողմնն ասպատակեցիր — ըսաւ որբեւորին Նի-
ղօլան :

— Պէլլի քարափէն դառնալու ատենս՝ ուր հանդիպեցայ այն ու-
սանկին որուն հետ այս իրկուն ժամադիր եղեր էի, Նովարիաներու
կամրջին մօտ՝ աչք մը նետեցի չորս գլխի և քարափին կապած մակոյկ մը
տեսայ : Սաստիկ մութ էր . ինքն իրեն լսի : Նաւահէն (cabine) լոյս
չկայ . . . նաւորդները ցամաքն ելած պիտի ըլլան : Ար մօտենամ . . . թէ
հետաքրքիր մը տեսնեմ, չուանի մը կտոր կ'ուզեմ, իբր թէ թիակս
պիտի կապեմ . . . : Ար մտնեմ նաւահէնը . . . հոգի չկայ . . . : Այն ա-
տեն ձեռքս անցածը կը թաղեմ, լաթեր, մեծկակ սնտուկ մը, և նա-
ւակին կամրջին վրայ չորս հաստ պղնձի քծուար, վասն զի երկու շրջան
ըրի և գիտեցի որ մակոյկը պղնձով և երկաթով բեռնաւորուեր էր :
Բայց ահա Գրանստան և Բալբաս դարձան, շուտ նաւակն երթանք . .
. . . Օ՛ն, դու ալ ձամբայ առ, է՛հ, . . . Ամանտին, դու լաթերը պիտի
աւանտ բերես . . . : Որտակն առաջ . . . պէտք է բերել . . . :

Որբեւորին մինակ մնալով ընտանիքին ձաշը սրատրաստելու դբաղե-
ցաւ, սեղանին վրայ բաժակներ, շիշեր, յախճապակէ սնանիներ ու ար-
ծաթեղէն ծածկոյթներ դրաւ :

Այս սրատրաստութիւններն աւարտելու ատեն՝ իր զաւակները ներս
մտան ծանրապէս բեռնաւորուած :

Գրանստան իր ուսերուն վրայ կրած երկու պղնձէ ծանր քծուարնե-
րուն տակ կարծես թէ կ'ընկճէր . Ամանտին իր գլխին վրայ դրած դու-
զանի լաթերուն կոյտին ներքե կիսովին աներևոյթ եղեր էր . վերջա-
պէս Նիղօլա, Բալբասին աջակցութեամբը ձերմակ փայտէ սնտուկ մը
կը բերէր, որուն վրայ պղնձէ մուս քծուարը դրեր էր :

— Մտնուկը, մտնուկը . . . խորտակեցք, մտնուկը — գոչեց Բալ-
բաս վայրազ անհամբերութեամբ մը :

Քծուարները հոգին վրայ նետեցին :

Նիղօլա իր մէջը կրած հաստ տապարին երկաթովը զինուած՝ զայն
խոհանոցին մէջ տեղը դրուած սնտուկին խուփին անցուց, որպէս զի
վերցնէ :

Կրակարանին կարմրորակ ու երերուն նշտը կը լուսաւորէր այն առ-
ու աւարի տեսարանը, իսկ դուրը հովը ևս քան զևս սաստիկ կը սու-
լէր :

Նիղօլա քօշի մտրթն հաղած՝ սնտուկին առջև չարեր՝ զայն խորտա-
կելու կը ջանար և ստիկալի յիշուցներ կ'արտաբերէր տեսնելով որ խուփն
իր հոժկու հարուածներուն զէմ կը տուար : Բալբասս՝ զօշոտ աչքերը
վառեր, եռանդէն սցտերը կարմիր, սնտուկին վրայ ծուկը դրեր էր,
և մարմնին բոլոր ծանրութեամբը կը կոխէր որպէս զի Նիղօլան լծա-
կին հաստատուն յեմարան մ'ընծայէ : Որբեւորին՝ այն ակնքէն սեղանին
չայքին չափ հեռու ու կանցուն կեցած՝ դարձուն կողմը կը նայէր,
տեսնելայն զօշաբաղութեամբ փայլուն հայեացքով մը :

Վերջապէս, անսպասելի և զժբաղդօրէն ճարտարագիտական տեսարան
մ'էր տեսնել երկու փորթիկներն՝ որոց ընտիր բնազդովը տակալ յող-
թանակեր էր սնային գարշելի սոպակամութեան մը ներդրում թեան
զէմ, այս երկու տղեկներն էրենց խաչի խայթն ու երկիւղը մոռնալով
աղէտաբեր հետաքրքրութեան մը հրապարակ դրուուեր էին . . . :

Գրանստան և Ամանտին իրարու սլլումս՝ վատ աչօք, ճնշեալ չնչա-
ռութեամբ՝ միմեներուն չափ հետաքրքիր էին տեսնելու թէ սնտուկին
մէջ ի՞նչ կայ, և Նիղօլան խորտակիչ ձիգերուն դանդաղութեան հա-
մար կը սրտմեկնէ :

Վերջապէս խուփը ճարձատիւնով բացուեցաւ :

— Ա՛հ . . . — դռնեց ընտանիքը միաձայն , հեաղով ու զրարթունս :

Եւ ամէնքը՝ մայրէն բռնէ մինչև փոքրիկ աղջիկը՝ վայրենի ետանդով վաղեցին և թափեցան խորտակուած մտուկին վրայ . . . : Ա՛րեւի թէ այն մտուկը Բարիդէն՝ գեանդրեայ աւանի նորալաճառի մը զրկուեք էր որ կիներու գործածութեան համար շատ մը կերպատի կատրներ կը պարունակէր :

— Նիզօլա վրայ չէ սուեր — դռնեց Քալպաս աստի շղարշի կտոր մը բանարով :

— Ո՛չ — պատասխանեց աւազակն՝ ինքն ալ իր կողմէ մետաքսէ թաշկինակներու ծրար մը պարզելով — ծախսս հանեցի , աւարը զարկի . . . :

— Լըլանդէն կերպարը նայէ . . . հացի պէս կը ծախուի այս . . . — ըսաւ սրբեարին ինքն ալ մտուկէն քաղելով :

— Պրա՛ւ Ռուժին գողակից կիներ՝ որ Գանբլ փողոցը կը բնակի — յարեց Նիզօլա — կերպանները ծախու կ'աւանու . . . — և Սէնդ — Շնորէ փողոցը կաղմիկ տուն նստող պապա Միքոսին բանին ալ սա պղինձը ձեռք կտայ :

— Ամանտին — ըսաւ Ֆրանսուա մեղմիկ մ'իւր պղտի քոյրին — ինչ աղոր փողկապ կ'ըլլայ սա աղոր թաշկինակը զոր Նիզօլա ձեռքը բռնեք է . . . :

— Միրուն գլխի կապ ալ կրնայ ըլլալ — պատասխան տուաւ քոյրը հիանարով :

— Պէտք է խոտովանիլ որ բազդ քշեց քեզ գէպ այն մակոյկը , Նիզօլա — ըսաւ Քալպաս : — Տես , սրանչելի է . . . հիմակ ալ շալեր կ'ելնեն . . . երեք հատ կայ . . . ճշմարիտ մետաքսէ բանուած . . . նայէ անգամ մը , մայր իմ . . . :

— Պիւրէր խաթունը քիչէն քիչ 500 Ֆրանք կտայ ամէն մէկին համար — ըսաւ սրբեարին հասուն քննութենէ մ'ետև :

— Այն ասուն բոլորը դմնէ 1,500 Ֆրանք պիտի աժէ — ըսաւ Նիզօլա . . . բայց ինչպէս որ կ'ըսեն , ամէն դող . . . գողակից ունի : Ա՛նչ , հող չէ . . . ես խճրճել չգիտեմ . . . այս անգամ ալ նորէն բուսական թացիկ պիտի ըլլամ Պիւրէր խաթունին , նոյնպէս Միքոս պատպին պայմանն ընդունելու . բայց Միքոս՝ բարեկամ է :

— Ինչ կ'ողէ թող ըլլայ , ուրիշներուն պէս դող է , այն հինցած երկաթի վաճառողը . բայց այս սինդրո գողակիցներն աղէկ գիտեն որ իրենցմէ պէտք ունինք — վրայ բերաւ Քալպաս շալին մէկը վրան աւանդով — և անխնայ են իրենց արհեստին մէջ :

— Ալ բան չմնայ — ըսաւ Նիզօլա մտուկին յատակը համներով :

— Հիմն ամէն բան ժողկել պահել պէտք է — ըսաւ սրբեարին ,

— Ես այս շալը պիտի աւանու՛մ — վրայ բերաւ Քալպաս :

— Գու սու . . . սու միայն — դռնեց Նիզօլա խրոխտաբար — թէ որ տամ . . . առնելը նայէ . . . : Միշտ առնու վրայ ես . . . դու . . . տիկին Աննէլէ :

— Ա՛յ . . . հասցա գու , դու ինքզինքդ կը գրկես . . . առնէն :

— Ե՛ս . . . մերթս վտանգի գնելով կը շըլնե՛մ . թէ որ մակոյկին վրայ բռնուէի դու թիարան պիտի չնետուէիր . . . :

— Լա՛ւ , ահա առ շաղ , ճիւերէս վար — ըսաւ Քալպաս կծու ձայնով մը և շալը մտուկը նետեց :

— Ըալին համար չէ . . . խօսքս . այնչափ աչքծակ չեմ որ շալին համար սնանում . Զէլ աւելի կամ պակաս եղեր է հող չէ , Պիւրէր խաթունը դինը չփոխեր . ամէնը մէկ կը գնէ — վրայ բերաւ Նիզօլա : — Բայց այս շալն ինձի համար կը պահեմ ըսելու տեղ , հարցուր որ ես ալ ստամ . . . : Օ՛ն , առ պահէ . . . : Քեզի կ'ըսեմ , առ նայիմ . . . թէ ոչ կրակը կը նետեմ՝ հիմակ կաթսային եփ տալու համար :

Այս խօսքերը Քալպասին սրանեղութիւնը անդորրեցին . շալն առաւ առանց խէթի :

Անշուշտ Նիզօլան վեհանախութիւնը բռնեք էր նոյն պահուն , վասն զի մետաքսեղէնին կապը քակելով ակոսներովը՝ երկու թաշկինակ հանեց և Ամանտինին ու Ֆրանսուաին նետեց , որ անդադար այն կերպարան կը նայէին անձկութեամբ :

— Ահա ձեզի ալ , սրիխներ . այս պատառը պիտի գրգռէ ձեր շորթերու ճաշակն ալ . . . : Ուտելով մնորդուս ախորժակը կը բացուի . . . : Հիմակ դացեք պառկելու . . . մամակն հետ քիչ մը լեզու պիտի թափեմ . ընթրիքնիդ վերը կը բերեն ու կ'ուտէք :

Երկու աղէկ յիմու թեամբ ձեռքերնին իրարու գարկին , և իրենց տրուած դողունի թաշկինակները յաղթանակու ծածանեցին :

— Լաւ ուրեմն, փոքրիկ զբառաներ — ըսաւ Քաղպաս — ասկից
կանքը Մարմնադիրն խօսքը մտիկ պիտի ընէք . միթէ ասանկ թաշկինակ-
ներ ձեզի տուած ունի՞ այն :

Փրանսուա և Ամանախն իրարու երես նայեցան ; ասպա առանց պա-
նասխան տարու զըտխնն վար ստին :

— Չէք խօսիր — վրայ բերու Քաղպաս խտախ . — միթէ բնաւ ըն-
ծայ մ'ըրած է ձեզի Մարմնադիր :

— Իբրու որ . . . չէ . . . բնաւ ըրած չէ — ըսաւ Փրանսուա իր կար-
մերանդոյն թաշկինակին նայելով խնդու թեամբ :

Ամանախն յարեց խիստ մեղմիկ ձայնով մը ;

— Մեր Մարմնադիր եղբայրը մեզի ընծայ չտար . . . վասն զի բան մը
չենի որ . . . :

— Եթէ գողութիւն ընէք կ'ունենար — ըսաւ Նիզօլա խտախ . —
այնպէս չէ՞ Փրանսուա :

— Այո, եղբայր իմ — սրտատախանեց Փրանսուա . ասպա յարեց :

— Ո՛հ, իմ աղւոր թաշկինակս . . . ինչ սիրուն փոզրապ պիտի ըլլայ կի-
թնակի ծրուան համար :

— Եւ իմն ալ ի՞նչ արեւը դիտի կապ պիտի ըլլայ — վրայ բերաւ Ա-
մանախն :

— Ասկից զատ՝ կրեփողին տղաքը աստիկ պիտի կատարին ձեր անց-
նիլը տեսներով — ըսաւ Քաղպաս . և տղոց երեսը քննեց որ անտէ թէ
իր խնայեցուն չարամիտ խնատը կը բռնեն թէ ոչ : Այս դարշելի ա-
րարածը ետոց ունայնասիրութիւնը կը դգուէր որ անոնց խղճի խայթի
քնորոնվին ջնջէ : — Արեփողին տղաքը — վրայ բերաւ նա — մութաց-
նորի պէս պիտի երևին ձեր քովը, նախանձէ պիտի ճաթին : Ինչու որ
չունք . . . ձեր մտնարսէ աղւոր թաշկինակով, փոքրիկ ոտանիկներու
կերպարանը պիտի առնուք :

— Այո, իբրու է, — վրայ բերաւ Փրանսուա : ուրեմն ասելի ու-
խախնամով իմ աղւոր փոզրապին համար, քանի որ կրեփողին որդիներն
պիտի կատարին որ նանսը չունին . . . այնպէս չէ՞ Ամանախն :

— Ես, զո՛հ եմ իմ աղւոր դիտարապ ունենարուս . . . այդչափ միայն
: : : :

— Եւ նանսը հանձնը գնու ալ թնայիկ արջիկ մը պիտի ըլլաս — ըսաւ

արհամարհանօք Քաղպաս . յետոյ սեղանին վրայէն հաց և կտոր մը
պանիր առնելով տղոց սուա և անոնց ըսաւ :

— Աեր ելէք պառկելու . . . : Մա ըսպտերն առէք, կրակ չձգէք և
քանապէն առաջ զայն մարեցէք :

— Ինձ նայեցէք — յարեց Նիզօլա — Եթէ Մարմնադիրն նստիք խնդ
ու խեղաւ խօսիք անտուկին, քծուարներուն և լաթերուն վրայ, ձեր
քթէն բերնէն կրակ հանելու չափ ծեծ մը պիտի քաշեմ, և թաշկինակ-
ներն ալ պիտի առնում :

Տղոց երթալէն ետև՝ Նիզօլա և իր քոյրն երան լաթերը ; անտուկը և
քծուարները փոքրիկ նկղի մը խօսք պահեցին ; որ կրակարանէն քիչ մը
հեռու ; խոհանոցին մէջ քանի մ'աստիճանով վար կը բացուէր :

— Ինձ նայէ, մայր, ըմբիլիք կ'ուզեմ, և հին տեսակէն . . . — գո-
չեց ոճրադործը . — կնքուած օղիէն . . . : Օրս աղէկ անցուցի . . . ;
Քաղպաս կերակուրը մեծարէ . թնղ Մարմնադիր օսկրները կրծէ, անոր
աւելի բան պէտք չէ . . . : Հիմակ ալ Պիլիի քարափին մարդուն վրայ
խօսակցիք, ինչու որ վաղը կամ միւս օր գործը պիտի եփի, եթէ
խոտապած տակը զըզանել կ'ուզեմ . . . : Ահա բանը պիտի պատմեմ
քեզ, մայր . . . բայց յանկարծանկ . . . օղին ուր է . . . ես եմ մեծարողը :

Եւ Նիզօլա զըզանին հարիւր սուտոց ստակները զըզոց նորէն .
ասպա իր վրայի քօշի մտրթը, սև բրդէ գլխարկը հեռուն նետելով սե-
ղան նստաւ ; որուն վրայ դրուած էին ահագին սնակի մը մէջ ոչխարի
խորտիկ, հորթի պաղ մեծ կտոր մը և աղչան : Երբ Քաղպաս գինին և
օղին բերաւ, որբեարին՝ որ միշտ անդրգուելի էր և արտում՝ սեղանին
մէկ կողմը նստաւ, աջ կողմն ունենալով Նիզօլան, և ձախ կողմը աղ-
ջիկը : անոր առջև կ'իյնային Մարմնադիր և երկու տղոց պարագայ տեղ-
քը : Աճրադործը եղջիւրէ կոթով լայն ու երկար ապրատու դանակ մը
հանեց զըզանէն : Ապրապ գոհունակութեամբ մ'այս մահատու զէնքը
նկատելով որբեարիին ըսաւ :

— Համփութս լաւ կը կտրէ . . . հացն ինձ անցուր, մայր :

— Գանակիկ առ թիւ — ըսաւ Քաղպաս — աղէկ մտքս ընկաւ ;
Փրանսուան այն բանը տեսեր է . . . փայտակղալին մէջ :

— Ինչ բան — ըսաւ Նիզօլա առանց հասկնալու :

— Ոտքին մէկն տեսեր է . . . :

— Մարդուն — գոչեց Նիզոլա :
 — Հաս — ըսաւ որբեարին՝ տղուն պնակին մէջ մին շերտ մը դնելով :
 — Չարմանայի՛ բան . . . թէեւ փոքր շատ խորունկ էր — ըսաւ աւաղակը . — բայց կ'երեւի թէ այն ժամանակէն վեր . . . հողն ուռեր է . . . :

— Պէտք է այս իրկուն ամէնն ալ դետը նետել — ըսաւ որբեարին :
 — Աւելի ապահով կ'ըլլանք — պատասխանեց Նիզոլա :
 — Նաւակի հին շղթայի կտորով քար մը կը կապես անոր — ըսաւ Բալպաս :

— Քեզնէ խելք չեմ սպասեր . . . — պատասխանեց Նիզոլա՝ բաժակը լեցնելով . ապա խօսքը որբեարիին ուղղելով յարեց՝ շիշը բարձր-կեկ բռնած . — Օ՛ն, Քրէնկ ընենք, մայր իմ, դինին զուարթարար է : Որբեարին գլուխն օրորեց, բաժակն ետ ետ տարաւ . և իր որդւոյն ըսաւ :

— Հապա Պիլիի քարափին մարդն ո՞ր մնաց :
 — Բանն այս է . . . ըսաւ Նիզոլա, առանց կեր ու խումը դադարելու . . . — երբ նաւախորշը (gare) հասայ, նաւակս կապեցի և քարափն ելայ . Շայօն զինուորական հայարարանին ժամացոյցը եօթը կը դարնէր . չորս քայլ անդին աչք աչքի չէր տեսնուեր : Քատորդէ վեր պատուարին երկայնքը կը սրարտէի, երբ ոտքի ձայն մը լսեցի ետիս . աւելի ծանր քայլը կ'սկսիմ . վերարկուն տակ ծածկուած մարդ մ'ինձ կը մտնի հաղալով . կանկ կ'առնում, ան ալ կանկ կ'առնու . . . : Իր երեսն այնքան միայն տեսայ որ իր վերարկուն քիթը դոյրեր էր և փեղոյրն ալ աչեքը :

(Հարկ է յիշել ընթերցողին որ այս խորհրդաւոր անձը Ժաք Ֆէրրան նոտարն էր, որ, Քիէօր-ալ-Մարին կորնոյնը ուղելով, նոյն առտու իսկ ափին Սէրաֆէնը Մարտիալենց բնակարանը զրկեր էր, որպէս զի զանաք իր այս նոր ոճրին գործիներն ընէ :)

« Պրատտամարի, ըսաւ ինձ ոստանիկը — վրայ բերաւ Նիզոլա — այս էր պառուսին և իմ մէջ որոշուած անցախօսը, այն ստակականին հետ ծանօթութիւն ընելու համար : — Ռաֆաէլէօ, պատասխանեցի ես ալ անոր, ինչպէս որ այսպէս խօսք ըլեր էինք :

« — Միթէ անունդ Մարտիալ է — ըսաւ նա ինձ :

« — Այո՛, ոստանիկ :
 « — Այս առտու կին մը ձեր կողին եկաւ . ի՞նչ ըսաւ քեզ :
 « — Ըսաւ թէ Պ . Պրատամանայիին կողմէն ինձ խօսելիք ունիս :
 « — Ստակ վաստկիլ կ'ուզես :
 « — Այո՛, ոստանիկս . . . շատ :
 « — Նաւակ մ'ունիս :

« — Չորս հաս ունինք, ոստանիկ, այս է մեր արհեստը . նաւարար և աւերիչ ենք յորդուոց որդի, հրամանիդ պատրաստ :

« — Ահա ինչ պէտք է ընել . . . եթէ անվախ ես . . . :

« — Վա՞նք մի . . . ոստանիկ, և ի՞նչ բանէ վախում :

« — Երբ մէկը տեսնու որ դէպքում իր կողմէն . . . մինակ հարկ է այս դիպուածը պատրաստել . . . կը հասկնամ միայն :

« — Վայ, ոստանիկ, ուրեմն կ'ուզես որ անձի մը՝ իբր դիպուածով . . . Սէն գետին ջրէն խմին . . . այդ դործիս կ'այ . . . բայց որովհետեւ փափուկ պատու մ'է, զայն համեմելը աղի պիտի նստի քեզ . . . :

« — Ո՞րչափ . . . երկու հողի համար . . . :

« — Երկու հողի . . . ի՞նչ, երկու հողի ունիս դեպիս ջրով լուս-լու :

« — Այո՛, երկու հողի . . . :

« — Մարդու զլուխ հինգ հարիւր Փրանք . . . ոստանիկս . . . և այս ալ սուղ չէ, կարծեմ :

« — Լա՛ւ, հազար Փրանք տուի զնայ . . . :

« — Կանխիկ վճարելի, ոստանիկ :

« — Երկու հարիւր կանխիկ, մնացածը վերջը . . . :

« — Վատահոթիւն չունիս վրաս, ոստանիկ :

« — Ո՛չ . իմ երկու հարիւր Փրանքս զբաժանելէն ետե՛ կարելի է որ մեր գաշիքը չկատարես :

« — Իսկ դուն ալ, ոստանիկ, դործն անգամ մը կատարելէս ետը՝ երբ ութ հարիւր Փրանքը սրահանջեմ, կարելի է ինձ ըսես : Մըսի գլխիդ, բան դործ չունիմ հետը :

« — Այդ ալ բազը մ'է . այս կերպով բանիդ կ'այ, այ՞ կամ ո՛չ . երկու հարիւր կանխիկ, և միւս իրկուն ժամն եօթին այս անգ ռիթ հարիւր Փրանքն ալ կը վճարեմ քեզ :

« — Եւ ո՛վ պիտի ըսէ քեզ որ այն երկու հողիկն ջուր խնկուցի :
 « — Ես կ'իմանամ . . . այդ իմ դիմնալիք բանն է . . . : Ա՛նդուանին :
 « — Կ'ընդուանիմ , ոստանիկ :
 « — Ահա քեզ երկու հարիւր Փրանք . . . : Հիմակ միտ դիր ինձ :
 Անշուշտ այս առտու քեզ փնտուելու համար եկող կ'ինք կը ճանչես :
 « — Այո , ոստանիկ :
 « — Ապրը , կամ շատ շատ միւս օրն՝ երեկոցեան ժամը չորսին մի-
 ջոցները՝ պիտի տեսնես անոր զալը՝ ձեր կողմին դիմնուցի եզրը՝ խար-
 տեշ օրիորդի մը հետ , պատան իր թաշկինակը շարժելով քեզ նշան
 պիտի ընէ :
 « — Շատ աղէկ , ոստանիկ :
 « — Ո՛րչափ աստն պէտք է գետեզրէն կողմն համեւը . համար :
 « — Շատ շատ բանն վայրկեան :
 « — Ձեր նաւակներուն յատակը տափակ է :
 « — Ձեռքիս պէս տափակ են , ոստանիկ :
 « — Այս նաւակներուն մէկուն յատակը վարպետութեամբ տեսակ
 մը լայն խուփ մը կը շինես , որպէս զի այն խուփը բանալով կարենաս
 ըստ հաճոյս անխթարթի մը մէջ զայն ընկղմել . . . : Միտքս ուր կը նա-
 յի , կը հասկնամ :
 « — Շատ աղէկ կը հասկնամ , ոստանիկ . ի՞նչ հնարազէտ ես : Ես
 տը փտուն հին նաւակ մ'ունիմ , զայն պիտի խորտակէի . . . այս վերջին
 ճամբորդութեան շատ յարմար կը գտնեմ զայն :
 « — Ուրեմն կողմէդ այն խփուքը նաւակովդ կ'եղնես . ուրիշ ըս-
 նաւակ մը ետեւէդ կզայ , զոր ընտանիքէդ մէկը կը վարէ : Գետեզրին
 կը մտնի , պտուտ կ'ինն ու նորասփ խարտեշ աղջիկը՝ ծակուած նա-
 ւակը կ'աւնուս , և դէպ 'ի կողմը կը դառնաս . բայց ակէն բտական
 հետու որ հանիս , ծոելու պէս կ'ընես բան մը շտկելու համար , խու-
 փը կը բանաս և շուտ մը միւս նաւակը կը ցատկիս , մինչդեռ պտուտն
 ու խարտեշ աղջիկը . . .
 « — Նոյն թամէն ջուր կուլ կտան . . . այնպէս չէ . . . ոստանիկ :
 « — Բայց , սոյնդ ես որ խոչնդոտ մը չպիտի երէտ առջեդ . . . : Ե-
 թէ ձեր գիմետունը յաճախորդներ գտնուին . . . :
 « — Այդ կողմէն վախ չունիմ , ոստանիկ : Այն ժամուն՝ մանուտանդ

ձմեռն այն տեղ մարդ չգար . . . մեր անգործ եղանակն է հիմա , եթէ
 գնորդ ալ զայ արդեք մը չեն կրնար ըլլալ . . . ընդ հակառակն . . . ա-
 մէնքն ալ մեզի ծանօթ բարեկամներ են . . . :
 « — Շատ աղէկ : Իբրև է որ վտանգ ալ չկայքեղ համար . պիտի ը-
 ստի թէ նաւակը հին էր և գետին տակը մնաց , և նորասփ օրիորդին
 հետ եկող պատան ալ մէկտեղ անհետ պիտի ըլլայ : Ա երջնապէս բոր-
 ըսվին ասպառով ըլլալու համար որ երկուքնին ալ պիտի խղղուին (միշտ
 դիպուածով) կրնաս , եթէ նորէն ջրին երեսն ելնես , կամ նաւակին
 պլլուին , այնպէս մը ձեւայնել թէ բոլոր ձիւղը կը թափես անոնց օդնե-
 լու և . . .
 « — Եւ ձեռնառու ըլլալու . . . որ նորէն գետին յատակը երթան :
 Լաւ , ոստանիկ :
 « — Պէտք է նաև արեւը մատը մանեղէն ետև պտոյսն ընել , որպէս
 զի գիշերը մտնի ըլլայ երբ ջուրն ընկնին :
 « — Ոչ , ոստանիկ . վառն զի եթէ լոյս աչքով չդիտեմ , ի՞նչպէս
 պիտի հասկնամ որ այն երկու կ'իններն ցյաղ ջուր ընկեր են , կամ թէ
 ուրիշ ալ կ'ուզեն :
 « — Ճիշտ է . ուրեմն արեւուն մատը մանեղէն աստջ պիտի սրտա-
 հի դիպուածը :
 « — Խօսքիս եկար , ոստանիկ . իսկ պատուը ամենեւին բան մը չ'պի-
 տի գիմնայ :
 « — Ոչ ինչ . . . : Այն տեղ գարուն , ականջիկ պիտի փոխայ : —
 Պէտք է փոքրիկ աղջիկը ջուրը խղղել . նաւակն ընկղմելէն չէլ ճ'ասալ
 նշան ըբէ ինչ որ չէլի հետ պրծելու պարտապարտի՛մ : Գու ալ այնպէս մը
 կը պատասխանես պտուտին որ բնու կաւկած մը չունենար :
 « — Այնպէս որ պիտի կարծէ թէ խարտեշ օրիորդը ջուր խնկեւը
 կը տանի . . . :
 « — Եւ ինքն ալ խարտեշ օրիորդին հետ պիտի խմէ :
 « — Ծուղակը սքանչելապէս հիւսուած է , ոստանիկ :
 « — Մանուտանդ՝ պէտք չէ որ պտուտը կասկածի երթայ . . . :
 « — Հանդարտ եղիր , ոստանիկ , մեզիք պէս պիտի կլլէ այս բանս :
 « — Օ՛ն , բարի յաջողութիւն , սուքս : Եթէ գոհ ըլլամ , կարելի է
 նորէն գործածեմ քեզ :

« — Հրամանիդ պատրաստ եմ, ոտանիկ :

« — Այս խօսակցութենէ ետքն — ըսաւ առաջակն իր պատմութիւնն աւարտելով — վերարկուով մարդը թողուցի, նաւակն հասայ, և մտկոյիկն առջևէն անցնելու ատենս՝ քիչ մ'առաջ բերած կողքալուար յափշտակեցի :

Նիւօլաին պատմածէն կերևի որ նոտարը՝ կրկին ոճիր մը գործելով թէ Գլէօր-աը-Մարիէն և թէ տիկին Սէրաֆէնէն ազատիլ կ'ուզէր, այս վերջինն ալ ձգելով այն որոգայթին մէջ զոր կարծէր թէ լա Առաքէօղին համար միայն լարուած է : Միթէ հօրիկ է կրկնել որ Ժար Գէրբան իրուամբ վախնալով որ թերևս լա Շուէզ օրին մէկը Գլէօր-աը-Մարիին կ'իմացնէ թէ տիկին Սէրաֆէնի ձեռքօք այն վիճակին մէջ ընկեր է, մեծ շահ մ'ունէր սոյն նորաստի օրիորդն անհետ ընել, որուն պահանջումները կրնային թէ իր համբաւին և թէ հարստութեան մահաբեր հարուած մը տալ : Իսկ տիկին Սէրաֆէնի գալով՝ նոտարը՝ զայն ևս զոհելու կը փափարէր՝ որպէս զի իր երկու գաւակիցներուն (միւսն էր Պրատամանտին) ձեռքէն ազատի, որոնք կրնային անոր կողուտը յարգարել, իրաւ է որ իրենցն ալ յարգարելով : Բայց Ժար Գէրբան կը կարծէր թէ զերեզմանը՝ քան անձնական շահը՝ լա ևս կրնայ թաղուն պահել իր զաղանիքը :

Արբեարին և Քալպաս ուշադիր մտիկ ըրեր էին Նիւօլաին՝ որ իր խօսքն կ'ընդմիջէր միայն ըմպելու համար : Հետևապէս զարմանալի եռանդով մը սկսեր էր խօսիլ :

— Այս բաւական չէ — վրայ բերաւ նա . — ուրիշ գործի մը մէջ ալ մտտ դրի Գէվ փողոցին լա Շուէզին և Պարպիլյօնի հետ : Երեւելի և աղէկ եկամ չքձծն մ'է . և եթէ ձեռք ձգենք, պարծենալով կ'ըլտեմ որ մեր բաղդը պիտի շինենք : Ինդիլն է կողբարտել անդամանդի միջնորդուհի մը՝ որ երբեմն յիսուն հազար Փրանքի արժողութեամբ գոհարներ ունի իր զամբղին մէջ :

— Յիսուն հազար Փրանք . — զոչեցին մայր ու աղջիկ, որոց աչերը զօշարաղութեամբ փայլեցան :

— Այո՛ . . . միմակ այնչափ . . . Պրատ-Ռուժ գործին մէջն է : Արդէն երէկ նամակով մը՝ զոր ևս Պարպիլյօնին հետ Սէն-Տրնի պովարը տարի, միջնորդուհին բունեց : Երեւելի մարդ մ'է Պրատ-Ռուժ : Արով

հետև ապրուստ ունի, ամէն մարդ անոր կը վստահի : Միջնորդուհին խոյճ մը տալու համար արդէն չորս հարիւր Փրանքնոց անդամանդ մը ծախեց անոր : Միջնորդուհին անահ պիտի ելնէ երթայ Էլիսեան դաշտին մօտ ունեցած դինետունը երեկոցեան դէմ : Մենք ալ այն տեղ դարանամուտ պիտի սպասենք : Քալպաս ալ պիտի գայ, և Սէն դեպի վրայ նաւակն պիտի պահպանէ : Եթէ միջնորդուհին մեռած կամ կենդանի ծրարելու հարկ ըլլայ, նաւակը հեշտ կառք մ'է որ հետք մը չձգեր : Ահա յատակագիծ մը . . . Հանած վարած Պրատ-Ռուժ, ինչ հանք ունի զլիկն մէջ :

— Ես միշտ Պրատ-Ռուժին վրայ վստահութիւն չունիմ — ըսաւ որբեարին : — Մօմանդրի փողոցը պատահած գործէն ետքը՝ քու Անպրտաղ եղբայրդ Թուլօն թխարան դնաց և Պրատ-Ռուժ ազատեցաւ :

— Արովհետև անոր դէմ փաստ չկար . ինչ չարահայտ է . . . : Բայց ուրիշները մասնել . . . այս բան չունի :

Արբեարին զըլուր տատանեց, իբր թէ Պրատ-Ռուժին *անզգամորտութեան* վրայ կիսովին համոզուած է :

Քանի մը վայրկեան խորհելէն ետքն՝ ըսաւ .

— Պիլիի քարափին գործն աւելի աղէկ ունիմ վաղը կամ միւս օր . . . երկու կիներուն խղճուիլը . . . : Բայց Մարտիալ արգելք պիտի հանէ . . . ինչպէս միշտ . . . :

— Արեմն զեհենին հուրը չպիտի ազատէ մեզ անոր ձեռքէն . . .

— զոչեց Նիւօլա կէս մ'արբած՝ և երկայն դանակը կատաղօրէն տղանին մղելով :

— Մօրս ըսի որ համը հոտը փախուց, և աւելի համբերելու ճար չկայ — վրայ բերաւ Քալպաս : Քանի որ այս տեղ մնայ, աղաքը չպիտի կարենանք բանի մը գործածել . . . :

— Ես կ'ըլտեմ որ օրին մէկը մեզ պիտի մասնէ, այն առաջակն — ըսաւ Նիւօլա : — Ար նային հիմա, մայր . . . թէ որ խօսքիս մտիկ ընէիր . . . — յարեց նա վայրագ և նշանակելի երեսով մը՝ մօրը նայելով — ամէն բան ընկած էր . . . :

— Արի՛՛՛ միջոցներ ալ կան :

— Այս լաւաղոյնն է — ըսաւ առաջակը :

— Հիմա... աստեղը չէ — սրատափանեց որբևարին այնպիսի մեծաստաց ձայնով մ'որ Նիզոյա բեց մօրը ազգեցութենէ ընծեալ, ոչ բուն իրեն չափ ոճարացօրծ և անպատճառ ըլլալը դիտէր իրա, բայց զխաբէր հաւ որ իրմէ աւելի հաստատամիտ էր:

Որբևարին յարեց:

— Այդն առտու կղզիէն ընդ միշտ պիտի հեռանայ:

— Ի՞նչպէս — ըսին միաբերան Բարդուս և Նիզոյա:

— Հիմա պիտի տան դասնայ... հետը կուտի բռնուէ... բայց համարձակ, դէմ առ դէմ, ինչպէս որ երբէք ընելու ժպրհած չես...: Եթէ պէտք ըլլայ ծեծի ալ բռնուեցէք...: Ուժով է այն, բայց դուք երկու հողի էք, և ես ալ ձեզի կ'օգնեմ...: Բայց դանակ...: արիւն պէտք չէ...: Ծեծը սուր, բայց մի վիրաւորեր:

— Աերջն ի՞նչ պիտի ըլլայ, մայր — հարցուց Նիզոյա:

— Աերջը... խօսքի կը նստինք...: Արեւիք անոր որ վաղը կղզին ձգէ երթայ... թէ ոչ ամէն օր այս իրիկուան աւետարանը պիտի ստատահի...: Ար ձանչեմ՝ վերքը... այս անդուհասա կուխեբէն պիտի զզուի: Մինչև այսօր զինքը հանդարտ թողուցինք...:

— Բայց շորիի պէս կամակոր է, կարելի է որ աղոց համար մնայ ինչ որ ալ ընենք... — ըսաւ Բարդուս:

— Աստարեալ միաբացի մ'է... բայց ծեծէ չվախնար... — ըսաւ Նիզոյա:

— Առջի անդամուն համար... ստոյգ է — ըսաւ որբևարին — բայց ամէն օր, ամէն օր... քաշուելու բան չէ, զժօրք է... և պիտի ձգէ երթայ...:

— Հապա թէ որ չերթայ:

— Այն առեւն աւելի ասպահով հնար մ'ունիմ՝ ստիպելու վերնն որ այս իրիկուն, կամ շատ շատ վաղն առտու մեկնի — վրայ բճրաւ որբևարին այլանդակ ժպիտով մը:

— Ստոյգ կ'ըսես, մայր:

— Այո, աւելի ազէկ ունիմ՝ ստիպն կուխեբով ահարեկել վերքը, և եթէ չյաջողիմ, այն առեւն... միւս հնարը:

— Հապա թէ որ միւս հնարն ալ չյաջողի, մայր... — ըսաւ Նիզոյա...:

— Աերջին հնար մը կայ որ միշտ կը յաջողի — պատասխանեց որբևարին:

Յանկարծ դուռը բացուեցաւ... Մարտիալ ներս մտաւ:

Գուրն այնքան աստիկ էր հոն որ որբևարին անդրանիկ տղուն զարուսան աւետող շուներուն զողանջը ներսէն չէին լսած:

Գ Լ Ո Ւ Խ Զ

ՄԱՅՐ ՈՒ ՈՐԳԻ

Մարտիալ իր ընտանիքին չար խորհուրդներուն անտեղեակ մտաւ խոհանոցը ծանրաբայլ:

Գլէօր-տը-Մարտիին հետ ունեցած խօսակցութեան առեւն լաւովին քանի մը խօսքերն՝ այս մարդուն զարմանալի կիանքը ծանօթացուցին մեզ: Թէև Մարտիալ ՚ի բնէ բարի ընտղութեան օւնէր, իրապէս ստորին կամ չար դործի մը հակամէտ էր, բայց զարձեայ անկանոն ընթացք մը կը վարէր: Գաղանուդոյի ձկնորսութիւն կ'ընէր, և իր ջոճը, իր յանդգնութիւնն այնչափ ահ կ'ազդէր ձկնապահակներուն որ անոր զեապին ապօրէն որսորդութեան վրայ ալ կը գոցէին:

Այս արդէն ապօրինաւոր ճարտարութեան հետ Մարտիալ ուրիշ աւելի անարժան արհեստ մը կը դարձէր: Իբր Կաթաբոնի ոչ այնքան արծաթասիրտութենէ որջափ ջաջարուութենէ և մուսարծաթութենէ յանձն կ'աւուար մտաղիւր այն ստիպներուն զրեճը բուծել որ ըսնաւ մարտի կամ բրանատի մէջ զօրաւորացին հակառակորդներու դոճ բնկած են. պէտք է ըսել սակայն որ Մարտիալ բուսական շարժանութեամբ այնպիսի դասեր կ'ընար որ զոր բնցի կը յաշարանէր. ընդհանրապէս ակարին կողմը կը բռնէր զօրաւորին դէմ:

Լաւուլին սիրահարը Գրանաւաթին և Ամանաթինն շատ կը նմանէր. միջակ էր հասակը, այլ կտրովի ու թիկնու. իր շիկազոյն մաղերը վրձինի պէս կտրուած լիովին բաց ձակտն վրայ հինգ հատ ծայր կը յօրինէին. իր թմանք խիտ, կարճ մօրուսը՝ իր բայն այտերը, իր քառաձեղ ցից զիւր, իր կապոյտ և ծախրճ աչերը անվահեր երեւոյթ մը կտային սոյն առնի կերպարանին: Մոռած հին զլլաարի մը դրեր էր, ցրտին չնայելով իր բոլորովին մաշած հաստ թաւէ տարաւին և

բաձկնական վրայէն կապոյտ բաղէն մը հաղեր էր։ Չեղբը վարակոտ ահագին վիրդ մը բռներ էր, զոր իրեն մօտ դարանին վրայ գրաւ։ Աարձառն, որորարուն (à jambe tors) խոշոր շուն մը՝ սև փափլուն մաղեքով, Վարսիալի հետ ներս մտեր էր։ Բայց դրան մօտ կը կենար, և չէր իշխեր ոչ կրակին և ոչ արդէն սեղանը նստող հլուրերուն մօտենալ, փորձառութեամբ յայտնի ըլլալով ձերուկ Միրօնին (այս էր կարճոտն բարակին անունը, Վարսիալի որորդութեան վաղեմի ընկերը) որ իր սիրովը պէս՝ ընտանիքին հակակիր էր։

— Բայց ո՞ր են սղաք։

Ասոնք եղան Վարսիալի առաջին խօսքերն երբ սեղան նստաւ։

— Ո՛ւր որ են հոն են — պատասխանեց Քալպաս կծու կերպով մը։

— Ո՛ւր են սղաք, մայր իմ — վրայ բերաւ Վարսիալ առանց քրոջը պատասխանին միտ դնելու։

— Պառկեր են — յարեց որբևարին չոր ու յամակ կերպով մը։

— Միթէ ընթրիք չըրին, մայր իմ։

— Քեզի, քեզի ինչ — գոչեց Նիգօլա կոշտարար, իր յանդգնութիւնն աւելցնելու համար մեծ դաւաթ դինի մ'ընկելով, վառն դի իր եղբօրը բնաորութենէն և ուժէն սաստիկ կը սլաակաւէր։

Վարսիալ ինչպէս Քալպասին նոյնպէս Նիգօլային յարձակումներուն անտարբեր մնալով՝ ըսաւ նորէն իր մօրը։

— Ար ցաւ իմ որ սղաք արդէն պառկած ըլլան։

— Մեղք եղաւ... — պատասխանեց որբևարին։

— Հոն, մեղք եղաւ... վառն դի երբ ճաշեմ զանոնք իւրովս տեսնենելու կ'սխորթիմ։

— Իսկ մեզի համար, քանի որ ղլխայաւ են, զանոնք ճամբեցինք — գոչեց Նիգօլա։ — Եթէ ծանր կղայքեղ այս բանս, գնա՛ զանոնք զանեւլու։

Վարսիալ զարմանալով իր եղբօրը նայեցաւ ակնասիշ։

Ապա՛ իբր թէ կռիւ մը հանելն անօգուտ սեպելով՝ ուսելը բարձրացուց, պատառ մը հայ կտրեց և մնի շերտ մ'առաւ։

Կարճոտն շունը Նիգօլային մօտ եկեր էր, թէև խիստ անաշխտ հեռաորութիւն մը պահելով, ոճրագործը իր եղբօրը քամահելի անհոգութենէ սրտմտած՝ շունին զարնելով անոր համբերութիւնը հապու-

նելու յուսով Միրօն կատաղի կից մը տուաւ, և շունը ողբագին աղաղակներ արձակեց... Վարսիալ կրակ կտրեցաւ, պրկուն ձեռքին մեջ բռնած դանակը սեղմեց, և կոթովը սեղանին զարկաւ բռնապէս։ Բայց, նորէն ինքզինքը զսպելով իր շունը կոչեց և անոր մեղմիկ ըսաւ։

— Արի, Միրօ։

Շունն եկաւ սիրովն ոտներուն մօտ նստաւ։

Այս չափաւորութիւնը Նիգօլային խորհուրդներն 'ի դերև կը հանէր, իր եղբայրը գրգռել կ'ուզէր որ կռուի բռնուի։

Ուստի յարեց։

— Ես, շուները չեմ սիրեր... ես... չեմ ուզեր որ շունդ այս սեղմնաց...։

Պատասխանի տեղ՝ Վարսիալ բաժակը գինի լցուց, և ծանրօրէն խմեց։

Որբևարին Նիգօլային արագօրէն աչք մ'ընկելով նշանայի քաջակերեց գինը Վարսիալի դէմ՝ հակառակելու, յուսալով որ, ինչպէս ըսինք, բռնուն վէճ մը կը ծագի և ասով բողբոլիկ կ'աւրուին ու կը զատուին։

Նիգօլա ելաւ առաւ ուռնիի բիրն որով որբևարին Քրանտուան ձեծեր էր, և, շունին գիմելով անոր սաստիկ զարկաւ ըսելով։

— Գուրս ելիւր, հէ, Միրօ։

Մինչև այն օրը թէև Նիգօլա ստէպ նենդամօրէն յարձակումներ կ'ընէր Վարսիալին դէմ, բայց երբէք այսչափ յանդգնութեամբ և յամառութեամբ զանի գրգռած չէր։

Լա Լուվին սիրողը մտածելով որ զազանի նաբատակաւ մ'իր համբերութիւնը հապոյնել կ'ուզեն, աւելի ևս չափաւորութեամբ վարուեցաւ։

Նիգօլային զարկէն շունը սրտապուն՝ Վարսիալ օտք ելաւ, խահանջին դուռը բացաւ, շունը գուրս հանեց և գարձաւ իր ընթրիքը շարունակելու։

Այս անհաւատալի համբերութիւնն՝ որ առ հասարակ Վարսիալի ցասկոտ բնաորութեան հետ չէր յարմարեր, իր հարտասահմանները շփոթեց... Իբրբու երես նայեցան յետին ծայր զարմանալով։

Վարսիալ անցած գարձածին անտարբեր երևելով լիովին, փառաօրայէս իր կերակուրը կ'ուտէր և խորին լուրթիւն մը կը պահէր։

— Գարսալ, գինին վերցուր — ըսաւ որբեարին իր աղջկան :
 Իսկ սա մօրը հրամանը կատարելու կը փութար, երբ Մարտիալ ըսաւ :
 — Քիչ մը սպասէ . . . դեռ ընթրիքս չլմացուցի :
 — Ի՞նչ փոյժս — ըսաւ որբեարին նոյն խնրը վերջնելով շերք :
 — Ա՛հ, այդ ուրիշ խնդիր է . . . — վրայ բերաւ լա Ղուվին սիրուը :
 Եւ մեծ բաժակ մը ջուր լեցնելով՝ դայն խնց, լեղուն բերնին մէջ շաչեց և ըսաւ :
 — Ի՛նչ ընտիր ջուր :
 Այս անասանելի պաղարիւնութիւնը Նիդօլային քինասէր բարկութիւնը կը գրդուէր որ արդէն բազմահեղ ըմպելիքով բորբոքեր էր . սակայն դեռ ևս ուղղակի յարձակում մ'ընելու կը կասէր, քաջ գինասլով եղբօրն անսովոր պէ՛ր : Յանկարծ դռնէց նա՛ նոր ներշնչութենէ մը զմայլելով :
 — Մարտիալ, շունիդ համար աղէկ ըրիր մեզ հնազանդելու . այդ սովորութեան վարժելու պէտք ունիս . վասն զի, ինչպէս որ շունդ փնտեցիք, անանկ ալ պէտք է յուսաս որ օր մ'ալ արքայի տալով սիրուհիդ պիտի վճատենք :
 — Ա՛հ, այս . . . վասն զի, եթէ բանտէն ելնելով իր Ղուվը կրդիս դալու դժբաղդութիւնն ունենայ — ըսաւ Քալպաս որ Նիդօլային միտքը հասկցաւ — ես առաջ աղւոր մը պիտի սպասակեմ զինքը :
 — Ես ալ անոր լոյղ մը պիտի տամ՝ մօրին մէջ՝ որ կրդիին ծայրը խրճիթին մօտ կը դանուի — յարեց Նիդօլա : — Եւ թէ որ դուրս ելնէ, նորէն մէջը պիտի մղեմ՝ հողաթափի հարուածով . . . այն լեպեշտին . . . :
 Երբ Մարտիալ՝ վայրենի խանդով սիրած լա Ղուվին ուղղուած այս նախատնքը լսեց իր հաշտարար խորհուրդները ցրուեց, ունքերը պրստեց, արիւնն երեօին զարկաւ, ճակտին երակներն ուռսն և պարանոնելու պէս ձգտեցան, սակայն դարձեալ ինքզինքը բուսական զգպելու կարող ըլլալով՝ Նիդօլային ըսաւ բռնաղբօսիկ բարկութենէ դոյրն ինչ այբայբուն ձայնով մը :
 — Աչքդ բաց . . . կուի կը փնտուես և չփնտուած տոփանդ (tournée) պիտի գտնես :

— Տոփան մը . . . ինձի :
 — Հն . . . վերջինէն լաւագոյնը :
 — Ի՛նչպէս, Նիդօլա — ըսաւ Քալպաս հեղինակի զարմանքով մը — միթէ Մարտիալ քեզ տոփեց . . . ինչ կ'ընես, մայր իմ, լսեցիր . . . : Ձեմ՝ զարմանար ալ որ Նիդօլա անորմէ շունի պէս կը վախնայ :
 — Ձիս տոփեց . . . վասն զի գաւաճանի պէս բռնեց զիս — դռնեց Նիդօլա կատարութենէ մտխիր դարձած :
 — Սուտ կ'ընես . ծածուկ յարձակեցար վրաս, թոպեցիքեղ և վրադ ալ զլծացի . բայց թէ որ նորէն սերուհիս խօսք մը նետելու յանդրնիս . . . լաւ կը լսես . . . սիրուհիս . . . այս անգամ անգութ պիտի ըլլամ . . . և մարմնիդ տալիք նշաններս պիտի կրես :
 — Եւ եթէ ես խօսիմ, ես, լա Ղուվին վրայ, ինչ պիտի ընես — ըսաւ Քալպաս . . . :
 — Քանի մը կոփոց սիտի տամքեղ խելքդ գլուխդ բերելու համար, և եթէ նորէն սկսիս, ես ալ պիտի սկսիմ մինչև որ զգաւասանաս :
 — Հապա թէ որ ես խօսիմ . . . — ըսաւ որբեարին կամացուկ մը :
 — Դն . . . :
 — Այո . . . ես :
 — Դն — ըսաւ Մարտիալ ինքն իր վրայ բուռն ճիգ մ'ընելով — զն :
 — Ձիս ալ պիտի ծեծես, այնպէս չէ :
 — Ձէ, բայց թէ որ լա Ղուվին վրայ խօսիս, Նիդօլան պիտի կոփեմ . հիմակ ալ, եթէ կուզես խօսէ . . . քու դիտնալիք բանն է . . . նոյնպէս անոր . . . :
 — Դն — դռնեց ոճրագօրծը մոկեղին՝ իր վտանգաւոր ահագին գանակը վերջնելով — դն պիտի կոփես զիս :
 — Նիդօլա . . . գանակը վնար դիր — դռնեց որբեարին շտապաւ ոտք ելնելով տղուն թեւը բռնելու համար . բայց սա զինիէն և բարկութենէն արբշն՝ ելաւ մայրն անդին հրեց ուժգին և եղբօրը վրայ վառեց :
 Մարտիալ ըմպելիք աշխուժիւ, ներս մտնելու ատեն դարանին վրայ դրած վարակատ խոշոր վիբոյն առաւ և սկսաւ ինքզինքը պաշտպանել :
 — Նիդօլա, մի՛ գանակով — կրկնեց որբեարին :
 — Բճիզ որ դիտցածն ընէ . — դռնեց Քալպաս ինքն ալ աւերելի տապարն իբր զէնք առնելով :

Նիզօրա՝ իր ահարկու դանակն անդադար կը ճօճէր և եղբօրը վրայ յարձակելու յարմար միջոց մը կը փնտռէր :

— Ահա ես քեզի կ'ըսեմ — գոչեց նա — որ քեզ և քու սինդրոնը Նուվի պիտի ստատակեմ, և ահա կ'սկսեմ . . . : Ինձ հասիք , մայր . . . հասիք , Բալպաս . . . սա անպատկան արիւնը խմեմք , շատ եղաւ ապրիլը :

Եւ կարծելով թէ յարձակումի պատեհ վայրիեան մ'է , աւազակն իր եղբօրը վրայ սրացաւ . դանակը վերուցած :

Մարսիալ՝ իբր հմուտ քրօնաբար (bâtonniste) բոլոր մարմնով ետ քաշուեցաւ . յանկարծուս , իր բիրը վերուց՝ որ կայծակի պէս շոյա՛ ու թաձե շարժում մը դժագրից սուրելով և Նիզօրային աջ բաղկին վրայ այնպէս ամրապէս իջաւ , որ սա՛ յանկարծական , վշտալի թմբիբ մը զգալով դանակը ձեռքէն ձգեց ակամայ :

— Ապիրասա . . . թէս կոտորեցիր . — գոչեց նա ձախ ձեռքով աջ թևը բռնելով որ անշարժ կախուեր էր կողմնակի :

— Ա՛չ , վիրդս ոտուով մ'ըրաւ . . . — պատասխանեց Մարսիալ ոտքի հարուածով մը դանակը դարձնելն տակ քշելով :

Յետոյ՝ Նիզօրային կրած ցաւէն օգուտ քաղելով օձիքէն բռնեց՝ մինչև մեր արդէն խօսած նկղին պզտիկ դուռը զանի ուժովն հրեց , մէկ ձեռնովը բացաւ , միւսովն անոր մէջ նետելով իր եղբայրը փակեց , որ գետ ևս չուշաբրեր էր այս յանկարծական յարձակումէն :

Ապա երկու կիներուն դառնալով Բալպասն ուտեղէն բռնեց և , անոր զիմադրութեան , վայնասունին հնայելով՝ նոյնպէս տասպարի մէկ հարուածին՝ որով ձեռքը թեթև մը վիրաւորեցաւ , խոհանոցին միացող դիմետան ստորին սրահին մէջ զանի բանտարկեց :

Այնուհետև՝ Մարսիալ սրբեարիին դառնալով՝ որ տակաւին շուտորբեր մնայեր էր այս հնարագէտ և անակնկալ կուռէն , ըսաւ անոր պաղ կերպով մը :

— Հիմակ , մայր իմ . . . կարող մեզի եկաւ . . . :

— Շատ աղէկ , հա . . . կարող մերն է . . . — գոչեց սրբեարին և իր անպարտելի կերպարանը վառեցաւ , զեղնած երեսը գոյն առաւ , մթին կրակ մը մինչ յայն կէտ մարած բիրը լուսաւորեց . բարկութիւնն , աստելութիւնն ահարկու երեւոյթ մը ստովն գէմբին . — հա . . . կարող մերն է . . . — վրայ բերաւ նասպառնայի ձայնով մը , այս

ժամուս կ'սպասէի , վերջապէս պիտի իմանաս թէ սրտիս վրայ ինչ բեռ ունիմ :

— Ես ալ պիտի յայտնեմ քեզ թէ սրտիս վրայ ինչ բեռ ունիմ :

— Հարիւր տարի ալ ապրիս , քաջ գիտցիր , որ այս գիշերը պիտի յիշես :

— Պիտի յիշեմ . . . : Եղբայրս և քոյրս զիս սպաննել ուզեցին . դու զանոնք արդիւելու համար բան մը չըրիր : Բայց խօսիր . . . նայիմ . . . ինչ ունիս ինձի գէմ :

— Ի՛նչ ունիմ :

— Այո . . .

— Հօրդ մահէն վեր . . . լուկ վատութիւններ ըրիր :

— Ե՛ս :

— Այո , վատ . . . : Մեզ օգնելու համար այս տեղ մնալու տեղ , Ռամնույէ փախար , որպէս զի որսորդութիւն ընես անասունները Պէրսի ծանօթ թափառող երէվաճառին հետ :

— Եթէ այս տեղ մնայի , հիմակ Անպուրապին պէս թիարան պիտի ըլլայի , կամ Նիզօրային պէս այն տեղ երթալու մօտ . գող չուզեցի ըլլալ ձեզի պէս . . . ասկից է ձեր ատելութիւնը :

— Եւ ինչ գործ կը բանիս : Երէ կը գողնայիր , ձուկ կը գողնաս . անվտանգ գողութիւն , վատի գողութիւն . . . :

— Չուկն երէին պէս և ոչ մէկունն է . այսօր մէկին , վաղը ուրիշին ձեռքն է . զայն որսալ դիտցողինն է . . . : Չեմ գողնար . . . : Իսկ վատութիւնս ո՛ր . . . :

— Գու ստրկի համար քեզնէ տկար մարդիկ կը ծեծես :

— Որովհետև իրենցմէ աւելի տկարները ծեծեր էին :

— Վասի արհեստ . . . վատի արհեստ . . . :

— Աւելի պարկեշտ արհեստներ կան , իբր . . . բայց քեզի չէնար այս բանն ինձ ըսելու :

— Ինչո՞ւ համար այն պարկեշտ արհեստներուն չհետեցար դու այն ատենը , փոխանակ պարսպ նստելու և իմ կրնակէս ապրելու :

— Քեզ կտամ բռնած ձուկս և ունեցած ստակս . . . այս շատ չէ , այլ բաւական է . . . ես քեզի սղի չեմ նստիր բնաւ . . . : Չանայի դարբին ըլլալ աւելի վատիելու համար . . . բայց քանի որ տղայութեանէս

վեր գեախն վրայ և անտառներու մէջ թափառելու վարժեցայ, ուրիշ բանի մը չկրցայ կատարել. ալ լննցաւ... սարուստս քիչ շատ կը ճարեմ... Ասկից զատ... — յարեց Վարսիալ մթին կերպարանքով մը — միշտ լաւագոյն սեսպած եմ ջրի վրայ կամ անտառն ապրիլ... այն տեղ ոչ որ հարց ու փորձ կ'ընէ զիս, մինչդեռ այլուր երբ հօքս վրայ խօսին... պէտք է ըսել թէ... զխատուած է, եղբօքս վրայ... թէ թխապարտ է, քրոջս վրայ... թէ գողուհի է:

— Եւ մօրդ համար ինչ կ'ըսես:

— Ա՛րքեմ թէ...:

— Ի՞նչ:

— Ա՛րքեմ թէ մեռած է...:

— Եւ շատ աղէկ կ'ընես, ինչպէս որ ես ալ... քեզ կ'ուրանամ, վնաս դու: Եղբայրդ թխարանն է, հաւզ և հայրդ արիարար զխատութեան բեմը ելան քահանան և դահիճը ծաղրելով: Անոնց վրէժը լուծելու տեղ, կը գողնաս...:

— Ա՛րքե՛ժ լուծել...:

— Լն, ճշմարիտ Վարսիալ մ'երևիլ, Շարլօին դանակին և կարմիր մտաւակին վրայ թքնել, և կեանքդ կնքել հօրդ և մօրդ, եղբօրդ ու քրոջդ պէս...:

Վարսիալ որչափ որ վարժ էր իր մօրը վայրագ բոբբոբումին՝ դարձեալ չկրցաւ իր սարսուռը զսպել:

Գլխատեսային որբեւարիին դէմքն ահռելի էր այս վերջին բառերն արտասանելու ատեն:

Իր մտքերու թիւերը հետզհետէ աստիկանալով շարունակեց:

— Ո՛հ, վատ, այլ ուեղի ապիրատ քան վատ: Գու պարկեշտ մարդ կ'ուզես ըլլալ...: Պարկեշտ. միթէ գո՛ւ միշտ չպիտի սնդոնիս, նախատուիս, իրը մարդասպանի որդի, իբր թխարարտի եղբայր: Բայց դու, փոխանակ վրէժ և կատաղութիւն սրտիդ մէջ պահելու, դու երկիրդ կը պահես, փոխանակ խածնելու, դու կը փութիս. երբ կառապիմարը հօրդ գլուխն առաւ... դու մեզ թողալիք գացիր... վատ. և զիտէիր որ առնեն երթարու համար երբ կողիէն կ'եխէ ինք՝ ամէնքը մեր ետեւէն կ'ոտային և իբր կատաղի շուներ սեպելով՝ մեզ կը քարկոծէին...: Ո՛հ, ստոյգ եղիր, փոխարէնը պիտի վճարեն, հա՛, պիտի վճարեն...:

— Մարդէ մը, տաս մարդէ չեմ վախնար. բայց երբ իբր դատապարաններու որդի ու եղբայր՝ զիս խողք ու խայտառակ ըրին... Է՛հ, այն ատեն չկրցայ համբերել... աւելի աղէկ սեպեցի անտառները քաշուիլ և Բիէրին՝ երէվաճառին հետ որս ընել:

— Աւրեմն պէտք էր... անտառները մնալ:

— Գարձայ եկայ՝ որովհետեւ պահակի մը հետ դորձ ունէի, մանաւանդ տղոց համար... քանի որ ուրիշին օրինակովը դէ՛շ ճամբու մէջ մանկելու տարիքն ունէին:

— Ի՛նչ վնաս ունի քեզ այդ բանը:

— Սա վնասն ունի... որ չեմ ուզեր Անպրուաղին, Նիկօղան, Քալպային պէս անպիտան դառնան...:

— Անկարելի բան:

— Եւ եթէ միմտակ ձեր ձեռքը մնային անշուշտ ըսածս կ'ըլլային: Արհեստի մը վախայ որ սարուստ մը շահիմ և զանոնք... այս տղաքը քովս առնում, և կողիէն հնուանամ... բայց Քարիդ ամէն բան կ'իմանցուի, միշտ զխատեսայի որդի... եղևնապորձի եղբայր պիտի սեպուէի... ամէն օր կազ ու կոխ ունէի... և վերջապէս տաղտկացայ...:

— Եւ միթէ պարկեշտ ըլլալէն չտաղտկացար... Ընչ շահ կը բերէր քեզ այն... ինչո՞ւ արիտութիւն չունենաս մեզի միանալու, մեզի պէս ընելու... ինչպէս որ տղաք ալ պիտի ընեն... կամբիդ հակառակ... աշոյն քեզ հակառակ...: Գու կարծես թէ ձուկերովը զանոնք կը շահիս... բայց մենք այս տեղն ենք...: Արդէն Ֆրանսուսն մեզի հետ է... կամ ասոր մօտ բան մը... եթէ առիթ մը պատահէ, մեր խմբէն պիտի ըլլայ...:

— Ես կ'ըսեմ թէ ոչ...:

— Պիտի տեսնես թէ այն... իմ սպրանքս կը ճանչեմ...: Անոր ներքը Բուրձիւն կայ, բայց դու զանի կը նեղես...: Իսկ Ամանախինն գարով սնդամ՝ որ տասն հինգ տարին կոխէ, ինքն իր գլխին ճալը պիտի նայի...: Ո՛հ, մեր ետեւէն քարեր նետեցին. ա՛հ, մեզ կատաղի շուներու պէս հարածեցին... պիտի տեսնեն թէ ինչ է մեր ընտանիքը... բայց ի՛նչ քեզնէ... վատ դու... վասն զի միմտակ դու մեզ նախատիք կը բերես:

- Ինչ ցաւայի բան . . .
- Եւ որովհետեւ դու մեզնով կրնաս խանդարիլ . . . վաղն ասկից կերթաս և ուրիշ անդամ այս տեղ ոտք չես կոխեր . . .
- Մարտիակ վարմանօք նայեցաւ իր մօրը . պահ մը լուռ կենալէն ետև՝ անոր բաւ :
- Ընթրիքի ատեն կուի հանեցիք որ խօսքը հոս բերես :
- Այո՛ , քեզ ցոյց տալու համար թէ ինչ փորձանքի պիտի հանդիպիս , եթէ մեր կամքին հակառակ այս տեղ մնալ ուզես . դժոխք մը . . կը լսես . . . դժոխք մը . . . ամէն օր կուի , ծեծ , կազ , և այս իրիկուան պէս մինակ չպիտի ըլլանք , մեզ օգնող բարեկամներ ալ պիտի ունենանք . . . և շաբաթ մ'անդամ չպիտի կարենաս համբերել . . . :
- Կարծես թէ դիս կրնամ վախոյնել :
- Ես ըլլալիքը կ'ըսեմ քեզ . . . :
- Փոյթս չէ . . . պիտի մնամ . . . :
- Այս տեղ պիտի մնաս :
- Այո՛ :
- Մեր կամքին հակառակ :
- Բու , Գալպասին , Նիկօլան , և բոլոր ձեզի պէս չքոտիներուն կամքին հակառակ :
- Վա՛շ . . . ծիծաղս կը շարժես :
- Այս գուժադէմ և վայրազ կնկան բերնին մէջտոյն խօսքերը ստակալի էին :
- Ես քեզ կ'ըսեմ թէ այս տեղ պիտի մնամ մինչև որ տղոց հետ պահէն ճարելու հնարը գտնեմ այլուր . եթէ մինակ ըլլալի , փոյթս չէր , անտառները կը դառնայի , բայց՝ անոնց պատճառաւ , ժամանակի կարօտ եմ . . . փնտռածս գտնելու համար . . . : Աւստի մինչև այն ատեն , պիտի մնամ :
- Ա՛հ , պիտի մնաս . . . մինչև այն ատեն որ տղաքը հետդ տանելու կարողանաս :
- Ըսածիդ պէս :
- Տղանքը պիտի տանիս :
- Երբ անոնց , Եկէք , ըսեմ , պիտի գան . . . և վազելով պիտի գան , ստոյգ եզիր :

- Որքեարին ուսերը բարձրացուց ու վրայ բերաւ .
- Մտիկ ըրէ . քեզ մ'առաջ քեզ ըսի որ՝ եթէ հարիւր տարի ալ ապրիս այս գիշերը չպիտի մոռնաս . հիմակ ասոր պատճառը պիտի բացատրեմ քեզ , բայց նախ ըսէ ինձ թէ ասկից չերթալու իրօք որոշե՞ր ես :
- Այո՛ , այո՛ , հազար անգամ , այո՛ :
- Քիչ մը ետքը պիտի ըսես ո՛չ , հազար անգամ , ո՛չ : Աղէկ միտ գիր . . . : Արդօք դիտես թէ եղբայրդ ինչ արհեստ կը բանի :
- Կասկած մ'ունիմ , բայց գիտնալ չեմ ուզեր . . . :
- Պէտք է գիտնաս . . . գողութիւն կ'ընէ . . . :
- Վայն իր գլխին :
- Եւ քու ալ :
- Ի՛մ ալ :
- Գիշերանց բռնապէս կը գողնայ , և այս ալ թխարան տանող յանցանք մ'է . իր գողնը կը պահենք . եթէ երևան հանին , իբր գողակից անոր կրէիք պատժին պիտի դատաստարտուինք , և գու՛ ալ . ընտանիքը կ'առնուն կը տանին , և տղաք փողոցը կը մնան , մըր քու պապիդ և հօրդ արհեստն ուզեն չուզեն պիտի սորվին , ինչպէս այս տեղ :
- Ե՛ս , իբր գողակից , իբր ձեր գաւակիցը ձերբախտ ըլլամ . և ինչ իրաւամբ :
- Ինչպէս ասրիւր մարդ չգիտէ . դետին վրայ կը շրջիս , դէ՛ ըմարդու մը համբան ունիս , քանի որ մեզի հետ կը բնակիս . որո՞ւ պիտի կարենաս հաւատայնել թէ կ'անդիտես մեր գող ու գողակից ըլլալը :
- Պիտի հաստատեմ թէ չգիտեմ :
- Քեզ պիտի ամբաստանենք իբր մեր արհեստակիցը :
- Պիտի ամբաստանէք զիս . ինչո՞ւ համար :
- Քեզ վարձատրելու համար որ մեր կամքին հակառակ այս տեղ մնայիր :
- Քիչ մ'առաջ զիս վախոյնելու համար կերպ մը գործածեցիր , հիմակ ալ ուրիշ կերպ մը կը գործածես . ես չպիտի բռնուիմ . պիտի հաստատեմ թէ երբէք գողութիւն չեմ ըրած . . . : Աւստի կը մնամ :
- Ա՛հ , դու կը մնաս : Աւրեմ նորէն մտիկ ըրէ , արդեօք կը յիշես թէ՛ անցեալ տարի . . . Կաղանդին գիշերն այս տեղ անցած դարձածը :

— Կաղանդին զիշերն — ըստ Մարտիակ իր յիշատակները ժողովելու շանարով :

— Փնտուէ . . . ըստ փնտուէ . . . :

— Չեմ յիշեր . . . :

— Չես յիշեր որ Պրա-Ռուժ իրիոճը վայելուչ հաղուած մարդ մը բերաւ հոս, որ սահուելու պէտք ունէր . . . :

— Այո, հիմակ կը յիշեմ, վեր ելայ սրտակելու և այն մարդը ձեզի հետ ընթրելու թողուցի . . . : Կիշերն այս տեղ անցուց, և արևը չեղած՝ Նիզօրա՝ Սէնդ-Ռէն տարաւ զանի :

— Սոցոյդ ես որ Նիզօրա Սէնդ-Ռէն տարաւ զանի :

— Այդպէս բարե ինձ միւս առտու :

— Արեմն կաղանդին զիշերը՝ դու այս տեղն էիր :

— Այո . . . ի՞նչ կայ :

— Այն զիշերը . . . այն մարդը, որ իր վրայ շատ ստակ ունէր . . . այս տան մէջ սպանուեցաւ :

— Այն . . . այն տեղ . . .

— Եւ կողպարուեցաւ . . . և փոքր փայտարանը թաղուեցաւ :

— Այդ իրաւ չէ — գոչեց Մարտիակ և սարսափէն գոյնը նետելով՝ չուղեց իրեննեբուն այս նոր ոճրագործութեան հատարու : — Դու վախցնել կ'ուզես զիս . . . : Կորէն կ'ըսեմ՝ որ ըսածը ճշմարիտ չէ :

— Արեմն քու սիրած Ֆրանսուսիկ հարցուր թէ այս առտու փայտարանն ինչ տեսաւ :

— Ֆրանսուան . . . ի՞նչ տեսաւ :

— Մարդուն ոտներէն մէկն որ հողէն դուրս ելեր էր . . . առ ըսող տերը, զնա և աչքովդ ստուգէ :

— Ա՛յ — ըստ Մարտիակ իր ձախտի պաղ քերտը սրբելով — ո՛չ, ըսածիդ չեմ հաստոր . . . : Այդ կ'ըսես որպէս զի . . . :

— Արպէս զի փորձով համոզեմքեզ որ եթէ մեր չուղերովն այս տեղ բնակիս, ամէն վայրկեան իբր գողի և մարդասպանի դաւակից ձերբաւ կող բլլալու վտանդին մէջ կը գտնուիս . . . դու այս տեղն էիր Կաղանդին զիշերը, պիտի ըսենք որ մեզի սջակից գտնուեցար այն եղեռնագործութիւնը կատարելու : Ինչպէս պիտի կարենաս առոր հակառակը հաստատել :

— Աստուած իմ, Աստուած իմ — ըստ Մարտիակ իր դէմքը ձեռքին մէջ պահելով :

— Հիմակ ալ պիտի ձդես երթման . . . — ըստ որբեւորին սնուցելի ժպիտով մը :

Մարտիակ գեանէ գեախն անցեր էր . . . դժբաղդօրէն տարակոյս մը չունէր ալ մօրն ըսածին վրայ . . . իր վարած թափառիկ կեանքն՝ այսպիսի եղեռնազործ ընտանիքի հետ բնակչութիւնը՝ արդարեւ իր վրայ ստակալի կասկածներ պիտի դրուէր, և այս կասկածները գատաւաւանի ժամանակ կրնային առուգութեան դառնալ, եթէ իր մայրն, եղբայրն ու քոյրն կըր իրենց դաւակիցն ամբաստանէին զինորդ :

Որբեւորին իր որդիին տաղնապին վրայ կը հլճուէր :

— Այդ սրտամաշութէն ազատելու միջոց մ'ունիս . . . մատենէ մեզ :

— Հարկ էր մասնեղ ձեզ . . . : Բայց չպիտի ընեմ այդ բանը . . . շատ քաջ զիտէք :

— Այս պատճառաւ ամէն բան յայտնեցիքեղ . . . : Հիմակ ալ պիտի երթնա :

Մարտիակ այս ժանա կիներն ի գուր շարժելու փորձ փորձել ուղեց . . . ամուր ձայնով մ'անոր ըստ :

— Մայր իմ, չեմ կարծեր որ այն մարդասպանութեան գործն ըրած ըլլաս . . . :

— Ի՞նչ որ կ'ուզես կարծէ, բայց կորիւր դնա . . . :

— Պայմանաւ մը պիտի երթամ :

— Պայման չեմ ընդունիր :

— Մէկուն քով տղաքն արհեստի կը դնես . . . ասկից հետո . . . դաւառի մը մէջ . . . :

— Տղաք այս տեղ պիտի մնան . . . :

— Ըսէ նայիմ . . . մայր իմ . . . տղաքը Նիզօրային, Քաղպասին / Մուրուաղին, հօրս նման արարածներ ընելէն ետե . . . ի՞նչ պիտի շահիս . . . :

— Անոնց օգնութեամբն աւար զարնելու պիտի օգտիմ : Արդէն շատ որ չենք . . . : Քաղպաս ինձի հետ առնը կը նստի գինետունը պահելու համար . . . : Նիզօրա միմակ է : Անպամ մ'որ կրթուին, Ֆրանսուա և Ամանտին անոր պիտի օգնեն : Անոնց ալ քարեր նետեցին, այն փոքրներուն . . . պէտք է որ վրէժ առնուն . . . :

— Մայր իմ, քաղաքան ու Նիզորան կը սիրես, այնպէս չէ՞ :

— Վե՛րջը :

— Եթէ պղտիկներն ալ անոնց օրինակին հետեւին... Եթէ ձեր և անոնց ուժիրներն երեսն երեսն... :

— Վե՛րջը :

— Գլխատուժեան բեմը պիտի երևն հօրս պէս... :

— Վե՛րջը, վե՛րջը :

— Եւ իրենց այս ճակատադրէն չէս դողար ահարեկ :

— Իրենց ճակատադրին ալ իմինիս պէս պիտի ըլլայ, ոչ աւելի լաւ և ոչ աւելի յուրի... : Ես կը կապտեմ, անոնք ալ կը կապտեն... Ես կ'սպաննեմ, անոնք ալ կ'սպաննեն... : Ով որ մայրը բռնէ պղտիկներն ալ պիտի բռնէ... : Իրարմէ չպիտի բաժնուինք... : Եթէ մեր զըռիւններն իննան, նոյն կողովին մէջ պիտի իննան... ուր իրարու մնաս բարեւ պիտի լսեն : Չպիտի ընկրկինք. մինակ դու վատ ես ընտանիքին մէջ, քեզ ալ կը վռնտենք... կորի՛ր... :

— Բայց աղւնք, աղար... :

— Տղար պիտի մեծանան. քեզ կ'ըսեմ որ եթէ դու չըլլայիր արդէն կը թուած էին : Փրանսուան գրեթէ սրատրաստ է, և իր մեկնիս, Ամանտին ալ կորուսած ժամանակը կրնայ ձեռք ձգել... :

— Մայր իմ, կ'աղբըսեմ քեզ, հաւանէ աղարն ասկից հեռու մէկու քով արհեստի դնել :

— Քանի անգամ ըսելու է քեզ որ այս անգ ՆՐՀԵՍՏ ԿԸ ՍՈՐՎԻՆ... :

Գլխատեալին որբեարին այնպիսի անողորբի կերպով մ'արտասանեց այս խօսքերն որ Մարտիալ այս պի՛նձէ սիրան ամբերլու յոյսը կորուս :

— Քանի որ այդ այդպէս է... — լսաւ նա սուղ ու հաստուն ձայնով մը — դու ալ ինձ մտիկ ըրէ, մայր իմ... : Այլ մնամ :

— Հն, հն... :

— Չէ, այս տունը չէ... Նիզորա պիտի սպաննէ զիս, կամ քաղաքան պիտի թունաւորէ. բայց քանի որ ուրիշ տեղ բնակելու համար ստակ չունիմ, կղզիին ձայրի անակը պիտի նստիմ աղոյց հետ, դուռն ամուր է, և աւելի պիտի ամրացնեմ... : Անգամ մ'որ այն տեղ մննեմ, հրացանս, վերդս և շունս հետս, և ոչ մէկէ կը վախնամ : Վաղն առ-

տու աղարը պիտի տանիմ... : Յորեկը հետս պիտի գան, թէ նա աւելիս մէջ, թէ դուրսը. գիշերն ալ ինձի հետ պիտի պատկին խրճիթը. ձինորսու թեամբ պիտի ապրինք. մեր օրն այսպէս պիտի անցնենք մինչև որ անոնց տեղ մը գտնեմ, և պիտի գտնեմ... :

— Ա՛հ, ուրեմն այդպէս :

— Ա՛հ դու, ոչ եղբայրս, ոչ քաղաքան չէք կրնար արդիւել այս բանս, այնպէս չէ... : Եթէ ձեր գողութիւններն ու սարանս թիւնները յայտնուին կղզին բնակելու ատենս... առ ու կրողին, վստանս աչքս կ'առնում. պիտի ըսեմ որ դարձայ, աղոյց համար կղզին մնացի, որպէս զի գող չըստնան... Ե պիտի դատեն... : Բայց կայծակի դամ եթէ կղզին թողում, և եթէ աղար օր մ'ես այս տունը մնան... : Այո, և եթէ կրնար ելիք առջևս, դու և քուկիներդ, զիս կղզիէն վռնտելու :

Արբեւարին Մարտիալի արիւթիւնը կը ճանչէր. աղար իրենց անողբանիկ եղբայրը կը սիրէին, նոյնպէս և անորմէ կը վախնային. ուստի երբոր ուղէր անոր պիտի հետեւէին, Իսկ ինքը՝ լաւ զինուած՝ անվեհեր, միշտ զգոյշ, ցորեկը նաւակը, գիշերը կղզիին անակը քաշուած և պատասխարուած՝ իր ընտանիքին չար խորհուրդներէն վախնալու բան մը չունէր :

Ուստի Մարտիալի խորհուրդն կրնար հիմնովին 'ի գործ գրուիլ... : Բայց որբեարին անոր գործադրութիւնն արդիւելու շատ մը պատճառներ ունէր :

Նախ՝ ինչպէս որ պարկեշտ արհեստաւորներ երբեմն իրենց աղոյց շատութիւնն իբր հարստութիւն կը նկատեն, անկից իրենց ընդունած ծառայութեան համեմատ՝ որբեարին ալ Ամանտինին և Փրանսուաին վրայ դրեր էր յոյսը՝ որպէս զի իրեն օգնեն ուժիրներ գործած ժամանակը :

Իրկորո՞ իր էրկին ու որդիին վրէժն աւելու համար բաժնեբը ճշմարիտ էին : Ասն արարածներ՝ որ չարադործութեան մէջ սնամ՝ ձեւը քաշած և քարացած ըլլալով բացէ 'ի բաց կ'ապառախէին, կատաղօրէն կը մարտին ընկերութեան գէմ, և նոր նոր ուժիրներով ոխ աւնուլ կը կարծեն այն սպտժէն որ իրենք կամ իրենց ընդոճիները կրած են :

Վերջապէս Փլէօր-տը-Մարիին և այնուհետև միջնորդուհիին դէմ՝ Նիզորաին գուժալի խորհուրդները, Մարտիալի ներկայութեամբը կրնային ապարդիւն մնալ : Արբեւարին յոյս ունէր անմիջապէս բաժ-

նուեղու կերպով վարուիլ Գարսիայի հետ, կամ Նիդօլան կոխը
դրոյներով, կամ անոր յայտնելով որ եթէ կողին մնալու սնդէր, կընար
իր բազմութիւն ոճիրներու դաւանից դատուիլ:

Արբեարին իրր նենդամիտ և սրամիտ տեսնելով որ յոյսն ՚ի դերև
ելաւ, զոպոս որ խորամանկութիւն բանեցնել պէտք է իր որդին արև-
նայի թակարդի մը մէջ նետելու համար...: Աւտի բաւական երկար
լուծենէ մ'ետքը յարեց կենդ դաւանութեամբ մը...:

— Ներքին խորհուրդդ կը հասկնամ, դու անձամբ չես ուզեր մատ-
նել մեզ, այլ տղոց միջոցս կ'ուզես մատնել:

— Ե՛ս:

— Հիմակ դիտեն որ այս տեղ թաղուած մարդ մը կայ, զիտեն որ
Նիդօլա դողութիւն քրած է...: Եթէ արհեստի մ'աշակերտութեան
դրուին, պիտի խօսին, և մենք ալ պիտի բռնուինք և ամէնքնա նոյն
ջրով պիտի լուացուինք...: դու ալ, մենք ալ. ահա այս պիտի պատա-
հի, եթէ քեզ մտիկ ընեմ, և եթէ տղաքն ուրիշ տեղ գործի գնենք...:
Չեմ պահանջեր որ զիս սիրես, բայց մեր ձերբակալութեան ժամը մի
փութայնէր:

Արբեարին անուշադին ձայնին Գարսիալ կարծեց թէ իր սարսա-
ղին անար վրայ օդտաւէտ ներդործութիւն մ'ունեցաւ, բայց ստիպի
թակարդի մը մէջ ընկաւ:

— Ես տղաքը կը ճանչեմ — ըսաւ նա — ստոյգ եմ որ եթէ
ապսպրեմ որ բան մը չյայտնեն դուրսն ոչ ինչ չեն ըսեր...: Մակայն
ինչ որ ըլլայ, միշտ անոնց հետ պիտի մնամ և անոնց դադանապահու-
թեան մասին քեզ կ'ապահովեմ:

— Ա՛յլ երնայ ապահով ըլլալ տղու մը խօսքին վրայ... մանաւանդ
Բարիդ ուր ամէն մարդ հետաքրքիր է և շատախօս...: Աւտի ոչ մի-
այն երբ կողոպուտ ընենք մեզ աջակցելու, այլ մեզ ալ բերան չտալու
համար զանոնք հոս պահելու կը փախարիմ:

— Միթէ աստն աստն աւանն ու Բարիդ չեն երթար. ով կ'արդիւէ
զանոնք խօսելու... եթէ խօսելիք մ'ունին...: Եթէ ասկից հեռու
գտնուէին, ինդիրը կը փոխուի. ինչ որ ըսն վտանգ մը չծաղիր...:

— Ասկից հեռու, և ո՛ւր — ըսաւ արբեարին որդին նայելով ակ-
նասիչ:

— Թո՛ղ որ զանոնք տանիմ... քու ինչ վնդիւն է...:

— Եւ ի՞նչպէս պիտի ապրիս, անոնց հետ:

— Իմ հին դարբին վարպետս բարի մարդ մ'է. ես անոր պէտք ե-
ղածը պիտի ըսեմ, և կարելի է տղոց սիրունքիչ մը բան փոխ տայ ինձ.
այն ատակով ասկից հեռու վայր մը կը տանիմ կը տեղաւորեմ զանոնք:
Երկու օրէն կը մեկնինք, և այնուհետև մեր խօսքը չես ըսեր...:

— Չէ, ճշմարիտը... կ'ուզեմ որ ինձի հետ մնան, աւելի ապահով
կ'ըլլամ:

— Այն աստն կողինն անակը կը հաստատուիմ վաղը, աւելի ազուր
օրերու ապաստելով...: Նոս ալ գլուխ մ'ունիմ տալու, զիտես...:

— Այո, զիտեմ... ս՛հ, որչափ կը փախարէի ասկից հեռանալով
տեսնել...: Ինչո՞ւ համար անտառներու մէջ չմնայիր:

— Ահա կ'առաջարկեմ քեզ խնէ և ստոյգմէ ազատելու միջոց մը...
...:

— Աւրեմն այս տեղ պիտի ձդես լա Ղուվը, զոր այնքան կը սիրես...
... ըսաւ յանկարծ արբեարին:

— Այդ ինձ կը վերաբերի. ընելիքս զիտեմ, միտք մ'ունիմ...:

— Եթէ թոյլ տամ քեզ որ Ամանայի և Քրանտուան տանիս, ուրդը
Բարիդ պիտի կոխես...:

— Երեք օրէն մեկնած և ձեզի համար իբր մեռած պիտի համա-
րուինք:

— Աւելի աղէկ ունիմ այդ բանը քան քեզ քովս ունենալ, և անոնցմէ
միշտ կասկածիլ...: Աղէ՛, քանի որ հպատակիլ պէտք է, տար զա-
նոնք... և որչափ կարելի է շուտով ճամբայ ելիք... և աքս նորէն
չտեսնէ ձեզ...:

— Աւրեմն կը հաւանին...:

— Այո, կը հաւանիմ: Յա ներդին բանային տուր որ Նիդօլան
գուրս հանեմ:

— Ա՛յ, թող այն տեղ գինիէն սթափի, վաղն առտու պիտի տամ
քեզ բանային:

— Հապա Բարսապը:

— Այդ տաքեր է. վեր երնելես ետքը գուր բայ, անոր տեսքը
զղուանը կուայ ինձ:

— Կորիւր . . . Աստուծոյ կրակին գաս :

— Այդ է գիշեր բարեգ , մայր իմ :

— Հա . . . :

— Բարեբաղդօրէն վերջինն է — ըսաւ Մարտիալ :

— Ղերջինն է — վրայ բերաւ որբեարին :

Մարտիալ կանթեղ մը վառեց , ապա խոհանոցին դուռը բացաւ , շուշնին սուլեց , որ ուրախ դուարթ գրէն վազեց եկաւ , և իր տիրոջն ետևէն գնաց մինչև վերի գատիկոնը :

— Կորիւր . . . բանդ ընցաւ . — մրմնաց մայրն իր կուռփն որդւոյն ցոյց տալով , որ սանդղէն այն ինչ վեր ելեր էր . — դու այսպէս ուզեցիր :

Յետոյ Քալպասին օգնութեամբը , որ գնաց շատ մը շինծու բանալիներու տրցակ մը բերելու , որբեարին Նիգօլաին գտնուած նկղին գուռը բացաւ , և զանի ազատ թողուց :

Գ Լ Ո Ւ Խ Է

ՓՐԱՆՍՈՒՆ ՈՒ ԱՄԱՆՏԻՆ

Քրանսուա և Ամանտին՝ խցի մը մէջ կը ստուկէին՝ որ անմիջապէս խոհանոցին վրայ՝ վերնագաւթին ծայրը կը գտնուէր , և ասոր ալ երկայնքը շատ մ'ուրիշ սենեակներ կային , որ գինետան յաճախորդներուն իբր ընկերութեան դահլիճներ կը ծառայէին :

Այս երկու տղաքն՝ իրենց պարզ ընթրիքն ընելէն ետև՝ լապտերները մարելու տեղ , ինչպէս որ որբեարին ապսպրէր էր , արթուն նստեր և գուռը կէս մը բաց ձգեր էին՝ որպէս զի իրենց Մարտիալ եղբօրը գուռասար գիտեն և սենեակը մննելը տեսնեն :

Լապտերը կազ աթոռակի մը վրայ գրուած՝ գեղին ըյս մը կ'արձակէր մահկանան թափանցիկ ապակիէն :

Գորշ տախտակաշար բռնայ պատեր , Քրանսուային համար խշտակ մը , Ամանտինի հատակին համար խիտ կարճ աղու փոքրիկ անկողին մը , Ռաֆայէլի կըշիւղն զինետան կուռարար յաճախորդներու ձեռք խորտակուած նստարաններու և աթոռներու կոյտ առ կոյտ բեկորներ , այս էր ահա սոյն հոկին ներքին կողմը :

Ամանտին՝ խշտակին ծայրը նստած՝ Նիգօլա եղբօրը պարզեցած գուռնի մետաքսէ թաշկինակով , գլխի կապ մ'ընելու կը ջանար :

Քրանսուա ծուռի չղբած իր քրոջը կը ներկայէր հայրի մը կտորն , որ դուրսը կիսովին դարձուցած՝ նոյն պահուն կ'զբաղէր թաշկինակին երկու ծայրերը կցելով շինած խոշոր վարդը բռնալ :

Քրանսուա այս գլխի կապին վրայ ուշադիր և հիացած՝ սրահ մը գտնոյ ըրաւ այնպէս մը ներկայել հայրիին կտորն՝ որ քրոջը նկարն անոր մէջ ցորանայ :

— Բայց հայրին քիչ մ'աւելի բարձր բռնէ — ըսաւ Ամանտին . — երեսս մէջը չեմ տեսներ . . . : Սապէս բռնէ . . . աղէկ է . . . քիչ մ'ալ հասրերէ . . . հիմակ կը ընցնեմ . . . : Գէն , նայէ անդամ մ'ինձ . աղէկ շտկեցի գլխի կապս :

— Ո՛հ , շատ աղէկ , շատ աղէկ . . . : Աստուած . ո՛հ , ինչ աղբոր վարդի կապ է . . . : Հատ մ'ալ փողկապին պիտի շինես , այնպէս չէ :

— Այո , հիմակ պիտի շինեմ . . . բայց թնղ որ քիչ մը պտրտիմ : Գու ետ ետ քալէ . . . միշտ հայրին բարձր բռնելով . . . որ քաղելու աստի կարող ըլլամ երեսս մէջը նայելու . . . :

Քրանսուա այս դժուարին գործը կըցածին չափ կատարեց՝ 'ի մեծ գոհունակութիւն Ամանտինի , որ սիգաքայլ կը սրբեկեթէր իր թաշկինակին ահագին ծօպերուն ներքև :

Այս պչրասիրութիւնը՝ թէև տարբեր պարագայի մը մէջ կրնար շատ պարզ ու անմեղ երևիլ , գատապարտելի կը գառնար գողունի թաշկինակի մ'առ թխ , նոյնպէս այս գողոնն ալ Քրանսուային և Ամանտինին յայտնի էր : Այս ալնոր ասպայոց մ'է թէ ինչ ահատու դիւրութեամբ՝ նոյն իսկ բարեմիջն աղաք յանդէտս կը խանդարին՝ երբ մեղապարտ մթնոլորդի մը մէջ ընկրկած են շարունակ :

Եւ դարձեալ այս փոքրիկ թշուառներուն միակ մնտորն՝ իրենց Մարտիալ եղբայրն՝ ինքնին անպատանելի չէր , արդէն ըսինք . թէև գուռութիւն կամ սքանտութիւն ընելու անձեռնհաս՝ թափառաշրջիկ ու անկանոն կեանք մը կը վարէր : Հարկաւ իր ընտանիքին ոճիրնե բուն գէտ՝ կը զայրանար , երկու տղաքը գորովանօք կը սիրէր , ուրիշներուն խստութիւններէն զանոնք կը պաշտպանէր , իր ընտանիքին փնասակար աղղեցութիւնէ զանոնք հեռու պահելու կը ջանար , բայց իր խրատնե :

ըբ՝ խիստ ու հաստատուն բարոյականութեան հրահանգներու համեմատ արուած չըլլարով թերևս ներդործութիւն մ'ունէին երկու տղայ զրայ ։ Բանի մը չար դործեր չէին ուզեր կատարել, չէ թէ սրբիկնչ տու թեմէն, այլ Մարտիային հնազանդելու համար, զոր կը սիրէին, և իրենց մօճն անաստելու համար, զոր կատէին և կը վախնային ։

Իսկ բարոյն և չարին դադարեալն ամենէն չունէին, քանի որ ընտելացեր էին ամէն օր իրենց աչքին առջև ունեցած զգուցի օրինակներով, վասն զի, ինչպէս որ ըսինք, այս քեղջիկան քինեպոտնը՝ ուր վատազգի խուժանին թափթփուրը կը յաճախէր, սիգալի գինեմեղերու և ցփասէր անառակներուն թասին էր. և Մարտիայ, որ այնքան հաւատարի էր գողութեան և մարդասպանութեան, այսպիսի աղտոյի զեղ խութիւններու անտարբեր կ'երեւէր ։

Ասկից կ'իմացուի թէ քանի կատարեցի, անխոյուն, վաղանցուկ էին տղայ բարոյականութեան զգացումներն, մանաւանդ Քրանսուտի մասին որ հասեր էր այն վառնազալի հասակին՝ ուր հողին կը վարանի, կը տատանի բարիքն և չարքն մէջ, և կրնայ վայրկեանի մը մէջ կորուսիլ կամ ազատիլ ընդ միշտ . . . :

— Այս կարմիր թաշկինակն ինչպէս երեսիդ կը վայլէ, քոյր իմ — զրայ բերաւ Քրանսուտ — սրչափ սիրուն է ։ Եբբ զիշէն երթանք և կիրազօրծին հնոցին առջև խաղանք, պէտք է որ այդ կերպով կապես զըլտը, որպէս զի իր գլուխները կատողն, որ միշտ մեզի քար կը նետեն և փոքրիկ կտասինսպներ (guillotiné) կը կանչեն . . . : Ես ալ իմ կարմիր փողկապս պիտի կապեմ և անոնց պիտի ըսենք ։ Հողերնիս է, մեզի պէս դուք ալ մտտարսէ կարմիր թաշկինակներ չունիք ։

— Բայց, մտիկ ըրէ, Քրանսուտ . . . — զրայ բերաւ Ամանտին պահ մը մտածելէն ետև — և թէ գիտնան որ մը կըրած թաշկինակները գողցուած են . . . փոքրիկ գողեր պիտի կանչեն մեզ . . . :

— Ո՛րչափ ուզեն թնդ պտուան որ գող ենք ։
— Թէ որ իրաւ չըլլար . . . հող չէր . . . բայց հիմակ . . . :
— Բանի որ Նիդօլան այս թաշկինակները գողցաւ, մենք գողցած չենք ըլլար ։

— Այն, բայց անի, մակոյկի մը մէջէն առաւ, և մեր Մարտիայը յայրն ըսաւ որ պէտք չէ գողութիւն ընել . . . :

— Բայց քանի որ Նիդօլան գողցաւ, մեզի կ'նչ ։
— Այդպէս կը կարծես, Քրանսուտ ։
— Հասա . . . :

— Բայց, ինձ կ'երևի որ աւելի աղէկ ունէի որ այս թաշկինակներուն տէրը մեզի տար զանոնք . . . հասա քեզի ինչպէս կ'երևի, Քրանսուտ ։

— Ինձի համար, հող չէ . . . : Մեզի ընծայ ըրին զանոնք, հիմակ մերն են ։
— Արդեօք ապահով ես ։

— Հասա, հասա, հանդարտ եղիք ։
— Եթէ այդպէս է . . . աղւոր բան, մեր Մարտիայեզօր պատուէրը կը պահենք, և սիրուն թաշկինակներ ալ ունինք ։

— Ի՛նձ նայէ, Ամանտին, թէ որ Մարտիայ իմանար որ անցածն օր Քարպաս քառադիժ վիզակ մ'առնել տուաւ քեզ սասարտուորին ծրարէն, երբ կ'ոնակը մեզի դարձուցեր էր, ինչ պիտի ընէր ։

— Ո՛հ, Քրանսուտ, մ'ըներ այդ բանը — ըսաւ խեղճ աղջկիկը՝ ուրուն աչերն արոտսբով լցան ։ — Եթէ իմանար կարելի է Մարտիայ եղբայրս իս աչքէն հանէր . . . կը հասկնան . . . և մեզ այս տեղ մինակ ձգէր . . . :

— Մի վախար . . . մի թէ կարծես թէ անոր պիտի խօսիմ այդ բանին զրայ ։ Միմակ ինտուլու համար ըսի . . . :

— Ո՛հ, մի ինտար այս բանիս զրայ, Քրանսուտ. արդէն սիրոս բաւական ցաւեցաւ, բայց պէտք եղաւ որ ընեմ. արիւնելու չափ քստմեց քոյրս իս, և ասկից զատ՝ աչերն անանկ, անանկ կը դարձնէր . . . դարձեալ երկու անգամ սիրա չըրի, կարծէի թէ բնաւ ձեռքէս չպիտի գայ . . . : Աերջապէս սասարտուորը բան մը չտեսաւ, և քոյրս վիզակն առաւ ։ Թէ որ բռնուէի, Քրանսուտ, իս բանտ պիտի տանէին . . . :

— Բունէ թէ գողութիւն չըրիր, քանի որ չբռնուեցար ։
— Ար կարծես ։
— Հասա ։
— Արդեօք որչափ թշուաւ կ'ըլլայ մարդ բանտին մէջ ։
— Ա՛հ, անշուշտ . . . ընդ հակառակն . . . :

- Ինչպէս ըսիր, Ֆրանսուս, ընդ հակառակն մի :
- Գէն, կը ճանչե՛ս այն խոշոր կաղն որ պապա Միքուլին տունը կը բնակի, Բարիզ, Նիդօլան փերեզակը... որ Պրասարիի անցքին մէջ կազմիկ տուն մը կը պահէ :
- Խոշոր կաղ մը :
- Հասցն, որ աշնան վերջերը՝ պապա Միքուլին կողմէն այս տեղ եկաւ կապիկ ցուցնողը մ'ու երկու կնիկներու հետ :
- Ա՛հ, այն, այն. խոշոր կաղ մ'որ այնքան, այնքան ստակ վատնեց :
- Ար հատամ անշուշտ, ամէն ստակը կը վճարէր... : Ար յիշե՛ս դետին վրայ մեր ըրած պտոյտները... ես կը տանէի զանոնք պտըտելու... մինչև անդամ կապիկ խաղցնողը իր երգեհոնը հեար բերաւ նաւակին մէջ ածելու համար... :
- Հասցա իրկունն ալ աղ որ հրախաղութիւններ ըրին, Ֆրանսուս :
- Իսկ խոշոր կաղը կծծի չէր. ինձի սաս սու տուտա : Ընտիր դիտնի կը խմէր միայն, միշտ հաւեր կ'ուտէին ճաշի ատեն. քիչէն քիչ ու թտուն Ֆրանքի չափ ծախս ըրաւ :
- Այնչափ շատ, Ֆրանսուս :
- Ո՛հ, այնչափ... :
- Ըսել է թէ շատ հարուստ էր :
- Ամենեկն... ծախս ըրածը՝ բանտը վատակած ստակն էր, ուսկից նոր ելեր էր :
- Բոլոր այն ստակը բանտը վատակեր էր :
- Հնա... կ'ըսէր թէ եօթ հարիւր Ֆրանք ունէր. երբ բոլոր ստակը հատնի... նոր կողոպուտ մ'ալ ընելու միաք ունէր... և եթէ բոնուէր... իրեն համար հոգ չէր, ինչու որ Բառնի Բարի պոստը քովը պիտի երթամ, կ'ըսէր :
- Ըսել է թէ բանտէն չէր վախնար, Ֆրանսուս :
- Ընդ հակառակն... Բաղլասին կ'ըսէր թէ՛ խել մը բարեկամներ և կոչնատներն կան հոն... թէ երբէք բանտին մէջ ունեցածին պէս բուսողոյն անկողին և բուսողոյն կեբակուր ու ըիշ տեղ մը չէ ունեցած... շարքով չորս անգամ աղբ որ միս, ձմեռը կրակ, և դուրս ելնելու առտեն ալ աղբ որ դումար մը... մինչդեռ աւանակի պէս պարկեշտ դոր-

- ծաւորներ կան որ անթոթութենէ ու ցրտէն կը սատկին, ինչու որ դործ չունին... :
- Շխտակ է, Ֆրանսուս, այդպէս կ'ըսէր խոշոր կաղը :
- Այսանջողը լսեցի... ինչու որ նաւակին թին քաշողն ես էի, երբ իր պատմութիւնը կը պատմէր Բաղլասին և երկու կնիկներուն, որ կ'ըսէին թէ կնիկներուն բանան ալ ուսկից նոր ելեր էին, այսպէս էր :
- Եթէ այդպէս է, Ֆրանսուս, գողութիւնը դէշ բան մը չպիտի ըլլայ, քանի որ մարդ հանդիստ կ'ընէ բանտը :
- Իրաւ որ ինչ ըսեմ չզխտեմ ես... այս տեղ միտակ մեր Մարտիալ եղբայրն է ըսողը թէ գողութիւնը դէշ բան է... կարելի է կը սխալի... :
- Փոյթ չէ, պէտք է անոր հատալ, Ֆրանսուս, մեզի սրչափ կը սիրէ :
- Իրաւ է, մեզ կը սիրէ... երբ այս տեղ է, վտանգ չկայ որ ծեծ տանէր... : Եթէ այս իրկուն հոս ըլլար, մեր մայրը ասանկ անինաց չէր թմրիկեր մեզ... այն պատաւ ճիւղը, ինչ չարասիրտ է... մհ, կ'ատեմ... կ'ատեմ զանի... որչափ կը փափաքէի մեծ ըլլալ որ տուած հարուածներն իրեն դարձնեմ... մանաւանդ քեզի տուած հարուածները, քանի որ իմնէ աւելի փափուկ ես... :
- Ո՛հ, Ֆրանսուս, լուէ... կը գողամ երբ կը ըսեմ որ մայրս ծեծելու փափաք ունիս. — գոչեց խեղճ փոքրիկը լարով և թեկերն եղբօրը վզին փարեղլ զանի համբուրեց :
- Չէ, բայց այս իրաւ է — գոչեց Ֆրանսուս մեղմիկ մը հրելով Ամանտինը — որ մայրս և Բաղլաս չզխտեմ թէ ինչու համար այսպէս մեզ կը հարածեն :
- Ես ալ չզխտեմ — վրայ բերաւ Ամանտին ձեռքին ետեի երեսով աչերը սրբելով. — կարելի է մեզի դէմ անոր համար այդքան անիրաւ են որ մեր Անպարտալ եղբայրը թխարան նետեցին և մեր հայրը զլխատեցին... :
- Եւ մենք ինչ յանցանք ունինք :
- Տէր Աստուած, չէ յանցանք չունինք, բայց ինչ զիսնամ :
- Մաս որ եթէ այսպէս ամէն օր, ամէն զան պիտի ուտեմ, վերջապէս ես ալ, ինչպէս որ կ'ուզեն, գողութիւն պիտի ընեմ... չգործադով ինչ կը շահիմ... :

- Հապահ Մարտիալ ինչ պիտի ըսէ :
- Ո՛հ, թէ որ ան չըլլար . . . շատոնց դուրս ծոեր էի, ինչու որ ծեծ ուտելէն ձանձրայայ . . . շխտակը, մայրս այս իրիկուան պէս չարապիքս չէի տեսեր . . . կատուի պէս կատղեր էր . . . մուժ, չորս կողմը մուժ էր . . . և բառ մը բերնէն չէր հաներ . . . մինակ սպաղուկ ձեռքը կ'ըզայի որ վզէս բռներ էր, մինչդեռ մէկալ ձեռքով ալ իս կը թոպէք . . . այնպէս մը կ'երևէր ինձ որ աչերը կը շողային . . . :
- Խեղճ Քրանսուա . . . մինակ սա էր յանցանքդ որ փայտանոցը սուր մը տեսայ ըսիր :
- Հն, ոտք մ'որ հողէն դուրս կ'երևէր — ըսաւ Քրանսուա վախէն սարսուռ մ'ըզալով, — բողբոլիկն ստոյգ եմ :
- Կարելի է որ աստն մը դերեզման կար այս տեղ, ինչ կ'ըսես :
- Կարելի է . . . ուրեմն ինչու համար մայրս ըսաւ թէ պիտի սատկեցնէ իս թէ որ Մարտիալ եղբոր ըսեմ թէ սուր մը տեսայ . . . : Ո՞ դիտէ, հաւանական է որ կուտելու աստն մէկը սպաննած և այն տեղ թաղած են որ երեսն չե՛նէ :
- Իրաւունք ունիս . . . ինչու որ կը յիշե՛ս որ մազ մնաց այնպիսի ձիւն մը պիտի դար մեր զլխին :
- Ե՞րբ :
- Գիտես, այն անդամուն որ Պ. Պարպլյոն դանակի հարուած մը տուաւ այն խոշոր մարդուն որ անանկ ոսկրուտ, անանկ ոսկրուտ, անանկ ոսկրուտ է որ տարկի համար ինք զինքը կը յուշնէ :
- Ա՛հ, հասկցայ, շքող կ'ախ+ք . . . ինչպէս որ կը կոչեն . . . մայրս եկաւ դանոնք իրարմէ դատեց . . . թէ ոչ կարելի է որ Պարպլյոն մեծ կմակըը կ'սպաննէր : Տեսար, ինչպէս կը վերիեր Պարպլյոն և ինչպէս աչերը խոշոր խոշոր անկեր էր . . . :
- Ո՛հ, ոչ ինչ բանի համար դանակը կը հանէ անվախ և քեզ կը խօթէ . . . : Ի՛նչ դող աւազակ է այն :
- Այնչափ նորհասակ է և անդամ . . . Քրանսուա :
- Իօրգիլար աւելի նորհասակ է, և անոր շտի անդամ կ'ըլլար թէ որ ոյժ ունենար :
- Հն, հն, շատ անդամ է . . . : Անցածն օր իս ծեծեց, ինչու որ հետը չուզեցի խաղալ . . . :

- քեզ ծեծեց մի . . . ըս . . . թէ որ անգամ մը տեսնեմ զինքը . . .
- Չէ, չէ . իրաւ որ, Քրանսուա . . . ինտալու համար էր :
- Իրան կ'ըսես :
- Այո, իրաւ :
- Լա. ուրեմն . . . թէ ոչ . . . : Բայց չեմ հասկնար թէ այն սրիկան ուսկից կը դանէ այնքան ստակը . . . ինչ բաղդաւոր է : Լա Շուէզին հետ հոս եկած օրը քսան Ֆրանսոնց ոսկիներ ցցուց մեզի : Ի՛նչ ծաղրածու երես ունէր, երբ ըսաւ մեզ : — «Գուք ալ ասանկ ստակ կ'ունենայիք, թէ որ փոքրիկ անկոթներ չըլլայիք :»
- Անկոթներ օր :
- Հն, արկտի լեղուով անկոթ՝ աւանակ, ապուշ ըսել է :
- Հն, ճիշտ է :
- Քառասուն Ֆրանք . . . ոսկի . . . ինչ աղւոր բաներ կ'ընայի ծախուանուլ այս դոմարով . . . : Հապա դու, Ամանտին :
- Ո՛հ, ես ալ :
- Ի՛նչ պիտի դնէիր :
- Նայի՛ր — ըսաւ տղեկը խոհուն գէմբով մը դուրսը վար առնալով — նախ և առաջ Մարտիալ եղբորս համար տարուկ կապայ մը կը դնէի որ նուակին մէջ չմնի :
- Բայց քեզի . . . քեզի համար . . . :
- Իս աւելի աղէկ ունէի փոքրիկ մամէ Յիսուս մը իր դառնուին ու խաչը մէկտեղ, ինչպէս որ կ'իրակի օր բոկայ մարդեր ծախող մարդն ունէր . . . կը յիշե՛ս, որ Անիէրի ժամին դուրս նստեր էր :
- Աղէկ ըսիր, մինակ պէտք չէ ըսել մօրս և Քարպասին որ ժամը տեսան մեզ :
- Իրաւ է, քանի որ արդիւած է մեզ ժամ մոնելու . . . : Մե՛ղբ, ինչու որ ինչ աղւոր է ժամին ներք . . . անանկ չէ՞, Քրանսուա :
- Հն, ի՛նչ աղւոր արծթէ աշտանակներ կան :
- Հապա սուրբ Աղոսին սրակերն . . . ինչ անուշ դէմք ունի . . . :
- Հապա աղւոր կանթեղները . . . տեսար . . . : Հապա սեղանին վրայի աղւոր ծածկոյթը, որ քահանան՝ իրեն պէս հարուած երկու բարեկամներու հետ սրատարազ կ'ընէր . . . և որուն ջուր ու գինի կուային . . . :

— Ինչ նայէ, Ֆրանսուա, կը յիշես արդեօք, որ հերուն, Մարմնոյ և արեան տօնին, երբ ասկից իրենց ձեռնակ քօղեցով ծածկուած փոքրիկ աղջիկները տեսնոք որ կամրջէն կ'անցնէին և հարզդբ առնուր կ'երթային :

— Ի՛նչ դեղեցիկ փունջեր ունէին :

— Ի՛նչ անուշ ձայնով կ'երգէին իրենց դբօշին ժապուէնը բունելով :

— Եւ ի՛նչպէս իրենց դբօշին արծթէ բանուածքը կը փարկէր արևուն . . . : Արդեօք ի՛նչ սուղ բան է . . . :

— Ատուած . . . ի՛նչ սիրուն էր, հըմ, Ֆրանսուա :

— Ի հարկէ, հասրս այն հարդրդ առնուր դացող աղջիկներուն ձեռնակ սնդուսէ ծոպերը թևերնին, և իրենց մոմերն որ կարմիր թաշէ և սակիով խաուն բունատեղ ունէին . . . :

— Տղաք ալ իրենց դբօշն ունէին, անանկ չէ՞, Ֆրանսուա . . . : Ա՛հ, Ատուած, այն օրն ալ ձեծը կերպ մօրս հարցնելուս համար թէ ինչն համար միւս տղոց պէս թափօրին չէիք երթար :

— Ահա այն ատեն պատուիրեց մեզ որ աւանը կամ Բարիզ երթալու ատեն բնա ժամ չմտնէք, և եթէ մտնէք՝ աղքատներուն նստարանը, կամ թեմակամերուն դպանը կողպտենք, պատարագի ատեն . . . յարեց Բարդաս ծիծաղելով և իր հին դեղնած արևանները ցոյց տալով . . . : Ի՛նչ անշահ կենդանի է, հա :

— Ա՛հ, այդ բլբլու բան չէ . . . միտ կտոր կտոր ընեն ժամը դողովուն չեմ ընէր . . . անանկ չէ՞, Ֆրանսուա :

— Ժամը կամ ուրիշ տեղ, նոյն բանն է, երբ անգամ մ'որոշես :

— Շխտակը, չգիտեմ . . . բայց աւելի դող կ'եննեմ ժամը . . . չտիտի կրնամ բնա . . . :

— Քահանաներուն համար :

— Չէ . . . կարելի է սուրբ Աղոյն այն պատկերին համար, որ անանկ անուշ, անանկ բարի զէմը մ'ունի :

— Ի՞նչ ճիաս ունի, այն պատկերը մարդ չուտեր . . . դու ալ անմկտ ես . . . :

— Իրաւ է . . . բայց վերջապէս, չտիտի կրնամ . . . իմ ձեռքս չէ . . . :

— Գահանայ ըսիր և մտքս եկաւ, Ամանտին այն օրը, կը յիշե՞ս . . . :

— Գահանայ ըսիր և մտքս եկաւ, Ամանտին այն օրը, կը յիշե՞ս . . . :

• երբ Նիդօլա երկու մեծ սողտակ տուա ինձ, որովհետեւ տեսաւ որ դետափէն անցնող քահանային բարև տուի, տեսեր էի որ կը բարևեն, ես ալ անոր բարև տուի . չէի կարծեր որ բրածս դեշ բան է . . . :

— Իրաւ է, բայց այն անգամ, մեր Մարտիալ եղբայրն ալ Նիդօլաին պէս ըսաւ, որ մեզ չիմար քահանաները բարևելու :

Նոյն միջոցին՝ Ֆրանսուա և Ամանտին նրբազաթին մէջ քաղելու ձայն մը լսեցին :

Մարտիալ իր մօրը հետ այն խօսակցութիւնն ունենալէն ետև՝ անկասկած խօսքը կը դառնար, կարծելով թէ Նիդօլա մինչև միւս սուսու փակուած պիտի մնայ :

Մարտիալ տղոց խցէն ելնող լուսին նշոյրը նշմարելով ներս մտաւ .

Երկուքնին ալ դէպ անոր վաղեցին . Մարտիալ զրկեց դանտը գոլովալի :

— Ի՛նչպէս, դեռ չէք պատկած, սրտի շարակրասներ :

— Չէ, եղբայր իմ . . . դալը կ'սպասէինք որքեղ բար'իբիուն լսենք — սրատախանեց Ամանտին :

— Ասկից դատ՝ վարը խոշոր խօսքի ձայներ լսեցինք . . . կարծես թէ կուր կար — յարեց Ֆրանսուա :

— Այո՛ — ըսաւ Մարտիալ — Նիդօլաին հետ քիչ մը խօսքի եկաւ . . . բայց բան մը չէ . . . : Սակայն ուրախ եմ որ դեռ արթուն էք, ձեզի աղւոր լուր մ'ունիմ սալու :

— Մեզը, եղբայր իմ :

— Գոհ չէք բլբլուր եթէ ինձի հետ երեք ասկից և ուրիշ հեռու տեղ մ'երթաք :

— Ա՛հ, այո՛, եղբայր իմ . . . :

— Այո՛, եղբայր իմ :

— Լաւ, երկու օրէն երեքնիս ալ կրկին պիտի հեռանանք :

— Ի՛նչ երջանկութիւն . . . գոչեց Ամանտին ձեռները զարնելով զուարթալին :

— Եւ ո՞ր պիտի երթանք — հարցուց Ֆրանսուա :

— Ախտի տեսնես, հետաքրքիր աղէկ . . . բայց ուր որ երթանք անդէկ արհեստ մը պիտի սորվիս . . . որով օրատպահիկ պիտի վաստկիս . . . ահա այս աղէկ միտքդ դիւ :

— Ալ քեղի հետ ձկնորսութեան չպիտի երթամ, եղբայր իմ:

— Չէ, աղբա, հիւանի կամ դարբնի մը մօտ աշակերտ պիտի մանենս. ուժով ես, ճարպիկ ես. եթէ քաջ ըլլաս և ժերթօր աշխատիս, տարիէ մը կընաս փաստակ մը ձեռք ձդել: Ա՛հ, ինձ նայէ... ինչ ունիս... գէժքէդ կ'երեւի որ դո՛հ չես:

— Պատճառն այն է... եղբայր իմ... որ...:

— Շատ, խօսէ, ինչ է:

— Այս է որ աւելի աղէկ ունիմքովէդ չհեռանալ, քեղի հետ ձուկ որսալ, ուսկանդ շտկել, քան արհեստ սորվիլ:

— Իրան:

— Հասկն, բոլոր օր դործարանը փակուիլ... տխուր բան է... և աշակերտ ալ ըլլալ, ձանձրալի բան է...:

Մարտիալ ուսերը վեր առաւ:

— Աւելի աղէկ է խելքովդ ծոյլ, դատարկաշըլիկ, պարսպօրդ ըլլալ, այնպէս չէ — ըսաւ անոր խատօրէն — մինչև որ դո՛ղ դառնաս...:

— Չէ, եղբայր իմ, մինակ կ'ուզեմ՝ որ ինչպէս այս սեղ, ուրիշ տեղ ալ օ՛հ կտեղ ապրինք...:

— Այո, ըսէ է, ուսել, խմել, պառկիլ և ոստանիկ պէս ձուկ որսալ ու զուարճանալ կ'ուզես, այնպէս չէ:

— Այդ աւելի ակործեղի է ինձ...:

— Կարելի է, բայց ուրիշ բաներ ալ ակործեղի պիտի դանենս...: Միտ դիր, Ֆրանսուա, ժամ է որ քեզ ասկից առնում տանիմ, առանց կատկածելու միւսներուն պէս անզգամ պիտի դառնաս...: Մայրս իբրաւունք ունէր... կը վախնամ որ մտլութեան սերմ ունիս...: Իսկ դու, Ամանտին, միթէ չե՛ս ակործիք արհեստ մը սորվելու:

— Ա՛հ, անշուշտ, եղբայր իմ... աւելի կը սիրեմ սորվիլ, ամէն բան կը սիրեմ մինակ հոս չմնալ: Որչափ դո՛հ պիտի ըլլամ եթէ քեղի և Ֆրանսուային հետ ասկից երթամ:

— Բայց ինչ է այդ գլխիդ կատարածը, աղջիկս — ըսաւ Մարտիալ Ամանտինի յաղթական գլխադարձը գիտելով:

— Թաշկինակ մ'է, Նիգօլա տուաւ ինձ...:

— Ինձի ալ հատ մը տուաւ — յարեց Ֆրանսուա դուռը դարձ:

— Եւ ուսկից ձեր ձեռքն ընկան այս թաշկինակները: Պիտի զարմանամ եթէ Նիգօլա ձեզի բնծոյ ընելու համար զնած ըլլայ զանոնք:

Երկու տղաք գլուխնին վար առին առանց պատասխան տալու:

Պահ մ'անցնելէն ետեւ՝ Ֆրանսուա ըսաւ անվհեմ:

— Նիգօլա տուաւ զանոնք, չղիտներ թէ ուսկից ատեր է, անանկ չէ՞, Ամանտին:

— Չէ... չէ... եղբայր իմ... — յարեց Ամանտին թոթովելով և ծիրանի դոյն առնելով առանց Մարտիայի նայիլ իշխելու:

— Սուտ մի խօսիք... — ըսաւ Մարտիայ խտօրէ:

— Չէ, սուտ չենք ըսեր — յարեց Ֆրանսուա յանդգնօրէն:

— Ամանտին, աղջիկս... ճշմարիտն ըսէ — վրայ բերաւ Մարտիալ անուշութեամբ:

— Լաւ ուրեմն, բոլոր ճշմարտութիւնն ըսելու համար — յարեց Ամանտին երկչոտութեամբ — այս գեղեցիկ թաշկինակները կերպասի մտուկէ մ'եղան, զոր Նիգօլա այս իրիւն նաւակալը հոս բերաւ...:

— Եւ դողցաւ:

— Կարծեմ թէ դողցաւ, եղբայր իմ... մակրիլէ մը:

— Կը նային հիւանկ, Ֆրանսուա, սուտ կ'ըսէիր — յարեց Մարտիալ:

Ֆրանսուա գլուխը ծռեց անմուռնչ:

— Տուր ինձ սա թաշկինակն, Ամանտին. քուկդ ալ տուր նայիմ, Ֆրանսուա:

Փողբիկ օրիորդը գլխի կասքը հանեց, վերջին անգամ մ'ալ գլխոց այն ահագին վարդն որ չէր աւրած, և Մարտիային յանձնեց թաշկինակը վշտաղին հաւառ մը զսպելով:

Ֆրանսուա գրգռնէն կամեցուկ մը քաշեց թաշկինակն, և իր քրօջ պէս Մարտիային տուաւ:

— Աւրն առտու — ըսաւ նա — Նիգօլային պիտի դարձնեմ թաշկինակները: Պէտք չէիր զանոնք առնուլ, տղաքս. ով որ դողցած բան մը վայելէ, նոյնն ինքը դողցածի պէս կ'ըլլայ:

— Մեղք, որչափ սիրուն էին այս թաշկինակներն — ըսաւ Ֆրանսուա:

— Երբ արհեստ մը սորվիս և աշխատելով ստակ վստակիս, անոնց

պէս աղւոր թաշկինակներ կրնաս գնել: Ելիք, պատկեցէք, ուշ է... տղաքս:

— Արդեօք բարկացար, եղբայր իմ — ըստ Ամանտին երկչտու- թեամբ:

— Զէ՛, չէ՛, աղջիկս, յանցանքը ձերը չէ...: Անդամներու հետ կ'ապրիք, և դուք ալ առանց զխանալու անոնց ըրածը կ'ընէք...: Երբ բարի մարդերու հետ գտնուիք, բարի մարդերու ըրածը պիտի ընէք, և քիչ ատենէն անոնց հետ պիտի տեսնուիք... թէ ոչ ամէն բան կրողին պիտի տամ...: Ելիք, գիշեր բարի:

— Քեզ լոյս բարի, եղբայր իմ:

Մարտիալ տղաքը համբուրեց:

Աստը մինակ մնացին:

— Ի՞նչ ունիս նայիմ, Ֆրանսուա: Տրտում տխուր կ'երևիս — ըստ Ամանտին:

— Ի՞նչ պիտի ունենամ, եղբայրս աղւոր թաշկինակս առաւ. և դու ալ չըսեցիր ինչ ըսաւ:

— Ի՞նչ:

— Մեղի արհեստ սորվելու պիտի տանի...:

— Եւ մի՞թէ չե՞ս ուրախանար:

— Իբրաւ որ չէ...:

— Աւելի աղէկ ունիս հոս մնալ և ամէն օր ծեծ ուտել:

— Ծեծ կ'ուտեմ, բայց դոնէ չեմ աշխատիր, ամէն օր նաւակն եմ, ձուկ կը բռնեմ, կը խաղամ, կամ ծուխերուն կը ծառայեմ, ու բոնք երբեմն ինձի պարզ և կտան, ինչպէս Կրօ-Պուաղէօն. այս աւելի զուարճալի է քան առաւօտէն մինչև իրկուն գործարանը փակուած մնալ և շունի պէս աշխատիլ:

— Բայց, չըսեցիր... եղբայրս մեզ ըսաւ որ եթէ այս տեղ աւելի մնանք անգրամ պիտի ըլլանք:

— Ա՛հ, բա՛, հոգս է... քանի որ արդէն միւս տղաք մեզ պզտիկ գողեր կը կռչեն... կատափնատներ կը կռչեն...: Ասկից դամ աշխատիլն ալ... շատ ձանձրալի է...:

— Բայց այս տեղ ծեծ ուտելէն գլուխ առած չունինք, եղբայր իմ:

— Մեզ կը ծեծեն, վասն զի Մարտիալի աւելի մտիկ կ'ընենք քան միւսներուն...:

— Մեղի համար սրչափ բարեւիրտ է:

— Բարեւիրտ է, բարեւիրտ է, խօսք չունիմ... անոր համար զինքը շատ կը սիրեմ...: Անոր առջև չեն համարձակիր մեզ վնաս մը ընել... մեզ պտըտելու կը տանի... իբրաւ է... բայց ասկից աւելի բան մ'ըրած չունի... մեզ բան մը տուած չունի...:

— Հարկաւ, բան մը չունի... վատկածը մեր մօր կտայ իր կերակուրին համար:

— Նիդօլս միշտ բան մ'ունի...: Անշուշտ թէ որ անոր միտ գնէինք, և իմ մօրս ալ, մեզ պսաչափ չէին չարչարեր... այս օրուան պէս մեղի շատ մը լաթեր կտային... մեզնէ չէին կատկածեր... և Գօրդի-յարի պէս ձեռքերնիս ստակ կ'անցնէր:

— Բայց, Աստուած իմ, անոնց աչքը մանուշակ համար գողութիւն ընել պէտք է, և մեր Մարտիալ եղբայրն այն ատեն որչափ պիտի ցաւի:

— Ա՛աւ, որո՞ն հոգն է:

— Ա՛հ, Ֆրանսուա... թէ որ մեզ բռնեն, բանտ պիտի տանին...:

— Բանտ ըլլալ կամ գործարանի մը մէջ փակուիլ բոլոր օրը... մի և նոյն բանն է...: Բայց Կրօ-Պուաղէօն (խոշոր կաղ) ալ կ'ըսէ թէ մարդ կը զուարճանայ... բանտին մէջ:

— Բայց չես մտածեր թէ... Մարտիալին սրտին ինչ մեծ ցաւ պիտի պատճառենք...: Աւերջապէս մեզի համար հոս եկաւ և մնաց. թէ որ իր չոր գլուխն ունենար ամենեւին նեղութիւն չէր քաշեր, անտառները կը դառնար և ինքզինքն որսորդութեան կտար, քանի որ սաստիկ կը սիրէ:

— Ա՛աւ ուրեմն, թող մեզ ալ իրեն հետ անտառները տանի. — ըստ Ֆրանսուա — այդ ամէն բանէ աւելի աղէկ է: Միշտ հետը կ'ըլլամ քանի որ զինքը շատ կը սիրեմ և ձանձրալի արհեստներ չեմ արվիր: Ֆրանսուաի և Ամանտինի խօսակցութիւնն ընդմիջեցաւ:

Գրեհն իրենց դուռը կրկնակի գոցեցին:

— Մեր վրայէն կը գոցեն... — գոչեց Ֆրանսուա:

— Ա՛հ, Աստուած... և ինչո՞ւ համար, եղբայր իմ: Ի՞նչ պիտի ընեն մեզ:

— Կարելի է Մարտիալն է...:

— Մտիկ ըրէ... մտիկ ըրէ... նայէ ինչպէս շունը կը հաջէ... — ըստ Ամանտին ականջ գնելով:

— Բանի մը վայրկենէ ետքը՝ Քրանսուա յարեց։

— Կարծես թէ իր դուռը կացնում մը կը զարնեն . . . կարելի է զայն բռնի բանալ կ'ուզեն։

— Այո, այո, իր շունը շարունակ կը հաջէ . . . :

— Միտ դիր . . . Քրանսուա . . . Հիմակ ալ կարծես թէ բան մը կը դառնն . . . : Տէր ողորման, Տէր ողորման, կը վախնամ . . . : Ի՞նչ կ'ընեն մեր եղբօր, հիմակ ալ շունը կ'ոռնայ։

— Ամանախն . . . ալ ձայն ձուն չլսուիր . . . — վրայ բերաւ Քրանսուա գրան մօտենալով

Երկու տղաք՝ իրենց շունչը բռնելով՝ անձկութեամբ մտիկ կ'ընէին։

— Ահա եղբօր խցէն դուրս կ'եննեն — ըսաւ Քրանսուա ցած ձայնով մը։ — Նորադաւիթը քաղցրու ձայն կը լսեմ։

— Անկողին մանկեր . . . մայրս կ'սպաննէ մեզ թէ որ արթուն տեսնէ — ըսաւ Ամանախն սարսափելով։

— Ո՛չ . . . — վրայ բերաւ Քրանսուա միշտ ականջ դնելով — մեր գրան առջևէն անցան գայլին . . . վաղելով սանդղէն վար կ'իջնեն . . . :

— Տէր ողորման, ի՞նչ բաներ կը դառնան . . . :

— Ա՛հ, խոհանոցին դուռը կը բանան . . . հիմակ . . . :

— Ա՛յնպէս կարծես . . . :

— Հա, հա . . . ձայնն առի . . . :

— Փարսիպի շունն անդադար կ'ոռնայ . . . — ըսաւ Ամանախն ահանջ դնելով։

Յանկարծ սրտիկ աղջիկը սրտաց։

— Քրանսուան, մեր եղբայրը մեզ կը կանչէ . . . :

— Փարսիպի։

— Այո . . . կը լսես, կը լսես ձայնը . . . :

Յիրաւի, թէ երկու դոյ դռները թանձր էին, Փարսիպի որոտալիբ ձայնը, որ իր խցէն երկու տղաքը կը կոչէր, մինչև իրենց հասաւ։

— Տէր Աստուած, չնիք կրնար անոր երթալ . . . մեր վրայէն դոյցեր են — ըսաւ Ամանախն — իրեն գէշութիւն մ'ընել կ'ուզեն, քանի որ մեզ օգնութեան կը կանչէ . . . :

— Ո՛հ, եթէ բանն այդ է . . . եթէ կարող ըլլայի գէժ կենալ — դոյցը Քրանսուա անվեհեր — գէժ կը կենայի, եթէ մարմինս կտոր կտոր ալ ընէին . . . :

— Բայց մեր եղբայրը չդիտէ հիմակ որ մեր դուռը բանալով դոյցերն, և պիտի կարծէ թէ իրեն օգնութեան չենք ուզեր երթալ, պոռան որ խցին մէջ փակուած ենք, Քրանսուա։

— Այս վեճիկն իր քրոջ խօսքին պիտի հետևէր, երբ բռուն հարուած մը երկու տղայ խցին փորրիկ պատուհանին շերտոյրը դղորեց գրտէն։

— Փեղկէն պիտի մտնեն մեզ սպաննելու համար — դոյցը Ամանախն, և սարսափէն անկողինը վազեց ու դուրսը ձեռքին մէջ պահեց։

Քրանսուա անշարժ մնաց, թէև քրոջը չափ զարհուրեր էր։

Սակայն՝ մեր ըսած բռուն հարուածին վրայ՝ փեղկը չբացուեցաւ, և տան մէջ խորին լուռութիւն մը տիրեց։

Փարսիպի տղաքը կոչելէն դադար էր։

Քորը ինչ հանդարտելով՝ Քրանսուա հետաքրքրութենէ շարժեալ կամայուկ մը փեղկը կ'իստվին բանալու և շերտոյրին մէջէն դուրսը նայելու սիրտ ըրաւ։

— Չգոյշ եղիր, եղբայր իմ. — ըսաւ մեղմիկ Ամանախն, որ Քրանսուային պատուհանը բանալը լսեր և անկողինն մէջ ելեր նստեր էր։ — Միթէ բան մը կը տեսնես — յարեց նա։

— Ո՛չ, գիշերը շատ մութ է։

— Բան մը չես լսեր։

— Ո՛չ, շատ հով կայ։

— Գարձիր . . . եկուր ուրեմն։

— Ա՛հ, հիմակ բան մը կը տեսնեմ։

— Ի՞նչ կը տեսնես։

— Լապտերի մը նշոյլը . . . որ կ'երթայ ու կ'այ։

— Ո՛վ բռներ է լապտերը։

— Միտակ նշոյլը կը տեսնեմ . . . : Ա՛հ, կը մօտենայ . . . կը խօսին։

— Ո՛վ է խօսողը։

— Մտիկ ըրէ . . . մտիկ ըրէ . . . Քաղսան է։

— Ի՞նչ կ'ըսէ։

— Ա՛յլ թէ թէ երեսունին ոտքն աղէկ բռնեն։

— Ա՛հ, կը նային, մեր պատուհանին կոթնած երեսունն տունը տանն ստօջուան աղբու կը հանեցին։

- Հինակ ալ բան մը չեմ լսեր :
- Եւ ի՞նչ ըրին եհարանը , հինակ :
- Չեմ կարող ալ տեսնել . . .
- Բան մ'ալ չէս լսեր :
- Ո՛չ . . . :
- Աստուած իմ , կարելի է որ , Գրանատուա , պատուհանէն Մարտիակի խօսքը մտնելու համար . . . եհարանն անած ըլլան :
- Շատ կարելի է :
- Եթէ քիչ մը վանդակը բանայիր որ տեսնեմ . . . :
- Չեմ համարձակիր . . . :
- Շատ քիչ . . . :
- Ո՛հ , չէ՛ , չէ՛ : Թէ որ մայրս տեսնէ :
- Գուրն այնչափ մութ է որ վառնդ չկայ . . . :
- Գրանատուա , թէեւ ակամայ , քրոջը փափաքը կատարեց , վանդակը կէս մը բացաւ և նայեցաւ :
- Ան , եղբայր իմ — ըսաւ Ամանախն երկիւղը զսպելով և մատերուն վրայ քայելով եղբօրը մտեցաւ :
- Ապտերին լուսէն — ըսաւ տղան — Քաղաքը կը տեսնեմ որ եհարանին ոտքը բռնե՞ր է . . . Մարտիակի պատուհանին կա լծնցուցին :
- Եաքը :
- Նիզօլա եհարանէն ՚ի վեր կ'եհնէ , և ստաքարը ձեռքն է , կը նայիս որ կը շողայ . . . :
- Ա՛հ , դեռ չէք պատկիր և մեղի կը լրտեսէք — դռնից յանկարծ որբեարին , դրսէն Գրանատուաին և քրոջն ուղղելով խօսքը : Խոհանոցը մտնելու միջոցին կիսբաց վանդակին մէջէն եհող նշոյլը դիտե՞ր էր :
- Խեղճ տղաք իրենց լոյսը մարելու մտցեր էին :
- Ահա , հինա վեր ձեր քովը պիտի դամ — յարեց որբեարին ստակաի ձայնով մը — հինակ ձեր քովը պիտի դամ , սղտիկ լրտեսներ :
- Ահա այս դէպքերն անցան Ռավածէօր կողմն այն օրուան առջի օրն որ արիկն Սէրաֆէն Գրէօր - ար - Մարին այն սեղ պիտի տանէր :

Գ Լ Ո Ւ Խ Ը

Կ Ա Ջ Մ Ի Կ Յ Ո Ւ Ն Մ Ը

Բասա՛՛ Գրաարի ըսուածը՝ որ՝ թէեւ Բարիդի կեդրոնն է , խուարին ու քիչ ծանօթ անցը մ'է , մէկ կողմէ Գրավէրսիէր - Սէնդ - Շնօրէ փողոցը կը յանդի , միւս կողմէն Սէն - Կիյօմի հրատարակն : Այս խոնաւ , սղմուտ , մթին , տխուր գոլհին մէջ տեղն՝ ուր դրեթէ երբէք արևը չթափանցեր , կաղմիկ տուն մը կը բարձրանար : (Ռամկօրէն կաղմիկ կը ստէր վարձքը շատ անսն ըլլալուն) : Հին տախտակի մը վրայ կը կարգացուէր . Ապա՛՛ խոնցեր ու քահլիճնէր . մութ ուղիի մ'ալ կողմը՝ մթնադոյն մթերանոցի մը գուռը կը բացուէր , և սովորաբար այն սեղ կը բնակէր այս կաղմիկ տան դիտուող վարձուորը :

Այս մարդը՝ որուն անունը ստէպ Ռավածէօրի կը ըն յիշուեցաւ , Միքո կը կոչուի . հին երկաթ կը ծախէ յայտնապէս , բաց զաղանի կը դնէ և կը սրահէ գողտնի մետաղներ , ինչոյէս երկաթ , կապար , պղինձ և անագ : Եթէ ըսէք միայն որ Միքո Մարտիակներու հետ առևտրաւ կ'ան և Բարեկամիան յարարեցութեան մէջ էր , իր բարոյականութեան վրայ բաւական ճշգրիտ կարծիք մը տուած կ'ըլլանք : Երգալի՛ հետաքրքրական և միանգամայն զարհուրելի իրողութիւն մը կայ , այս է , զաղանի յարակցութիւն մը , հարգողականութիւն մ'որով Բարիդի բոլոր չարազորձնեցն իրարու հետ կը կապուին : Հասարակօրքը բանտերն ընդարձակ օթեաններ են՝ ուր անգուլ կը վխտան և անկից գուռս կը յորդեն ապականութեան աշիքներ որ փոքր առ փոքր մաշտաբարձ կ'ապտտակին և արհեստի քանդ ու աւեր կը գործեն :

Հայր Միքոն յիտան տարու խոշոր մարդ մ'է . դէմքը ստորին ու խորամանկ , քիթը սրալարուտ , այտերը գլին լծոյր , ջրաղուէտնիի գլխարկ մը կը կրէ և կանաչադոյն հին վտառակ մը կը հագնի . ձուլածոյ փոքրիկ ուռանի (բօժե) մը վերէն՝ ուր կը ստաքայ լծուող զանազան մը կը տեսնուի սրտին կարծ , անկից կախուած են բացակայ գանուղ անեցիկներուն խոցիւրուն բանալիները : Փողոցին վրայ բացուող առջի սրտուհաններուն ապակիներն այնպէս մը ներկուած են (և այս ալ դիտմամբ) որ կրպակին մէջ անցածը գրակն չեն կրնար տեսնել :

Այս ընդարձակ մթերանոցին մէջ կը տիրէ սառսիկ մթութիւն մը . սեռակ ու տամուկ պատերէն կերպ կերպ խոշոր ու երկայն ժանդոտ շղթաներ կախուած են . հողը դրեթէ բոլորովին անհետ եկած է երկաթի ու ձուլի դէզադէզ բեկորներուն ներքե :

Մասնաւոր կերպով մը դրան զարնուած երեք հարուած , վարձատուր — փերեզակ — դողակցին ուշադրութիւնը դրաւեցին :

— Կէրս մտիր . — գոչեց նա :

Զարնողը ներս մտաւ :

Այս էր Կիզօլա , զիտատեալին որբւարիին որդին : Շատ դուռնատ էր . իր դէմքն առջի օրէն աւելի չարագուշակ կ'երևէր , և սակայն հետեւեալ խօսակցութեան ժամանակ պիտի տեսնենք որ տեսակ մ'աղմկալի զուարթութիւն մը պիտի կեղծէ : (Այս տեսարանը կ'անցնէր աւազակին իր Վարսիալ եղբօր հետ ունեցած կռուին հետեւեալ օրը :)

— Ա՛հ , դու ես , բարի պտուղ . — ըսաւ փերեզակը մտքմտօրէն :

— Հան , ես եմ , հայր Միքու . քեզի հետ առուստուր ընելու եկայ :

— Ուրեմն դուրը դոցէ . . . դուրը դոցէ . . . :

— Բայց շունս և սայլակս դուրսն են . . . ապրանքին հետ . . . :

— Ի՛նչ է բերածդ , կոթոյ կոպար :

— Ո՛չ , հայր Միքու :

— Մտաղի կտորներ են . հիմակ շատ կը վնասուին . դու ալ չես աշխատիր . . . կարելի է կործարուիլ է (երկաթ) :

— Ձէ , հայր Միքու . կործարուիլ է (պղինձ) . . . չորս քծուար . . . գոնէ հարիւր յիսուն լիպրէ պիտի քաշէ . շնոս բոլոր քաշած բեռն է :

— Գոնս կործարուիլը բեր որ կշտենք :

— Պէտք է որ դու ալ օգնես ինձ , հայր Միքու . թեւ կը ցատի :

Եւ երբ այս աւազակը Վարսիալ եղբօրը հետ ունեցած կռիւը յիշեց , դէմքն աստելութեան և վայրադ ուրախութեան զղայցում մ'արտայայտեց , իբր թէ արդէն իր վրէժը լուծած ըլլայ :

— Ի՛նչ ունիս թեղ , սողաս :

— Ո՛չ ինչ . . . քիչ մը ձմեռեցաւ :

— Պէտք է երկաթի կտոր մ'աղէկ տարցնել , ջրի մէջ թաթխել , և թեղ այս եռացող ջրին մէջ խօթել , երկաթ վաճառողի դեղ է այս , քայց ընտիր է :

— Շնորհակալ եմ , հայր Միքու :

— Ելի՛ր , երթանք սա պղինձը բերենք , քեզ օգնեմ , ծոյլ :

Երկու անգամուն՝ խոշոր գամիտէ մը քաշուած սայլակի մը քծուարները կրակը բերին :

— Այդ սայլակը աղէկ գտեր ես — ըսաւ հայր Միքու , և առատաղին մէկ գերանէն կախուած կշտի մ'երկու ահաղին փայտի նժարները շակեց :

— Հան , երբ բան մ'ունենամ կրելու , շունս ու սայլակը նառակիս մէջ կը դնեմ , և երբ գետալին երնեմ՝ կը լծեմ : Կառապան մը կարելի է խօսի , բայց շունս լեզու չունի :

— Տունս ինչպէս են , աղէկ են — հարցուց գողակիցը պղինձը կշտելով . — մայրդ ու քրորդ քաջաւորջ են :

— Հան , հայր Միքու :

— Հանպա սղաք :

— Տղաք ալ աղէկ են : Հապա Անտրէ եղբօր որդիդ ո՛ր է :

— Անոր խօսքը մի ընդեր ինձ . երէկ կեր ու խումի էր . Պարպկեմու կրօ — Պուաղէօն զանի բերին , և այս առտու տունս եկաւ . արդէն արշաւանքի դնաց , թղթատան մեծ դիւանը , Ժան — Ժաք — Ռուսօի փողջը : — Հապա Վարսիալ եղբայրդ միշտ անանկ վայրենի է :

— Շիտակը կ'ուզես , չգիտեմ :

— Ի՛նչպէս չգիտես :

— Ձէ — ըսաւ Կիզօլա անտարբեր կերպարան մ'առնելով — երկու օրէ վեր զինքը տեսած չունինք . . . կարելի է նորէն անտառները դնաց որսորդութեան , միայն թէ իր նաւակն որ շատ հին էր . . . գետն խորատուգած չըլլայ , ինքն ալ միատեղ . . . :

— Մեծ ցաւ մը չէիր զգար , կախալ , ինչու որ եղբայրդ աչքիդ փուշ մ'էր :

— Իբրեւ է . . . ամէն մարդ այս ինչ կամ այն ինչ բանին վրայ իր թուիքն ունի . . . : Քանի լիպրէ պղինձ կայ այդ տեղ :

— Աչքդ ճիշտ կը չափէ . . . հարիւր քառասուն ութ լիպրէ է , սողաս :

— Եւ ինչ կը պարտաւորիս հիմակ ինձ :

— Ճիշտ երսուն Փրանք

— Ի՛նչ , երսուն Փրանք մի , երբ պղնձին լիպրէն քսան սու է , երսուն Փրանք :

— Երտուն Տինդ Ֆրանք բանք, բայց ձայն մի հաներ, թէ ոչ կրողին կամ քեղ, սղկնձդ, շունդ ու սայլակդ :

— Բայց, հայր Միքու, չափէն աւելի կը նենդես զիս, ըրածդ խեղ չէ :

— Արնաս հաստատել թէ ինչ կերպով այս սպրանքը քուկդ է, և այն ատեն լիպրէն տան հինդ սու կամ :

— Միշտ մի և նոյն խաղը . . . : Երարու կը նմանիք հաւած, դուք ամէնքնիդ, հանած վարած աւազակներ : Միթէ կարելի է այսպէս քերթել բարեկամները : Բայց այս բառ չէ . թէ որ փոխարէն սպրանք առնում, դո՛ւք քիչ մը կը խնայես զիս :

— Հարկաւ փոխարէնը պէտք է : Ի՞նչ կ'ուզես . նաւակներուդ համար շղթաներ և կեռիներ անշուշտ :

— Ամենեւին, ուզածս չորս հինգ ամուր թիթիղէ տախտակներ են, իբր փեղկեր ծածկելու համար :

— Բու ուզածդ ունիմ . . . չորս զիծ խոտ . . . հրացանակի մը դնդաւ կը չկրնար զայն ծակել :

— Ճիշտ . . . այդ է ուզածս . . . :

— Ի՞նչ մեծութիւն ունենայ :

— Բայց . . . բոլորն, եօթ ութ քառակուսի ոտք :

— Լաւ, ուրիշ ինչ բանի պէտք ունիս :

— Երեք երկաթեայ ձող երեք չորս ոտք երկայն և երկու բլծամաս քառակուսի :

— Անցածն օր փեղկի մը վանդակը քակեցի, ձեռնացի պէս պիտի յարմարի քեզ . . . ուրիշ . . . :

— Երկու հասո յօդակապ և դո՛ւստիակ մը, երկու ոտք քառակուսի խուսի մ'ըստ հաճոյս յարմարցնելու և դոյրելու համար :

— Ասիտը մ'ըսել կ'ուզես :

— Չէ, խուսի մը . . . :

— Չեմ կրնար հասկնալ թէ խուսին ինչ բանի կը ծառայէ քեզի համար :

— Արելի է, բայց ես կը հասկնամ :

— Լաւ, ուրեմն ուզածդ ընտրէ, այդ տեղ խել մը յօդակապներ ունիմ . . . : Եւ ուրիշ ինչ բանի պէտք ունիս :

— Ուրիշ բան չեմ ուզեր :

— Բոլորն այս է :

— Այս ամէն սպրանքը պատրաստէ, հայր Միքու, ի դարձիս սիտի առնում. գետ ուրիշ տեղեր ալ երթալիք ունիմ :

— Սայլակիդ հետ : Ինձ նայէ, խաբուսիկ, անոր յատակը ծրար մը տեսայ, անշուշտ հաճաքած մը պիտի ըլլայ այդ ալ, շատակեր դու, զոր հասարակչի մատանէն խորած ես :

— Ինչպէս որ կ'ընես, հայր Միքու, բայց քու բերնիդ համար չէ : Երկաթներուս համար սպասել չտան զիս, ինչու որ կէսօրէն առաջ պէտք է որ կողին դանուխմ . . . :

— Անհոգ եղիր . ժամն ութ է, թէ որ երթալիք տեղդ հետու չէ, ժամէ մը կը դառնաս անշուշտ, ամէն բան պատրաստ պիտի գտնես, ստակդ ու սպրանքդ . . . կ'ուզես կաթիլ մը անկել :

— Հարկաւ . . . իմ իրաւունքս է . . . :

Հայր Միքուն՝ հին դարանէ մը շիշ մ'օղեջուր, գիզած բաժակ մը, անկոթ թաս մ'առաւ և լեցուց :

— Ահա՞ցդ, հայր Միքու :

— Բու կենացդ, տղայ, և տանդ կիներուն :

— Շնորհակալ եմ . . . : Խալ կազմիկ օթեւանդ կը բանի՛, հո՛ս :

— Քիչ շատ . . . : Միշտ քանի մը վարձուորներ ունիմ որոց համար կը վարձանամ որ ռատիկանին մարդը պիտի դայ . . . բայց վճարող են :

— Ինչո՞ւ համար :

— Ի՞նչ սպուշ ես . . . : Երբեմն ծախու առած կերպովս կը վարձեմ . . . վարձուորներուն անցալիք չեմ հարցներ, ինչպէս որ քեզնէ ալ վաճառալիք չեմ ուզեր :

— Հասկցայ . . . : Բայց ասոնց այնչափ սուղ տուղ կտաս որչափ որ իզնէ աճան կը գնես :

— Հարկաւ, պէտք է պակասը լեցնել . . . : Հօր եղբորորդի մ'ունիմ որ Սէնդ - Օնօրէ փողոցը կազմիկ տուն մը կը պահէ, իր կիներ ալ ժիր կարուհի մ'է որ մինչև քսանի չափ դօրծուհի կը բանեցնէ թէ իր տունն, և թէ ամէն մէկուն սենեակը :

— Ինձ նայէ, ծերուկ վարպետորդի, անոնց մէջ սպասելիքն ալ պիտի գտնուին անշուշտ :

- Հարկաւ . երկու երեք հատ կան որոց զործ բերելին տեսայ . . . :
Շուտիկ , ինչ սիրուն են : Մանաւանդ փորրիկ օրիորդ մ'որ իր առան-
ձին սենեակը կ'աշխատի , շարունակ կը ծիծաղի և Ռիկօլէդ կը կոչուի
. . . : Աստուած իմ , Աստուած , մեղք որ քսան տարեկան չեմ , անօ-
րէնս :

- Տե՛հ , հայր Միքու , կրակը մարե , թէ ոչ հրդեհ կայ պիտի ը-
սեմ :

- Բայց պարկեշտ է . . . մանչուկ . . . պարկեշտ է . . . :
- Այս է , աւանակ . . . կորիք . . . և կըսէիք թէ հօր եղբորորդիդ . . . :

- Հատ աղէկ կը դարձնէ իր տունը , և որովհետեւ այն պղտիկ Ռի-
կօլէդին ջրէն է . . . :

- Պարկեշտ :
- Այո :
- Աւանակ :

- Անցադիր կամ վկայադիր ունեցող վարձուորներ կը վնասուէ . . . բայց
երբ տեսնէ որ չունին , քանի որ զիտէ թէ ես իրեն չափ խղճահար
չեմ , այն յաճախորդներն ինձի կը դրկէ :

- Եւ անոնք ալ անոր համեմատ կը վճարեն :
- Միշտ :

- Զրտես որ անցադիր չունեցողները գողերու խճօրէն են : ✓
- Է՛հ , բնաւ : Շիտակը կ'ուզես , հօր եղբոր որդիս՝ քանի մ'որ
կայ , վարձակալուհի մը զրկեց ինձ . . . կրողին բերանն երթամ եթէ
բան մը կը հասկնամ . . . : Անկամ մ'ալ բաժակները պարսկեր :

- Գէշ չըլլար . . . հեղուկը լաւ է . . . : Ահնայդ , հայր Միքու :

- Բու կինացդ , մանչուկ : Խօսքս չմոռնամ , կ'ըսէի թէ հօր եղբոր-
որդիս անցածն օր վարձակալուհի մը զրկեց ինձ որոց խեղքս չհամիր :
Երեւակայէ մայր մ'ու իր աղջիկն որ դեղնած ու մաշած կերպարան մը
ունէին . իրենց աւարը թաշկինակի մը մէջ ծրարեր էին . . . լաւ , թէ և
ստորին բաներ կ'երևին , քանի որ անցադիր չունին և կիսամսեայն կը
վճարեն . . . և իրենց տեղէն խուրդի պէս չեն շարժիր . . . դարձեալ ե-
կող դացող չունին . . . աղբարիկ . . . մարդ տեսած չունին . . . : Եւ սա-
կայն , եթէ ասանկ նիհար և գունատ չըլլային , երկու բարի պտուղ կի-

ներ կը դառնային , մանաւանդ աղջիկը շատ շատ տան հինգ կամ տան
վեց տարեկան է . . . ճերմակ է , ճերմակ նապաստակի պէս , սառնու
խոշոր սև աչերով . . . հանած վարած . . . ինչ աչեր , ինչ աչեր են ա-
նոնք :

- Հիմակ նորէն կրակ պիտի կարիս . . . : Եւ այն երկու կիներն ինչ
կ'ընեն :

- Ըսի . քեզի որ անոնց ըրածին խեղքս չհամիր . . . պարկեշտ կիներ
ըլլալու են , և սակայն անցադիր չունին . . . : Այս ալ կայ որ ստանց
հասցէի զիրեր կ'ընդունին . . . կ'երեւի որ իրենց անունը գրուելու անուն
մը չէ :

- Ինչպէս :

- Այս առտու իմ Անարէ քեռորդիս մնայուն թղթատունը զրկեցին
Ք . Չ հասցէին ուղղուած նամակ մը փնտոտելու համար : Աւանակը
Նօրմանտիակէն պիտի գայ . . . Օպիէ ըսուած աւանկ մը : Այս տատերը
թղթի մը վրայ զրեցին որ Անարէն տոյն ծանօթութիւնը սալով գերը
ստանայ . . . : Կը տեսնես որ առ երեսու ոչ ինչ արարածներ կ'երևին ,
պնայիսի կիներ որ Ք և Չ անուն կ'առնուն . . . բայց և այնպէս , մար-
դու հետ չեն տեսուիր :

- Միթէ վարձն օրին կը վճարեն :

- Եւ կարծես թէ ինձի պէս ծեր կապիկ մը պոչէն կը բոնուի՞ : Ա-
ռանց վատարանի գահլիճ մը վարձու բունեցին , որուն համար կիսամս-
եայն կանխիկ քսան Փրանք կ'ընդունիմ : Կարելի է որ հիւանդ են , ին-
չու որ երկու օր կայ որ վար իջած չեն : Անշուշտ ահալութենէ հի-
ւանդ եղած չեն , վասնզի քանի որ եկեր են հոս , եւ կարծեր որ կրակ
վտած ըլլան կերակուր մ'եփելու համար : Բայց նորէն սա խօսքիս կը
դառնամ . մարդ տեսած չունին . . . նոյնպէս անցադիր . . . :

- Թէ որ ասանկ տունուորներ ունիս , հայր Միքու . . . :

- Կզան ու կ'երթան . . . : Եթէ անցադիր չունեցող մարդերու սե-
նեակ կը վարձեմ , զխցիր որ մեծափարթամ վարձուորներ ալ ունիմ ,
այս միջոցին երկու ուղևոր-վաճառական , թղթատունի ցրուիչ մը ,
Ադրերու սրճարանին երգեհոնապետը , և հասասէր կին մը , ամէնքն
ալ պարկեշտ հողիներ են , ահա ասոնք տանս անունն անսրատ պիտի
պահեն և եթէ ոտախիտն ամէն բան մտէն տեսնելու ենէ . . . ասոնք
զիշերուան տունուորներ չեն , այլ բաց արևու տունուորներ :

- Երբ արևն այս անցքին մէջ զարնէ հարկաւ, հայր Միրու:
- Խեղկատանկ... անգամ մ'ալ անկեղը...:
- Բայց այս վերջինն է, պէտք է որ ճամբայ եղնեմ...: Աղէկ յիշեցի, արդեօք Բօպէն Խոշոր-Ազդը գեռ այս անդ կը բնակի:
- Ա՛հ, քոր, մայր և աղջկին բռնած խցին մօտ: Արծեմ թէ իր բանաստակը ընկուց... և փուշ մը չունի:
- Աչքդ բաց, քեզի կ'ըսեմ, թիարանէն փախած է:
- Քաջ դիտեմ, բայց չեմ ուզեր զանի ճամբել: Արծեմ թէ նոր դարան մը կը պատրաստեն. անցած իրկուն՝ պղտիկ Գօրդիլյարը, Պրա-Ռոմիկն տղան, Պարսկիցոնի հետ այս սեղ եկաւ զանի տեսնելու համար...: Աստեմ որ իմ՝ բարի տունորներուս փորձանք մը չհասցնէ այս անօրէն Բօպէնն. ուստի կիսամեծայն ըննալուն պէս... անոր ճամբայ սիտի տամ, բոնիով թէ իր դահլիճը դետպանի մը, կամ ախկին Սէնդ-Իլաֆօնոս հաստուտիս վարձու տալի:
- Հաստուտ հի՛ մը:
- Ի՛նչ կարծես. փողոցին վրայ երեք տնեակ և դահլիճ մը բռնած է, հա՛... նոր կահ կարասիով, նոյնպէս իր դայեկին համար ձեղնաշարի մը... ու թառն Ֆրանք ամբար... վճարողն ալ հօրեղբայրն է, կանխիկ և երբ գեղէն դառնայ անոր պատրաստ խուց մը կտայ: Հիմակ, իր գեղը կրնայ բուսիլ, իբր թէ Ախիլէն փողոցը, Սէնդ-Օնօրէ փողոցը, կամ այն կողմի շրջականերն ըլլայ:
- Հասկցայ...: Հաստուտ հի է, որովհետեւ ծերուկն անոր հասցեթ կտայ:
- Լուէ՛, անպիտան... ահա դայեակը կգայ...:
- Բաւական տարեց կին մը՝ կասկածելի մաքրութեամբ գողնոց մը դրած՝ Միրուին վաճառանոցը մտաւ:
- Հրաման մ'ունիս, ախկին Շարլ:
- Հայր Միրու, քեռորդիդ հոս չէ՛:
- Սեծ թղթատունը դնայ, հիմակ կը դառնայ:
- Պ. Պատինօ կ'ուզէր որ սա գիրն իր հասցէին տանի. պատասխանին չտրասեր, բայց ստիպողական է:
- Քատորդէ մը ճամբայ կ'ենէ, ախկին Շարլ:
- Թո՛ղ շուս ընէ...:

- Ահ հոգ եղիր:
- Գայեակը դուրս ելաւ:
- Ասի սունուորներուդ մէկուն դայեակն է, հայր Միրու:
- Ի՛՛հ, չէ՛, բլթափառ, հաստուտ հիս դայեակն է, ախկին Սէնդ-Իլաֆօնոսին: Բայց Պ. Պատինօ իր հօրեղբայրն է. երէկ զեղէն դարձաւ - բաւ վարձատուն, որ նամակը կը քննէր. սարս հասցէն կարողալ յարեց. - Տես անգամ մը, ինչ նշանաւոր ծանօթներ ունի: Իրաւունք չունէի՛ ըսելու թէ ունեւոր մարդիկ են, դերկունի մը կը գրէ:
- Ա՛հ, բա՛:
- Չե՛ս հաստար, աչքովդ նայէ: Աս պարտն գերբնոս որ Սէն-Բը-ժի, Շայօ փողոց... շար արեւոյտակուն... էր յետոք...: Արծեմ թէ երբ մարդ իր առնը հաստուտ կիսներու կը վարձէ, որ զերկամներու նամակ զրոյ հօրեղբայրներ ունի, ասան վերի կողմը նստող վարձուորներուն անցաղ իրները կրնայ չզննուել, հըմ՛:
- Հարկաւ...: Ահա կ'երթամ, հայր Միրու, քիչէն կը դառնամ: Շունս սայլակին հետ դբան պիտի կապեմ, հետիոտ պիտի երթամ բերելու ինչ որ պիտի բերեմ...: Ապրանքս ու ստակս պատրաստէ... ար դալուս պէս ճամբայ եղնեմ:
- Ահ հոգ եղիր. չորս թանակէ տախտակի իւրաքանչիւրն երկու քառակուսի ոտք. երեք երկաթէ ձող, երեք ոտք, և խուփին համար ալ երկու յօդակապ: Այս խուփը դարմանալի կը թուի ինձ, բայց ինչ և է... այն է բոլոր ուղածդ:
- Այն, հասցա սամիս:
- Ստակդ ալ կ'առնու... բայց ինձ նայէ, չգացած, պէտք է որ ըսեմ քեզ... դպէ՛դ վեր... քեզ կը քննեմ...:
- Լու, ի՛նչ կայ:
- Չգիտեմ... բայց երեսէդ կ'երեւի որ բան մ'ունիս:
- Ի՛ս:
- Այն:
- Խեղդ ես... եթէ բան մ'ունիմ... այն է որ... անօթի եմ:
- Անօթի ես... անօթի ես... կարելի է... բայց կարծես թէ ուրախ դուարթ երեւի կ'ուզես, և ներսի դիդ բան մ'ունիս որ քեզ կը կծէ և կ'եղիէ... որդի մը կայ ինչե՛ր անպիտան զեջ, ինչպէս որ կ'ընէ խիկարն...

• և մարմնջտայրու համար 'ի հարկէ սիրադ քերթել պէտք է... ինչու որ կրօնասէր չես :

– Քեզ ըսի որ յիմար ես, հայր Միքու – յարեց 'սիդօլս ակամայ սարտելով :

– Այսպէս երեցաւ ինձ որ այս խօսքիս դողդ բռնեց, իրաւ որ :

– Թեխ ցաւէն է :

– Աւրեմն գեղադիրս մի մոռնար, դարմանդ կը զանես :

– Հնորհակալ եմ, հայր Միքու... քիչէն պիտի դառնամ :

Եւ ոճրագործը դուրս ելաւ :

Գողակիցը՝ պղնձէ քծուարներն իր դարանին ետին պահելէն ետև՝ 'սիդօլսին ինդրած այլ և այլ իրերը կուտելու կը սրարայէր, երբ նոր մարդ մ'իւ կրպակը մտաւ :

Շուրջ յիսուն տարու մարդ մ'էր, նուրբ և խորագէտ գէմբ ունէր, ալէխառն թանձրախիտ կիս մօրուս մը մանտիկ ձևով, և ոսկեղէն ակնոյններ. բաւական մաքուր հագուեր էր, իր գորշ թիկնոցին լայն թեւերն որ սև թաւշէ եղբներ ունէին, իր յարգեգոյն ձեռնոյններն երևան կը հանէին : իր կօշիկներն ալ անշուշտ առջի իրիւս ջնարակով փայլեցուցեր էին :

Այս էր ահա Պ. Պատինո, հասատէր կնոջ հօրեղբայրն, այն տիկին Աէնդ-Իլաֆօնայն, որուն ընկերային կացութիւնը հայր Միքուին գոռօղութիւն ու սարահոլութիւն կ'ազդէր :

Ընթերցողը կը յիշէ թերևս որ Պ. Պատինո, հին իրաւարան մ'որ իր դասակիցներէն վճռուեր՝ և նոյն պահուն գրթի մը և կասկածելի գործերու գործակատար մ'էր, Պ. տը Կրատնին լրտեսութիւն կ'ընէր և այս գեապանադէտին բաւական ընդարձակ և ճշգրիտ ծանօթութիւններ հաղորդէր էր սոյն պատմութեանս այլ և այլ անձերուն վրայ :

– Տիկին Շարլ նամակ մը չտուամ քեզ հիմակ տեղ մը դրկելու համար – ըսաւ Պ. Պատինո բնակապետէն :

– Այո, պարոն... քնորդիս ուր որ է պիտի դայ... և զայն պահակէ մը կը դրկեմ հասցէին :

– Հարկ չէ, տուր ինձ այն նամակը... միտքս փոխեցի, ես անձամբ պիտի երթամ՝ Աէն-Բըմի կամին բնակարանը – ըսաւ Պ. Պատինո սոյն անշուսպետական անունը դիտամբ և մեծամտութեամբ շեշտելով :

– Ահա առիկ նամակը, պարոն... ուրիշ հրաման մը չունիք :

– Չէ, հայր Միքու – ըսաւ Պատինո պաշտպան երեսով մը – բայց քեզ յանդիմանութիւններ ունիմ ուղղելու :

– Ի՞նչ, պարոն :

– Խիտ ծանր յանդիմանութիւններ :

– Ի՞նչպէս, պարոն :

– Անշուշտ... Տիկին Աէնդ-Իլաֆօնա շատ սուղ կը վճարէ առաջին դատիկնոյ. իմ քեռ աղջիկս այնպիսի վարձուր մ'է որ ամէն տեսակ սրատկատանքի արժանի է. այս սուսը բնակելու աւելի յարմար դատեց, վասն զի դեսպակներուն աղմուկն ու բոմբիւնը չսիրեր, և կը յուսար որ դեղի պէս բնակի այս տեղ :

– Եւ իրօք այնպէս է, աւանի մը կը նմանի տունս : Գուք քաջ պիտի հասկնաք այս բանս, պարոն, քանի որ դեղը կը բնակիք... այս տեղ կարծես թէ ճշմարիտ աւան մ'է :

– Աւան մը... ի՞նչ աղւոր աւան... դժոխային վայնասուն մը կայ միշտ :

– Սակայն ասկից աւելի հանդարտ տուն մը գտնել անկարելի է. ձեր քեռ աղջիկն վրայ կը բնակի՝ Այրերու սրճարանին նուազապես և ուղևոր-վաճառական մը... ասոնց վրայ ուրիշ ուղևոր վաճառական մը : Ասոնց վրայ կը դանուի... :

– Իմ խօսքս այդ անեցիներուն վրայ չէ, շատ հանդարտ և սրտկեշտ են անոնք, իմ քեռ աղջիկս կը խստովանի. բայց չորսորդ գատիկներ խոշոր կալ մը կայ որուն դեռ երէկ հանդիպեցաւ տիկին Իլաֆօնա սանդղին վրայ զինով, վայրենիի պէս կ'աղաղակէր, և սիրտը սաստիկ խաղաց, այնչափ ահ ու դողի ելեր էր... : Եթէ կը կարծես թէ այս տեսակ տառնորներով տունդ աւանի մը կը նմանի... :

– Պարոն, կ'երգում որ առ թի մը կ'սպասեմ՝ այն խոշոր կաղը սուսնէն դուրս վճռուելու համար, վերջին կիսամետայն կանխիկ վճարեց, թէ ոչ մինչև հիմակ դացած էր :

– Պէտք չէր իբր տունուր ընդունիլ զանի :

– Բայց յուսամ որ տիկինն ուրիշի վրայ գանդատ մը չունի. փոքրիկ թղթատան ցրուիչը կայ որ պարկեշտ մարդերու ծուծն է, և անոր վերը խոշոր կաղին խցին մօտ՝ կին մը կը բնակի իր աղջկան հետ որ խլուրդի պէս իրենց տեղէն չեն շարժիր :

— Նորէն կըսեմ որ տիկին Էլտփօնս մինակ խոշոր կտղէն գանդատ ունի . սանն խալիկին է այն թշուառականը . . . : Քեզ հիմնցէն կըսեմ, թէ որ պահես սուսը զանի , բոլոր պարկեշտ մարդիկ պիտի ձղեն երթան :

— Անհոգ եղիք ճամբայ պիտի դնեմ զանոնք . . . անորմէ պէտք չունիմ :

— Եւ աղէկ կընես . . . ապա թէ ոչ սուսնէդ պէտք պիտի չունենանք :

— Այդ իմ բանին չլար . . . : Ուստի , պարոն , բռնեցէք թէ խոշոր կտղն արդէն մեկնեց է , վասն զի չորս օր ունի միայն :

— Չորս օրն ալ շատ է , վերջապէս դու գիտես . . . : Թէ որ նորէն գոռու գոչում ձդէ , տիկին Սէնդ—Էլտփօնս տունէն պիտի երնէ :

— Անհոգ եղիք , պարոն :

— Ատմար քու շահուդ համար կըսեմ , սիրելիդ . . . ըսածէս օդուտ քաղէ . . . ինչու որ խօսք մը միայն ունիմ — յարեց Պ . Պատինս պաշտպան երեսով մը :

Եւ դուրս ելա :

— Հանրի է ըսել որ այն կիներու նորարոյս օրիորդն , որ այնպէս սուսանձնակի կ'ապրէին , նոտարին ընչապիլով թեան նահատակներն էին :

Ընթերցողն ասոնց բնակած ախտը սենեակը պիտի տանիք :

Գ Լ Ո Ւ Խ Թ

ՉԱՐԱՆՔԱՐԻԹԵՆ ՉՈՒՆԵՐԸ

 դերկոմնին հայրն իշխանին հետ սերտիւ կապուած էր . զբարհիւն այն
 ժամանակ նորահասակ օրիորդ մ'էր, և Պ. ար Սէն-Քլոմէ հայր, որ
 զանի շատ կը սիրէր, հետն այնպիսի ընտանի կերպով մը կը վարուէր
 իբր թէ իր աղջիկն ըլլար : Այս պարագաները Սիմոնէն, իշխանին մտե-
 րիմ ծառայէն իմացայ . կրնամ առանց խղճի խօսիլ, վասն զի սրտմեղիք
 արկածս ժամանակին բոլոր Քարիդի ժողովրդեան բերնին զրոյցն էր :
 Թէև վախճան տարեկան է, Պ. դերկոմնին հայրն երկաթի բնաւորու-
 թեան աէր մարդ մ'է, առիւծի արիւթ թիւն ունի, և այնպիսի արդա-
 լասիրութիւն մ'որուն առասպելական անուէր տալու պիտի համարձա-
 կիմ . զրեթէ ոչ ինչ չունէր, և կրութեան աւեր էր լսի սէրէն շար-
 ժեալ Պ. դերկոմնին մայրը՝ բաւական հարուստ անձ մը և ասոր ստա-
 ցուածն էր այն միջիտնն ուրուն հարուստ հանդիսաասես գանուէրու պա-
 սիւն ունեցանք :

Եւ Պ. Պօյէ խոնարհութիւն մ'ըրաւ :

Էտվար ալ անոր հետեւեցաւ :

— Ամուսնութիւնն երանաւէտ եղաւ մինչև այն միջոցն որ Պ. դեր-
 կոմնին հայրը գտաւ, կ'ըրես, զիպուածով աղետալի նամակներ՝ որ

բայէ ՚ի բայ կը հաստատէին թէ՛ իր մէկ տարակարգութեան ատենն՝ ամուսնութենէ երեք չորս տարի ետքն՝ իր կինն լեհացի կոմսի մը համար փափուկ տկարութիւն մ'ունեցեր է :

— Այս բանս ստեղ կը պատահի Ղեհացիներուն : Երբ Պ. Սէն-Վալ մարքիզին տունը կը դանուէի, մարքիզուհին . . . կատաղի կին մը . . .

Պ. Պոյէ իր ընկերն ընդմիջեց :

— Պարսաւոր ես, սիրելի Էտիլար, խօսեղէն առջ՝ մեր եղևելի դերդաստոններուն ինամութիւնները դիմնալ, թէ ոչ անձուսի սխալ մտքներու կ'ենթարկիս :

— Ի՞նչպէս :

— Սէն-Վալ մարքիզուհին քոյր է Մօնպրիզօն դրօն՝ որուն քով մանեկ կ'ուզես . . . :

— Ա՛հ, կրո՞ղ :

— Մտածէ անգամ մը թէ ի՞նչ զէշտապարտութիւն պիտի դործէ իր եթէ այդ ոճով խօսէիր նախանձուտ և բանասրիւտ անձերու առջև . քսան չորս ժամ անգամ տունը չէիր մնար :

— Ստոյգ է, Պոյէ . . . պիտի ջանամ ինամութիւնները դիմնալ :

— Խօսքս կը շարունակեմ . . . Պ. դերկոմսին հայրը՝ սասն երկու կամ տասն հինգ տարուան ամուսնութենէ ետև՝ վեր հանեց որ Ղեհացի կոմսէ մը անարդուեր է : Գժբողոսութիւն ըսեմ կամ բարեբողոսութիւն՝ Պ. դերկոմսը ծներ էր իր հօրը . . . կամ լաւ ես ըսեմ Պ. աը Սէն-Բըմի կոմսին այս աղետաբեր ուղևորութենէ ինն ամիս ետքն, այնպէս որ չէր կրնար ստուգել, թէ և հասանախնութիւնն մեծ էր, թէ Պ. դերկոմսը չնութեան ծնունդ է : Սակայն աը Սէն-Բըմի կոմսն իսկոյն իր կնիկէն զատուեցաւ, սնոր բերած հարստութեան և ոչ մէկ սուխ դպիլ ուղեց և պատու ձգեց գնաց ունեցած գրեթէ 80,000 Ֆրանքովը : Թէ և այս նախատիքը սասն հինգ տարի ետքն երևան հանեց, և սրդիք ալ կար, դերկոմսին հայրն իր մէկ ազգական Պ. աը Ֆէրմօնին հետ Ղեհացի հրատարակչին հետքը գտնելու ելաւ, զանի Ղէնէտիի գտաւ, և արտաքին բոլոր քաղաքները սասն ութ ամիս փնտրեցն ետև :

— Ի՞նչ կամակոր մարդ . . . :

— Սասնին ոին ունէր այս մարդը, կ'ըսեմ՝ քեզ, սիրելի Էտիլար . . . Ղէնէտիի ստիպիլ մեհամարա մը տեղի ունեցաւ, որուն մէջ Ղեհացին սպաննուեցաւ : Ամէն ինչ անկեղծօրէն անցեր էր . բայց Պ. դերկոմսին հայրն, ինչպէս որ կ'ըսեն, այնպիսի վայրազ ուրախութիւն մը յայտնեց է Ղեհացին կարեղէր վիրաբորած տեսնելով, որ իր ազգակցը՝ Պ. աը Ֆէրմօն՝ ստիպուեր է զանի բոնի հետ այնիլ մեհամարտութեան վայրէն . . . ըստ որում, կոմսը կ'ուզէ եղբ իր աչքովը անանել տոխին հօգեվարքը :

— Ի՞նչ մարդ, ի՞նչ մարդ :

— Կոմսն ինքը Բարիզ դարձաւ, իր կնկան տունը գնաց, ինքուց անոր որ Ղեհացին սպաննեց է և նորէն ճամբայ ելաւ գնաց : Այն օրէն վեր ոչ կ'իյնը տեսաւ և ոչ որդին, ու Անժէ քաշուեցաւ . ահա այն տեղ կը բնակի, կ'ըսեն, ճիւղաղի մը պէս, իր ունեցած 80,000 Ֆրանքով՝ որ, ինչպէս որ կ'ընաս երեակայել, թեթեցած պիտի ըլլար Ղեհացիին ետևէն ըրած արշաւանքին պատճառաւ : Անժէի մէջ մարդ չտեսնեց, բայց վրայն իր Ֆէրմօն ազգականին կ'ինն ու աղջիկն . և այս Ֆէրմօն ալ քանի մը տարիէ վեր մեռած է : Այլ սակայն բազմը կը հաւրածէ ադն ընտանիքը, վասն զի կ'ըսուի թէ տիկին աը Ֆէրմօնին եղբայրն ալ քանի մ'ամիս առաջ հրացանի տուաւ ըղեղը :

— Հասցա դերկոմսին մայրը :

— Երկար ատենէ վեր կորցս : Ահա այս պատճառաւ Պ. դերկոմսն իր չափահասութեան ատեն իր մօրը հարստութիւնը վայելեց . . . Ուստի կը դիտես, սիրելի Էտիլար, Պ. դերկոմսը ժառանգութեան մասին ոչ ինչ, գրեթէ ոչ ինչ սպասելիք չունի իր հօրը կողմն . . . :

— Ար հարկաւ զանի կատէ :

— Բնաւ զանի չուղեց տեսնել այն դործին երևան գալէն վեր, համարած ըլլալով անշուշտ որ Ղեհացիին որդին է :

Այս երկու անձերուն խօսակցութիւնը հսկայածև և ուշի ուշով փոշտուած սպասուոր մ'ընդհատեց, թէ և հաղիւ թէ ժամը տասն մէկ էր :

— Պարոն Պոյէ, Պ. դերկոմսն երկու անգամ զանգակը հնչեց — ըսաւ հսկան :

Պոյէ կարծես թէ շատ վշտացաւ իր ծառայութեան մէջ թերթ

գտնուելուն, արտործոր ոտք ելաւ և այնպիսի եռանդով ու յարգանքով սպասաւորին ետեւէն վազելոյ՝ որպէս թէ իր տիրոջը տան կալուածատէրն ինքը չէր :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ա

ՆՈՍՍ ՏԸ ՍԵՆ-ԲԸՄԻ

Ըորքը երկու ծամկար որ Պոյէ՝ Էտվարը թողլով՝ Պ. ար Սէն-Բըմիին մօտ գացեր էր՝ երբ այս վերջնայն հայրը Ըայօ փողոցի տան կանազուռը զարնելու եկաւ :

Կոմս ար Սէն-Բըմի թէև տարօք՝ մեծահասակ, դեռ ևս կայտառու կորովի մարդ մ'էր . իր զէմբին դրեթէ պինձի զոյնը զարմանալի հակասարտիւր մը կընծայէր մօրուսին և մաղերուն ձիւնափայլ սպիտակութեան հետ . իր խիտ յօնքն՝ որ մե մնացեր էին՝ կիտովին կ'ըբողէին սուր աչերն, որ իրենց շրջանին մը խորասուզեր էին : Թէև տեսակ մը մարդատեսաց սովորութեամբ դժգին հապուստներ հազեր էր, իր բոլոր անձին վրայ հանգարաւ, հպարտ և պատկառանք ազդող երեւոյթ մ'ունէր :

Իր որդիին տան դուռը բացուելով ներս մտաւ :

Գունապան մ'որ գորշ արծաթահոտ սքնադղեցտ մը հազեր էր, և մաղիւր փոշոտ, ու մետաքսէ գուլքաներով վայելուչ օթեկի մը գրան սեմը երեցաւ . այս օթեական այնչափ յարարելու թիւն ունէր Պ. Բիբլէի ծիտա քարայրին հետ, որչափ որ կարկատէ կնկան մը ասկառը կընայ ունենալ նորաձև ճերմակի գէնի վաճառու հիլի մը պերճ կրպակին հետ :

— Պ. ար Սէն-Բըմի — հարցոյց կ'ունը սուղ ձայնով մը :

Գունապանը պատասխան տալու տեղ՝ քամահեղի զարմանքով մը կը քննէր անձանթին՝ որ ձեռքը հաստ բիր մ'ունէր, սպիտակ մօրուսը, կիսմաշ թիկնոցն և հին փեղոյրը :

— Պ. ար Սէն-Բըմի — կըլինեց կ'ունն անհամբեր, գունապանին լրբերի քննութեանէ զայրանալով :

— Պ. գերկոմսը տունը չէ :

Ե.յս ըսելով՝ Պ. Բիբլէի սղաշածակիցը լայր քաշեց և նշանակական շարժումով մ'անձանթը գուրս եղնելու հրաւիրեց :

— Պիտի սարսեւ՝ — ըսաւ կ'ունը :

Եւ յառաջ բռնց :

— Է՛հ, բարեկամ, բարեկամ, այսպէս տուները չեն մաներ — գոչեց գոնասարնը կ'ունին ետեւէն վազելով և թեւէն բռնելով :

— Ի՞նչպէս, անհոբհ . . . — սրասախանեց ծերունին սպառնալից դէմքով մը, և բիրը վերցնելով — Ի՞նչպէս կը համարձակիս ինձ դպելու . . . :

— Ուրիշ բան ալ պիտի համարձակիմ ընելու, եթէ շուտ մը գուրս չեղնես : Բեղ ըսի որ Պ. գերկոմսն այս տեղ չէ, ուստի կորիւր գնա :

Նոյն պահուն Պոյէ, ձայն ու աղմուկ լսելով՝ տան գրանդին վրայ երեցաւ :

— Ի՞նչ աղմուկ է այն — հարցոյց նա :

— Պարոն Պոյէ, այս մարդն է որ անպատճառ ներս մանել կ'ուզէ . թէև ըսի անոր որ Պ. գերկոմսն այս տեղ չէ :

— Վերջ տանք — վրայ բերաւ կ'ունը Պոյէին գտնալով՝ որ մօտ եկեր էր. կ'ուզեմ որդիս տեսնել . . . եթէ գուրս ելեր է, պիտի սպասեմ . . . :

Ըրդէն ըսինք՝ Պոյէ քաջ գիտէր իր տիրոջը հօր գոյութիւնն ու մարդատեսցո թիւնն . և արդէն բառական գիտնալէս ըլլալով՝ կ'ունին խալութեան վրայ տարակցո չունեցաւ, զանի ակնածութեամբ բարեկց և սրատասխանեց :

— Եթէ կ'ունն ինձ հետեւիլ համձի, իր հրամանին պատրաստ եմ . . . :

— Երթանք . . . — ըսաւ Պ. ար Սէն-Բըմին, որ Պոյէին կ'ուղեկցէր, նոյն միջոցին որ գոնասարնն սպուշ կըթած կը նայէր :

Կ'ունը միշտ պայլիկին ետեւէն երթալով՝ առաջին գտնալունը հասաւ . և իր առաջնորդին հետեւեցաւ, որ Բիբլէտոտան ար Սէն-Բըմիին աշխատութեան գրասենեկէն անցնելով (այսուհետև գերկոմսն այս անունով պիտի նշանակուէր իր հօր անունին հետ չլիթթելու համար) սրահի մը մտցոյց որ նոյն սենեկին կից էր, և գետնայարկին զարդարանին անոյնպէս վերելը կը գտնուէր :

— Պ. գերկոմսն այս ատու գուրս եղնելու տախտեցաւ — ըսաւ Պոյէ — եթէ Պ. կ'ունը սպասելու ծանրութիւնն առնու, գերկոմսը դառնալու չուշանար :

Եւ պայիկն աներեւոյթ եղաւ :

Կոմսը մինակ մնալով՝ չորս դին անտարբեր աչքով նայեցաւ . բայց յանկարծ շարժում մ'ըրաւ , դէմքը դոյն առաւ , այտերը ծիւրանի դարձան , բարկութիւնն երեսին դժերը կարկամեց : Իր կնկան . . . Ֆլորէտտան սր Սէն-Քրմիկն մօրը պատկերն աչքին զարկեր էր : Թեւեղը կրծքին վրայ խաչաձև դրաւ , գլուխը ծոեց որպէս թէ այն տեսիլէն խոյս առլ ուղէր և մեծաքայլ քայլել սկսաւ :

— Տնորթինակ բան — կ'ըսէր նա — այս կինը մեռած է . իր սիրահարը սպաննեցի , և իմ վէրքս առջի օրուան պէս վառ է ու վշտահար . . . իմ վրէժի ծարաւս դեռ չէ մարեր , իմ վայրագ մարդաստեղծութիւնս՝ զիս դրեթէ լիովին աշխարհէս հեռու քշելով իմ նախատինքիս գաղափարին դէմառ դէմ բերաւ զիս . . . այն , վասն զի այս վատազլի կնոջ գաւակցին մահն իմ նախատինքս սրբեց , բայց բարբոտիկն յիշատակէս չջնջեց : Ո՛հ , կ'զգամ , իմ քէնս անբուժելի ընտղն այն մտմտութն է որ՝ տասն հինգ տարի շարունակ խաբուեցայ , տասն հինգ տարի համարումս , յարգս շնորհեցի ապիրասի մ'որ զիս վատօրէն պատրեր էր . . . որ իր որդին սիրեցի . . . իր յանցանքին պատճն . . . իբր թէ իմ որդիս ըլլար . . . վասն զի այժմ այս Ֆլորէտտանին ինձ աղբած հակակրութենէն կը համոզուիմ որ շուտօրէն ծնունդն է : Եւ սակայն իր անհարազատութեան անվերջ ստուգութիւնը չունիմ , կարելի է որ իմ որդիս է . . . երբեմն այս կասկածն ահաւելի է ինձ : Մակայն եթէ իմ որդիս ըլլանք : Այն ատեն աններելի պիտի ըլլար զինքն այսպէս երեսի վրայ , միշտ իզնէ հեռի և անտես թողուլս : Բայց , ինչ և է , հարուստ , նորաստի , երջանիկ է . . . ինչ բանի մէջ կրնայի անոր օգնել : Այն , բայց էր գորովը թերեւս մեզմ էր իր մօրն ինձ պատճառած վիշտերը . . . :

Պահ մը խորին մտածելէն ետեւ՝ կոմսը վրայ բերաւ ուսերը վեր առնլով :

— Կորէն այս անխմատ ենթացութիւններն . . . որ ելք մը չունին . . . որ բոլոր աղէտներս կը գրգռեն . . . մարդ ըլլանք , և յաղթներ այն ասուշ և տաժանելի այլայլութեան՝ զոր կ'զգամ մտածելով որ հիմակ պիտի տեսնեմ այն պատանին՝ զոր տաս տարի յիմարական գորովանօք սիրեցի , զոր իբր որդիս սիրեցի . . . վնքը . . . վնքն . . . այն մարդուն որդին՝ որուն սրիս տակ տապաստ ընկնլը ինդութեամբ տեսայ , այն

մարդուն՝ որուն արեան հոսիկն ուրախութեամբ զխտեցի . . . և արդիւնջին զիս անոր օրհասին , անոր մահուան ականատես ըլլալու . . . : Ո՛հ , չգիտէին թէ ինչ ըսել է ինձի պէս կարելիք զարնուիլ . . . : Եւ ասկէ զաս՝ քանի մտածեմ որ իմ յարգուած ու պատուեալ անունս անշուշտ ստեպ լրբօրէն և հեղոտութեամբ արտասանած են . . . ինչպէս որ պատրեալ ամուսնի մ'անունը կ'արտասանեն . . . : Քանի մտածեմ որ անունս . . . որով միշտ կը պարծենայի , այս ժամուս այն մարդուն որդին կը կրէ , այն մարդուն որ սիրար խղել կ'ուզէի . . . ո՛հ , չգիտեմ թէ ինչպէս չեմ խենդանար երբ այս բանիս վրայ կը խորհիմ . . . » :

Եւ Պ . . . սր Սէն-Քրմիկն յուզմամբ քաշլը շարունակելով մեքենայէս վերուց այն դռնակն որ Ֆլորէտտանի գրասենեակը սրահիկէն կը վատէր , և տոյն վերջին սենեկին մէջ քանի մը քայլ առաւ :

Քանի մը վայրկիւնէ վեր աներեւոյթ եղեր էր՝ երբ սրահիկին մէջ թաղուն փոքրիկ դուռ մը մեղմիկ բացուեցաւ , և տիկինս ալ Լիւանէյ , մեծ կանաչ քաշմիր շալով մը փաթթուած՝ սե թաւշէ պարզ գգակ մը դրած՝ մտաւ այն սրահիկին ուսկէ պահ մ'առաջ կոմսն ելեր էր :

Այս անակնկալ երեւոյթին պատճառը բացատրենք :

Ֆլորէտտան սր Սէն-Քրմիկն առջի օրը դքսուհիին հետ ժամացրեր եղեր էր միւս օրուան համար : Գքսուհին ինչպէս ըսինք , գոիհին փոքրիկ գրան բանային ունենալուն՝ ըստ սովորականին՝ շեքնոցէն մտեր էր՝ Ֆլորէտտանը գետնայարկը գտնելու յուսով , և զանի այն ատեն չգտնելով՝ կարծեց թէ (ինչպէս որ երբեմն պատահեր էր) գերակոմսն իր գրասենեակը նստած գիր կը գրէր . . . : Գաղանի անաղուղ մը զարգարանէն առաջին գատիկներ կը տանէր : Տիկին ալ Լիւանէյ անպակն վեր ելաւ , կարծելով որ Պ . . . սր Սէն-Քրմիկն ինչպէս միշտ , այս անգամ ալ արդիւնք է մարդ ընդունելու : Գծբարդօրէն Պ . . . Պատիւօին բառական սպառնալից մէկ այլը ստիպելով Ֆլորէտտանն արտօնօք դուռս ելնել , տիկին սր Լիւանէյն ժամադրութիւնը մոռցեր էր : Գքսուհին մարդ չտեսնելով՝ գրասենեակը պիտի մտնէր՝ երբ սրահիկին միջնադրան վարազը յնկերը բացուեցան , և դքսուհին Ֆլորէտտանի հօրը դէմառ դէմ ելաւ :

Գքսուհին չկրցաւ ահ ու գոլի ձիկ մը զսպել :
— Քլօդիլտ — գոչեց կոմսն ապշած :

Պ. տը Սէն-Բըմի, Տիկին տը Լիւանէյի Տօր տը Նուարմն իշխանին հետ սերտութեամբ ըլլալով կը ճանչէր իր աղջիկն երբ երեկոյս ու նորաստի էր, և ատեն մը զանի իր միջոցով թեան անտնովը կոչեր էր: Գբսուհին անշարժ կը մնար նկատելով զարմանքով այս պէզորդ և դէշ հազուամ ծերունին, որուն կերպարանը շփոթ կերպով կը յիշէր:

— Դու, Քլօդիլա... — կրկնեց կոմսը վշտալի յանդիմանութեան շեշտով մը — դու... այս տեղ... իմ որդիկս տունը:

Այս յետին խօսքերը տիկին տը Լիւանէյի անորոշ դաղափարները պնդեցին, վերջապէս Ֆլօրէստանի հայրը ճանչեց ու գոչեց:

— Պ. տը Սէն-Բըմի:

Գբսուհին դիւրն այնքան բացորոշ ու նշանակալան էր, որ իր արտակերպում և անվեհեր բնաւորութեան բերմունքէն՝ սուտ ըսելու անգոտնեց այս իր ներկայութիւնը Ֆլօրէստանի տունը բացատրելու համար. կոմսին երբեմն իր վրայ ունեցած հայրական սէրէն յորդորուելով ձեռքն անոր երկնցուց, և անոր ըստ իր յատուկ շնորհալի, մանրամասն և ժպիւրհ գէմքովը:

— Խնդրեմ... մի յանդիմաներ դիս... իմ ամենէն վաղեմի բարեկամս ես... Յիշէ անգամ մ'որ քսան տարի առաջ զիս քու սիրական Քլօդիլադ կ'անուանէիր...:

— Այո... քեզ այդպէս պիտի անուանեմ... բայց...:

— Կանխաւ դիտեմ ամէն ըսելիքդ. իմ նշանաբանս դիտես. Ինչ որ է, է... Ինչ որ Ելեայ, պէտք է Ելեայ...:

— Ա՛հ, Քլօդիլա...:

— Զիս ինայէ և մի յանդիմաներ, թող որ քեզ տեսնելու ուրախութիւնս յայտնեմ քեզ. քու ներկայութիւնդ քանի քանի բաներ յուշ կ'անծեն. նախ իմ խեղճ հայրս, ապա իմ տանն հինգ տարուան հասակս... Ա՛հ, տանն հինգ տարեկան, ինչ զեղեցիկ ժամանակ:

— Որովհետեւ հայրդ իմ բարեկամն էր, որ...:

— Ա՛հ, այո՛ — վրայ բերաւ գբսուհին Պ. տը Սէն-Բըմիին խօսքը կտրելով — սրջափ կը սիրէր քեզ: Ար յիշես, կ'առաջ ժառանգեմքով ճարտ... կը կոչէր քեզ ծիծաղելով. դու ալ միշտ կ'ըսէիր. — Քլօդիլաի երես շատ կուսա... զի ոչ եղիր. — և քեզ պատասխան կտար զիս համ-

բուրելով: — Անշուշտ երես կտամ, և պէտք է շտապիմ և դգուանքս աւելցնեմ, վասն զի քիչ ատենէն ձեռքէս պիտի առնուն և բողբոլիմս աւրէն: — Ընտիր հայր, ինչ բարեկամ կորուսի: — Արտօսը մը փղբլըաց տիկին տը Լիւանէյի զեղեցիկ աչերուն մէջ, ապա ձեռքը Պ. տը Սէն-Բըմիին կարկատելով այլայլած ձայնով մ'ըսաւ. — Իրաւի, երջանիկ, շատ երջանիկ եմ քեզ նորէն տեսնելուս. սրտիս մէջ անդին և սիրալիւր յիշատակներ կը յարուցանես...:

Կոմսը թէև ՚ի վաղուց կը ճանչէր գբսուհին բնատիպ և խոհուն բնաւորութիւնը, կը շփոթէր տեսնելով Քլօդիլաի անշփոթութիւնն՝ որով Քլօդիլա այս փափուկ վիճակը կ'ընդունէր. իր սիրահարին տունը հանդիպել սիրահարին հօրը:

— Եթէ երկար ժամանակէ վեր Բարիդ կը դանուխ — վրայ բերաւ տիկին տը Լիւանէյ — անմարդավարութիւն է քու կողմէդ գալ զիս չփնտեսել. քեզի հետ անցեալին վրայ երկարօրէն կը խօսէինք... վասն զի կ'սկսեմ համարել այն տարիքիս՝ ուր յետին հրապոյր կ'զգայ մարդ իր հին բարեկամներուն ըսելու: Ար յիշես:

Արդարեւ գբսուհին ասկէ աւելի անգորր անհոգութեամբ մը չպիտի խօսէր եթէ տը Լիւանէյ ապարանն առաւօտեան այցելութիւն մ'ընդունէր:

Պ. տը Սէն-Բըմի չկրցաւ համբերել և ըսաւ անոր խստիւ:

— Անցեալին վրայ խօսելու տեղ, աւելի պատեհ է ներկային վրայ խօսիլ... որդիս հիմակ ուր որ է պիտի գայ, և...:

— Ա՛հ — ըսաւ Քլօդիլա խօսքը կտրելով — Չերնոցին պղտիկ դբան բանալին քովս է, և երբ դերկոմսը կ'առնազունէն մտնէ՝ միշտ անոր գալուստը հնչակին ձայնովն իմաց կը արուի. այս ձայնը լսելուս՝ ինչպէս որ եկայ ծածուկ մ'անհետ կ'ըլլամ և քեզ պիտի թողում Ֆլօրէստանդ տեսնելու ուրախութեամբ: Ինչ սնուշ զարմանք պիտի պատճառես անոր... քանի ատենէ վեր զինքն երեսի վրայ թողեր ես...: Շիտակը... ես քեզ յանդիմանելու պարտաւոր եմ:

— Զիս... զիս...:

— Ի հարկէ...: Որդիլու որը աշխարհ մտաւ, ինչ առաջնորդ, ինչ նեցուկ ունեցաւ. և դրական բիւրաւոր ինդիքներու համար հօր մը խորհուրդներն անհրաժեշտ են...: Ուստի, բայց ՚ի բաց կ'ընեմ, անպատեհ բան մ'էր քու կողմէդ...:

Այս տեղ տիկին տը Լիւսնէյ՝ իր այլանդակ բնաւորութեան անաս-
լով վերցաւ շարունակել, այլ խենդի պէս ծիծաղելով կոմսին ըսաւ :

— Խոստովանէ որ դէժ իմ կայտութիւնս եղական է, և շատ կծու
կը թուի որ քեզ յանդիմանաւորս ես ըլլամ :

— Իրօք, անօրինակ բան մ'է այդ, բայց արժանի չեմ ոչ պարտաւոր
և ոչ գովեստիդ, իմ որդիիս տունն եկայ . . . բայց չէ թէ իմ որդիիս
համար . . . իր հասակին մէջ կարօտ չէ, կամ այսուհետև կարօտ չէ իմ
խորհուրդներուս . . . :

— Ի՞նչ ըսել կ'ուզես :

— Պիտի գիտնաս թէ ինչ պատճառներ ունիմ մարդիկն և մանա-
ւանդ Բարիդն ատելու — ըսաւ կոմսը տածանակիր և բռնագբօսիկ կեր-
պով մը — ուստի յետին կարևորութիւն ունեցող պարագաներ միայն
գրգռեցին զիս Անժէէն ե՛նել, և մանաւանդ այս տեղ գալ . . . այս առ-
նը . . . : Բայց հարկ եղաւ ամէն ներքին ընդդիմութիւն գտել և ամէն
տեսակ մարդկան դիմել ինձ համար կարևոր խուզարկութեան մը մասին
աջակցութիւն կամ ծանօթութիւն խնդրելու :

— Ա՛հ, եթէ այդպէս է — ըսաւ տիկին տը Լիւսնէյ սիրալիբ
շնորհով մը — եթէ բանի մը մէջ կարող եմ ծառայել քեզ պատրաստ
եմ ընելու : Արդեօք յանձնարարութիւն մ'ունիս . . . Պ. տը Լիւսնէյ բա-
ւական վարկի տէր է, վասն զի տը Վոնպրիզօն մեծ մասին տունը ճաշի
գացած օրերս՝ ազգային երեսփոխաններու կոչուրդ կտայ, և այս ալ ա-
ռանց պատճառի չըլլար . հաւանական է որ այս անարատհութեան
փոխարէն օգուտ մը պիտի քաղուի . . . իբր թէ այս միջոցիս շատ ազգե-
ցութիւն ունեցող մարդերու վրայ տեսակ մը առաւելութիւն ստանալ :
Նորէն կ'ըսեմ, եթէ կրնանք քեզ ծառայել, հաւատ որ պատրաստ ենք
հիամանիք : Ասիկէ զատ նորատի մօրեգօրջորդիս ալ կայ, Վոնպրիզօն
փոքր դուքսն՝ որ նախարար ըլլալուն՝ բոլոր նորարոյս աւաղանիկն հետ
կապուած է . . . : Եթէ անոր ձեռքէն ալ բան մը կ'ըսայ, քեզ կ'ընծայեմ :
Մէկ խօսքով իմ և իմիններուս աջակցութեան վրայ վստահ եղիր, ար-
դէն գիտես թէ որչափ արի և անձուէր է բարեկամութիւնս :

— Իրիտեմ . . . և աջակցութիւնդ չեմ մերժեր . . . այլ սակայն . . . :

— Տեսնե՞ք, սիրելի Ալեքս, մենք կենցաղագէտ մարդիկ ե՛ք, ուստի
կենցաղագէտ մարդկան պէս վարուինք : Թէ այս տեղ և թէ այլուր

դանուխք, փոյթ չէ, կարծեմ, քեզ վերաբերող գործին նկատմամբ, որ
հիմակ ինձ ալ յատկապէս կը պատկանի . բանի որքաւ գործդ է : Աւստի
խօսինք այդ խնդրին վրայ, և բունէն սկսելով խօսինք . . . այսպէս կը
պահանջեմ :

Այս ըսելով դքսուհին վաւարանին մօտ եկաւ, անոր կոթնեցաւ և
դէպ 'ի կրակին երկնցուց չնաշխարհիկ փորրիկ ոտք մը, որ նոյն պա-
հուն սառեր էր : Հիանալի վարպետութեամբ մը՝ տիկին տը Լիւսնէյ
դերկունին վրայ չխօսելու առիթը կը բռնէր և Պ. տը Սէն-Րըմիին
հետ այնպիսի խնդրի մը խօսքը բանալու՝ որուն այս վերջինը մեծ կարևո-
րութիւն կտար : Քրօդիլտի վարմուշքը ֆլօրէստանի մօրն առջև տար-
բեր սիւնի ըլլար . բարեբաղդութիւն և պարճանք համարելով սիւնի
երկարօրէն խստովանէր թէ որչափ սիրելի է նա իրեն :

Պ. տը Սէն-Րըմի թէև խտտարարոյ և դաժան սոյն կնկան առնա-
ցի և մտերմական շորհին ներգործութիւնը կրեց, կին մը՝ զոր՝ երբ
փոքր էր սակաւին տեսեր և սիրեր էր, և դրեթէ մոռցաւ որ իր որդի-
ին հոմանիկն հետ կը խօսէր :

Սակայն ինչպէս գիտագրել տարափոխիկ օրինակի մը, երբ նոյն խի
գիւցալնը յետին ծայր շփոթալի վիճակի մը մէջ դանուկով կարծես
թէ չեղբայրի կամ չուղեր երկրայիլ անդամ սոյն դժուարին պարագա-
յին վրայ :

— Արեղի է չլիտես, Քրօդիլտ — ըսաւ կոմսն — որ երկար ժա-
մանակէ վեր Անժէ կը բնակիմ :

— Ա՛հ, գիտէի :

— Որչափ որ տեսակ մը մենակեցութիւն կը միտուէի, այս քաղաքն
ընտրեր էի, վասն զի իմ ազգականներէս Պ. տը Գէրմօն՝ այն տեղ կը
բնակէր, և ինձ համարող սոսկալի աղէտէն վեր՝ եղբօր պէս կը վարուէր
հետս . . . : Եւրոպայի բոլոր պտրտած քաղաքներս . . . ուր կը յուսայի
հանդիպիլ . . . մարդու մը զոր սպաննել կ'ուզէի, ինձ ուղեկից գտնուե-
ցաւ, և մենամարտի մ'ատեն վկաս եղաւ . . . :

— Այո, սոսկալի մենամարտ մը, հայրս ատենօք ամէն բան ինձ
պատմեց — վրայ բերաւ տիկին տը Լիւսնէյ տրտմազին . բայց երջան-
կօրէն ֆլօրէստան այս մենամարտը չլիտէ . . . նոյնպէս անոր զրդիւ
առող պատճառը . . . :

— Թողուլ ուղեցի որ իր մայրը յարդէ — պատասխան տուաւ իրմ
սը հառաչ մը զարեւով . . . և շարունակեց :

— Քանի մը տարի ետքը՝ Պ. Ֆէրմօն դիրկս մեռաւ յԱնժէ, թող
լով գուտար և կին մը՝ զոր իմ մարդասեպութեանս հակառակ՝ ստի-
պուեր էի սիրելու, վասն զի այս ընտիր էակնեբուն պէս անարաս և
աղնիւ հոգիներ քիչ կը դանուին աշխարհին վրայ : Քաղքէն հեռի աւան
մը կ'ապրէի միայնակ, բայց երբ իմ վերահաս նսեմ տրտնութիւնս դա-
դար առնուր՝ արիկն տը Ֆէրմօնին առնը կ'երթայի՝ իր և դասեր հեա
մեր կորուսած անձին վրայ խօսելու համար . . . : Ինչպէս կենդանի ե-
ղած ասեմն՝ այս անուշ մտերմութեամբ սիրտս կազդուրելու, անդոր-
բելու կը ջանայի, և անոնց վրայ կեդրոններ էի իմ բոլոր գորովն : Տիկին
տը Ֆէրմօնին եղբայրը Բարիզ կը բնակէր, երբ էրիկը մեռաւ իր քրոջը
բոլոր գործերուն հօգը վրան առաւ, և նոտարի մը քով շահու դբա-
շուրջ հարկեր հազար Ֆրանք, որ որբեարիկն բոլոր հարստութիւնը կը
կազմէր : Շատ չանցաւ արիկն տը Ֆէրմօնին զիտին նոր ու ահոնի ա-
ղէտ մը հասաւ . իր եղբայրը՝ Պ. Բանիլիլ՝ գրեթէ ութ ամիս առաջ
ինքզինքը սպաննեց : Արցածիս չտի զանի միտիմարեցի : Երբ իր նոր
վիշան ամբեց՝ Բարիզ զնայ՝ որպէս զի գործերը կարգի գնէ : Քիչ ա-
տենէն իմացայ որ իր հրամանին համեմատ Անժէ վարձու բռնած տան
անշուք կարասին կը ծախեն, և գոյացած գումարով իր ձգած քանի մը
պարտքը կը վճարեն : Այս պարագայէն վրդովելով հարց ու փորձ ըրի
և իմացայ անորոշ կերպով մ'որ այս թշուառ կիճն ու գուտարը տուա-
պանքի մէջ կը գանուին, և անշուշտ մնանկութեան մը զոհ ընկած են :
Եթէ արիկն տը Ֆէրմօն՝ այսպիսի ծանր գժբարդութեան մ'ատեն՝
վստահելու անձ մ'ունէր, այս անուշ մտերմութիւնը կորուսելով ա-
նոր արժէքը հասկցայ : Ձեք կրնար երեակայել արիկն տը Ֆէրմօնին և
աղջկանն երթէն վեր իմ վիշտս և անձկութիւնս . . . : Իրեն հայրն,
ամուսկնն, իբր եղբայր մ'էր ինձի համար . . . : Ուստի պէտք էր գանել
զանոնք անվրէպ, և իմանալ թէ ինչ պատճառաւ այս ձախորդութեան
ժամանակ ինձի չեն գիմեր, թէ և ես ալ սպրատ եմ. ճամբայ ելայ այս
տեղ դարու, Անժէ թողլով անձ մ'որ՝ եթէ նոր բան մ'իմանար, ինձի
պիտի հաղորդէր :

— Լսո՛ւ ուրեմն :
— Գեռ երէկ Անժէէն գիր մ'ատի . . . ոչ ինչ չեն յայտներ այս մա-
սին . . . : Բարիզ զարով խուզարկութիւններս սկսայ . . . նախ արիկն տը
Ֆէրմօնին եղբորը հին առնը գացի . . . : Անկէ իմացայ որ Աէն-Մար-
գէնի ջրանցքին քարափին վրայ կը բնակի :

— Հասա՛ս այս հասցէն . . . :
— Իրն է եղեր, բայց իր այժմու բնակարանը չգիտեն թէ ուր է . .
. . . Գժբարդէն մինչ արդ խուզարկութիւններս անօգուտ եղան : Քանի
քանի ընդունայն փորձեր ընեղէն ետև յոյսս կտրեցի, ու ելայ այս տեղ
եկայ : Թերևս արիկն տը Ֆէրմօն՝ որ՝ անմեկնելի առ թիւ մ'իդնէ ոչ
նպաստ, ոչ օգնութիւն ինդրեց, որդիիս դիմած է, իբր իր էրկանն ա-
մենընտիր բարեկամին որդիին . . . : Անշուշտ այս յոյսս ալ անհիմն է,
սակայն այս եղիկելի կիճն ու գուտարը գանելու համար չեմ ուղեր որ
բան մը զանց ըրած ըլլամ :

— Քանի մը վայրկինէ վեր՝ արիկն տը Ալուանէ՝ որ ևս քան զևս մտա-
գիր մտիկ կ'ընէր կոմիսն, յանկարծ գոչեց :

— Յիբախ, զարմանալի կ'ըլլար եթէ այդ անձերը նոյն իսկ արիկն
տ'Արդիլի ալ վնասած անձերն ըլլան . . . :

— Ի՞նչ անձեր — հարցոյց կ'մտը :

— Ձեր ակնարկած որբեարկն նորահասակ է, այնպէս չէ՞ իր դէմ-
քը շատ աղնիւ է :

— Անշուշտ . . . բայց ո՞ւրի՞նք գիտես . . . :

— Իր գուտարը հրեշտակի պէս գեղանի, շատ շատ տասն վեց տա-
րու է :

— Այո՛ . . . այո՛ . . . :

— Եւ նա Քէր կը կոչուի :

— Ո՛հ, շտորճ ըրէ : խօսիր, ո՞ր են :

— Ափսոս, ես ալ չգիտեմ :

— Չգիտես :

— Ահա պատմեմքեզ գործն . իմ ընկերու հինեղէս՝ արիկն տ'Արդիլ, տունս
եկաւ և հարցոյց ինձ թէ արդեօք որբեարկ կին մը կը ճանչնամ,
որուն գասեր անունը Քէր կ'անուանի, և եղբայրն ինքզինքը սպաննած
ըլլայ . արիկն տ'Արդիլ ինձ կը դիմէր տեղեկութիւն ինդրելու, վասն

զի սա բառերը կարգացր էր . Գրեւ առ արկին որ Լեւանէ, նամակի մ'որուազ ծի մը մէջ զոր այս թշուառուհին անձանութ անձի մը կը գրէր, և որուն օգնութիւնը կը հայցէր :

— Նա քեզ դրել կուզէր . . . քեզ . . . և ինչո՞ւ համար :

— Չգիտեմ . . . զանի չեմ ճանչեր . . . :

— Բայց նա կը ճանչէր քեզ — զոչեց Պ. տը Սէն-Բրուի, յանկարծ միտքը բան մը գալով :

— Ի՞նչ կ'ըսես :

— Հարիւր անգամ լսած է բերնէս հօրը , քու , քու տրասէր ընտիր սրտիդ գովեստան . . . : Իր դժբաղդութեան մէջ քեզ դիմելու մտաբերած պիտի ըլլայ . . . :

— Յիբաւի , ուրիշ կերպով կարելի չէ մեկնել այս բանը . . . :

— Հապա տիկին տ'Արվիլ . . . ինչպէս այն ուրուազիրը ձեռք ձգեր էր :

— Չգիտեմ ; այս միայն գիտեմ որ տիկին տ'Արվիլ՝ զեռ ևս անտեղեակ ըլլալով թէ ո՞ր սպաստաններ են այս ողորմելի կիներ ու գուտարը , կարծեմ թէ անոնց հետքը գտեր էր . . . :

— Աւրեմն քեզ կ'սպաւ ինիմ , Քլօդիլտ , և յուսամ որ զիս տիկին տ'Արվիլի կը ներկայես . պէտք է որ այսօր իսկ տեսնեմ զինքը :

— Անկարելի . . . : Իր ամուսինն այն ինչ զարհուրելի պատահարի մը զոհ ընկաւ . հրազէն մ'որ ձեռքն էր և կը կարծէր թէ լեցուն չէ , կրակ առնելով իսկոյն տապաստ կ'ընկնի կը մեռնի :

— Ա՛հ , ահաւելի բան . . . :

— Մարքիզուհին ալ նոյն հետոյն Կորմանտիա գնաց իր սգի առջի օրերը հօրը սուսն անցնելու համար . . . :

— Քլօդիլտ , կ'աղբսեմ քեզ , այսօր գրէ անոր և արդէն ստացած տեղեկութիւնները ինչպէ . քանի որ այն հէք կիներուն հողը կը տանի , ըսէ անոր որ թող իբր ջերմազին օգնական մը նկատէ զիս . իմ միակ փափաքս է բարեկամին այլին գտնել և գոյզն ինչ ունեցածս անոր և աղջկան մէջ բաժնել : Այժմ այս է միայն ընտանիքս :

— Միշտ նոյնը , միշտ վեհանա՞ն ես և անձուէր : Ատտահ եղիր իմ վրայ , այսօր իսկ տիկին տ'Արվիլի պիտի գրեմ : Ա՛ւր պէտք է զրկել պատասխանս :

— Անիէր , մնայուն թղթատունը :

— Ի՞նչ այլանդակութիւն , ինչո՞ւ համար այն տեղ կը բնակիս , և չէ թէ Բարիլ :

— Ար գնալիմ Բարիլէն միտքս բերած յիշատակներուն համար — ըսաւ Պ. տը Սէն-Բրուի մթին գէմքով մը . — իմ հնամի բարեկամն , տոբսօր Արիֆօն , որուն հետ կը գրակցիմ , Սէնի ավին վրայ՝ Անիէրի մօտ գիւղատուն մ'ունի . ձմունն այն տեղ չբնակիր , զայն առաջարկեց ինձ , գրեթէ Բարիլի մէկ աւանն է . կարող էի , իմ խուզարկութիւններս աւարտելէն ետեւ՝ ինձ հաճելի եղած առանձնութիւնը դանել . . . ուստի ընդունեցի :

— Աւրեմն զիրս Անիէր պիտի ուղղեմ , սակայն կրնամքեզ կանխաւ տեղեկութիւն մը տալ որ թերեւս քեզ նպատակէ . . . և զայն տիկին տ'Արվիլի սրբոտար եմ . . . : Յիկին տը Ֆէրմանին կործանութիւնն պատճառն այն նօտարին անգղամութիւնն է՝ որուն յաւանդ թողեր էր ազգականդ բոլոր հարստութիւնը . . . : Մոյն նօտարն աւանդն ուրացաւ :

— Ապիբան . . . : Եւ անունն ինչ է :

— Պ. Թաք Ֆէրման — ըսաւ դքսուհին , չկրնալով ծիծաղելու փափաքը զսպել :

— Զարմանալի ես , Քլօդիլտ , այս ինչիրը շատ ծանրակշիռ ու տխուր է , և զու կը ծիծաղին — ըսաւ կոմսը զարմացած և դժգոհ :

Արդարեւ՝ տիկին տը Լիւանէյ՝ նօտարին սիրային յայտարարութիւնը յիշելուն՝ չէր կրցեր ինչուքը բռնել :

— Ներէ՛ , բարեկամը իմ — վրայ բերաւ նա . — բայց այն նօտարը տարօրէն մարդ մ'է . . . և իր վրայ ծիծաղելի բաներ կը պատմեն . . . : Եւ իրօք , եթէ ունեցած պարկեշտ մարդու համբաւը՝ սուրբ մարդու համբաւին չպի աբժէք ունի . . . (և արդէն կը հաստատեմ որ այս վերջինն անհիմն է) մեծ անգամ մ'է :

— Եւ ո՞ւր կը բնակի :

— Մանկիէ փողոցը :

— Այցի պիտի երթամ անոր . . . : Աւրեմն այս մարդուն համար ըսածդ բաւական կը յարմարի մէկ քանի կասկածներու . . . :

— Ի՞նչ կասկած :

— Իմ թշուառ բարեկամուհին կըբօրը մահուան վրայ առած տե-

զեկու թիւններուս նայելով կը միտիմ հաւատարու որ այն թշուառը փոխանակ ինքզինքը սպաննելու . . . դաւաճանութեան մը զոհ ընկած է :

- Տէր Աստուած . և ինչպէս կրնաս ենթադրել . . . :
- Հաս մը պատճառներ կան զոր երկար կըլլայ մի առ մի ըսելու . պիտի երթամ . . . մի մտնար քու և Պ . աը Լիւանէյի կողմէն ինձ առաջարկած ծառայութիւններդ :

- Ինչպէս , կը մեկնիս . . . առանց Ֆլորէստանը տեսնելու :
- Այս տեսութիւնը շատ տաժանելի պիտի գայ ինձ , և պատճառը պարտիս իմանալ . . . : Գիմնադրաւ եկող այս տեղ տիկին աը Ֆէրմանի մասին քանի մը տեղեկութիւններ ստանալու յուսով , որպէս զի զանի գաննելու համար բան մը զանոց առած չըլլամ . ուրեմն մնաս բարև . . . :

- Ա՛հ , անպարօրն ես :
- Միթէ չգիտես . . . :
- Գիտեմ որ որդիք մեծապէս կարօտ է խրատներուդ . . . :
- Ինչպէս : Միթէ հարուստ , երջանիկ չէ . . . :

— Այո , բայց մարդիկը չճանչին : Կուրօրէն շուսյլ , վնաս զի անհնդ է և մեծանձն ամէն բանի մէջ , ամէն ատեն և միշտ իբր մեծ իշխան վարուելով , կը վախնամ որ իր բարեսրտութիւնը չարաչար չործածեն : Եթէ գիտնայիր թէ քանի ազնիւ է իր սիրան : Երբէք չիշխեցի իր ծախսերուն և անկարգութեան համար զինքը յանդիմանել , նախ որովհետեւ իրեն պէս խեղ եմ , և երկրորդ . . . ուրիշ պատճառներ կան . բայց դու , ընդ հակառակն , կրնաս . . . :

- Տիկին աը Լիւանէյ խօսքը չաւարտեց :
- Յանկարծ Ֆլորէստան աը Սէն-Բրմիի ձայնը լսուեցաւ . :
- Արտօրնօք սրահին կից գահիճը մտաւ , գուռը վետօրէն գոցելէն ետեւ իրեն ուղեկից եղող անձի մը լրատ պղպլուռն ձայնով մը :
- Բայց անկարելի է . . . :

— Նորէն կըսեմ . . . — պատասխանեց Պ . Պատինօին պայծառ ու սուր ձայնը — կը կրկնեմ քեզ , սպաս թէ ոչ , չորս ժամէն առաջ ձեր քակալ պիտի ըլլաս . . . : Ասան զի եթէ ստակը ժամանակին չստանայ մեր մարդը՝ դատաստանական ատենին պիտի ներկայէ իր բողբոն , և գիտես թէ ինչ է այնպիսի նեղութեան մը պատահաւոր , թիարան , իմ խեղճ գերկան . . . :

Խ Օ Յ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն

Անհնար է տիկին աը Լիւանէյի և Ֆլորէստանի իրարու նետած ակնարկը նկարագրել՝ երբ սա ահռելի խօսքը լսեցին — Պատասխանաբար . . . ինչպէս պիտի ըլլայ : — Կտնին գոյնը մոխիր դարձաւ , աթուր մը յենարանը կռթմեցաւ , ծունկերը կիթսուեցան : Իր պատկառելի և յարգուած անունն . . . իր անունն անպատուի մարդ մ'որ իբր շուքիտան ծնունդ կիամբաստանուէր : Այս առաջին տաղնապն անցնելէն ետեւ՝ ծերունիին զայրազին կերպարանը , գէտ 'ի գահիճը զիմելով ըրած սպառնալի շարժումն՝ այնպիսի որոշումի մը յայտարար նշաններն էին , որ տիկին աը Լիւանէյ անոր ձեռքը բռնեց , կեցուց և կամայով մ'անոր ըսաւ , խորին համոզումի շեշտով մը :

— Կերպում որ . . . անմեղ է . . . : Մտիկ ըրէ լուեկայն . . . : Կտնը կանկ առաւ : Գրտահիւն ըսածին հաւտալ կ'ուզէր : Եւ իրաւի տիկինը համողներ էր թէ Ֆլորէստան անհնդ է : Գերկոմնն՝ այս կուրօրէն վեհանձն կնիկէն նոր նոր զոհողութիւններ ստանալու համար , զոհողութիւններ՝ որով միայն կարող եղեր էր թաք Ֆէրմանի կողմէն դատափետ և ձերբակալ ըլլալէն ազատիլ , սնդեր էր տիկին աը Լիւանէյի մօտ թէ՛ անդամէ մը խարտելով՝ որմէ շինծու փոխանակադիր մը ստացեր էր , թղթանկնիկն իբր դաւակից սեպուելու վտանգին մէջ կը գտնուի , քանի որ ինքը նոյն թուղթը շրջաբերութեան հաներ էր : Տիկին աը Լիւանէյ գիտէր որ գերկոմնն անխոհեմ , շուսյլ , անկարգ էր , բայց պահ մը չէր երկբայիս բնաւին որ կարող ըլլայ , չէ թէ ցած կամ վատանուն գործ մ'ընելու , այլ նոյն իսկ թեթեւ դժպատահութիւն մը : Երկու անգամ՝ դժուարին պարագաներու մէջ հաղին գումարներ փոխ տալով՝ տիկին աը Լիւանէյ քաբէխաճախած ծառայութիւն մ'ընել ուզեր էր , ըստ որում գերկոմնը նոյն գումարները հատուցանելու յատուկ պայմանով մը ստացեր էր , և կըսէր թէ կրկնապատիկ գումար մ'առնելիք ունի : Իր արտաքին ճոխութիւնն այսպէս կարծեւ կուտար : Մտիկն , տիկին աը Լիւանէյ իր ընդարցս բարեսրտութեան անսարով մը միայն Ֆլորէստանին օգտակար ըլլալու մտածեր

էր, և չէ թէ իր փոխ տուած ստակին վճարումը ապահովել: Քրօրէստան կը հաստատէր, տիկին ար Վիւննէյ կը հաւատար, ապա թէ ոչ այնպիսի ծանր փոխառութիւններ ընելու միջե կը յանդգնէր: Երբ զբառահին Ֆրօրէստանի պատուոյն երաշխաւոր կը մնար և կ'աղաչէր ծերունի կամնն որ որդւոյն խօսակցութեան ունկնդիր ըլլայ, յոյս ունէր թէ՛ ինչպէս որ դերկունը կը սնդէր, խարէութեան զոհ ընկնելն երեւան պիտի դար և իր հօրն աչքին լիովին պիտի արդարանար:

— Նորէն կ'ըսեմ — վրայ բերաւ Ֆրօրէստան այլայլուն ձանով մը — այս Բըղի-Թանը վատազգի մ'է. ապահովեր էր ինձ որ իր ձեռքն ուրիշ փոխանակալիը չունէր անոնցմէ զատ որ երէկ և երեք օր առաջ իրմէ ստացայ...: Արթնէի թէ շրջաբերութեան մէջ են, քանի որ երեք ամսէ վճարելի էին Ղոնտան, Ատան և ընկեր սեղանաւորին կողմէն:

— Այո, այո — ըսաւ Պատինօին կծու ձայնը — դիտեմ, սիրելի դերկուն, որ շատ վարպետութեամբ բռնեք էիը զործը. շինծու թողութեղ ճամբայ երևելէն ետև երևան պիտի գային... բայց անոնք քեզնէ աւելի վարպետորդի բրգան:

— Ի՛հ, հիմակ ատենն է այդ խօսքն ըսելու ինձ, թշուառական դու... — զոչեց Ֆրօրէստան մոկեղին — միթէ դու չճանօթացուցի՞ր զիս փոխանակալները ծախողին հետ:

— Մի նեղանար, իմ աղնուական պարոնս — պտտախանեց Պատինո ստանազին — հանդարտութիւն...: Մեծ ճարտարութեամբ առևտրական ստորադրութիւնները կը կեղծազրես, քանչեղի է, բայց պտտառ մը չունիս անխորժ ընտանութեամբ մը վարուիլ բարեկամներուդ հետ: Թէ որ նորէն սրդողիս... քեզ պիտի թողում եթեմ, և խելքդ փշածին պէս գործը կարգադրէ...:

— Ի՛հ, միթէ կարծես թէ մարդ սրտորբնութեամբ կրնայ վարուիլ այսպիսի վիճակի մը մէջ...: Եթէ շատեղ ճշմարիտ է, ինձի գէմ բողբոջիւն արբունի փաստարանին պիտի տրուի, ես կարսուած մարդ մ'եմ...:

— Ճիշտ իմ ըսածս ալ այդ է, միայն թէ... նորէն դիմես քու կապուտակն չքնաղ Նախախնամութեանդ...:

— Անկարելի է:

— Ուրեմն, ամէն բան աչքդ առ: Մեղը, վերջին փոխանակալիւն էր... և չնչին քսան հինգ հազար Ֆրանքի համար... եթեմալ Թուրքի հարաւային օդը ծծել... անխելութիւն, ապշութիւն, յիմարութիւն է: Արբելի բան է որ քեզի պէս հնարադէտ մարդ մը զիջանի սցոպէս ծակը մանելու:

— Աստուած իմ, ի՛նչ, ի՛նչ ընել պէտք է... այս տեղ դանտած զոյքերէն ոչ ինչ ինչ չէ, քսան ոսկիի կարօտ մարդ մ'եմ...:

— Հապա բարեկամներդ:

— Ի՛հ, ինձ փոխ տալու կարող եղող անձերու պարտք ունիմ արդէն. այնչափ խնդ կարծես զիս որ մինչև այսօրս սպասած և անոնց օգնութիւնը ստացած չըլլամ:

— Ճիշտ է, ներքէ... արի, հանդարտօրէն խօսիմք, ասկէ լատագոյն միջոց մը չկայ բանաւոր լուծում մը դանելու: Քի՛մ'առաջ կ'ուզէի մեկնել քեզ թէ ինչպէս քեզնէ աւելի հանած վարածի մը հանդակեցար... բայց ինձ մտիկ չըրիր:

— Լաւ, խօսէ, եթէ բնիկքեդ օգուտ մը կրնամ քողել:

— Անցած դացածը մեր աչքին առջև բերնք. երկու ամիս կայ ինձ ըսիր. «Երկար պայմանաժամով 113,000 Ֆրանքի փոխանակալներ ունիմ, իմ սիրելի Պատինո, այլ և այլ սեղանաւորներու վրայ, զանոնք ծախելու ճար մը դաիր...»:

— Ըստ լաւ... վերջը...:

— Սպասէ... ինդրեցիքեզնէ որ այն արժէթղթերն ինձ ցոյց տաս...: Մէկն որուն անունը չդիտեմ, ըսաւ ինձ որ այն փոխանակալները շինծու են, թէ և կատարելապէս անանցուցած: Ճշմարիտը չէի տարակուսեր ընստ որ այնպիսի ճարտար գեղազրահան տաղանդ մ'ունենաս, բայց քու ստացուածիդ տեսչութիւնը վրաս առած ըլլալով ստացուածը կորուսելդ վեր' գիտէի որ լիովին կործանած ես: Ես ինքս վաւերացրանել տուի այն դաշնադիրն որով ձիւնբղ, կատ բերդ, այն ապարանին բոլոր կարասին Պոյէին և Գալարին կ'անցնէին...: Աստի իմ կողմէս անխոհեմ բան մ'ըրած չէի ըլլար եթէ այնպիսի մեծ առևտրական դումարներ ձեռքդ տեսնելովս զարմանայի, հըմ:

— Ինդրեմ զարմանդ մէկդի թող և իրողութիւնը պատմէ:

— Ահա պիտի պտտեմ... բառական փորձառու եմ կամ երկչառ...:

և զպշ կըլլա՞մ ուղղակի այս անասկ գործերու խառնուելու . ուստի երբորդ անձի մը զրկեցիք քեզ՝ որ ինձի չափ աչքբայ ըլլալուն , իրեն խաղալիք խաղէ՞ք խիոյն կասկածի դնայ :

— Անկարելի բան , երբէք այն արժէթղթերն չէր զեղջեր թէ որ զխնար որ շինձու են :

— Այն 113,000 Ֆրանք գումարին թերհաշիւ սրչափ ստակ սուտաքեղ :

— Կանխիկ 25,000 Ֆրանք սուտա , և մնացորդին համար ալ վճարելի մուրհակներ . . . :

— Եւ այն մուրհակներէն ի՞նչ քաղեցիք :

— Ո՛չ ինչ , արդէն զիտես , երևակայական էին . . . բայց միշտ 25,000 Ֆրանք վստահի մէջ կը դնէր :

— Քանի համբակ ես , սիրելիդ իմ զերկումն : Եթէ գործը յաջողէ՛ր հարիւր լուի յանձնարարութեան վարձ ընդունելիքս զխանալով՝ այն երբորդ անձին քու գործերուդ ստոյգ վիճակը յայտնելու զգուշացեր էի . . . : Կարծէր թէ տակաւին ունեւոր ես , նա մանաւանդ քաղ զիտէր որ մեծատուն նշանաւոր կին մը քեզ կը սրաշտէ և նեղութեան մէջ չթողուր քեզ . ուստի հաւաստի էր զէթ իր սուած ստակներն ես առնուլ , միջին ճամբով մը , անտարակոյս կորուստ ընելու վստահն աչքը կ'առնուր , բայց շատ ստակ շահելու բողոքն ալ կրնար բանիլ , և իր հաշիւն անհին չէր . վստն զի , անցածն օր 58,000 Ֆրանքի շինձու փոխանակարդիրն ազատելու համար 100,000 Ֆրանք մէկէն կոխեցիք , և երէկ ալ 30,000 սուիր երկրորդին համար . . . : Իբրա է որ ասոր համար բուն խի արժէղինը ստանալով գոհ եղաւ : Այն երէկուան 30,000 Ֆրանքն ի՞նչպէս ձեռք ձղեցիք , կրողը տանի զիս , եթէ զիտեմ . վստն զի Զի հատիկ ես անասիկդ մէջ . . . : Ի վերջէ կը նայես ուրեմն որ ի՞թէ Բըզի-ժան կ'առիպէք քեզ վերջին 25,000 Ֆրանքի թուղթը վճարել , քեզ վճարած 25,000 Ֆրանքի տեղ քեզնէ 135,000 Ֆրանք ընդունած պիտի ըլլայ . հեռուսպէս իրուունք ունէի ըսելու թէ քեզնէ աւելի հնարաղէտ մարդու մը խաղացիք քու խաղդ :

— Բայց ինչու համար ըսաւ ինձ որ այն վերջին փոխանակարդիլը՝ զոր այսօր կը ներկայէ , վաճառուած է :

— Քեզ չահարեկելու համար . ըսեր էր նաև քեզ թէ՛ 58,000

Ֆրանքնոյ թղթէն զատ՝ միւսները շըջարելութեան մէջ են . անդամ՝ որ սուալինը հաստցիր , երէկ երկրորդը հասաւ , և այսօր ալ երրորդը :

— Ապիբանաղ . . . :

— Մտիկ ըրէ , ամեն մարդ իր շահը կը մտածէ . Բայց պաղ արիւնով խօսակցինք . ասիէ կ'իմացուի որ Բրդի ժան (և խօսքը մեր մէջը՝ չպիտի զարմանամ , թէև սրբազին է համբան , որ ժաք Գէրբան այս շահագլխական գործառնութիւններու մէջ կ'իսով մատ ունենայ) ասիէ սա կ'իմացուի , ըսի , որ Բրդի ժան , սուլի վճարելիք համն համն առնուով՝ այս յետին փոխանակարդին վրայ կը շահագլխակէ , ինչպէս որ միւսներուն վրայ ըրաւ , ստոյգ ըլլալով որ Քարէկուէրդ չպիտի թողունքեղ որ գատաստանական ատանն երնես : Քեզ կ'ընկի դատել թէ արդեօք այս բարեկամներէդ քաղելիք բուն մը չունիս , եթէ իրենց ծուծը քաղեր ես և եթէ տակաւին ոսկիի քանի մը կաթիլներ չես կարող անոնցնէ քամել . վստն զի եթէ երեք ժամէն 25,000 Ֆրանք ձեռք չձգես , ծակը պիտի մննես , աղիւ դերկումն իմ :

— Ի՞նչ կը հասկնաս նոյն բանն անպաղար կրկնելով . . . :

— Սա կ'իմանամ՝ որ թերևս հաճիս այն արասէր դքսուհիէն վերջին փետուր մ'աղ փետեւու փորձ փորձել . . . :

— Նորէն կը կրկնեմ որ անկէ յոյսդ կարէ . . . : Կրեք ժամէն 25,000 Ֆրանք գտնելիքը յուսալ՝ այնչափ զոհողութիւններ ընելէն ետքը՝ զարգապէս յիմարութիւն է :

— Բարեբաղդ մարդ , քեզ հաճելի ըլլալու համար , անկարելին անպամ կը փորձէ . . . :

— Ի՛հ , արդէն փորձեց նա անկարելին . . . այս էր 100,000 Ֆրանք իր երկիէն փոխ ուղելու յաջողիլը . բայց ասանք կրկին երևցող երևոյթմանը չին : Բայց ի՛ր բայը ըսեմ , սիրելիդ իմ՝ Գառախո , մինչև այսօր իղնէ գանդատելու առիթ մը չունցար . . . միշտ առատաձեռն եղած եմ . . . Նման սա ապիրատ Բրդի ժանէն պայմանաժամ մը ստանալու . . . : Գիտես արդէն որ ինձ ծառայող մարդերը վարձատրելու միջոցը միշտ կը գտնեմ . եթէ անդամ մը սա վերջին գործն ալ ծածկուի , նոր թիւ մը կ'առնում . . . և իղնէ գոհ պիտի ըլլաս :

— Բրդի ժան այնքան անպարելի է որքան որ գու յիմար ես .

— Ե՛ս . . . :

— Լոկ ճիգ մը թափէ քու վնճանն բարեկամուհիդ դու թը շարժելու ազդարար վիճակիդ վրայ . . . : Ի՞նչ կը տեսաննիս, պարզօրէն անոր յայտնէ ինչիւրը . չէ թէ, առաջուան պէս, իբր թէ թղթաննդ ներու ճարակ ընկար, այլ թէ նոյն իսկ դու դբամաննդ մ'ես :

— Երբէք այնպիսի խոստովանութիւն մը չպիտի ընեմ անոր . անշահ նախատիւր մ'է :

— Մի՞թէ լաւագոյն կը սեպէս որ վաղը դատարանէն քարտէն իմանայ գործը :

— Գեո ես երեք ժամ ունիմ, կրնամ խոյս տալ :

— Եւ ո՞ւր կրնաս երթալ առանց ստակի : Լաւ կընէ գործը . ընդ հակառակն, եթէ այս վերջին շնորհի թուղթը աղատես, փտաւոր կացութեան մը մէջ պիտի մննես, մինակ պարտքերդ պիտի մնան . . . : Շուտ, խօսք սուր ինչ քր նորէն դքսուհիին պիտի խօսիս : Գու քանի շաղաշյոտ ես (roué), կարող ես անոր սիրար շահիլ և սխալմունքդ պարտկել, դէշին դէշն ինչ կրնայ ըլլալ . քիչ մը պակաս, կամ բնու չպիտի յարդէ, բայց դէ՞թ այդ տաղնապէն նորէն պիտի աղատէ քեզ : Խօսք սուր, նայիմ, որ դեղանի բարեկամուհիդ պիտի տեսնես . ես ալ Բըդի Ժանին մօտ կը վազեմ կ'երթամ և բոլոր ճիգս կը թափեմ մէկ երկու ժամու պայմանաժամ ստանալու . . . :

— Ի՞նչ դժոխք, պէտք է որ նախատանացս մինչև գիբար խմեմ . . . :

— Արի, բարեբաղդութիւն կը մաղթեմ քեզ . Չանս փափկափրա, խանդալիր, սիրուն երեւելու . ահա Բընի Ժանը դանելու կ'երթամ, մինչև ժամն երեք իր խանութը պիտի գտնես զիս . . . եթէ անկէ ուշ քաս բանը բանէն կ'անցնի . . . դատաստանի տեսնող մինչև ժամը չորս քայ է . . .

Եւ Գ. Պատինո դուրս ելաւ :

Երբ դուռը գոցուեցաւ, Ֆլորէստանի ձայնն ելաւ, որ խորին յուսահատութեամբ կը դռէր :

— Աստուած իմ . . . Աստուած իմ . . . Աստուած իմ :

Այս խոսակցութեան ատեն, որով կրնն իր որդւոյն անուանարկութիւնն ու տիկինն ար Վիսնէյ իր կարօրէն սիրած մարդուն անուանարկութիւնը կ'իմանային, երկուքին ալ անշարժ, ոչ ետաւ մնացեր էին այս զարհուրելի յայտնութեամբ : Անհնար է նկարագրել այն նարատի

կնիան և կուսին մէջ անցած վշտալի տեսարանին լին ճարտասանութիւնն երբ Ֆլորէստանի ոճրին վրայ կասկած չմնաց : Ծեբունին իր թեւն որդւոյն գտնուած սենեակն ուղղելով՝ դառն հեղնութեամբ մը ժպտեցաւ, տիկինն ար Վիսնէյի վրայ շահեթաւար ակնարկ մը ձգելով և կարծես թէ անոր ըսել ուզեց .

— Ահա այն մարդն՝ որուն համար ամէն նախապիսի զիմադբաւ կեցար, ամէն զո՞՞՞ ըրիր . ահա այն աննն որմէ երես դարձնելուս կը յանդիմանէիր զիս . . . :

Քքսուհին յանդիմանութիւնն զգաց, պահ մ'իւր գլուխը ծռեց անօթաւար ընկճելով :

Այս գանն ահա որ էր . . . :

Ապա, փոքր առ փոքր, տիկինն ար Վիսնէյի դէմը կարկանդակ անուգորոյն անձկութեան յաջորդեց տեսակ մը վէս սրտմտութիւն : Մոյն կնիան աննեղելի սխալանքը կը թեթեւացին սիրոյն անկեղծութեամբն, իր անձնուիրութեան ժպրհութեամբն, իր առատասրտութեան մեծութեամբն, իր բնութեամբն աննեղութեամբն և ամէն ցած ու վատ բանի համար ունեցած անողորելի ասելութեամբը : Այս դոտող ու արխախտ կիներ շատ դեռահաս, շատ դեղմնի, շատ ինկելի էր և ստակին համար ծուղակն ընկնելուն տորնութիւն մը չէր ուրար, և անդամ մ'որ իր սիրոյ պատրանքը յանկարծ մարեցաւ՝ ոչ ասելութիւն տածեց և ոչ բարկութիւն . յանկարծուտա, առանց որ և է անցումը, մահարեր զգուանք մը, ստունագին քամահանք մ'իւր մինչ ցայն կէտ առողջ գորովը ջնջեց . այլ ևս անարժանօրէն սիրահարէ մը խարուած ակրուհի մը չէր նա, այլ բարեկեցալ կին մ'որ երեսն կը հանէր թէ իր ընկերութեան հաղորդ մարդ մը, զող մը, դբամաննդ մ'էր զը իր տունէն պիտի վնասէր :

Ննթաղբերով անդամ որ քանի մը պարագաներ զօրէին մղղմիլ Ֆլորէստանի անուանարկութիւնը, տիկինն ար Վիսնէյ գտնար չպիտի ընդունէր . իր կարծեօքն այս մարդն որ մայր թեւնէ, դէշ օրինակէ կամ տկարութեան պատուոյ որոշ սահմանէ մը կ'անցնի, այն մարդն էր ազգին ետնիան զանէր, պատուաւորութիւնն իրեն համար ետնեամ կամ չէ . . . Ինչն ինչիւր մ'ըլլարուն և քքսուհին զգացած վշտալի քէնն ակրի ևս զրոհեցաւ իր վաղեմի բարեկամ՝ կուսին վրայ այս անակոտնելի յայտնութեան ըբած սակալի սպաւորութեան :

Քանի մը վայրկեանէ վեր՝ կարծես թէ կոմսը չէր տեսներ, քան մը չէր բեր. աչերն անթարթ էին, զլուխը կոր ՚ի կոր, թևերն առ ՚ի կախ, դեղնութիւնը կսպռտտակ. ուր ուրն մն լանջն ելև էջ կը շարժէր ջրաձողական հաստը մը: Այսպիսի անվիհեր և ազդու մարդու մը վերայ տեսնուած վհատութիւնն աւելի զարհուրելի էր քան բարկութեան բոցը: Տիկին տը Ալուանէյ անձկանօք անոր երեսը կը նայէր:

— Արեւթիւն, բարեկամդ իմ — ըսաւ անոր մեղմիկ ձայնով մը:

— Քեզ... ինձի... այն մարդուն համար... ընելիքս գիտեմ...:

Ծերունին ակնապիշ նայեցաւ անոր, ապա, իբր բռն յուզումով մը իր ազլութիւնէ ուշաբերով՝ զլուխը վեր առաւ, կերպարանն սպրտնայի երևոյթ մը ստացաւ, և մտնալով որ իր սրբին կրնար իր ձայնը լսել, դռնէն.

— Եւ ես ալ, քեզի, ինձի, այն մարդուն համար ընելիքս գիտեմ...:

— Ո՛վ կայ ներսը — հարցուց Ֆրօբէստան զարմանօք:

Տիկին տը Ալուանէյ՝ դերկոմսին հետ գտնուելու խորհուրէն՝ սլախի գոնէն աներեւոյթ եղաւ և զազանի սանդղէն վար թլաւ:

Ֆրօբէստան նորէն հարցնելով թէ ո՞վ կայ ներսն՝ և սրտասխան չընդունելուն, սրահը մտաւ: Այն տեղ կոմսին հետ ինքզինքն առանձին գտաւ:

Ծերունին երկար մօրօսն այնպէս պլախոխեր էր զինքն, այնպէս աղբատիկ հագուեր էր որ իր սրբին, զինքը շատ տարէէ վեր տեսած չըլլալուն՝ ՚ի սկզբան ճանչից և սպառնալի դէմքով մը դէպ անոր վրայ դնայ:

— Ի՞նչ կ'ընես այդ տեղ... ո՞վ ես դու:

— Այս կնիւն էրկիլը — պատասխանեց կոմսը տիկին տը Սէն-Բըմի կենդանաղիլը ցոյց տալով:

— Հայր իմ — դռնէն Ֆրօբէստան ետ ետ քաշուելով առ սարսափ, և կոմսին կերպարանը յիշեց, զոր ՚ի վաղուց մտցեր էր:

Կոմսը կանգուն, ահաւոր, ակնարկը զայրալի, ճակատը բարկութիւնէ հրացայտ, սպիտակ մաղերն ետին ընկած, լանջն վրայ թևերը կարած՝ կը տերատեւէր, կը յաղթահարէր իր սրբայն, որ զլուխն ՚ի կոր չէր ժտեր աչերն դէպ իրեն վերցնելու: Սակայն Պ, տը Սէն-Բը-

մի՛ գաղանի առթիւ մը՝ անվրդով մնալու և իր ահուելի քէնն ու հեռը պօղելու համար բռն ճիգ մ'ըրաւ իր անձին վրայ:

— Հայր իմ — վրայ բերաւ Ֆրօբէստան այլայլուն ձայնով մը — այդ տեղն էիք...:

— Այո, այս տեղն էի...:

— Ասեցիր:

— Ամէն բան...:

— Ա՛հ... — դռնէն գերկոմսը վշտաղին իր երեսը ձեռներուն մէջ պահելով:

Պահ մը լուռութիւն տիրեց:

Ֆրօբէստան՝ թէև ՚ի սկզբան իր հայրն այսպէս անակնկալ տեսնելուն զարմանք և ցաւ զցաց, բայց վերջէն՝ իբր հնարագէտ մարդ՝ մտածեց թէ ի՞նչ օղուտ կրնայ քաղել այս դէպքէն:

— Գեռ յուսալու տեղ ունիմ — ըսաւ նա ինքնովին: — Հօրս ներկայութիւնը բաղդին մէկ շտրհն է: Ամէն բան գիտէ, չախտի թողու որ իր անունն արատի. հարուստ չէ, բայց դարձեալ քսան հինգ հազար ֆրանքէն աւելի ստակ ունենալ սէտք է: Ամէն հնար ՚ի գործ գնեց...: Ճարտիկութիւն, հրապոյր, այլալու թիւն գործածելու է... դքսու հիւն զլուխը չեմ ցտցնի և այսպէս կ'ազատիմ:

Յետոյ իր չքնաղ կերպարանին վշտահար վհատութիւն մը տալով, ապաշաւի արտաբերով աչերը թըլեց, և ամենէն հնչական ձայնն և սրտաշարժ շեշտը գործածելով՝ դերկոմսը դռնէն յուսահատ շարժումով մ'իւր ձեռները կցելով:

— Ո՛հ, հայր իմ... շատ դժբաղդ եմ... տեսնեմ քեզ... այնքան տարիներէն վերջն... այս վիճակիս մէջ...: Քու աչքիդ քսնի յանցաւոր կ'երևիմ անշուշտ: Բայց շտրհ ըրէ ինձ մտիկ ընելու, կ'աղաչեմ, թոյլ տուր ինձ, չէ թէ ինքզինքս արդարեւ, այլ վարմունքս քեզ բացատրելու...: Հրաման կտամ, հայր իմ...:

Պ, տը Սէն-Բըմի բառ մը չարտասանեց, անվրդուելի կերպարան մը ցցուց, թիկնաթտի մը վրայ նստաւ արմուկները յենլով, և այսպէս՝ ծնօտն ակին մէջ բռնած՝ դերկոմսին երեսը նայեցաւ լուրջայն:

Եթէ Ֆրօբէստան զխնայր այն պատճառներն որ իր հօրը սրտին առնելու թիւն, կատու թիւն և վրէժ կ'ազդէին, անտարակոյս անոր երես-

այժմական հանդարտութենէ երկնելով չպիտի փորձ փորձէր զանի պատրելու, իբր միառնա Ծէրճառ մը: Մակայն իր ծնունդին հարազատութեան վրայ եղած ազիտարի կասկածներէն անդէս՝ անդէս ըլլալով նաև իր մօրը յանցանքէն, Գլորէստան վստահօրէն յուսաց որ իր սուտ ու պատիր ընթացքը կրնայ յաջողիլ, քանի որ կը կարծէր թէ այնպիսի հօր մը դուժը պիտի շարժէ, որ մարդատեսաց և միանդամայն իր անունին վրայ հպարտ ըլլալուն՝ պիտի զիջանի՝ ամէն զոհ ընել փոխանակ թողլու որ սոցն անունին արատ մը համար:

— Հայր իմ — վրայ բերաւ Գլորէստան երկչտութեամբ — հրաման կտան որ ջանամ, չէ թէ ինքզինքս անբասիր հանելու, այլ յայտնելու քեզ թէ ինչպէս յախանայից բոնադաստեալ . . . մինչև անդամ վատ գործերու . . . կը խոստովանիմ . . . ձեռնարկելու յանդգնեցայ . . . :

Գերկոման իր հօրը լուծիւնն իբր թագուն հաւանութիւն համարեց և շարունակեց:

— Երբ իմ մայրս . . . իմ եղիկի մայրս՝ որ զիս շատ կը սիրէր . . . կորուսի դժբաղդօրէն . . . հազիւ քսան տարեկան էի . . . : Միայնակ դասը ինքզինքս . . . առանց խորհրդատուի . . . առանց պաշտօնանի . . . : Ահազին հարստութեան մը տէր . . . ի մանկութենէ ճոխութեան վարժ ըլլալովս . . . այս բանս ինձ սովորութիւն մը . . . պիտոյր մը դարձեր էր . . . : Չգիտէի թէ դրամ շահիլը քանի դժուարին է, և զայն կը վատնէի անխնայ . . . : Գժբաղդօրէն . . . դժբաղդօրէն կը լսեմ, վասն զի այս եղաւ իմ սուտն փրդը . . . իմ ծախսերս, թէ և յիմարական, վայելչութեան կողմէն նշանաւոր էին . . . : Այնքան ճաշակ ունէի, որ ինչէ տանասպտոսիկ աւելի հարուստ անձերը նսեմցայի . . . : Այս առաջին յաջողութիւնը դուրսիս դարձուց, ճոխութեան մարդ եղայ, ինչպէս որ ուրիշները սրտեղբայրի, պետութեան մարդ կը դառնան, այն, ճոխութիւնը կը սիրէի, չէ թէ դուհիի մտապարծութեամբ, այլ կը սիրէի ինչպէս պատկերհանր նկարչութիւնը կը սիրէ, ինչպէս քերթողը բանասիրութիւնն . իբր ամէն արհեստագէտ՝ ես ալ իմ գործիս նախանձախնդիր էի . . . և իմ գործս ու արհեստս իմ ճոխութիւնս էր . . . : Ամէն բան զմեզի զայն կատարելագործելու համար . . . : Ամէն բանի մէջ շքեղ, մեծ, կատարուն, ներդաշնակ գործելու ջանացի սոցն ճոխութիւնն . . . արտուէն բունէ մինչև սեղանս, հազուատէս մինչև կահ

կարասիս . . . : Փափարս էր միայն ճաշակի ու վայելչութեան դաս ընծայել իմ կենցաղալիտութեամբս: Ահըջապէս՝ իբր արհեստագէտ մի թէ ժողովրդին զովեաններուն և թէ ընտիր մարդկան զարմացումն անկշտօրէն կարօտ էի . այս հազուադիս յաջողութիւնը ձեռք ձգեցի . . . :

Այսպէս խօսելով՝ Գլորէստանի դէմին փոքր առ փոքր իր կեղծ ու պատիր երևոյթը կը կորուսէր և աչեքը տեսակ մ'եռանդաղին փայլով կը փայլէին: Ճշմարիտը կը խոստովանէր . ի սիրբան ճոխութիւնն այս պէս ուրիշներէն տարբեր կերպով իմանալուն հրասարտուեր էր:

Գերկոման իր հօրը կերպարանը հարց ու փորձ ըրաւ ակնարկովն իրեն այնպէս մ'երեցաւ որ քիչ մը մեղմեր է:

Նոր եռանդով մը շարունակեց:

— Նորաձեւութեան իբր պատգամ ու տնօրէն կանգնելով իմ պարսաւս կամ զովեստս օրէնքի տեղ կ'անցնէր. ամենուն բերանն էր առնուն, օրինակս, դովեստս, զարմացումս, և նոյն խի Բարիկի զերազնիւ ընկերութեան, այսինքն Եւրոպայի, աշխարհի . . . : Այնքան այս ընդհանուր պանչացումն հաղորդ դտան, ամենէն զեղանկներն ուր ուրեմն սուած հանդէսներուս դալու կը մրցէին մտադիւր, և ամէն տեղ և միշտ այս հանդէսներուն անհամեմատ վայելչութեան և գոռուրիկ ճաշակին վրայ կը հիանային . . . և միթո՞նքու տէր մարդիկ չէին կարող ասոնց հաւասար կամ մոտոյ բերող բան մ'ընել. վերջապէս, ինչպէս որ կ'ըսեն նորայնօրէն ինքստորի եղայ . . . : Այս բառն ամէն բան կը մեկնէ, հայր իմ, եթէ զայն կ'իմանաս:

— Կ'իմանամ . . . և ստոյգ եմ որ թիարանն ալ շղթադ կրելու կերպին մէջ նուրբ վայելչութիւն մը կը հնարէիք . . . այդ ալ նորաձեւութիւն մը պիտի գտնար թիարարաններուն մէջ և պիտի կոչուէր . . . Սէն-Բըթակէն — բաւ ծերունին արիւնապի հեղուութեամբ մը — . . . յետոյ յարեց: — Եւ Սէն-Բըթի . . . Մ ԱՆՈՒՆՍ է . . . :

Եւ լուց, միշտ արմուկը յետած, միշտ ծնօրը արիւն մէջ բռնած: Կնքն իրեն վրայ մեծ իշխանութիւն ունենալ պէտք էր Գլորէստան որպէս զի այս սայրասուր երգիծանքին ըրած վէրքը ծածկելու կարող ըլլար:

Հեղ ձայնով մը նորէն շարունակեց:

— Ափսոս, հայր իմ, այս յաջողութիւններուն յիշատակը դուողու

Թեանէս չեմ յիշեր . . . վասն զի, կրկին կըսեմ, այս յաջորդութիւնը զիս 'ի կորուստ մասնեց . . . : Շահահնդիւր հացկիսասաներ չէին զիս փնտռող, փափաքող, շողորթթող, զգուող անձերն, այլ այնպիսի մարդիկ որոց կացութիւնն խնկէս շատ վեր էր, և որոց վրայ մինակ առաւելութիւն մ'ունէի, այս է վայելչութիւնն . . . որ առ ճոխութեան է ինչ որ է ճաշակն արհեստներու մասին . . . խելքս թուա : Ալ հաշիւ չըրի . բոլոր հարատու թիւնս քանի մը տարիէն պիտի սպառէր, փոյթս չէր : Կարող էի այս տենդային, հիասրաշ կեհաց հրաժեշտ տալ, երբ զուարճութիւնը կը յաջորդէր զուարճութեան, բերկրութիւնը՝ բերկրութեան, հանդէս՝ հանդիսի, արքաութիւնն՝ ամէն կերպ հիանալի ու թողիչ արքաութեան . . . : Ա՛հ, եթէ զիսնայիր, հայր իմ, թէ ինչ ըսել է իբր ժամանակին զիսցաղըր հոչակ տալ ամէն տեղ . . . ըսել այն շշուկն որով կ'ընդունուիս երբ քահ մը մտնես . . . լսել կ'իներուն ձայնն որ կ'ըսեն իւրովի : Նոյն ինքն է . . . ահաւասիկ . . . : Ա՛հ, թէ որ զիսնայիր . . . :

— Գրեմ . . . — Ըստ ծերունիին որդւոյն խօսքը կորելով և առանց իր զիբըր փոխելու — զիսեմ . . . : Այո, անցածն օր հրապարակի մը մէջ բազմութիւն կար . . . յանկարծ շշուկ մը լսուեցաւ . . . այն շշուկին նման որով կ'ընդունուիս երբ ալ զ մը մտնես . . . յետոյ կ'իներուն աչքը մանաւանդ՝ խիստ զեղանի պատանիի մը դարձան ակնասիւշ . . . ինչպէս որքու վրադ կը դառնան . . . և զանի իրարու ցոյց տալով իւրովի կ'ըսէին . . . նոյն ինքն է . . . ահաւասիկ . . . իբր թէ դու ըլլայիր այն պատանին . . . :

— Բայց ո՞վ է այն պատանին, հայր իմ . . . :

— Գրամանեղ մ'որուն վզէն կ'անցնէին անուրը :

— Ա՛հ — զոչեց Քլօրէստան անզուտ կասողութեամբ մը . յետոյ, խորին վիշտ մը կեղծելով՝ յարեց : — Հայր իմ, որչափ անդով ես . . . և ինչ կ'ուզես որ ըսեմքեզ . . . իմ յանցանքս պարտելու փափաք չունիմ . . . մինակ զայն առթող աղէտաւոր մելութիւնը կ'ուզեմ բացատրել : Ան ուրեմն, շարունակէ որչափ կ'ուզես հեղնութիւններովդ խոցել զիս, չպիտի ընկրկիմ և պիտի ջանամ այս խոտտվանութիւնս ծայրէ 'ի ծայր ընել, պիտի ջանամ կորստաբեր տենդային աշխոյժս բացատրել քեզ, վասն զի այն ատեն միայն կարելի է իմ վրայ ցախ . . . : Այո, վասն զի մարդ խենդին վրայ կը ցախ . . . և ես խենդ էի . . . : Աչքս

զոց՝ առեւր էի ինքզինքս այն շողորուն փոթորկին՝ որուն մէջ ինձի հետ կը քարշէի չնայեղ կ'իներ, սիրայիր մարդիկներ : Անակ առնել, կարելի էր ինձ : Կարելի է բսել բանաստեղծին որ կ'սպասի և որուն հանձարն իր առողջութիւնը կը լսի, Անակ առ . . . քեզ յափշտակող ներշնչութեան ժամանակ . . . : Ա՛չ, ես . . . ես . . . չէի կարող հրաժեշտ տալ այն իմ վարած արքայական իշխանութիւնէ և անձանցթ դրոհին մէջ մտնել ամօթահար, լիակործան, և առակ նշաւակի եղած, չէի կարող այս յաջորդանակը տալ իմ նախանձորդներու՝ որոց դէմ մինչև այն օրը զիմադրաւ կանդներ, տիրապետեր և խորտակեր էի . . . : Ա՛չ, ոչ, չէի կարող . . . դէժ կամովին : Եկաւ հասաւ այն դժնգակ ծոն երբ առաջին անգամ տակա հատու . . . զարնացոյ մնացի որպէս թէ այս ժամս երբէր չպիտի հասնէր ինձ : Սակայն դեռ ևս իմն էին ձիբքս, կատքերս և տանս կարասին . . . : Իմ սրբաբերս հատուցանելէն ետե կարելի է 60,000 Փրանք ևս մնար ինձ . . . : Ի՞նչ կրնայի ընել այս չնչին ստակով : Այն ատեն, հայր իմ, առաջին քայլ մ'առի անուանարկ ձամբու մը մէջ . . . : Տակաւին պարկիշա էի . . . մինակ ունեցածս վասնիւր էի . . . բաց այն ատեն սկսայ այնպիսի պարտքեր ընել զոր չէի կարող վճարել . . . : Բոլոր գոյքս իմ՝ երկու ապաստարներուս ծախեցի՝ որպէս զի առանց պարտքս սամ, և կարենամ, դեռ ևս վեց ամիս, իմ սրբատեղաներուս հուցելով զիս արքայող ճիսութիւնը վայելիլ . . . : Իմ խալի պէտքերուս և յիմարական ծախուցս հասնելու համար՝ նախ հրէաներէ փոխ առի . յետոյ հրէաներուն պարտքս հատուցանելու համար, բարեկամներէս, և բարեկամներս ալ դո՛հ ընելու համար, սիրուհիներէս՝ Երբ այս ազբիւրները չորջան կենացս մէջ նոր կանկ մ'առի . . . : Պարկիշա էի և հացկիսասակ դարձայ . . . բաց տակաւին յանցաւոր չէի . . . : Սակայն վարանեցայ . . . բուռն որոշում մ'առնուլ ուղեցի . . . : Շատ մը մեղամարտութիւններու մէջ ցոյց առեւր էի որ մահէն չեմ վախնար . . . ուղեցի ինքզինքս սարմանել . . . :

— Ա՛հ, վա՛շ . . . ստուգիւ . . . — Ըստ կամըր զայրալին հեղնու թեամբ մը :

— Միթէ չես հաւտար, հայր իմ :

— Շատ վաղ կամ անպահ էր . . . յարեց ծերունիին միշտ անդրուելի և նոյն զիբըրն թէ :

Ֆլորէստան՝ որ կարծէր թէ հօրը սիրաբ շարժեց իր ինքնասպանութեան խորհուրդը յայտնելով՝ կարևոր դատեց այս տեսարանին նոր շարժում մը ստալ թատերական խաղով մը: Ահհ մը բացառ, կանաչկեկ բլուրեղէ փոքրիկ սրուակ մ'ատաւ և սեղանին վրայ դնելով կոմսին ըսաւ .

— Իտալացի ճամբարտակ մը ծախեց ինձ այս թոյնը . . .

— Եւ . . . միթէ քեզի՞ համար է . . . այս թոյնը . — ըսաւ ծերունին միշտ արմուկին կաթնած .

Ֆլորէստան իր հօրը խօսքին իմաստն բնութեց . Այս անդամ իր կերպարանը ճշմարիտ սքանտութիւն մ'արտայայտեց, վաճն զի ըսածը ստոյգ էր . . . : Օր մ'ինքզինքը սպաննելու հովիւ ունեցեր էր . անցաւոր հով մը . իբ դասի մարդիկ շատ վատ են և չեն կարող ցրտօրէն և առանց հանդիսականի մահաւան դիմել, որուն դիմադրաւ կը կենան միայն մեղանարտի մէջ լոյ պատուոյ համար օ Աստի ճշմարտութեան շեշտով մը դռնեց . :

— Շատ վար ընկայ . . . բայց դոնէ կարծածիւ չափ չէ , հայր իմ : Այս թոյնն ինձի համար պահեր էի :

— Եւ վախցար — ձայնեց կոմսը զիբըբ չիփօնելով :

— Ար խոստովանիմ որ այս ծայրայեղ և ահուելի միջոցը դործածելու սիրտ չըրի . դեռ ևս ամէն բանէ յոյս չէի կորած . իմ պարտատէր ներս հարուստ կարող էին սպասելու . . . : Իմ տարիքս , իմ յարաբերութիւններս պահ մը յոյս տուին ինձ , եթէ ոչ հարստութիւնս վերաշինելու , դէթ պատուաւոր , անխախ կացութիւն մ'ապահովելու որ կընար անոր տեղը բռնել . . . : Իմ բարեկամներէս շատերն որ թերևս իջնէ աւելի արժէք չունէին , դեսպանադիտութեան մէջ խիստ առաջդացեր էին :

Փառասիրութեան իղձ մ'ատաւ զիս . . . բաւական էր որ կառն ունենայի , և իսկոյն ժէրօլտէյնի դադրիական դեսպանատան պաշտօնատար անուանեցայ . . . : Գժբադրօրէն՝ այս պաշտօնին հասնելէն քանի մ'օր ետքը՝ խաղի առ թիւ իմ մէկ տտած մարդուս պարտական մնալուս , անպարտի տաղնապի մը մէջ ընկայ . . . : Իմ բոլոր դրամական հնարներս սպառեր էի . . . : Աղետաւոր գաղափար մ'եկաւ միտքս : Կարծելով թէ ստուգապէս անսպառիժ պիտի մնամ , վատթար դարձ մ'ըրի . .

« Ար տեսնես , հայր իմ . . . բան մը չպահեցի քեզնէ . . . կը խոստովանիմ որ վատամտն ընթացք մը բռնեցի , և չեմ ճգնիր զայն շարժելու . . . : Գործածելի երկու միջոց ունիմ՝ առջևս , և երկուսն ալ հակամէտ եմ միապէս . . . : առաջինն է ինքզինքս սպաննել . . . և անունդ ազարտած թողուլ , վաճն զի եթէ այսօր իսկ 25,000 Փրանք չիճարեմ , բոլորքը պիտի սրտի , շարաշուք համբաւը պիտի եխէ , և թէ կենդանի թէ անկենդան մնամ , դարձեալ անունս պիտի սենայ : Միւս միջոցն է գիւրդը ընկնիլ , հայր իմ . . . և քեզ ընել . Աղտաէ քու սրդիդ , վատահամբաւէ անունդ ազատէ . . . և կ'երդեռամ քեզ վաղը դէպ 'ի Ափրիկէ ուղևորել , հոն զինուոր գրուել և մահ վնասուել կամ օրին մէկը քաջագործութեամբս իմ պատուիս մէջ վերահաստատ դառնալ . . . : Այս տեղ քեզ ըսածս , հայր իմ , հաւտն որ ճշմարիտ է . . . : Այս աղէքեկ պարագայիս մէջ ուրիշ հնար չունիմ . . . : Արտումդ ըրէ . . . կամ ամօթահար պիտի մեռնիմ , կամ քու շնորհիւդ . . . յանցանքս քաւելու համար պիտի սպրիմ . . . : Ասոնք երիտասարդի սպանուիլը և խօսք չեն , հայր իմ . . . : Քսան հինգ տարու եմ , անունդ կը կրեմ , բաւական արիւթ թիւն ունիմ ինքզինքս սպաննելու . . . կամ զինուոր ըլլալու , վաճն զի չեմ ուզեր թիաւան երթալ . . . »

Կոմսը ոտք կ'աւ :

— Ձեմ ուզեր որ իմ անունս արագաբար — ըսաւ նա ֆլորէստանի ցրտօրէն :

— Ահ , հայր իմ . . . ազատարարդ իմ — դռնեց գերկոմսը ջերմազին , և իր հօրը գիւրդը սքանալու վրայ էր , երբ սա , սառնապին շարժումով մ'անոր եռանդը մեղմեց :

— Մինչև ժամ երեք պիտի սպասեն քեզ . . . նենդպաղին ունեցողին գրատունը :

— Այո , հայր իմ . . . և արդէն ժամն երկու է . . . :

— Անցնիք գրասենեակդ . . . դրելու համար պէտք եղածը սուր ինձ :

— Ահաւասիկ , հայր իմ :

Կոմսը ֆլորէստանի գրասենեակին առջև նստաւ և հաստուն ձեռքով մը դրեց .

« Ար խոստանամ , այս իրկուն ժամը տասին վճարելու , որդիիս ունեցած քսան հինգ հազար Փրանք պարտքը :

« Կոմսը սը Սէն - ԲԼՄ »

— Բու պարտատէրդ լոկ ստակ կ'ուզէ, թէ և կ'սպառնայ, այս իմ ապահովադիրս նոր պայմանաժամ մը տալու պիտի յորդորէ զինքը . Գիշիկէօ փողոցը, թիւ 7, Պ. Տիբօն սեղանատրխն զբաստնը պիտի երթայ և այն ալ այն թղթին վճարումին պատասխանատու պիտի մնայ :

— Ա՛հ, հայր իմ . . . Բնչպէս պիտի . . . :

— Այս իրիտն պիտի սպասես զիս . . . Ժամը տասին այն դռմանը պիտի բերեմ . . . թող պարտատէրդ ալ այս տեղ դնուի . . . :

— Այս, հայր իմ, և հետեւեալ օրն Ափրիկէ կ'երթամ . . . : Պիտի տեսնես որ ապաշնորհ չեմ . . . : Թերևս, այն ատեն երբ պատիւս տեղը բերեմ, իմ շտրհակալիքս պիտի ընդունին :

— Ա՛չ ինչ պարտաւոր չես ինձ . քեզ ըսի որ անունս այլ ևս չպիտի արատի, / չչ չպիտի արատի — ըսաւ Պ. աը Սէն-Բրաի պարզապէս, զբասեղանին վրայ դրած գաւազանն առնելով, և դէպ'ի դուռը դիմեց :

— Հայր իմ, դո՛նէ ձեռքդ տուր . . . — վրայ բերաւ Ֆլօրէստան աղբրատի ձայնով մը :

— Ատ՛ այս իրիտն, ժամը տասին — ըսաւ կամը ձեռքը մերժելով : Եւ դուրս ելաւ :

— Ազատեցայ . . . — դռնէջ Ֆլօրէստան խնդարիր : — Ազատեցայ :

— Ապա վրայ բերաւ, պահ մը խորհելէն ետեւ . — Ազատեցայ, զրեթէ . . . : Ինչ փոյթ, միշտ նոյն բանն է . . . : Թերևս այս իրիտն փոքրձե ալ անոր յայտնեմ . . . անշուշտ կէս ճամբան չպիտի կենայ, և իր առաջին դոհն անօդուս կը մնայ եթէ երկրորդ մ'ալ չընէ . . . : Գարձեալ Բնչ հարկ կայ անոր ըսել . . . : Ա՛յ սիտի երբեք խմանայ . . . : Իրօրօք, եթէ բան մ'երևան չեմ, տալիք ստակը պիտի պահեմ այն վերջին պարբէրը դոցելու համար . . . : Ինչ նեղութիւն քաշելի այս սատանայ մարդը շարժելու : Իր երկրիժամբին դառնութիւնէ կը կասկածէի որ այն պիտի աղուր որոշում մը պիտի ընէ . բայց ինքնատպանութեան սպառնալիքէս, իր անունը մրտաձ տեսնելու վախէն միտքը փոխեց . ճիշտ այն կողմը զարնել պէտք էր . . . : Անշուշտ այնչափ ազբատ չէ ինչպէս որ երբեք կը կեղծէ . . . : Եթէ հարիւր հազարի մօտ Ֆրանք ունի, անշուշտ ինչպէս թիւն ըրած պիտի ըլլայ իր ապրած կերպովն ապրելով . . . : Ատրէն կ'ըսեմ իր պարտան բաղդին մէկ շտրհն է . . . : Ապրենի դէմը

մ'ունի, բայց զիտեմ որ ներսէն բարի է . . . : Հիմակ սա բարատանի՞ տեղը երթանք :

Հնչակը քաշեց, Պ. Պօյէ երեցաւ :

— Ինչ պատճառաւ խնայ չտուիր ինձ որ հայրս հոս էր : Այդ ինչ տեսակ անհողութիւն է որ . . . :

— Երկու անգամ զերկունին խօսքը բանալ ուղեցի այն միջոցին որ Պ. Պատինօին հետ պարտիզէն ներս կը մտնէիք . բայց դուք՝ կ'երեւի թէ այնքան զբաղած էիք Պ. Պատինօին հետ՝ որ ձեռնով նշան ըրիք խօսքը չընդմիջելու . . . : Ուստի նորէն համարձակեցայ սնդելու . . . : Սեծ վիշտ պիտի զգամ եթէ զերկունս կարծէ թէ անհողութեան յանցանք մ'ունիմ . . . :

— Շատ լաւ . . . Իսովարին ըսէ որ իսկոյն Օքթօն, ո՛չ . . . Բնչքէ երկանիւն լծէ . . . :

Պ. Պօյէ ակնածական խոնարհութիւն մ'ըրաւ :

Այն միջոցին որ դուրս պիտի ելնէր, դուռը վարկին :

Պ. Պօյէ հարցական դէմքով մը զերկունին նայեցաւ :

— Ներս մտիր — ըսաւ Ֆլօրէստան :

Երկրորդ սպասուոր մ'երեցաւ, արծթէ ափսէ մը ձեռքը բռնած :

Պ. Պօյէ ափսէն նախանձայրոյդ ակնածութեամբ, և յարդական շտապաւ մ'առաւ և բերաւ զերկունին ներսից :

Գերկումն անոր մէջէն բաւական մեծ կակ սպահարան մ'առաւ, որ սե կնքամոնսլ կնքուած էր :

Երկու սպասուորները խոհեմարար քաշուեցան :

Ֆլօրէստան սահարանը բացաւ : Անոր մէջ 25,000 Ֆրանքի գանձադիր մը կար . . . ատանց որ և է ազգարարութեան :

— Իրաւի — դռնէջ նա խնդութեամբ — այսօր բաղդս կը բանի . . . ազատեցայ . . . և այս անգամ ալ լիովին ազատեցայ . . . վաղեմ երթամ ակնավաճառին . . . և տակաւին . . . — ըսաւ իւրովի — կարելի է . . . : Ա՛չ, սպասե՛ք . . . չեն կարող վրաս կասկած մ'ունենայ . . . այս 25,000 Ֆրանքը դէշ չեմ ընել եթէ պահեմ . . . : Արդ . . . ինչ յիմար եմ որ իմ աստղէս կը կասկածիմ . . . այն պահուն որ միժողոյն կը թուի, ահա աւելի փայլուն չեմ իր . . . : Բայց այս դրամն ուսկէ կ'ուայ . . . հասցէին դիրն անձանսթ է ինձ . . . : Գնիքը նայի՛ք . . . դիտարոշմը . . . բայց

այս, այս . . . չեմ վրիպիր . . . Ն մը և Լ մը . . . նոյն իսկ Քրօղիլան է . . .
 . . . Ի՛նչպէս խնցար . . . և բառ մ'ալ չկայ . . . այլանդակ է : Ի՛նչ պա-
 տեհ ստիժ . . . անհ, Աստուած իմ, կը մտնում . . . այս առաւ անոր
 հետ ժամադիր եղեր էի . . . : Պատիւօին սպառնալիքը զիս տակն ու
 վրայ ըրաւ . . . Քրօղիլար մտցայ . . . գեանայարկը ինձ սպասեղէն ետև
 դացած տիտի ըլլայ . . . : Անտարակոյս այս նուէրը վափուկ միջոց մ'է
 ինձ հասկցնելու թէ գրամական նեղութիւններու պատճառաւ կը վախ-
 նայ որ ինքը չնոյցուի . . . այն, անուղղակի յանդիմանութիւն մ'է այս .
 . . որ իրեն չդիմելի, ինչպէս որ միշտ կ'ընէի . . . : Բարեսիրա Քրօղիլա
 . . . միշտ մը և նոյնը . . . թագուհիի մը պէս վեհանձն . . . : Մեղը որ
 այս կերպով կը վարուի իր հետը . . . քանի որ այնքան սիրուն է . . . :
 Երբեմն կը վշտանամ . . . բայց ես ծայրայեղ պարագայի մէջ անոր դի-
 մեր եմ . . . պնայէս ընելու աղիպուէր էի :

— Գերկումը իմ, երկանիւր պատրաստ է — եկաւ ըսելու Պ. Պօ-
 յէ :

- Պ'վրերաւ այս նամակը — հարցոյց անոր Ֆրօրէստան :
- Չդիտեմ, պարծն գերկումն . . . :
- Լաւ, վարը պիտի հարցնեմ :
- Բայց, ըսէ, գեանայարկը մարդ չկայ . — յարեց գերկումն և
 նշանակելի գէմբով մը Պօյէին երեսը նայեցաւ :
- Հիմակ մարդ չկայ, պարծն գերկումն :
- Պարծիքս սխալ չէր — մտածեց Ֆրօրէստան — Քրօղիլա ինձ
 սպասեց և դնայ :
- Արդեօք Պ. գերկումը կը հաճի ինձ քանի մը վնայրկեան շտորհե-
 լու — ըսաւ Պօյէ :
- Խօսիր . . . բայց շնա խօսիր . . . :
- Ետևար և ես խնցարն որ Մօնպրիզօն գուրն իր առնը շտկել
 կը փախարի . . . : Արդեօք պարծն գերկումը յանձն կ'առնու իրը բոլոր
 կահ-կարասիոնն անոր ստ աջարկի . . . նոյնպէս իր պատրաստի ախտն
 . . . Ետևարի և ինձի համար օգտակար առիթ մը կ'ըլլար այս սանն
 բանը ծախել, և գերկումիդ համար ալ թերեւ յարմար առիթ մը կ'ըլ-
 լար սոյն վաճառումին օրինաւոր պատճառ մը տալու :
- Բայց իրաւունք ունիս, Պօյէ . . . իմ մտախ ալ . . . այդ ըսածք

յարմար կը դատեմ . . . Մօնպրիզօն տեանեմ" և անոր հետ խօսիմ պի-
 տի . ի՛նչ սրբանաներով պիտի ապք :

— Պարծն գերկումը քաջ կ'իմանայ . . . որ ըստ կարի իր առասա-
 ձեռնութենէ օգուտ քաղել պէտք ենք :

— Եւ այդ վաճառումն շահիլ, ասկէ պարզ ի՛նչ կայ . . . : Նայինք
 . . . ի՛նչ է զինք :

— Բոլորը 260,000 Ֆրանք . . . պարծն գերկումն :

— Ի՛նչ կը վատկիք ասկէ, գու և Ետևար . . . :

— Շուրջ 40,000 Ֆրանք, պարծն գերկումն :

— Արդ որ շահ . . . ինչ և է, ձեր իրաւունքն է, վանն զի ձեռնէ
 դո՛հ եմ . . . և եթէ կտակ մը ձգէի, սոյն դումարը քեզ և Ետևարին կը
 թողուի :

Եւ գերկումը գուրս ելաւ նախ իր պարտատէրին մօտ երթալու, յե-
 աոյ տիկինն ալ Լիւանէլի, որուն համար բնաւ չէր կատակներ թէ Պա-
 տիւօին հետ ունեցած խօսակցութեան ներկայ դատուէր էր :

Գ Լ Ա Ի Խ Ժ Գ

Հ Ե Տ Ա Ջ Օ Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

Տը Լիւանէլի սպարանը Սէն-Ժէրմէնի արուարձանին մէկ արբոյցա-
 կան բնակութիւններէն մին էր՝ որ իրենց զար ու վար դիւրբոնն այնքան
 հոյակապ կ'երեւէին . այժմեւ տուն մ'այս պարտաներուն սանդղին վան-
 դակին մէջ հեշտիւ կրնար բռնել, և անոնց բունած տեղն ամբողջ թաղ
 մը պարունակել :

Երեկոյեան ժամն իննին մօտ՝ սոյն սպարանին ահագին դրան երկու
 թևերը բացուեցան շողողուն կիսակառնի մ'առջև, որ ընդարձակ բա-
 կին մէջ քաջավարժ կոր դիծ մը դժեւէն ետև՝ կանկ առաւ անբոյժ
 գրանդի մ'առջև՝ որ առաջին նախասենեկի մը կը ամսէր :

Մինչդեռ երկու հրաւիրա և կորոյի ձիերուն գալիքը հնչական սա-
 լարկին վրայ կը թիւար, սկսեցան սպայի մը դիմանիշ դո՛նալի բացու .
 պատանի մը սոյն փայլուն կառքէն թիթեակի իջաւ, և նոյնպէս թե-
 թեւան գրանդին հինգ վեց աստիճաններէն վեր ելաւ :

Այս պատանին ալ Սէն-Յըմէ գերկումն էր :

Գերկումնն՝ իր պարստակներն առնէն երեսով՝ իր Տօրը խոստմնապրէն
 դո՛՛հ հըրը՝ ինդրուած սրբանամածամբ շնորհներ և տրամադիր էր երեկո-
 յին ժամը տասնն գալ Շայօ փողոցը, ստակն առնուլ, դերկումն ըսինք՝
 տիկին տը Լիւանէյի ապարանն եկեր էր որպէս զի անոր ըրած նոր
 ծառայութեան փոխարէն իր շնորհակալեքը մատուցանէ . բայց առտու
 դքսուհին չգաննելուն՝ իրը յողթանական ներս կը մննէր, ստոյգ ըլլա-
 լով առջի իրկուն գտնել զանի, քանի որ այս ժամը դքսուհին անոր կը
 պահէր ստորարար :

Նախասենեկին երկու սպայակներուն շտապէն՝ որ Ֆյօրէստանի
 կասն այն ինչ ճանչցան վաղեցին ապակեայ դուռը բանալու, միւս
 սքննազգեստ սարսառոքներուն յետին ծայր յարդական կերպարանէն՝ ո-
 ըրով իսկոյն ոտք ելան դերկումն անցնելուն, վերջապէս գրեթէ քանի մը
 աննշմարեթի՝ նշաններէ մնարդ կը հասկնար որ աման էրէրէրը կամ լաւ
 ևս ճշմարիտ ակէն էր Ֆյօրէստան :

Երբ տը Լիւանէյ դուքսն իր սունը մննէր՝ անձրենայն ՚ի ձեռին և
 ահաղին կիսիօշիկներ ոտքը հագած (չորեկը կառքով երեկու չէր ա-
 խորժեր) նոյն սպաստորական շրջանները մի և նոյն ակնածութեամբ
 կը կրկնուէին . սակայն դիտող աչքի մը դիւրին էր նկատել որ կերպու-
 րաններու մեծ սարքերութիւն մը կար ամուսնին և սիրահարին
 արուած բնդունելութեան մէջ :

Մի և նոյն եռանդապին շտապը սենեկապաններու մէջ յայտնուեցաւ
 երբ Ֆյօրէստան այն անդ մտաւ . իսկոյն մէկն անոր առջեւ ընկաւ տի-
 կին տը Լիւանէյի ձայն սարու համար :

Երբէք դերկումն այնչափ պերճ եղած չէր, երբէք ինքզինքն այնքան
 թեթեւան, վստահ և յողթկու չէր գրացած . . . : Ըստու Տօրը վրայ
 սարած յաղթանակը, տիկին տը Լիւանէյի սերնջ նոր սարցոցն, իր
 ուրախութիւնն, ահաւելի կացութեան մը հրաշապէս ազատելուն վրայ,
 իր նորածին վստահութիւնը՝ բաղդին վրայ, իր սիրուն գեւորն յան-
 դգնութեան և դուարթութեան երեւոյթ մը կընծայէին սրով ակնի
 հրապուրելի կը գտնար . վերջապէս երբեք լատարձք մէջ մէջ ինք-
 ղինքը գրացած չէր . . . : Եւ իբրտուր ունէր : Երբէք իր նուրբ և դիւ-
 րաշարժ հոտակն այն օրուանէ ակնի վիտօրէն կանոյուն չէր բռնած .
 երբէք իր ճահառն ու ակնարկն այնքան ակնաբարտան կերպով չէր

բարձրացուցած, երբէք իր դուռըութիւնն ակնի հեշտօրէն չէր
 գրգռած սա մտածութեամբ . «Մեծատուն կէնը, սոյն սպառակն տի-
 լուհին, իմն է, իմ լծիս տակն է . . . գեռ ևս այս առտու ինձ կ'սպա-
 սէր իմ սունս . . . » :

Ֆյօրէստան այս յետին ծայր մտապաշտ խորհրածութիւնները կը-
 նէր երեք չորս սրահէ անցնելով՝ որ փողբիկ ակնեկի մը կը ասնէին ուր
 դքսուհին սովորաբար կը նստէր : Հայլիկ մը մէջ վերջին նայուած մը
 նեակելով Ֆյօրէստան իր վրայ ունեցած ընտիր կարծիքը լրացուց : Սե-
 նեկապանը սրահին գրան երկու փեղիկը բացաւ, և իմայուց .

— Պարոն տը Սէն - Բըմի գերկումնը . . . :

Գքսուհին զարմանքն ու սրամտութիւնն անբացատրելի եղան :

Կարճէր թէ կոմսն իր որդիին ըսած է թէ ինքն ալ ամէն բան լսեր
 էր . . . :

Ըրդէն ըսինք, իմանալով որ Ֆյօրէստան այնքան վստանուն էր,
 տիկին տը Լիւանէյի սէրը՝ յանկարծ մարելով ստանաղին արհամար-
 հանքի փոխուեր էր : Ըսինք նաև, թէ իր թեթեւութիւններուն և սխա-
 ըմնայ մէջ ալ տիկին տը Լիւանէյ անարատ և մարտը պահէր էր ուղ-
 դութեան, պատուոց զգացումները, նոյնպէս ստակաական անկեղծու-
 թիւնն՝ սր իրովին առնացի ուժգնութիւն և խստութիւն մ'ունէր . իր
 թեթեւութիւններուն յատկութիւններն, իր մեղութիւններուն ստարխու-
 թիւններն ունէր . սիրոյ հետ խորխաբար վարուելով՝ ինչպէս կը վա-
 ըուի մարդ մը, անձնուիրութեան, վեհանձնութեան, արիութեան և
 մանաւանդ ստորնութեան գեմաակութեան չափը՝ նոյն իսկ մարդէ ա-
 ւելի, կ'անցնէր : Տիկին տը Լիւանէյ իրկումը հանդիսի պիտի երթար,
 ուստի իր սովորական ճաշակով և շքեղութեամբ հագուեր էր, թէև
 ուսանց անբարձր . այս փառաւոր հագուարը, բայց ՚ի բաց և յան-
 դգնօրէն գրած շաւրն, իբր սպառական կէն մը, մինչև արեւանտուն-
 քին ասին, իր գեղութիւնն որ մանաւանդ լոյսին պայծառ էր, իր ամ-
 պահէ՛մ գեղարարէն մը հասակն՝ որով ակնի աչք կը գրաւէր այն վեհ
 կերպարանը զոր ոչ ոք իրեն պէս ունէր, և ՚ի հարկին, մինչև շանթա-
 ձիւր ժպրհութեան կը հասցնէր . . . : Գքսուհին վէս և անպիհներ բնա-
 ւորութիւնը կը ճանչէր . ուրեմն թող ընթերցողն երևակայէ իր կեր-
 պարանն, իր ակնարկն, երբ դերկումն յառաջ անցնելով թոռուցիկ, գե-
 դած իձաղ և վստահ, լատ անոր սիրայիլ .

— Իմ սիրելի Քլոդիլա . . . քանի բարեսիրտ ես . . . քանի . . . :

Գերկոմսը չկրցաւ խօսքն աւարտել :

Դքսուհին նստեր էր և տեղէն չէր շարժեր . բայց իր շարժումն , իր ակնարկն այնպիսի հանդարտ ու միանդամայն շանթահարքամանք մը կը յայտնէին . . . որ Ֆլորէստան քար կտրեցաւ . . . :

Անկարող եղաւ ոչ բառ մ'ըսել , ոչ քայլ մ'առաջ առնուլ :

Տիկին ար Ղիւսնէյ երբէք այս երևոյթով անոր տեսնուած չէր : Ֆլորէստան չէր կարող հաւատալ որ մի և նոյն կինն ըլլայ այն որ իրեն միշտ անուշ , գորովալի , կաթողին , հլու երեցեր էր . ըստ որում չկայ էակ մ'այնքան հեղև վեհերոտ որքան անվեհեր կին մարդու մ'առջև որ կը սիրէ զանի և անոր վրայ կը տիրէ :

Երբ առաջին զարմանքն անցաւ , Ֆլորէստան իր տկարութենէ ամօթահար մնաց . իր սովորական յանդգնութիւնը գտաւ : Քայլ մ'առնելով առ տիկին ար Ղիւսնէյ ձեռքը բռնելու համար , ըսաւ անոր՝ իր ամենէն զգուշիկ ձայնովը .

— Աստուած իմ , Քլոդիլա , ի՞նչ կայ . . . : Երբէք քեզ այսքան սիրուն չեմ տեսեր , և սակայն . . . :

— Ա՛հ , անամօթութեանդ չափը կ'անցնես . — գոչեց դքսուհին այնպիսի զզուանօր և ամբարտաւանութեամբ որ Ֆլորէստան նորէն ապուշ և արձանի պէս մնաց :

Սակայն քիչ մ'ինքզինքին դալով անոր ըսաւ :

— Գոնէ չպիտի իմացնես ինձ , Քլոդիլա , այս յանկարծական փոփոխութեան պատճառն : Ի՞նչ ըրի քեզ . . . ի՞նչ կ'ուզես :

Առանց պատասխան տալու , տիկին ար Ղիւսնէյ անոր նայեցաւ , ինչպէս որ կ'ըսեն ռամկորէն , ոտքէն ջղլուին , այնպիսի նախատական դէմքով մը , որ Ֆլորէստանի արիւնը բարկութենէ ճակտին զարկաւ , և գոչեց .

— Գիտեմ , տիկին , որ սովորութիւնդ է այսպէս յանկարծակի գժտիլ . . . : Միթէ ինձի հետ ալ գժտիլ կ'ուզես :

— Այդ մեծամտութիւնդ հետաքրքրական է — ըսաւ տիկին ար Ղիւսնէյ արարտնական քրքիջ մ'արձակելով . — գիտցիր , պարոն , որ երբ ծառայ մը զիս կը կողպտէ . . . ես անոր հետ չեմ քժտէր . . . այլ զանի կը վճատեմ . . . :

— Տիկին . . . :

— Ահ երջ տանք — ըսաւ դքսուհին սուղու լարիշ ձայնով մը — ներկայութենէդ կը դարձիմ : Ի՞նչ բան ունիս այս տեղ : Միթէ ստակդ չառի՞ր :

— Ուրեմն ստոյգ է . . . գուշակեցի որ դու ես . . . : Այն 25,000 Ֆրանքը . . . :

— Բու վերջին նենդադիրդ ազատեցիր , այնպէս չէ՞ , ընտանիքիդ անունին պատիւն անրի՞ծ մնաց . . . : Քանչէր . . . ելիր գնա . . . :

— Ա՛հ , հաւտան . . . :

— Այն դումարը կը մեղքնամ , կրնար շատ մը պարկեշտ մարդերու օղնել . . . : Բայց հարկ էր հօրդ և իմ պատուին մտածել :

— Այսպէս , Քլոդիլա , ամէն բան զիտէիր . . . : Ո՛հ , բաւ է , հիմա . . . կը մնայ ինձ մեռնիլ . . . — Գոչեց Ֆլորէստան սրտաղբաւ և յուսահատ ձայնով մը :

Դքսուհին լրբենի քահ քահ մը թողլով ընդուրեց այս ողբերգական բացագանչութիւնն , և կրկին զուարթութեան թափով մը յարեց .

— Աստուած իմ , երբէք չէի կարծէր որ վասանուտութիւնն այսքան ծաղրաշարժ կրնայ դառնալ :

— Տիկին . . . — գոչեց Ֆլորէստան՝ դէմքը կատրութենէ կարկամ : Դրան երկու թևերը դղրդիւնով բացուեցան և իմաց տուին ,

— Վճուրիղօն դուքսը :

Թէև Ֆլորէստան մեծ իշխանութիւն ունէր իր վրայ՝ հազիւ թէ իր ստեղծութեան թափը զսպեց , զոր դքսէն զատ ուրիշ դիտող աչք մ'անշուշտ պիտի կարենար նշմարել :

Պ . ար Վճուրիղօն հազիւ թէ տասն ութ տարեկան էր : Երևակայէ դեղձանիկ , սպիտակ և վարդազգին նորատի օրփորդի մը հիանալի դէմքը , որուն կարմրուն շրթերն և մաղուսի ծնօտը նորարոյս մօրուսով մը թեթևակի հովանաւոր ըլլայ . աւելցուր ասոր գեւ ևս փոքր ինչ վեհերոտ գորշ մեծ աչեր՝ որ կայսրուէլու (émérillonner) կը միտին , դքսուհին նման նրբակերտ հասակ մը , և թերևս այն ստեն սոյն գեոտատի դքսին վրայ դաղափար մը կ'ուսննաս , պատանի մ'որ հնաշխարհիկ տեսլական բերթէ տիպն ունէր և երբէք կ'օհոհէ և նա թիշտ կրային զգալով զարդարած չուսին զայն , իր փղոսկրի վզին սպիտակութիւնը նկատելէն ետև :

Գերկոմնը տկարութենէ կամ յանդգնութենէ չթողուց չգնաց :

— Քանի մարդավար ես, Գօնրաս որ այս իրկուն զիս մարէ անցուցիր — ըսաւ արիկն ար Ախանէյի սիրանուշ ձայնով մը, իր դեղէյիկ ձեռնը նորաստի գրսին երկարելով :

Գուրջը արիկն ար Ախանէյի ձեռքը պիտի թռթռէր, բայց նա զայն թեթեւ մը բարձրացուց և զուարթօրէն ըսաւ .

— Համբուրէ զայն, քեռօրդիս, ձեռնդցնելը չես հանած :

— Ներէ՛ . . . մօրաբոյր իմ — ըսաւ նորաստի սրտանին, և իր շրթերն իրեն ներկայացուած մերկ ու չքնաղ ձեռնին վրայ դրռնեց :

— Ի՞նչ պիտի ընես այս իրկուն, Գօնրաս . — հարցուց անոր արիկն ար Ախանէյ, ասանց Ֆլօրէստանի ուշադիր ըլլալ ցուցնելու :

— Ա՛չ ինչ, մօրաբոյր իմ, ասիկց ելնելէն ետև քլուար (ավումը) պիտի երթամ :

— Ամենին, մեղի, Պ. ար Ախանէյի և ինձ ուղեկից պիտի ըլլաս, արիկն Մէնվալի ստանը երթալու, այսօր իր ընդունելութեան օրն է . արդէն քանի մ'անդամ խնդրեց իղնէ քեզ իրեն ներկայելու . . . :

— Մօրաբոյր իմ, քու հրամանիդ ստորատու եմ մտադիր :

— Մանուսնդ՝ անի յայտնի կ'ընես, քլուարի համար ունեցած եռանդդ ու ճաշակդ չեմ սիրեր, ամէն պէտք եղածն ունիս որ և է բարձր ընկերութիւններու մէջ սիրով ընդունուելու և նոյն իսկ փնտուռելու . . . ուստի պէտք է որ ստէպ յաճախես :

— Այո՛, մօրքոյր իմ :

— Եւ որովհետև քու առջևդ իբր թէ մտադիր վիճակն ունիմ . . . սիրելիդ իմ Գօնրաս, քեզմէ շատ բաներ պիտի պահանջես : Գու հիմակ ազատ ես, իրաւ, բայց կարծեմ թէ տակաւին երկար ժամանակ ինաւ մակալի պէտք ունիս . . . և պէտք է ի՛մ խնամակալութիւնս ընդունելու զիջանիս :

— Աւրախութեամբ, երջանկութեամբ, մօրքոյր իմ . — ըսաւ նորաստի գուրան աշխուժով մը :

Անհար է Ֆլօրէստանի՝ որ միշտ կանդուն էր և վառարանին յեռնած՝ լրին կատարութիւնը նկարագրել : Ա՛չ գուրան, ոչ Ֆլօրիլա ուշ չէին գներ անոր : Քաջ զխանալով թէ արիկն ար Ախանէյ որչափ շուտ կ'երուշէր ըրածն, երևակայեց թէ զքսուհին այն աստիճանի կը հասցնէր

յանդգնութիւնն ու արհամարհանքն որ անմիջապէս և իր առջև կը քծնէր Պ. ար Մօնպրիդօնին հետ :

Բայց գերկոմնը կը սխալէր . դքսուհին լիովին մնայական սէր կը տածէր իր քեռօրդիկն համար, վասն զի գրեթէ անոր ծնունդը տեսեր էր : Բայց նորաստի գուրան այնքան սիրուն էր, այնքան բարեբաստիկ կը համարէր զինքը մօրքեռ. ցոյց տուած շնորհալի ընդունելութենէ, որ նախանձը, կամ լաւ ևս Ֆլօրէստանի գոռոզութիւնը զայրացաւ . իր սիրաբը կը գալարէր նախանձու անադորոյն խայթուածքէն, որով կը ներշնչէր զինքը Գօնրաս ար Մօնպրիդօն, որ, հարուստ և չքնաղ, փառաւորապէս կը մտնէր բերկրանօք, արքունութեամբ և խրախճանօք լի կեանքի մը մէջ, մինչդեռ գերկոմնն անկէ կ'երէր կործանած, աւղարտած, անդունած և անպատիւ : Պ. ար Մէն-Բըմի քաջ էր, եթէ ներքի է ըսել, զլիւ քաջութեամբ, որ բարկութենէ կամ անապարծութենէ մենամարտութեան մը գիմազբաւ կենալ կը դրդէ . բայց, վատազգի ու ապականակիր, չունէր այն սրտի արխութիւնն որ յօռի կրկց կը յաղթէ, և կամ, գէթ կամու որ մահուամբ մը վատահամբաւութենէ խորշելու ազգութիւն կ'ընծայէ : Դքսուհին գոխային քամահանքէն մոլեղանձ, նորաստի գուրան իր յաջողութեամբ կարծելով, Պ. ար Մէն-Բըմի լրբութեան կողմէ մղցիլ մտադրեց արիկն ար Ախանէյի հետ, և ի հարկին Գօնրասի հետ կուռի բռնախլ :

Դքսուհին Ֆլօրէստանի ժպրհութենէ սրտանելով անոր երեսը չէր նայեր . և Պ. ար Մօնպրիդօն իր մօրքեռ հաճելի երևելու եռանդէն, փոքր ինչ պատշաճութիւնները մտնալով ոչ բարեւեր և ոչ բառ մ'ուղղէր էր գերկոմնին, որ թէ և իրեն ծանօթ էր : Սա՛ գէպ Գօնրաս յառաջանալով որ իր կրնակը դարձուցեր էր, թեթեւ մ'անոր թեթեւ գնաւ և չոր ու հեղհական ձայնով մ'ըսաւ :

— Բարի իրկուն, պարոն . . . գեռ ևս քեզ չտեսնելուս քիւր ներում կը ինդրեմ :

Պ. ար Մօնպրիդօն զգալով որ իրօք քաղաքավարութեան դէմ գործած է, աշխուժով մը գարձաւ և գերկոմնին ըսաւ մտօրմօրէն .

— Պարոն, ստուգիւ : ամօթապարտ եմ քու առջև . . . : Բայց կը ժողովյաւարու որ մօրքոյրս, որ իմ անմտադրութեանս պատճառ եղաւ, զայն քու առջև անբասիր ընելու կը հաճի . . . և . . . :

— Գօնրատ — ըսաւ դքսուհին, Ֆլօրէստանի անխոհեմութենէ համբերութիւնը հասնելով, քանի որ նոյն տեղ մնալու գիմագրաւ կը պնդէր — Գօնրատ, հարկ չէ, ներում պէտք չէ... ընելիքը չափեր:

Պ. տը Մօնպրիզօն կարծելով թէ իր մօրքեռ աղջիկը կատակ կ'ընէ շատ կարգապահ ըլլալուն համար, զուարթօրէն դերկումին ըսաւ, որ զոյնը դեղներ էր բարկութենէ:

— Չպիտի պնդեմ, պարոն... քանի որ մօրքեռ աղջիկ կ'արդիւլէ...: Ար տեսնես որ իր ինամակալութիւնը կ'սկսի:

— Եւ այդ ինամակալութիւնն այդչափով զօժ չպիտի ըլլայ... սիբելի պարոն, սողոգ եղիր: Ուստի այս նախատեսութեամբս (զոր դքսուհի տիկինը պիտի շտապի իրացնել, աներկբայ եմ) այս նախատեսութեամբ, կ'ըսեմ, քեզի առաջարկութիւն մ'ընելու կը մտադրեմ...:

— Ինչի՞, պարոն. — ըսաւ Գօնրատ, Ֆլօրէստանի երգիծական կերպն անվայել գտնելով:

— Նոյն իսկքեզի...: Քանի մ'օրէն ծէրօլտէյնի գետապանատունը պիտի երթամ, որուն պաշտօնատար կարգուած եմ...: Ար փափաքէի կահազարդ տունս ծախել, նոյնպէս կազմու պատրաստ ախոս. պարտաւոր ես նոյնպէս օտրիշ քանի որ կարգի դնել...:

— Եւ դերկումն այս վերջին բառերը լրբօրէն շեշտեց տիկին տը Լիւանէյն նայելով. — Շատ հետաքրքրական պիտի ըլլայ... այնպէս չէ՞, դքսուհի տիկին:

— Միտքդ չեմ հասկնար, պարոն — ըսաւ Պ. տը Մօնպրիզօն հետզհետէ զարմանալով:

— Ես քեզի պիտի բացատրեմ, Գօնրատ, թէ ինչ պատճառաւ չես կարող ընդունիլ քեզի եղած առաջարկութիւնն — ըսաւ Քլօդիլտ:

— Եւ ինչո՞ւ համար պարոնը չկրնար ընդունիլ իմ առաջարկութիւնս, դքսուհի տիկին:

— Սիրելի Գօնրատ, ինչ որքեզ ծախու տալու կ'առաջարկեն արդէն ուրիշներու ծախու տրուած է... կը հասկնամ... իբր անտատի մը մէջ կողպատուելու անպատեհութիւնը ըրած պիտի ըլլաս:

Ֆլօրէստան կատողութենէ շրթերը խածաւ:

— Չզոյշ եղիր, տիկին — գոչեց նա:

— Ի՞նչպէս, սպառնալիք... այս տեղ... պարոն. — գոչեց Գօնրատ:

— Աղէ՛, Գօնրատ, ուշ մը դներ խօսքերուն — ըսաւ տիկին տը Լիւանէյ շարքահատ մ'առնելով ամենէ մ'անդրդուելի սառնութեամբ, սրտուտար մարդ մը պէտք չէ և չկրնար պարոնին հետ յարաբերութիւն հաստատել: Եթէ հակառակը պնդէ, պատճառն ըսելու պատրաստ եմ:

Ստակայի գուպար մը տեղի պիտի ունենար անշուշտ, երբ նորէն դրան երկու փեղկերը բացուելով տը Լիւանէյ դուքան իր սովորականին պէս որոտնդոտս, բռնապէս, փոթորկայի ներս մտաւ:

— Ի՞նչպէս, սիրականդ իմ, արդէն պատրաստ ես. — ըսաւ նա իր կնիկան. — բայց զարմանք... բայց հիանալի է...: Քարի իրկուն, Սէն Վրմի, բարի իրկուն, Գօնրատ...: Ա՛հ, ամենէն յուսահատ մարդն ահա ես եմ... այսինքն, բուն չունիմ ցաւէս, հաց չեմ ուտեր, անբան դարձեր եմ, չեմ կրնար վարժիլ այն կորուստին... խեղճ տ'Արվիլ, ի՞նչ դէպք:

Եւ Պ. տը Լիւանէյ՝ կրնակի վրայ ընկնելով տեսակ մը կընայե՞նք բազմացի վրայ՝ փեղդոյն հեռուն նետեց յուսահատական շարժումով մը, և ձախ ծոռնին աջ ծնկին վրայ դնելով գիրք մ'առնելու համար իր ոտքը ձեռօքը բռնեց, և վշտազին բացազանչութիւններ արձակեց շարունակ:

Գօնրատի և Ֆլօրէստանի այլայլութիւնը գաղբերու վրայ էր, թէ և Պ. տը Լիւանէյ, որ աշխարհիս ամենէն անհեռատես մարդն էր, ոչ ինչ չկրցաւ հասկնալ:

Տիկին տը Լիւանէյ չէ թէ շփոթութենէ, վասն զի դիւրաւ շփոթելու կին մը չէր, ինչպէս յայտնի է, այլ վասն զի Ֆլօրէստանի ներկայ յութիւնն իրեն զգուելի և անտանելի էր, դքսին ըսաւ:

— Երբոր ուզես պատրաստ եմ մեկնելու, Գօնրատը տիկին տը Սէն վայի պիտի ներկայեմ:

— Չէ՛, չէ՛, չէ՛ — սկսաւ գոչել դուքան ոտքը թողով՝ բարձրէն մի առնելու համար, որուն վրայ ուժիկն զարկաւ երկու բուռովը, մինչդեռ Քլօդիլտ թուտու ելաւ և երկանն անակնկալ աղաղակներէն թիկնաթուին վրայ ցատկեց:

— Աստուած իմ, բայց ի՞նչ ունիս, պարոն — ըսաւ անոր դքսուհին — զիս ահ ու դողի մէջ ձգեցիր:

— Չէ՛ — կրկնեց դուքան, և բարձր մեկրի հրելով՝ յանկարծ ոտք

երևաւ և սկսաւ այրանդակ շարժումներ ընելով քաղիւ — չեմ կրնար հաւատալ որ այն խեղճ ա' Արվիլը մեռած ըլլայ . իսկ դու , Սէն-Վրմի : — Արդաբե , այս գէտը ստիպի է . — ըսաւ գերիտնն , որ , քէնն ու կատղութիւնն 'ի սիրտ , Պ . տը Վծայրիլոնի անարկը կը վնասէր . բայց սա , իր մօրքեռ աղջկին վերջին խօսքերուն համեմատ չէ թէ չարութենէ , այլ հարստութենէն , իր անարկն այնպիսի ծանր կերպով աղբարած մարդէն կը հեռացնէր :

— Վաղաչեմ , պարոն — ըսաւ դքսուհին իր էրկանն ոտք եխելով . — մի այդպէս բարձրագոյ՝ մանաւանդ այրանդակ կերպով . . . մի ողբար ա' Արվիլը . . . : Հնչակը քաշէ , խնդրեմ , կտաքս պատրաստել տալու համար :

— Բայց ըսածս ալ ճշմարիտ է — ըսաւ Պ . տը Լիւսնէյ հնչակին լարը բռնելով . — տես անդամ մ'որ երեք օր առաջ քաշառողջու կայտառ էր . . . և այսօր իրմէ ինչ կը մնայ . ոչ ինչ . . . ոչ ինչ . . . ոչ ինչ . . . :

Այս երեք բացաղանջութիւններն արձակիւն էաւ՝ դուքսն այնպէս սաստիկ ցնցեց երեք անդամ ձեռքը բռնած հնչակին լարը , միշտ թեք-թեքելով , որ լարը վերին զսարանակէն զատուելով՝ վառ մոմեր կրող կերտնի մը վրայ ընկաւ , երկուքը վար տապալեց . մին վառարանին վրայ կենալով հին Սէվրի փոքրիկ բաժակ մը խորտակեց , միւսը գետինը դրոնցաւ կրակարանին առջև դուռած սքիսի գորգի մը վրայ , որ պահ մը բռնկելով գրեթէ իսկոյն մարեցաւ Գծարատի ոտքին ներքև :

Նոյն պահուն երկու սպասուոր՝ հնչակին ահալին դռնդուռէն կոչուելով շտապաւ վաղցին և Պ . տը Լիւսնէյն գտան հնչակին լարը ձեռքը բռնած , մինչդեռ դքսուհին քահ քահ կը խնայար մոմերուն այն գլորումէն , և Պ . տը Վծայրիլոն իր մօրքեռ աղջկին դուրսթուութեան կը մասնակցէր : Միայն Պ . տը Սէն-Վրմին չէր ծիծաղել :

Պ . տը Լիւսնէյ , այս տեսակ դիպուածներու վարժ՝ ծանր կերպարան մը կը դասէր . հնչակին լարը սպասուորներէն մէկուն նետելով անոնց ըսաւ .

- Տիկնին կտաքր :
- Բլօրիլու փոքր ինչ հանդարտելով , վրայ բերաւ :
- Իրաւի , պարոն , քեղ միայն տրուած է այսպիսի ողբալի դէպքի մ'առթիւ մարդու ծիծաղը շարժել . . . :

— Պրտիլի . . . չես ըսեր զարհուրելի . . . չես ըսեր ահարկոն : Բան մ'ըսեմ , երէկուանէ վեր , փնտաւելու վրայ եմ թէ նոյն իսկ իմ ընտանիքիս մէջ քանի քանիներ կան որոց մահը կ'ուզէի տեսնել այն խեղճ ա' Արվիլի տեղ : Նախ իմ քեռորդիս Էնպէրվախն , որ կակաղ ըլլալուն մարդու սիրտ կը հատցնէ : ապա Մէրէնիլը մօրաքոյրը , որ միշտ իր ջիղերուն , իր անդարին վրայ կը խօսի , և ամէն օր ճաշի ապանելու համար , անտետիլ կակուծ մը կը լափէ , ճշմարիտ դոնադանուհի մը պէս : Միթէ այն բու Մէրէնիլը մօրաքոյրը շատ կը սիրէս :

— Համը հոսը փախուցիր , պարոն , իսկ ես , ինչ ես . — ըսաւ դքսուհին ուսերը բարձրացնելով :

— Բայց ըսածս ճշմարիտ է . — վրայ բերաւ դուքսը — բարեկամի մը համար մարդ քանն անպիտաններ կը դոհէ . . . այնպէս չէ , Սէն-Վրմի :

— Անտարակոյր :

— Գարձեալ գերձակին հին պատմութիւնն է : Գիտես զայն , Գծարատ , գերձակին պատմութիւնը :

— Ո՛չ , չգիտեմ , պարոն :

— Հիմակ շատ մը պիտի իմանաս այլաբանութիւնը : Գերձակ մը կախաղանի կը դատարարուուի . աւանին մէջ իրմէ ուրիշ գերձակ չկար . ինչ կ'ընեն բնակիչները . դատարարին կ'ըսեն : Պարոն դատարար , գերձակ մը միայն ունինք , և երեք մուճակադործ , եթէ կարելի է մուճակադործներէն մին կախել գերձակին տեղ , դարձեալ երկու մուճակադործ մեզի կը բաւէ : Ար հասկնաս այլաբանութիւնը , Գծարատ :

- Այո՛ , պարոն :
- Իսկ դու , Սէն-Վրմի :
- Ես ալ նոյնպէս :
- Դքսուհին կտաքր պատրաստ է . — ըսաւ սպասուորներէն մին :
- Մ՛հ , զարմանք , բայց ինչ պատճառաւ անգամանդները չգրիր . — ըսաւ յանկարծ Պ . տը Լիւսնէյ . — այդ հագուստովը շատ աղոթ պիտի վայելին քեզ :

Սէն-Վրմի դող ելաւ : — Հուզար տարին անդամ մը մկտան այցելութեան պիտի երևնայ — վրայ բերաւ դուքսը — դուն ալ չես սպասուեր զիս դոհարները

զնեղով . . . և արդարև աղւոր են, դքսուհիին գոհարները . . . տեսար զանանք, Սէն-Բըմի :

— Այո . . . սրարնը զանանք կը ճանչէ . . . իրովն — ըսաւ Քլօ-դիլա . ապա յարեց : — Թեւդ սուր, Գօնրատ . . . :

Պ. սը Լիւանէյ դքսուհիին հետևեցաւ Սէն-Բըմիի հետ, որ բարկութենէ ինքն իրմէ ելեր էր :

— Ախթէ մեզի հետ Սէնվալի տունը չ'սխտի դաս, Սէն-Բըմի — ըսաւ անոր Պ. սը Լիւանէյ :

— Ո՛չ . . . անկարելի է — պատասխանեց խրոխտաբար :

— Ճիշտ, նոյնպէս, տիկին Սէնվալն, ահա նոր անձ մ'ալ, Սէն-Բըմի . . . ինչ կ'ընեմ մէկ . . . երկու . . . զոր յօժարակամ կը զոհէի. վասն զի իր էրիկն ալ իմ ցանկիս մէջն է :

— Ինչ ցանկ :

— Այն անձերուն որոց մահն անտարբեր աչօք սխտի տեսնէի, հերիք էր որ ա'Սըմիլ կենդանի մնար :

Այն միջոցին որ Պ. սը Օճուրիզօն դքսուհիին կ'օգնէր օգտատրանն՝ իր լօյսիկը հաղնելու, Պ. սը Լիւանէյ անոր դառնալով ըսաւ :

— Քանի որ մեզի հետ կգաս, Գօնրատ . . . ըսէ կառավարիդ որ մեր կառքին ետևէն դայ . . . միայն թէ Սէն-Բըմի, դու ալ մեզի ուղեկցիլ ուղեւ. այն աստն ինձի ալ տեղ մը կտաս, և քեզի ուրիշ աղւոր պատմութիւն մը սխտի պատմեմ, որ դերձակին պատմութենէ աւելի կ'աժէ :

— Շնորհակալ եմ — ըսաւ Սէն-Բըմի չոր ու ցամաք կերպով մը .

— չեմ կարող ձեզի ուղեկցի բլբլալու :

— Ուրեմն, 'ի կրկին տեսութիւն, սիրելիդ իմ . . . Արդեօք կնկանս հետ կուի ըրիք. նայէ, կառք կը հեծնէ առանց քեզի բառ մ'ընելու :

Եւ արդարև դքսուհիին պէքէնը գրանդին առջևը դալով մէջը մտաւ թեթևակի :

— Բարեկամ . . . — ըսաւ Գօնրատ առ մարդավարութիւն Պ. սը Լիւանէյի սպասելով

— Հեծիք, դու հեծիր . . . — ըսաւ դուքան՝ որ պահ մը գրանդին վերի կողմէն գերկումնին կառքին ընտիր երիվարներուն վրայ զնայելով .

— Ասոնք են աշխատ ձիերդ . . . Սէն-Բըմի :

— Այո . . . :

— Հապա դիրուկ Խովարդ նայէ . . . ինչ ձև ունի . . . : Ահա ասոր կ'ընեն վարդեա կառավար մը . . . : Նայէ, ինչպէս աղւոր կը վարէ ձիերը . . . : Պէտք է ճիշտն ըսել, մինակ սա սատանայ Սէն-Բըմիին տրուած է ամէն բանի մէջ ընտրելագոյն բաները վայելել :

— Տիկին սը Լիւանէյ և իր քեռորդին քեզ կ'սպասեն, բարեկամ — ըսաւ Պ. սը Ուէն-Բըմի դառնութեամբ :

— Այո, ճշմարիտ է . . . ինչ կրպիտ եմ . . . : Մնաս բարև, Սէն-Բըմի . . . : Ա՛հ, սխտի մոռնայի — ըսաւ դուքըր գրանդին մէջ կենալով

— թէ որ ուրիշ աղւոր տեղ մը չունիս երթալու, վաղը մեզի եկուր ճաշի . լըրտ Տուտէյ Սկովտիան ինձի թաւուտի աքաղաղներ դրկեց :

Երևակայէ որ հրէշային բաներ են . . . : Ա՛րնդունիս հրաւերս, այնպէս չէ :

Եւ դուքըր միացաւ իր կնկան և Գօնրատին :

Սէն-Բըմի գրանդին վրայ մինակ մնալով կառքին հետանալը տեսաւ :

Իրն ալ յառաջ անցաւ :

Իր կառքը հեծաւ բարկութեան, ատելութեան և յուսահատութեան ակնարկ մը նետելով այս տան վրայ, ուր ստէպ իբր տէր մտած էր, և ուսկից անարդաբար այժմ կը վստատէր :

— Շխտակ տունս — ըսաւ խրոխտաբար : — Ապարանս — ըսաւ պայիին Խովարին գոնակը պոյելով :

Գիւրին է երևակայել թէ ինչ գառն ու հալումաշ մտմտութի մէջ ընկաւ Սէն-Բըմի երբ տուն դարձաւ :

'Ներս մանելու միջոցին՝ Պօյէ՛ որ զինքը գրան գաւիթը կ'սպասէր՝ անոր ըսաւ :

— Կումըր վերն է . . . գերկումնիդ կ'սպասէ :

— Շատ ըս . . . : — Աւրն է նաև մարդ մ'որուն հետ գերկումնոյ ժամը տասին ժաւ մաղիք եղաւ, Պ. Բըլի-Ժանը . . . :

— Լաւ, ըս . . . : — Ո՛հ, այս ինչ իրկուն է — ըսաւ Քլօրէստան հայըր գանելու համար վեր ելնելով, որ առաջին դասիկումնին սրահը կ'սպասէր, այն սրահն ուր առաւօտեան տեսարանը տեղի ունեցեր էր :

— Բիւր ներում կը ինդրեմ, հայր իմ, որ երած ասեղսդ այս սեղ չբանուեցայ . . . բայց . . .

— Սուտ փոխանակողին ունեցող մարդն հոն է . — ըստ կոմնն իր որդիին խօսքն ընդմիջելով . . . :

— Այո, հայր իմ, վարն է . . . :

— Վեր կանչել տուր :

Փլօրէստան հնչակը վարկաւ, Պոյէ հասաւ :

— Պ. Բրդի-Թանի բսէ որ վեր երնէ . . . :

— Հաս աղէկ, պարոն դերիմն : — Եւ Պոյէ դուրս ելաւ :

— Բանի բարեսիրտ ես, հայր իմ, որ խտտումը չմտցար :

— Միշտ տուած խոտումն կը յիշեմ :

— Բանի երախտապարտ եմ . . . ինչպէս պիտի հատուցանեմ երբէք . . . :

— Ձէի ուղեր որ անուան անպատուի . . . և չպիտի անպատուի . . . :

— Ա՛չ, չպիտի անպատուի . . . ո՛չ . . . և այսուհետև չպիտի արատի թօսք կսամ . քեզ, հայր իմ . . . :

Կոմնն տարօրէն դէմքով մ'իր որդին դիտեց և կրկնեց :

— Ա՛չ, այսուհետև չպիտի արատի :

Ապա երգիծական դէմքով մը յարեց :

— Վհուկ մ'ես :

— Վասն զի իմ որոշումն սրտիս մէջ կը կարդամ :

Փլօրէստանի հայրը բան մը չպատասխանեց :

Սենեկին մէջ վեր վար պարտեցաւ, իր երկու ձեռներն երկար թիկեացին երկու գրպաններուն մէջ դրած :

Գունատ էր :

— Պարոն Բրդի-Թան — ըստ Պոյէ ներս հրամայելով ցած, քծուծ և խորամանկ երեսով մարդ մը :

— Ա՛ւր է սա փոխանակողին — ըստ կոմնն :

— Ահաասիկ, պարոն — ըստ Բրդի-Թան (Թաք-Փէրբան նոտաբին արբանեակը), թուղթը կոմնին տարով :

— Միթէ այս է ըսած թուղթդ — ըստ կոմնն որդիին աջքովը զայն անխարկելով :

— Այո, հայր իմ . . . :

Կոմնն իր բաժնիականի գրպանէն քսան հինգ հատ հաղար ֆրանքնոց լումատուն հանեց, զանոնք որդիին յանձնեց և ըսաւ :

— Վճարէ :

Փլօրէստան վճարեց և թուղթն առաւ գոհունակութեան խորին հառաչ մ'արձակելով :

Պ. Բրդի-Թան հին թղթակալի մը մէջ ուշի ուշով տուները տեղաւորեց, և բարեկեց :

Պ. տը Սէն-Բըմի անոր հետ սրահէն դուրս ելաւ, մինչդեռ Փլօրէստան խոհանարար փոխանակողիւրը կը պատուէր :

— Գէթ Բլօղիլախն 25,000 ֆրանքը քովս մնայ : Աթէ բան մ'երևան չերնէ . . . միթիթարութիւն մ'է . . . : Բայց ինչպէս վարուեցաւ հետս . . . : Զարմանք, ինչ ըսելիք կրնայ ունենալ հայրս Պ. Բրդի-Թանին :

Կրկնակի գոցող նիզի մը կախնչը դերիմնին սարսուռ մ'աղղեց :

Եր հայրը ներս մտաւ . . . :

Եր գունատութիւնն աւելցեր էր :

— Այնպէս մ'եկաւ ինձ, հայր իմ, որ դահլճիս գրան գոցուելը ըսելի :

— Այո, ես գոցեցի :

— Գն, հայր իմ . . . : Եւ ինչ պատճառաւ . — հարցուց Փլօրէստան ապշած :

— Հիմակ պիտի ըլլամ քեզ պատճառը :

Եւ կոմնն այնպէս մը կեցաւ որ իր որդին յիարեաց պարտնի սանդղէն անցնիլ, որ դեանայարկը կը տանէր :

Փլօրէստան սկսեր էր տարապաղին դիտել հօրը շարագուշակ կերպարանն և անվստահութեամբ անոր բոլոր շարժումները կը քննէր :

Անորոշ սարսափ մը կ'զգար՝ առանց պատճառը մեկնելու :

— Հայր իմ . . . ինչ ունիս . . . :

— Այս ատուտ, երբ զիս տեսար, քու միակ մտնուտըդ սա եղաւ . Հայրս չպիտի թողու որ իր անունն արատի, պիտի վճարէ . . . Եթէ յաջողմ անոր սիրտը շարժել ապաշտի քանի մը սուտ ու պատիւը խօսքերով :

— Ա՛հ, միթէ կրնան երեւակայել սր . . .

— Խօսքս մի կարեր . . . : Այն սուտ ու պատիր խօսքերէն չբռնուեցայ . դու ոչ ամօթ ունիս , ոչ զիղճ , ոչ խիղճ . մոլութիւնը բոլոր սիրտդ զրաւեր է . երբէք ուղիղ զգացում մը չես ունեցեր , քանի որ քմածին կերբդ գոճ ընելու միջոցներ ունէիր գողութիւն չըրիր , այս է ահա քու կարգի հարուստներու ուղղութիւն ըստածն . ապա սկսար անպատշաճ գործեր ընել , ապա ստորնութիւններ , ապա ոճիր , դրամանկողութիւն . . . : Ասի կենացդ լուկ առաջին շրջանն է . . . աղւոր և անարատ է այն՝ ապագայ կենացդ հետ բազմատելով . . . :

— Իբաւ կ'ըլլար ըսածդ եթէ ընթացքս չփոխէի , բայց պիտի փոխեմ . . . հայր իմ . . . արդէն երգում ըրի որ պիտի փոխեմ :

— Չէ , չպիտի փոխէիր . . . :

— Բայց . . . :

— Չէ , չպիտի փոխէիր . . . : Մինչ ցարդ ապրած ընկերութենէդ վնասուելով քիչ ատենէն մեղապարտ պիտի դատնայիր այն թշուառներու նման՝ որոց մէջ պիտի ընկնիս , անվրէպ գող պիտի դառնայիր . . . և եթէ հարկը սրահանջէր . . . մարդասպան . . . : Ահա քու ապագայ . . .

— Մարդասպան . . . ես . . . :

— Այո , դու , զի վատ ես :

— Մենամարտութիւններ ունեցայ , և 'ի փորձ ցոյց տուի . . . :

— Ես քեզի կ'ըսեմ որ վատ ես : Ատանուտութիւնը մահուանէ նախապես համարեցիր . . . : Օր մը պիտի դար ուրբու նոր ոճիրներուդ անպատիժ մնալն ուրիշի կեանքէն նախադաս պիտի սեպէիր : Այդ բանը չպիտի պատահի , չեմ ուզեր որ այդպիսի բան մը պատահի . . . : Թամանակին հասց պոնէ հասարակային անպատուութենէ մ'իմ անունս զերծ պահելու . . . : Պէտք է վերջ տալ այս բանին . . . :

— Ի՞նչպէս , հայր իմ . . . վերջ տալ . . . : Ի՞նչ է միտքդ . . . — գոչեց Ֆլորէստան ևս քան զէս ստկարով իր հօրը դէմքին ահեղ երեւոյթէն և աճեցուն գունատութենէն :

Յանկարճ դահլճին դուռը ուժգին զարկին . Ֆլորէստան շարժում մ'ըրաւ երթալ բանալու համար , որպէս զի վերջ տայ այս տեսարանին որ իրեն սարսափ կ'ազդէր , բայց կոմսը զանի երկաթի ձեռքովը բռնեց ու կեցուց :

— Ո՛վ է զարնողը — հարցուց կոմսը :

— Յանուն օրինաց , բացէք . . . բացէք . . . — ըսաւ ձայն մը :

— Ուրեմն այն կեղծ թուղթը վերջինը չէր — գոչեց կոմսը կամանուցուկ մը , և իր որդիին դէմքն ահաւոր դէմքով իր նայելով :

— Այո , հայր իմ . . . կ'երգնում որ վերջինն է . . . — ըսաւ Ֆլորէստան հօրը բռուն ձեռքէն ազատելու ջանալով 'ի զուր :

— Յանուն օրինաց . . . բացէք . . . — կրկնեց ձայնը :

— Ի՞նչ կ'ուզէք — հարցուց կոմսը :

— Ոստիկանութեան գործակալն եմ . եկեր եմ գողցուած գոհարներ հետազօտելու , և այս գողութեամբ ամբաստանուած է Պ . տը Սէն-Բըրնի . . . Պ . Պատինս ակնավաճառը փաստեր ունի : Եթէ չբանաք , սրտն . . . պիտի ստիպուիմ դուռը խորտակելով ներս մտնել :

— Ահա արդէն գող ես . . . չէի սխալեր . . . — ըսաւ կոմսը կամանուցուկ մը :

— Եկեր էի քեզ սպաննելու . . . և շատ ժամանակ անցուցի . . . :

— Ձիս սպաննելու :

— Բաւական է անունիս եղած նախանտիքը , վերջացնեք . ահա այս տեղ երկու ատրձանակ ունիմ . . . պէտք է որ ինքզինքդ սպաննես . . . թէ ոչ , ես , ես պիտի սպաննեմ քեզ , և պիտի ըսեմ թէ նախատիքէ ազատ մնալու համար յուսահատութենէդ ինքզինքդ սպաննեցիր :

Եւ կոմսը , ստկարի պաղարինութեամբ մը , գրպանէն ատրձանակ մը հանեց , և ազատ ձեռքովը որդիին ներկայեց անոր ընելով .

— Շուտ . . . ըսածս կատարէ , եթէ վատ չես :

'Նորէն ընդունայն ձիւ թափեղէն ետե՛՛ կոմսին ձեռնէն ազատելու համար , Ֆլորէստան ահաբեկ դէպ ետին ընկաւ և գոյնը մոխիր դարձաւ :

Իր հօրը ահուելի , անորոքելի ակնարկը տեսնելով տեսաւ որ անոր մէ գթութիւն մը սրտակուտ յոյս չկայ :

— Հոնք իմ . . . — գոչեց նա :

— Պէտք է մեռնիլ :

— Կը զղջամ . . . :

— Շատ ուշ է . . . : Կը ըսես . . . դուռը կը դղրդեն . . . :

— Բոլոր յանցանքս կը քաւեմ . . . :

— Հիմակ ներս պիտի մտնեն . . . : Ուրեմն կ'ուզես որ ես սպաննեմ քեզ :

— Շնորհ . . . :

— Հիմակ դուռը պիտի բռնի բռնան . . . և զիս պիտի ստիպես . . .
Եւ կոմեր Ֆորքէստանի կրծքին վրայ դբաւ հրազենին ծայրը :

Արտաքին ազակէն իրօք կիմացուէր որ գահճին դուռն աւելի երկար չպիտի զիմանար ու պիտի բացուէր :

Գերկոմեր տեսաւ որ ազատում չկայ :

Իր ձակարկն վրայ յանկարծահաս և յուսահատ սրոշում մը նշմարելի եղաւ , այլ ևս հօրը դէմ չդրաւ , և հաստատուն ու անձնուէր կերպով մ'անոր ըսաւ :

— Իբաւուր ունիս , հայր իմ . . . սուր հրազենն . . . : Անուն բաւական նախատեցաւ , իմ ապագայ կեանքս ստիպի է , չածեր որ զայն պահպանելու փորձ փորձեմ : Տուր ինձ սա հրազենը : Հիմակ պիտի տեսնես թէ վնաս եմ : — Եւ իր ձեռնն ատրճանակին երկնցուց :

— Բայց դոնէ . . . միտմարութեան , զթու թեան և հրածեչտի բաւումըք ինձ — / յարեց Ֆորքէստան :

Եւ իր դողով շրթերն , իր դեմութիւնն , իր ահարկի կերպարանն այս օրհասական ժամուն ահա որ պայտու թիւնը կը յայտնէր :

— Եւ սակայն եթէ դէթ իմ որդիս ըլլար . . . — մտածեց կոմին ահ ու դողով և հրազենն անոր տալու վարանելով . — եթէ իմ որդիս ըլլար , ուստի ինչ հարկ այսբան վարանիդ այն գահճու թեան առջև . . . :

Գահճի դուռը սաստիկ ձարձատելուն յայտնի եղաւ որ խորասակեր էր :

— Հայր իմ . . . ահա ներս կը մանեն . . . : Ո՛հ , հիմակ կիզամ , մահճը բարիք մ'է ինձ . . . : Շնորհակալ , շնորհակալ եմ , սուր դոնէ ձեռքդ և ինձ ներէ :

Թէև խոտարարոյ՝ կոմին սկսեց սարսուռ մ'զգայ և այլայլուն ձայնով ըսաւ .

— Քեզ կը ներեմ . . . :

— Հայր իմ . . . դուռը կը բացուի . . . անոնց առաջը դիս . . . չըլլայ որ վրագ կատկածի ենթան . . . : Ասկէ զատ եթէ հասնին , չպիտի թողուն որ ինքզինքս սպաննեմ . . . : Անաս բարե . . . :

Մտակայ սենեկին մէջ բազմութիւն անձերու գոռիւնը ըստեցաւ :

Ֆորքէստան ատրճանակին ծայրը կրծքին վրայ դրաւ :

Հրացանակը կրակ առաւ այն միջոցին որ կոմին այս ահաւոր տեսարանէն հեռանալու համար , աչքը կը դարձնէր մէկուսի , և սրահէն դուրս կը շտապէր , որուն դռնակներն իր վրայ գոցուեցան :

Պայթումին ձայնէն , կոմինն զուճատ և մելորազին դէմքէն , ուստի կանութեան գործակալը կանկ առաւ յանկարծ դրան սեմին մօտ , և իր մարդերուն նշան ըրաւ որ չյառաջանան :

Պոյէ՛ գործակալին արդէն իմաց տուած ըլլալով որ գերկոմին իր հօրը հետ խոցը փակուեր է , գործակալն ամէն բան հասկցաւ , և այս գառնադառն վիշտը յարդեց :

— Մեռաւ . . . — զոչնց կոմին երեսը ձեռներուն մէջ պահելով . . . — մեռաւ . . . — կրկնեց նա վշտաբեկ : — Այս արդար էր . . . լաւագոյն է մահը քան վատանուութիւնը . . . բայց այս ստիպալի է :

— Պարոն . . . — ըսաւ գործակալը տրամազին քանի մը վայրկեան լուռ կենալէն ետև — սոյն վշտալի տեսարանէն հեռացիր , ձեզ դնա այս տունէն . . . : Այժմ աւելի ծանր պարտաւորութիւն մ'ունիմ կատարելու քան այն որ զիս այս տեղ կը կոչէր :

— Իբաւուր ունիս , պարոն — ըսաւ Պ . տը Սէն-Բըմի . — իսկ գողութեան ենթակայ եղող մարդուն կրնաս ըսել որ Պ . Տիւբօն սեղանաւորին ներկայի :

— Ռիշլիէօ փողոցն . . . ամենուն ծանօթ անձ մ'է — պատասխանեց պաշտօնատարը :

Գողցուած դոհարներուն զինն ինչ է :

— Գրեթէ 30,000 ֆրանք . . . պարոն . զանոնք դնող անձն , և որուն միջոցաւ գողօնն երևան ելաւ , սոյն գումարն . . . որդիիդ տուաւ :

— Այս գումարն ալ կրնամ վճարել , պարոն . . . : Թո՛ղ ակնապաշտաւոր վաղը չէ միւս օր սեղանաւորիս դրատունը դայ , ես անոր հետ կը յարմարիմ :

Պաշտօնատարը խոնարհութիւն ըրաւ :

Կոմեր դուրս ելաւ :

Այս վերջնոյն մեկնելէն ետև՝ պաշտօնատարն՝ այս անակնկալ տեսարանէն սաստիկ վրդոված՝ կամացուկ մը սրահը դիմեց , որուն դռնակները վար առնուած էին :

Զանոնք այլայլութեամբ վերոց :

— Մարդ չկայ . . . — դուքեց նա սպշած սրահին բոլորը նայելով, և այն տեղ անցնելիք եղեռնական գործին և ոչ իսկ հետքը նշմարեց :

Յետոյ՝ սրահակին մէջ գտնուած փոքրիկ գուռը տեսնելով դէպ ՚ի այն կողմը դիմեց :

Գողթուկ ասնդղին կողմէն գոցուեր էր :

— Խաբէութիւն կայ բանին մէջ . . . : Անշուշտ անկից փախուստ տուած է — դուքեց նա սրահեզութեամբ :

Եւ արդարև, գերկոման էր հօրը առջև ատրճանակը սրտին վրայ դրեր, բայց ապա թեւին տակէն ճարպիկութեամբ մը կրակ տուեր և փութանակի անհետ եղեր էր :

Թէև տան ամէն կողմերը խուզարկութիւններ ըրին, սակայն Փլօբէտամեր չգտան :

Իր հօրն ու պաշտօնատարին խօսակցութեան ատենն՝ արագօրէն զարգարանը հասեր, ապա շերտոյն՝ ապա դրիհն, և վերջապէս Էլիսեան դաշար :

Ճոխութեան մէջ այս սլոգայի ապականութեան պատկերը ակտոր բան մ'է . . . արդէն դիտելը :

Բայց, ՚ի շղջէ կրթութեան, հարուստ դասերն ալ դատապարտուած են իրենց թշուառութիւնները, մոլութիւններն, ոճիրներն ու նենայրու :

Այս մեր պատմած անխոհեմ և անարդիւն շտայութիւններն յաճախակի են և յետին ծայր վշտակի, և իրենց հետ կը բերեն կործանում, անպատութիւն, ցածութիւն կամ վատանունութիւն : Աղէտակի է այս տեսարանն . . . և դժեղակ . . . իբր ծաղկաւէտ ցորենի արտ մ'որ կ'աւերի վայրի զազաններու խմբէ մը :

Անապրակից ժառանգութիւնը, սեպհականութիւնն անբռնաբարեթի, նուիրական են և պիտի ըլլան . . . :

Մտացական կամ աւանդական հարստութիւնը պէտք է որ աղքատ և թշուառ դասին աչքին անպատիժ և փառաորակէս շողայ :

Տակաւին շատ ժամանակ տոյն սոսկի անհամեմատութիւնները պիտի գտնուին և դեռ ևս կը գտնուին միլիոնի տէր Սէն-Բէթի և գործաւոր Մ օրէի մէջ :

Բայց քանի որ օրէնքն այս անխուսելի անհասարկութիւնները կը նուիրագործէ և կը պաշտպանէ՝ այսբան դոյք ունեցողները Բարոյապէս Էստրադորոս են անոնց որ մնակ ուղղութիւն, համբերութիւն, արիւթութիւն և աշխատութեան եռանդն ունին :

Բանականութեան, մարդկային էրառածի և նոյն իսկ ընկերական շահուն համար, մեծ հարստութիւն մը հարկ է որ ժառանգական աւանդ մը կազմէ, խոհական, հաստատամիտ, հնարագէտ, վեհանձն անձերու կողմէ ստանձեալ, որ տոյն հարստութիւնն արդիւնաւորելու և բաշխելու պաշտօնն ունենալով՝ պիտի կարող ըլլային արգասաւորել կենսական, յառաջագէմ գործելու ամէն ինչ որ իր շքեղ և օգտաւէտ և փայլուն շղջանին մէջ մտնելու բարեբաղդութիւնն ունենար :

Երբեմն այսպէս կ'ըլլայ, բայց օրինակները հազուադիւր են :

Քանի քանի սրատոնիներ Սէն-Բէթիին պէս (վատանունութեան մօտ) իրենց քսան տարեկան հասակին մէջ ահապէս ստացուածքի տէր գտնուելով անգործութեան, տաղաւկի, մոլութեան մէջ զբոսնելու և սպառն, անգէտ ըլլալով տոյն գոյքը լաւագոյն կերպով գործածելու թէ իրենց և թէ ուրիշներու համար :

Ոմանք ալ մարդկային իրերու անհաստատութեանէ ահաբեկ ժլատ կերպով մը կը գտնան :

Վերջապէս, ուրիշներն ալ, գիտնալով որ կայուն հարստութիւն մը կը նուազի, ինքզինքնին իբր ակամայ սպուշ կամ գող ստրկի վտանգալի, անբարոյական խաղերու կտան, և իշխանութեանէ ալ քաջալերութիւն և պաշտպանութիւն կը գտնեն իրենց արհեստին մէջ :

Եւ ինչպէս կարելի է որ ուրիշ կերպ ըլլայ :

Այն գիտութիւնն, այն կրթութիւնն, անհասարակ օրնորեւտութեան տարերքը, հետեւապէս և ընկերականը ո՞վ կը սորվեցնէ անպորձ երկտասարդութեան :

— Ոչ որ :

Հարուսան իր հարստութեամբ կը նետուի ընկերութեան մէջ, ինչպէս աղքատն իր արքայութեամբ :

Ոչ որ փոյթ ունի միայն աւերողէն և միւսին պիտոյրէն :

Ոչ որ կը խորհի հարստութիւնը բարոյելու, նոյնպէս և թշուառութիւնը՝ Միթէ իշխանութեան պարտքը չէ՞ այս մեծ և ակնիւ պաշտօնը վարել : Եթէ, վերջապէս, Գեո. ԵԻՍ ՀԱՄԲԵՐՍՏԱՐ գործաւորներու

Թշուառութիւններուն և օր ըստ օրէ աւելցող ցաւերու դժարով . . . ամենուն մահաբեր հետաշահութիւն մը (concurrency) զսպելով, ՚ի վերջէ աշխատութեան կազմութեան աննահանջելի խնդիրը լր ծելով նոյն ինքը որբամբէլութեան և աշխարհի ընկերակցութեան օգտաշատ օրինակը ընծայէր . . . :

Բայց սարկեշտ, մտացի, արդար ընկերակցութիւն մը՝ որ դործաւորին բարօրութիւնն ապահովէ առանց հարուստին գոյլց վնասելու . . . և այս երկու դասերու մէջ սիրոյ, երախտագիտութեան կապեր հաստատելով տէրութեան անդորրութիւնն ՚ի սպառ ապահովութեան մէջ դնէր . . . :

Ո՛րչափ զօրաւոր կ'ըլլային այսպիսի դործնական կըթութեան մը հետեւութիւնները .

Ա՛յն ատեն ո՞ր հարուստը կը վարանէր ,

Կամ լումնաշահութեան անիրաւ և աղետաբեր վտանգներն ,

Ադահութեան վայրագ վայելումները ,

Տնտեսը շուսլութեան մը անմիտ ցուցամղութիւններն ընտրել ,

Եւ կամ արդիւնաւոր և բարեգործ շահագրութիւն մը (placement) որ բազմութիւ ընտանիքի մէջ բարօրութիւն, բարոյականութիւն, երջանկութիւն, ուրախութիւն կ'ընայ ծաւալել :

Վ Ե Ր Ջ Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Գ Հ Ա Տ Ո Ր Ի

Ց Ա Ն Կ Գ Լ Ի Ո Ց

Գ Լ Ո Ւ Յ	Ս Ե Ս Ի Լ Ի	Ե ր Ե
Ա.	ՍԵՍԻԼԻ	5
Բ.	ՌԻԿՈԼԷԳԻԵ ԱՌԱՋԻՆ ՎԻՇՏԸ	46
Գ.	ԿՏԱԿ	39
Դ.	ՌԱՎԱԺԷՕՐԻ ԿՂՁԻՆ	54
Ե.	ԳԵՏԱՀԷՆ	62
Զ.	ՄԱՅՐ ՈՒ ՈՐԳԻ	81
Է.	ՖՐԱՆՍՈՒԱ ՈՒ ԱՄԵՆՏԻՆ	98
Ը.	ԿԱԶՄԻԿ ՏՈՒՆ ՄԸ	115
Թ.	ՉԱՐԱԿԱՄՈՒԹԵԱՆ ԶՈՀԵՐԸ	126
Ճ.	ՇԱՅՕ ՓՈՂՈՑԸ	147
ԺԱ.	ԿՈՄՏ ՏԸ ՍԷՆ-ՐԸՄԻ	160
ԺԲ.	ԻՕՍԱԿՏՈՒԹԻՒՆ	173
ԺԳ.	ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆ	191

20

2473
2472
2471

2013

5-41

